

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 (25)
2 0 2 2

Գյումրի 2022

«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն
հիմնադրվել է 1998թ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ (15.01.1998):

Ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի կողմից ընդունված պարբերականների ցանկում:

ISSN 1829-4316
DOI: 10.52971/18294316

Գլխավոր խմբագիր՝ քանասիրական գիտությունների դոկտոր
Ս.Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝ Ակոպով Արկադի (պատասխանատու քարտուղար, ՀՀ),
Բազեյան Կարինե (ՀՀ), Բայյան Կարեն (ՌԴ), Գրիգորյան (Հայկազուն) Աշոտ (ՀՀ),
Դեննդեր Կումար (Հնդկաստան), Խաչատրյան Լալիկ (ՀՀ), Խոսրոնա Անահիտ (ԱՄՆ),
Կոնոբ Ռուսլան (ՌԴ), Հայրապետյան Արմեն (ՀՀ), Հարությունյան Հասմիկ (ՀՀ), Հուսևո
Ֆատիմետ (ՌԴ), Ղազարյան Գևորգ (Հունաստան), Մահե Ժան-Պիեր (Ֆրանսիա),
Պետրոսյան Սարգիս (ՀՀ), Կավրելիշվիլի Ռոին (Վրաստան), Կոյուչկով Իգոր (ՌԴ),
Մկոյան Արտաշես (ՀՀ), Մաղլովսկի Միխայ (Լեհաստան), Ցականյան Ռուսլան (ՀՀ):

ԳԱԱ ՇՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»

NN 1 (25) / հայագիտություն և հասարակական գիտություններ // ՀՀ Գիտությունների ազգային
ակադեմիա, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն: Խմբ. խորհուրդ՝ Ս.
Հայրապետյան և այլք.- Գյումրի, «Ռ.Ավետիսյան» ԱԶ, 2022. – 236 էջ:

Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ. Սարգսյան 5ա
հեռ.՝ +374 /312/6 94 77, +374/94/411-228
էլ. հասցե՝ scient.works@shirakcenter.sci.am
կայքէջ՝ www. shirakcenter.sci.am

ISSN 1829-4316
DOI: 10.52971/18294316

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն 2022

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК
1 (25)
EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre of Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2022 Gyumri

*“Научные труды” основан в 1989г. решением ученого совета Ширакского центра арменоведческих исследований НАН РА (15.01.1998)
Входит в перечень периодических изданий, утвержденных ВАК-ом МОНКС РА.*

*The periodical collection of “Scientific Works” was established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS of RA (15.01.1998).
The periodical is indexed in the list of SCC MESCS RA.*

*ISSN 1829 - 4316
DOI: 10.52971/18294316*

Главный редактор: доктор филологических наук **АЙРАПЕТЯН С. А.**

Редакционная коллегия: Айрапетян Армен (РА), Акопов Аркади (ответственный секретарь, РА), Арутюнян Асмик (РА), Базеян Карине (РА), Бальян Карен (РФ), Григорян (Айказун) Ашот (РА), Девендер Кумар (Индия), Каврелишвили Роин (Грузия), Казарян Геворг (Греция), Кандор Руслан (РФ), Маэ Жан-Пиер (Франция), Крючков Игорь (РФ), Мкоян Арташес (РА), Петросян Саргис (РА), Садловский Михал (Польша), Хачатрян Лалик (РА), Хосроева Анаит (США), Хуако Фатимет (РФ), Цаканян Руслан (РА)

“Научные труды” Ширакского центра арменоведческих исследований НАН РА

NN 1 (25) арменоведение и общественные науки// Национальная академия наук РА, Ширакский центр арменоведческих исследований/:Ред. совет: С.Айрапетян и др. - Гюмри, ЧП “Р.Аветисян”, 2022.- 236с.

Editor-in –chief: Doctor of Philological Sciences **HAYRAPETYAN S. A.**

Editorial board: Akopov Arkadi (Responsible Secretary, RA), Balyan Karen (RF), Bazeyan Karine (RA), Devender Kumar (India), Ghazaryan Gevorg (Greece), Grigoryan (Haykazun) Ashot (RA), Kandor Ruslan (RF), Kavrelishvili Roin (Georgia), Khachatryan Lalik (RA), Khosroeva Anahit (USA), Khuako Fatimet (RF), Kryuchkov Igor (RF), Hayrapetyan Armen (RA), Harutyunyan Hasmik (RA), Mahé Jan-Pier (France), Mkoyan Artashrs (RA), Petrosyan Sargis (RA), Sadlowski Michal (Poland), Tsakanyan Ruslan (RA).

“Scientific Works” Shirak’s Center of Armenological Studies of NAS RA

NN 1 (25) Armenology and Social Sciences // National Academy of Sciences RA, Shirak Center for Armenological Studies/. Ed. Board:S.Hayrapetyan and others.-Gyumri, "R.Avetisyan PE", 2022,-236с.

*Адрес редакции: 3101, РА, Гюмри, ул. В. Саргсяна 5а
Address: 3101, 5a V. Sargsyan Street, Gyumri, RA
тел./tel.: +374 /312/6 94 77, +374/94/411-228
E-mail: scient.works@shirakcenter.sci.am
hppt: www. shirakcenter.sci.am*

ISSN 1829-4316
DOI: 10.52971/18294316

@ Ширакский центр арменоведческих исследований НАН РА, 2022
© Shirak Center for Armenological Studies of NAS RA, 2022

ՇԻՐԱԿԻ ՊԱՆՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Կարինե Բազեյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Գրիգոր Աղանյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Շիրակ, կաթի վերամշակում, ավանդույթ, պանիր, չեչիլ, հուսակ, անքաշ, լոռ:

Հոդվածը նվիրված է Շիրակի պանրագործական մշակույթի ուսումնասիրությանը: Արևելյան Հայաստանում դեռևս XIX դ. ձևավորվեց պանրագործական մշակույթի երկու հիմնական կենտրոն՝ Վայոց Ձորի և Շիրակի, որտեղ կենցաղավարվող պանրատեսակները բազմազան են ու շատերը հատուկ են միայն տվյալ պատմազգագրական շրջանին: Շիրակը արևմտահայ՝ Բարձր Հայքի, Վանանդի, Տարոնի, Բագրևանդի պանրագործական ավանդույթների կրողն է, դրա ժառանգորդն ու շարունակողը: Դաշտային ազգագրական նյութերի և տարաբնույթ աղբյուրների տվյալների համեմատական վերլուծության հիման վրա վեր են հանվել շիրակյան չեչիլ, հուսակ, կանաչ և լոռ պանրատեսակների պատրաստման ավանդական եղանակներն ու դրանցում կատարված փոփոխությունները XIX դարավերջից մինչ օրս:

Նախաբան. Պանիրը հայոց մեջ ամենագործածվող կաթնամթերքներից մեկն է, որը հայտնի է հնագույն ժամանակներից և եղել է ինչպես ամենօրյա, այնպես էլ տոնական հացկերույթի հիմնական բաղադրիչը: Այսօր էլ հայկական ավանդական խոհանոցի ամենատարածված ու հարգի ուտեստը «հաց ու պանիրն» է, ինչին առնչվող բազմաթիվ ասացվածքներ է ստեղծել ժողովուրդը. «Պանիր-հաց՝ սիրտը բաց», «Պանիր-հացիկ՝ պարզ երեսիկ», «Հաց ու պանիր, կեր ու բանիր», «Դեռ շատ հաց ու պանիր պիտի ուտես»

և այլն: Պատահական չէ, որ *պանիր* բառը հայերենում մեկնվում է որպես հացի հետ ուտելու բան՝ պան=հաց և իր¹:

Պանրի մասին բազմաթիվ վկայություններ կան միջնադարյան հայ մատենագրության մեջ, որտեղ *մակարդվել* բառը որպես հոմանիշ ուներ *պանրանայ* ձևը:² Ակադեմիկոս Հր. Աճառյանի վկայությամբ Աստրախանի հայերի միջոցով *պանիր* բառը փոխառվել էր նաև ռուսական և թաթարական բնակչության կողմից, ու որպեսզի տարբերեն հայկական աղաջրային պանիրը եվրոպական դարակաշարայինից՝ ուղղակիորեն օգտագործում էին *панир* եզրույթը³:

Պանիրը կաթի մակարդման արդյունքում ստացված արտադրանք է, որը ենթարկվում է համապատասխան մշակման, ձևավորման ու հասունացման: Պանրի բոլոր տեսակները կարելի է բաժանել երկու խմբի՝ մակարդովի և կիսաթթվային: Հասունացման պայմաններին համապատասխան դրանք տարբերակվում են դարակաշարային (պանիրներ, որոնք պահվում են օդում) և աղաջրային (որոնք պահվում են աղային լուծույթների մեջ) տեսակների: Հայկական համարյա բոլոր պանրատեսակները աղաջրային հասունացման խմբին են պատկանում: Եվրոպական երկրներում առավել տարածված են մակարդովի դարակաշարային պանիրները, որոնք հասունացման ընթացքում պատվում են կեղևով (դրանք մեր իրականության մեջ առավել հայտնի են շվեյցարական կամ հոլանդական պանիրներ անվամբ): Սրանց համար բնութագրական է խոնավության գոլորշիացումը մակերեսից: Պանիրները պարունակում են նույն սննդանյութերը, ինչ կաթը (սպիտակուցներ, յուղեր, կաթնային շաքար և վիտամիններ), որոնք ենթարկվել են ավելի խորքային փոփոխությունների: Որոշ պանրատեսակներում (ռոկֆոր, կանաչ պանիր) ճարպը որոշ բորբոսների ազդեցությամբ ենթարկվում է լուրջ փոփոխությունների, ինչի արդյունքում պանիրը ձեռք է բերում կծվություն և յուրահատուկ հոտ: Պանիրը լիարժեք սննդամթերք է. այն հեշտ յուրացվում է, ունի համային բարձր որակ, նպաստում է ախորժակի բացմանը, հետևաբար բարենպաստ ազդեցություն ունի մարսողության վրա⁴:

Երկրագործական-անասապահական տնտեսություն վարող հայերը ավանդաբար զբաղվել են կաթի վերամշակմամբ, ինչը թույլ է տվել պահպանել արագ փչացող կաթնամթերքը պանրի, հալած յուղի (արդար յուղ), չորաթանի և այլնի տեսքով: Հայկական ավանդական պանրի տեսակներն այլազան են, որոնց անունները շատ հաճախ առաջացել են պանրի տեսքից (գլուխ պանիր, լոռ պանիր, հորած պանիր, չեչիլ պանիր, թել պանիր, կանաչ պանիր և այլն) կամ կենդանու անվանումից (ոչխարի պանիր, այծի պանիր, գոմեշի պանիր): Հայկական ավանդական պանիրներն են ժամանակակից չանախ հիշեցնող «կոտոր» կամ «չոբանի» պանիրը, չեչիլը, դրա տարատեսակը՝ թել կամ հյուսած պանիրը, հորածը (հայտնի է նաև Դարալագյազի կամ Վայոց ձորի անվան տակ), մզաձը և տիկի մեջ հասունացած մոթալը:

¹ Աճառյան Հր. -1979, էջ 21:

² ՆՀԲ - 837, էջ 596:

³ Աճառյան Հր. -1979, էջ 22:

⁴ ՀՍՀ - 1983, էջեր 121, 124:

Անկախ վաղեմությունից՝ պանրի պատրաստման թե՛ տեխնոլոգիաները, թե՛ բուն արտադրությունը հազարամյակների ընթացքում մնացել էին տնայնագործական մակարդակի վրա, մինչև XIX դարի վերջ: Հայաստանում արդյունաբերական պանրագործության սկիզբը դրվեց 1889 թվին Վորոնցովկա (հետագայում՝ Կալինինո, այժմ՝ Տաշիր) գյուղում, երբ շվեյցարացի և գերմանացի մասնագետների ղեկավարությամբ հայ վարպետները յուրացրին էմենտալ պանրի տեխնոլոգիան: 1913թ. Հայաստանում կար 23 ոչ մեծ ձեռնարկություն, որտեղ վերամշակվում էր ընդամենը 4600 տ կաթ, և արտադրվում էր 349 տ էմենտալ պանիր, 27 տ չանախ և 29 տ սերուցքային կարագ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արդյունաբերական պանրագործությունը գրեթե ամբողջությամբ կասեցվեց: Խորհրդային իշխանության հաստատումից հետո սկսեցին կազմակերպվել և զարգանալ կաթի վերամշակման արտելներ: 1928 թ. 76 ոչ մեծ արտելային ձեռնարկություններում արտադրվել են 1045 տ պանիր և 126 տ կարագ: 1929 թ. շահագործման հանձնվեց Կալինինոյի պանրի գործարանը՝ այն ժամանակվա համար Եվրոպայում ամենախոշոր և տեխնիկապես հագեցած ձեռնարկությունը, որն արտադրում էր բացառապես էմենտալ պանիր: 1930 թ. սկսած, համեմատաբար կարճ ժամանակահատվածում, խոշոր անասնապահական շրջաններում կառուցվեցին Ստեփանավանի, Մեղրաձորի, Մեյրնովկայի, Գորիսի, Կրասնոսելսկի, Համգաչիմանի, Լոռու, Ղուկասյանի և Ապարանի պանրագործարանները⁵: Այդ գործարանների կամարակապ նկուղներում հասունացող պանիրներն առանձնանում էին իրենց համային բարձր հատկանիշներով: Գործարանային պայմաններում պանրի արտադրության համար նախատեսված հարմարանքների շարքում կարևոր տեղ ունեին աղաջրի ավազանները կամ չաները, որոնց մեջ ընկղմում էին պանրագլուխները: Պանրագործ վարպետները ժամանակ առ ժամանակ ձեռքի հատուկ շարժումներով պտտում էին պանրագլուխները, այսպես կոչված, վեր ու վար էին անում դրանք: Գլուխ պանրի հասունացումը և աղաջրով հագենալը տևում էր երկու-երեք շաբաթից ոչ պակաս: Նախ՝ պանիրը ստանում էր որոշակի ամրություն, և երկրորդ՝ դառնում էր օգտագործելու համար անվտանգ, և այն կարելի էր պահել առավել երկար ժամանակ: Դեռևս հնուց հայ պանրագործները գիտեին, որ «աղը չկերած» պանիրը կարող է վտանգավոր լինել, և պատահական չէր, որ շիրակցիների շրջանում տարածված էր հետևյալ ժողովրդական ասացվածք-բանաձևը. «Պանրի կողքը կեր, կարագի՝ մեջտեղը»:

Պանրագործարաններին զուգահեռ ստեղծվեցին, այսպես կոչված, «Յուղարդ արտելներ», որոնք պահեստավորում, նախնական մշակման էին ենթարկում հատկապես անասնապահական ամառանոցներում կթված կաթը և պատրաստում էին աղաջրային որոշ տեսակի պանիրներ: Ներկայիս Շիրակի մարզի մեջ ընդգրկված նախկին վարչական շրջաններից առավել հայտնի էին Արթիկի, Ախուրյանի և Անիի շրջանների Յուղարդ արտելները, որոնք գործարանային մակարդակին չգիջող պանրատեսակներ էին արտադրում: Խորհրդային կոլեկտիվ տնտեսությունների մեծ մասում կային հաստիքային պանրագործներ, որոնք պանիր էին պատրաստում տեղում, որպեսզի այն այլ

⁵ Արաքսանց Ա. -2019, <http://agromshakuyt.card.am/>, (21.02.2022)

բնամթերքների շարքում որպես աշխօր բաժանվեր կոլտնտեսականներին⁶: Հայտնի պանրագործները՝ որպես օգնական ուժ, կարող էին գնալ նաև այն գյուղերը, որտեղ չկային որակյալ վարպետներ (օրինակ՝ Առոցքի տարածաշրջանի Մեծ Մեպասար գյուղի պանրագործ վարպետ Մելիակ Գրիգորյանը «պանիր էր բռնում» հարևան բազմաթիվ գյուղերում, իսկ հետագայում այդ հմտությունները փոխանցեց իր նոր բնակավայրում՝ Արմավիրի շրջանի Նոր Կեսարիա գյուղում)⁷:

Ինչպես վերը նշվեց, հայոց մեջ կաթնամշակության, այդ թվում նաև պանրի պատրաստման ավանդական տնայնագործական եղանակները հազարամյակների ընթացքում պահպանվեցին իրենց հնամենի տեսքով: Արևելյան Հայաստանում դեռևս XIX դ. ձևավորվեց պանրագործական մշակույթի երկու հիմնական կենտրոն՝ Վայոց Ձորի և Շիրակի: Այս կենտրոնների առանձնացումը հիմնավորվում է նրանով, որ դրանցում ստեղծված և կենցաղավարվող պանրատեսակները բազմազան են, ու շատերը հատուկ են միայն տվյալ պատմագագաղական շրջանին⁸: Բացի այդ, եթե Վայոց Ձորի կենտրոնն իր մեջ խտացնում և արտահայտում է պարսկահայ ու արևելահայ պանրագործական ավանդույթները, ապա Շիրակի կենտրոնը նույն գործառույթն է իրականացնում արևմտահայ՝ Բարձր Հայքի, Վանանդի, Տարոնի, Բագրևանդի պանրագործական մշակույթի ժառանգման և պահպանման գործում:

Շիրակում անասնապահության և կաթնային տնտեսության զարգացմանը մեծապես նպաստել են տարածքի ալպյան և ենթալպյան արոտավայրերն ու մարգագետինները: Շիրակի մարզում կթու կենդանիներից առավելապես տարածված են կովերն ու ոչխարները: XIX դարում և մինչև XX դ. կեսերն այստեղ պահում էին նաև գոմեջներ ու այծեր, սակայն տոկոսային հարաբերությամբ կովի և ոչխարի կաթը գերակշռում էր մյուսների համեմատ, իսկ այսօր կովի կաթն է առաջին տեղում: Շիրակում կաթն ամենօրյա օգտագործման մթերք է, որի մշակումն ինչպես նախկինում, այնպես էլ մեր օրերում կանանց գործն է, սակայն նախկինում հանդիպել են նաև տղամարդկանց կողմից իրականացվող կթելու դեպքեր, հատկապես ամառանոցներում: Կաթը Շիրակի բնակչության կողմից օգտագործվել ու այսօր էլ օգտագործվում է ինչպես մաքուր ձևով՝ եռացրած կամ նոր կթած վիճակում, այնպես էլ դրանից պատրաստվող տարբեր ուտելիքների (պանիր, կարագ, մածուկ, սեր, թան, լոռ, շոռ, չորթան) ձևով⁹:

Շիրակցիների ավանդական մշակույթում տնայնագործական պայմաններում կաթնամթերքի շատ տեսակների ստացման համար կարևոր նշանակություն է ունեցել կաթը «խար» տալու սովորույթը: «Խարի» էությունն այն էր, որ կաթնամշակությամբ զբաղվող կանայք, հենց գարնան սկզբից խմբեր կազմելով, միավորում էին իրենց անասուններից ստացած կաթը՝ յուղ ու պանիր ստանալու համար: Խարին մասնակցողներն ամեն առավոտ և երեկո իրենց կաթը տալիս էին «կաթնամորը» (կաթնամայր էր ընտր-

⁶ Դիցուք՝ Վահրամաբերդ գյուղում 1934 թ.-ին մեկ աշխօրի դիմաց տրվում էր 25 գրամ պանիր: Աղբյուրը՝ Վահրամաբերդ գյուղի բնակիչ Նիկոլայ Հովհաննիսյանի հուշատետր: Նյութը տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում բ.գ.թ. Հասմիկ Մաղաքյան-Գալստյանին:

⁷ Դ.ԱՆ, բանասաց Իգնատիոս Գրիգորյան:

⁸ **Քաղանթար Ա.-1898**, էջ 287:

⁹ ԿՃԾ -1983, Կ. 212-213.

վում այն կինը, որը շատ կաթ ուներ): Տված կաթի չափը որոշելու համար յուրաքանչյուրն ուներ հատուկ չափի փայտ ու աման. փայտերը մտցնում էին կաթի ամանի մեջ և դանակով խագում կաթի քանակը: Այդ խագով և նույն ամանով փոխ տվողն իր հերթին հետ էր վերցնում իր կաթը պարտապանից: Խաբի հիմնական էությունն այն էր, որ անհատ տնտեսությունների կաթը քիչ-քիչ գործածվելուց չփչանար, չկորչեր, և, որ ավելի կարևոր է, այս դեպքում նույնիսկ մեկ կով կամ մի քանի ոչխար ունեցողն անգամ հնարավորություն էր ստանում ձմեռվա համար յուղ ու պանիր ունենալ¹⁰:

«Խաբն ու խասը» պահպանվեցին շիրակյան գյուղերում ընդհուպ մինչև XXդ. 70-80-ական թվականները, սակայն մեր ժամանակներում դրանք համարյա լիովին դադարել են կենցաղավարվելուց: Խաբը կիրառվում էր նույնիսկ գավառային կենտրոն Ալեքսանդրապոլի բնակչության այն հատվածում, որը զբաղվում էր անասնապահությամբ¹¹:

Շիրակի պանրագործությունը բավականին բազմազան է: Տարածաշրջանի պանիրները պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝ *անքաշ* կամ չուղագրված և *չեչիլ*, որը պատրաստվում էր կաթի յուղը նախօրոք քաշելուց հետո: Այստեղ մինչ օրս գործածվում է պանրի 3-4 տեսակ, որոնց թվում են չեչիլն ու դրա տարբերակ թել (հուսակ) պանիրը, անքաշ (քյալլա) պանիրն ու լոռը:

Շիրակի չեչիլ, թել կամ հյուսակ պանիրներն ու դրանց պատրաստման տեխնոլոգիաները նկարագրված են Ա. Քալանթարի Կովկասի ժողովուրդների կաթնամշակությանը նվիրված «Կաթնային արդյունքներ» հոդվածում՝ որպես Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Ախալքալաքի, Կարսի մարզի, մասամբ նաև այլ տարածքներին (Ապարան, Նոր Բայազետ) բնորոշ պանրատեսակներ¹²:

Այս պանիրները պատրաստվում էին առավելապես կովի կաթից, երբեմն նաև ոչխարի կաթից կամ երկուսի խառնուրդից՝ սերը քաշած վիճակում: Ոչխարի կաթից չեչիլի պատրաստման նկարագրությունը տվել է Ն. Նիկողոսյանը, ինչը որոշ տարբերություն է ցուցաբերում Քալանթարի ու մեր կողմից հավաքված դաշտային նյութերի հետ: Համեմատության համար ներկայացնում ենք երկու հեղինակների տեքստերը: Քալանթարը գրում է. «Հում կաթը ածում են ամանների մեջ (գլխաւորապէս կաւէ) և թողնում են 24-36 ժամ. շոք տեղերում պահում են 24 ժամից պակաս և ընդհակառակը բարձր և սառը տեղերում 36 ժամից էլ ավելի: Կաթը, թեև այսպիսով էլի մնում է թարմ, սակայն մի տեսակ աննկատելի թթու համ է ստանում, որը փորձուած տանտիկիները լաւ են հասկանում. առաջացած թթուութիւնը իմանալու համար թէյի ափսէյի մէջ վերցնում են մի քիչ կաթ, մէջը զցում են մակարդ, տաքացնում են կրակի վրայ և նայում են, թե ինչպէս է գոյանում ժամէկը: Մերը քաշելուց յետոյ մնացած կաթը ածում են կլայեկած պղնձի մէջ, առանց տաքացնելու զցում են մակարդ, ձեռքով կամ գդալով սաստիկ խառնում են և դնում կրակի վրայ: Կաթը շուտով մերում է, և մերումածը սկսում է տաքանալ: Չեն թողնում, որ զանգուածը եփ գայ, այլ ընդհատում են տաքացնելը, երբ ջերմաչափը հասնում

¹⁰ Նիկողոսյան Ն. FF I, էջեր 6700-6800:

¹¹ Բազեյան Կ., Աղանյան Գ. - 2014, էջ 75:

¹² Քալանթար Ա. - 1898, էջ 288:

է մերձաւորապէս Յելլզիուսի 50°-ին, այնպէս, որ մէջը ձեռքը հազիւ կարելի լինի պահել: Մերածը թանձրանալով իջնում և բաժանում է շիճուկից: Պանրագործը պանրանիւթի վրայ ձեռքով սխմում է և շիճուկը դէն ածում: Մերածը սկսում է սղմուիլ, տափականալ խմորի նման և աւելի ու աւելի բարականալ: Այս խմորից կարելի է պատրաստել կամ չիլ պանիր և կամ թել պանիր: Պանրի նիւթը դառնում է առաձգական, նրան հետզհետէ ձեռքով խմորի նման ձգում են, ծալում են իր վրայ և նորից ձգում են և յետոյ փռում են փայտի վրայ, ցամաքեցնելու համար: [...] 2-3 ժամ անցնելուց յետոյ պանիրը հանում և աղ են անում ամանի կամ տաշտի մէջ, եթէ պանիրը շատ է՝ այն ժամանակ շերտ-շերտ աղ են ածում: 5-8 օր յետոյ երբոր բաւական քանակութեամբ պանիր է հաւաքում, մանրացնում են նրան և լցնում տկճորների կամ մոթալների մէջ: Ցամաք աղ արած և կամ աղաջրով պանիրը պահում է տակառներում (Ալէքսանդրապօլի գաւառի Աղբուլաղ, Մեծ Ղարաքիլիսա, Բոզի գեղ և այլ գյուղերում)»¹³:

Ըստ Նիկողոսյանի՝ չէչիլ պանիրը պատրաստվում էր հետևյալ կերպ. «Ոչխարի նոր կթած կաթը քանի դեռ չի սառել, մէջը մի քիչ մակարդ են լցնում, որից մի քանի բոպետում կաթը մակարդվում և դառնում է պանրի գանգված: Ջրախառն պանիրը լցնում են տոպրակի մէջ և դնում արևի տակ, որ հյութը քամվի: Մակարդը գցելու ժամանակ կաթի մէջ գցում են մի քիչ ջարդած կանաչեղեն՝ ուրց, վայրի սխտորուկ, գինձ և այլն: Ջրից քամված պանիրը առնում են ձեռքերի վրա և այնքան են ձգձգում, մինչև որ դառնա թելի կաժի նման: Պանիրը գործ են ածում աղաջուրը դրած կամ կճուճը կոխած: Պանիրը ջարդում են, պինդ կոխում են կճուճի մէջ, շորով բերանը կապում, գլխիվայր թաղում ու պահում»¹⁴:

Նկարագրված տեխնոլոգիաների տարբերությունը, կարծում ենք, պայմանավորված է կաթերի տարբերությամբ: Քանի որ մեր հավաքած նյութերում ոչխարի կաթից չէչիլի ստացման մասին տեղեկություններ չկան, ուստի դժվար է ասել, թե որքանով է Նիկողոսյանի նկարագրությունը հավաստի:

Ըստ դաշտային ազգագրական նյութերի՝ այսօր չէչիլը պատրաստվում է սերը քաշած կաթից Ա. Քալանթարի նկարագրած տեխնոլոգիայով: Որպէս մակարդ այսօր օգտագործվում է գնովի պեպսինը, իսկ նախկինում՝ շրդանից (շիրակցիների մի հատվածը շրդանն անվանում է «հազարաթերթիկ»¹⁵) պատրաստված մակարդները: Շրդանը կենդանիների վերջին կամ փոքր ստամոքսն է, որը հատուկ ձևով մշակելուց ու թթվեցնելուց հետո ստանում էին պանրի մակարդը կամ մայան հետևյալ կերպ. «Վերցնում են յուղոտ ոչխարի 2 կամ ցուլի 1/2 կամ գումեշի ¼ փոքր փորը, լվանում, չորացնում, հետո դնում են կավե ամանի մէջ, վրան լցնում մոտ 10 գ. թթվեցուցիչ, 100-120 գ. բրինձ և 1-2 կտոր շաքարի փոշի: Հետո սրանց վրա լցնում են ջուր և 6-8 բաժակ ուրցի թուրմ: 4-5 օր հետո այս խառնուրդը հասունանում է, ինչը երևում է սուր համից և նրանից, որ հում ձվի կեղևը դրա մէջ փափկում է»¹⁶:

¹³ Քալանթար Ա.-1898, էջ 289:

¹⁴ Նիկողոսյան Ն. -FF I, էջ 6987:

¹⁵ ԴԱՆ, բանասաց Օֆիկ Մկրտչյան, գ. Հոռոմ:

¹⁶ Зеленский С. -1893, с. 53.

Մակարդը կաթի մեջ լցնելուց հետո աստիճանաբար կաթը կտրվում է, ստացվում առաձգական պանրագանգված, որին հետևում է «պանիր քաշելու» գործընթացը: Շիրակացի հմուտ կին պանրագործները հատուկ վարպետությամբ ձգում ու փաթաթում են տաք չեչիլը, դնում շորի վրա և պինդ ճզմում, որպեսզի ջրային մասը քամվի: Այնուհետև երկու-երեք անգամ շուռ են տալիս նորահաս պանիրն ու թեթևակի աղելուց հետո մի քանի օր թողնում լրիվ քամվելու՝ «հանգստանալու»: Մրանից հետո պատրաստվում է աղաջուրը, որի խտությունը որոշվում է հում ձվի օգնությամբ: Եթե աղաջրի մեջ զգված հում ձուն բարձրանում է ջրի երես, ուրեմն այն պատրաստ է, ունի համապատասխան խտություն և դրանում հասունացող պանիրը կլինի որակյալ: Որոշ պանրագործներ չեչիլ պանիրը փափուկ լինելու համար նախօրոք ընկղմում էին կարագի թանի կամ հումսերի մեջ, հետո նոր տեղավորում կճուճի մեջ¹⁷: Համապատասխան ջերմային պայմանները ապահովելու դեպքում «կոխած» չեչիլը կարելի է պահել մեկ տարուց ավելի, ինչը աղաջրային պանրատեսակների համար բավական երկար ժամանակ է համարվում:

Պանրի կճուճները պատրաստում էին ավերպուցի բրուսները (չունլաքչիները): Ի տարբերություն յուղի կճուճների, որոնք ջնարակվում էին և՛ ներսից, և՛ դրսից, պանրի կճուճները ջնարակվում էին միայն ներսից: Այս անոթները ժողովուրդն անվանում էր «կանաչիկներ» (ջնարակը հիմնականում կանաչ գույնի էր պատրաստվում): Ունևոր ընտանիքները պատվիրում էին 1,5-2 փութ տարողությամբ, ջնարակված կճուճներ, որոնք կոչվում էին *զնդան*¹⁸: Պանրի կճուճներ պատրաստում էին նաև գյուղական խեցեգործները: Շիրակի գյուղերում հարգի էին սառնադրյուրցի վարպետների պատրաստած անոթները, որոնք ներսից պատվում էին ձյութով:

Շիրակցիների շրջանում չեչիլ պանրի ամենահարգի տեսակը «կանաչ պանիրն» է: Շիրակյան ավանդական «կանաչ» կամ «մզլած» պանիրն իր որակներով շատ մոտ է ռոկֆոր պանրին: Այն ստանալու համար պանրի կճուճի բերանը բացում են, չեչիլը մի քանի տեղից ծակծկում, որ օդ անցնի այդ շերտերի մեջ և դնում տաք տեղ: Օդը նպաստում էր բորբոսի առաջացմանը, որի արդյունքում պանիրը ձեռք էր բերում յուրահատուկ փափկություն և հաճելի սուր հոտ: Պանիրը արագ կանաչեցնելու համար Շիրակի որոշ գյուղերում «կոխած» շերտերի արանքում թեթևակի կաթ էին ցողում, կամ հասունացած լոռ դնում, որը հատուկ էր ալաշկերտցիներին ու մշեցիներին¹⁹:

Հարկ է նշել, որ թյուրիմացաբար «կանաչ պանիրը» նույնացվում է «հոտած կամ հոտուկ պանրի» հետ: Մրանք տարբերվում են ոչ միայն իրենց արտաքին տեսքով, համակազմվածքով (կոնսիստենցիայով), այլև համային ու հոտային հատկանիշներով: «Հոտած պանիրը» հաճախ ստացվում էր ակամայից, երբ կանաչեցված պանիրը երկար ժամանակ մնում էր տաք տեղում, կամ էլ հենց այդ նպատակով սպիտակ չեչիլը հատուկ հանվում էր կճուճից ու հոտեցվում նույն տաք միջավայրում պահելով: Եթե որակյալ «կանաչ պանիրը» աչքի էր ընկնում իր առաձգականությամբ, համեմատաբար չոր

¹⁷ ԴԱՆ, բանասաց Մարգուշ Մարգայան, գ. Սպանդարյան:

¹⁸ **Նիկողոսյան Ն.** -FF I, էջ 7364:

¹⁹ ԴԱՆ, բանասաց Բրաբիոն Մելիքյան, գ.Մեծ Սեպասար:

էր կամ ջրագուրկ և թել-թել պոկվում էր ընդհանուր զանգվածից, ապա «հոտած պանիրը» կակուղ էր և ուներ սպեցիֆիկ հոտ:

«Հուսակ» կամ «թել» պանիրը ևս պատրաստվում է նույն եղանակով, ինչ չէջիլը²⁰: Այս դեպքում շիճուկի մեջ թողնվում է չէջիլի մի մասը, որը գնդվում և հատուկ ձևով ձգվում է թելի նման՝ ընթացքում պարտադիր գտնվելով պանրային շիճուկի մեջ, որն անընդհատ տաքացվում է: Հյուսելուց հետո թել պանիրը ևս դրվում էր խիտ աղաջրի մեջ: Հարկ է նշել, որ «հյուսակ պանիրը» հատուկ է միայն Շիրակին և մասնավորապես նախկին Արթիկի վարչական շրջանի գյուղերին, որոնց բնակիչները մեծավ մասամբ Բասենի և Վանանդի (Կարսի) պանրագործական ավանդույթների կրողներ են:

Անքաշ կամ գլուխ պանիրը պատրաստվում է մաքուր կաթից՝ հատկապես ոչխարի, սակայն նախկինում գործածվել է նաև այծի ու կովի կաթը, կամ դրանց խառնուրդը: Այս պանրի պատրաստման եղանակը էականորեն տարբերվում է չէջիլից: Նախ կաթը չէր յուղագրկվում և չէր եռացվում, այլ թեթևակի գոլացվում էր, նոր ավելացվում էր մակարդիչը (այս դեպքում ևս նախկինում շրդանը, ավելի ուշ գործարանային պեպսինը կամ մայան, որը Հայաստանում արտադրվում էր Լենինականի մսի-պահածոների կոմբինատում՝ մինչև դրա փակվելը): Մակարդիչի ավելացումից քիչ ժամանակ անց ստացվում է մածնանման զանգված, որն անընդհատ խառնում են և թույլ կրակի վրա տաքացնում: Կրակից հանելուց հետո մակարդված զանգվածը բաժանում են մի քանի մասերի, կտորով ծածկում են, միառժամանակ թողնում հանգստանա, ապա քամում ու լցնում են կաղապարի կամ կտորից տոպրակի մեջ: Շիճուկը դուրս քամելու համար կա՛մ ձեռքով են ճզմում, կա՛մ դնում քարի տակ: Պատրաստի պանիրն այնուհետ գցում են նախօրոք պատրաստված աղաջրի մեջ, որը պատրաստվում էր նույն եղանակով, ինչ չէջիլի պարագայում էր:

Անցյալում, ինչպես վկայում է Ա. Քալանթարը «Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Շամախու և այլ գաւառների բնակիչները պանիրը խառնում են շօրի հետ և այսպես լցնում տկերը, որոնք յայտնի են *մոթալ* անունով: Ոմանք շօրի խառնելուն մեծ նշանակություն են տալիս, ենթադրելով, որ շօրը նպաստում է պանրի քնքշությունը պահելուն:²¹»

Շիրակի տարբեր գյուղերում անքաշ պանրի բաղադրությունը կախված էր նրանից, թե ինչ կենդանու կաթից էր այն պատրաստվում: Շիրակի լեռնային և բարձրլեռնային գյուղերում (Ամասիա, Աշոցք, Արագածի ալպյան գոտիներ՝ Հառիձ, Նորաշեն և այլն), որտեղ մսակաթնատու ոչխարների գլխաքանակը մեծ էր և ոչխարներն անպայման կթվում էին, անքաշ պանիրը պատրաստում էին կա՛մ միայն ոչխարի կաթից կա՛մ կաթնային խառնուրդից՝ կովի կաթին 70-ը 30-ի հարաբերակցությամբ խառնելով ոչխարի կաթ (նախկինում նաև այծի): Զուտ ոչխարի պանիրը յուղոտ էր, քիչ ավելի չոր և ուներ սպեցիֆիկ հոտ: Այն աղաջրի մեջ ավելի երկար էր պահվում: Խառնուրդ կաթի հիմքով անքաշ պանիրն առավել փափուկ էր, և յուրահատուկ սուր հոտը չէր զգացվում: Ոչխարի պանիր հատկապես շատ էին պատրաստում անասնապահական ամառանոց-

²⁰ Քալանթար Ա.-1898, էջ 289-290:

²¹ Քալանթար Ա.-1898, էջ 285:

ներում, և ժողովրդի մեջ այն առավել տարածված էր «չոբանի պանիր» անվամբ: Մեր օրերում Շիրակի ցածրադիր գոտում գտնվող գյուղերում ոչխարի կամ խառնուրդ անփաշ պանիր չեն պատրաստում ո՛չ տնային օգտագործման և ո՛չ էլ շուկայում վաճառքի հանելու համար²²:

Հարկ է նշել, որ դեռ XIX դարից Շիրակի բնակչությունը չեչիլ, կանաչած ու հյուսակ պանիրները պատրաստում էր ոչ միայն ընտանիքի կարիքները բավարարելու, այլև վաճառքի համար: Հիմնական շուկան նախկինում Ալեքսանդրապոլ²³, այսօր Գյումրի քաղաքն է, որտեղ տեղական չեչիլ ու կանաչած պանիրները հարգի են ու մեծ պահանջարկ ունեն: Պանրի վաճառքը գյուղացու եկամտի հիմնական աղբյուրներից մեկն է, քանի որ տնայնագործական եղանակով ստացված չեչիլ ու կանաչ պանիրները տարբերվում են գործարանայինից իրենց համային հատկանիշներով: Ըստ բանասացների տվյալների, չորս կովի կաթից ստացված չեչիլի վաճառքից հմուտ պանրագործը տարեկան ստանում է 450-500 հազար դրամ եկամուտ²⁴:

Շիրակում տարածված պանրի մյուս տեսակը լոռն է, որն անհամեմատ մեծ տարածում ուներ նախկինում և հայտնի էր նաև *ժածիկ* կամ *շոռ* անուններով²⁵: Լոռը ստացվում է թանից և մյուս պանիրների շիճուկից, որին մի փոքր մակարդ են ավելացնում, առանց խառնելու տաքացնում են, ինչի արդյունքում դրանից անջատվում է փխրուն, պանրանման զանգվածը՝ լոռը: Վահրամաբերդ գյուղում, «երբ շիճուկը եփում են, բայց այն շուտ չի կտրվում, ավելացնում են նախորդ օրվա՝ արդեն թթված շիճուկից (մի բաժակի չափ): Բացի այդ, շիճուկը եփելիս, եթե չի կտրվում, կարծում են, որ չար աչք է կպել: Նազարի աղոթք են անում, ու լոռը «դուս է գալիս շիճուկի երես»: Կտրվելուց հետո թողնում են սառչի, լցնում են լոռի տոպրակի մեջ: Քամվելուց հետո տոպրակով դնում են ծանրոցի տակ (թթվի քարի) և թողնում մինչև առավոտ: Շատ տարածված է աղած լոռն ու չեչիլ պանիրը շերտ-շերտ կճուճի մեջ «կոխելու» տարբերակը: Կճուճի վրայի շերտը պարտադիր լոռ է լինում, բյազով (բամբակյա կտոր) փակում են և շուտ տալիս մոխրի մեջ, որ քամվի, խոնավությունը դուրս գա»²⁶: Ավանդաբար այն օգտագործվել է ինչպես միայն աղ դրած, այնպես էլ համեմված վիճակում: Ըստ Ն. Նիկողոսյանի՝ «Այն քամում են, աղում, համեմում զանազան հոտավետ և կծու բաներով ու լցնում են կավե ամանների մեջ, փակում են բերանը և թաղում գետնի մեջ ապագայում գործածելու համար: Իսկ վերջին տարիներին դրանց ավելացնում են վայրի ուտելի բույսեր՝ հիմնականում ուրց»²⁷:

Եզրահանգում. Ամփոփելով կարելի է ասել, որ շիրակցիների մեջ պանիրն, անկասկած, ամենատարածված կաթնամթերքն է եղել ինչպես նախկինում, այնպես էլ մեր օրերում, սակայն պանրի տեսակների տարածվածության աստիճանը տարբեր է՝ հատկապես երկու ժամանակաշրջանների համեմատությամբ: Թե՛ նախկինում, թե՛ հիմա

²² ԳԱՆ, բանասացներ Օ. Մկրտչյան, Մ. Սարգսյան:

²³ **Քալանթար Ա.-1898**, էջ 289:

²⁴ ԳԱՆ, բանասաց Օ.Մկրտչյան:

²⁵ **Նիկողոսյան Ն.** -FF I, էջ 6778:

²⁶ Տեղեկությունը տրամադրել է Հ. Մաղաքյան-Գալստյանը:

²⁷ Նույն տեղում:

առաջնությունը տրվում է չեչիլ պանրին, սակայն եթե առաջ անքաշ պանիրն ու լոռը օգտագործում էին հավասարապես, ապա այսօր լոռը մղվել է երկրորդ պլան: Շիրակում պահպանվել են պանրագործության ավանդական ձևերն ու եղանակները, փոխվել են միայն պանրի պատրաստման ու պահպանման համար գործածվող ամանեղենն ու հարմարանքները: Մասնավորապես այսօր լայնորեն կենցաղավարում են ապակե և պլաստմասսայե տարբեր տարողության տարաներ, իսկ չեչիլի պատրաստման ժամանակ գործածվում են մեխանիկական հարիչները, որոնք ավելի են հեշտացնում պանրի պատրաստման գործընթացը:

Պանիրն այսօր որպես բաղադրիչ կամ համեմունք մտնում է բազմաթիվ կերակրատեսակների ու խմորեղենների կազմում, որոնց թվում հարկ է հատկապես նշել միայն շիրակյան խոհանոցին բնորոշ «պանրխաշ» ճաշատեսակը:

Շիրակում գործում են նաև արդյունաբերական պանրագործության ոլորտում աչքի ընկնող ձեռնարկություններ, որոնցից են Ազատանի «Իգիթ», Բանդիվանի, Ամասիայի, Մուսայեյյանի գործարանները:

СЫРОДЕЛЬЧЕСКАЯ КУЛЬТУРА ШИРАКА

Базеян К. Р., Аганян Г.Т.

Ключевые слова: *Ширак, переработка молока, традиция, сыр, чечил, усаканкаш, лор.*

Статья посвящена изучению сыродельческой культуры Ширака. Еще в XIX в. в Восточной Армении сформировались два основных центра сыродельческой культуры - Вайоц Дзор и Ширак, в которых бытующие сорта сыра разнообразны и многие из них характерны только данной историко-этнографической области. Ширак является носителем и продолжателем западноармянской (Барцр Айк, Вананд, Тарон, Багреванд) сыродельческой традиции. На основе сравнительного анализа полевых этнографических материалов и разнородных данных показаны традиционные способы приготовления ширакских сыров - чечил, усак, канач и лор, и те изменения, которые претерпели эти сорта с конца XIX в. по наши дни.

THE CHEESE-MAKING CULTURE OF SHIRAK REGION

Bazeyan K. R., Aghanyan G.T.

Key words: *Shirak, milk processing, tradition, cheese, chechil, usak, ancash, lor.*

The article is dedicated to the cheese-making culture of Shirak region. In the XIX century two centers of cheese-making cultures were formed: one in Vayots dzor region and the other in Shirak region. These regions have different existing varieties of cheese and many of those varieties are specific for those historical-ethnographic region only.

Shirak is the bearer and successor of the Western Armenian cheese-making traditions (Bardzr Hayk, Vananda, Taron, Bagrevand). Based on a competitive analysis of materials from ethnographic field research and data from various sources, the article shows the traditional ways of

cheese-making in Shirak (checil, usak, lor) and the modifications in those traditions from the 19th century up to now.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աճառյան Հր.-1979**, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան:
2. **Արաքսանց Ա.-2019**, Պանրագործության պատմությունից, Ագրոմշակույթ, N 8, Երևան:
<http://agromshakuyt.card.am/>, վերջին դիտումը՝ 21.02.2022
3. **Բազեյան Կ., Աղանյան Գ.** -2014, Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ (պատմագագագրական ուսումնասիրություն) // Շիրակի հնագիտական և պատմագագագրական ուսումնասիրություններ, հ. 2, Երևան-Գյումրի, 2014:
4. **ԳԱՆ -2021**՝ Դաշտային ազգագրական կյուրեր, Շիրակ, 2021:
5. **ՀՍՀ -1983**՝ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, Երևան,:
6. **Նիկողոսյան Ն.**, Բառարան Լենինականում և շրջանում գործածվող ժողովրդական բառերի, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ բանահյուսության բաժնի արխիվ, FF I, էջեր 6700-6800:
7. **ՆՀԲ -1837**՝ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 596:
8. **Քալանթար Ա. -1898**, Կաթնային արդյունքներ, Ազգագրական հանդես, Դ, Թիֆլիս, 1898:
9. **Зеленский С. -1893**, Экономический быт государственных крестьян Александропольского уезда, Тифлис.
10. **ԿՋԵ -1983**, Культура жизнеобеспечения и этнос /авторский коллектив/, Ереван.

*Ընդունվել է՝ 10. 03. 2022
Գրախոսվել է՝ 23. 03. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022*

Տեղեկություններ հեղինակների մասին

Կարինե ԲԱՉԵՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ bazeyan60@mail.ru

Գրիգոր ԱՂԱՆՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտաշխատող, էլ. հասցե՝ aghanyan@mail.ru

ԱՆԵԾՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ
(հայրեններ, անտունիներ, խաղիկներ)

Լուսինե Ղուկասյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր՝ *հմայական-կիրառական բանահյուսություն, ժողովրդական երգ, անեծք, հայրեն, անտունի, խաղիկ, հավատալիք:*

Ժողովրդական ստեղծագործություններում հանդես են գալիս ժանրային տարբեր դրսևորումներ, որոնք առանձնակի բազմերանգություն են հաղորդում հորինվածքին:

Հայկական ժողովրդական անեծքները, հանդիսանում են հմայական-կիրառական բանահյուսության նախնական տեսակներից և իրենց բնորոշ գծերով առանձնանալով ժողովրդական բանարվեստի մյուս տեսակներից, միաժամանակ սերտորեն կապված են դրանց հետ: Այդ կապը դրսևորվում յուրահատկությունների, պատկերավորման միջոցների, այնպես էլ այս կամ այն ստեղծագործության ամբողջական կամ հատվածային կիրառությամբ: Աշխատանքում քննության են առնվում անեծքների բազմաբնույթ առնչությունները հայկական ժողովրդական երգերին (հայրեններ, անտունիներ, խաղիկներ):

Նախաբան. Անեծքներում առկա պատմի ցանկությունները, անկախ իրենց դրսևորման ձևերից, բովանդակությամբ լինում են մի քանի տեսակի՝ մարմնական, սոցիալ-քաղաքացիական, բարոյա-մարմնական և հոգեկան պատիժների¹: Պատմի այս տեսակները, իրենց տարբեր դրսևորումներով ենթարկվելով բանաստեղծական վերարտադրության, արտացոլում են գտել ժողովրդական երգերում:

¹ Հարությունյան Ա. -1975, էջ 199:

Այսպես, անեծքի և ժողովրդական երգերի փոխադարձ կապի արտահայտության ձևերից մեկը ամբողջական երգի վերածումն է անեծքի, այսինքն՝ երգն ամբողջությամբ կազմված է միմյանց հաջորդող անեծքներից²: Օրինակ՝

Անիծած են հայրն ու մայրն
Ի այն էրեցն, որ զքեզ պասկեց.
Կտրեց զնոսօֆար ծաղիկն
Ի ի կռնի փուշըն պատրուսեց.
Ով զքեզ յիսնէ բաժնեց՝
Քօտտի՛ ի ի ոսկերքըն՝ ցեց.
Հոգին անանց հուրն այրի,
Զոր Տէրըն դիւաց պատրաստեց³:

Այս երգային անեծքում մարմնական տանջանքների ցանկությունն ուղղված է սիրող զույգին բաժանող ամենամոտ հարազատներին՝ հորն ու մորը: Անեծքի է արժանանում նաև սիրած աղջկան պսակող երեցը: Սիրող երիտասարդը, ինչպես տեսնում ենք, ցանկանում է ոչ միայն մարմնական, այլև հոգեկան (Հոգին անանց հուրն այրի), այսինքն՝ դժոխային տանջանքների ենթարկված տեսնել բաժանման պատճառ դարձած անձանց:

Զսիրած տղայի հետ ամուսնանալու հանգամանքը ևս անեծք պարունակող հետևյալ երգ - խաղիկի ստեղծման առիթ է դարձել. անեծքի են ենթարկվում ոչ միայն աղջկազուգը պատրաստող վարպետները, այլև տղայի հայրը:

...Դերձի՛ կ, մատներդ կոտրի,
Մինթանեն բոյովըս չեր:
Զարգյա՛ր, թներդ կոտրի,
Քամարը մեջքովըս չեր:
Սիրածի հերը մեռնի,
Սիրածը սըրտովըս չեր⁴:

Ինչպես տեսնում ենք, անիծվող անձանց չարամաղթվում են անակնկալ մարմնական պատիժներ, այսինքն՝ «փորձանք-պատահարի ցանկություններ»⁵, ինչպես՝ «մատներդ կոտրի, թներդ կոտրի», կամ բացահայտ մահ՝ «սիրածի հերը մեռնի»:

Դժբախտություն, մարմնական տառապանքներ են չարամաղթվում նաև հետևյալ անեծք-խաղիկում:

Պուճուր աղջիկ, մի՛ թըռնի,
Բարով քու մարդը մեռնի,
Չեմ դըմըշի անիծեմ,

² Անեծք – հայրենը, ինչպես խրատ – հայրենը, սիրերգ – հայրենը, օրհնանք – հայրենը, հանելուկ – հայրենը, աղոթք – հայրենը և այլն՝ որպես հայրենի տարատեսակ, առաջին անգամ ուշադրության է արժանացրել Վանո Եղիազարյանն իր «Հայրեններ» ուսումնասիրության մեջ:

³ Մնացականյան Ա. -1995, էջ 78:

⁴ Շահնազարյան Ա. -2015, էջ 208:

⁵ Հարությունյան Ա.-1975, էջ 208:

Վոտներըդ քամին բըռնի
(տարբ. Քամին չոքերըդ տանի,
Քամին ձեռներըդ քաշի)⁶ :

Անեծքների ամբողջական շարան է հանդիպում Վանից և Ալաշկերտից գրառված մի անտունու երեք աղճատված տարբերակներում: Այստեղ ամուսնուն սպասող կինն անհծում է իր չարակամ լրաբերին.

1... Չարկա՛ւմ, տնիկըդ քանդվէր, մնիր անորդի,
Չարկա՛ւմ, տնիկըդ քանդվէր, մնիր մէջ խոպան դաշտին.
Քո դռնիկ բացվէր դէմ չար Գրողին,
Քո երդիսն դէմ չարկամին, դէմ չար քամուն,
Գրողն էլ թող ելմուտ անէր օրն ի բուն:
Չարկա՛ւմ, քո հարս քո թախտից տանէր,
Քո փեսէն եօթնիկ աթոռէն.
Չարկա՛ւմ, տնիկդ վավէլէր, խորտէր,
Տուն անդիորովն սուգի մէջ մնէր:
2... - Չարկա՛ւմ, դու խէր չտեսնաս,
Դուր բանաս դէմ չար Գրողին,
Գայ, խորտի քո դուստրն ու որդին...
3... - Քո տունն աւիրի, չարկա՛ւմ, քո դուռը փակվի՛,
Քո տուն մէջ տապան քարին.
Քո դուր պիտէր դիմաց Գրողին,
Գրող քո տուն մտնէր,
Քո ծեթ – պետ (մեծ ու փոքր) խորտէր⁷:

Չարակամին ուղղված անեծքներում Գրողը, որ ժողովրդական գիտակցության մեջ և հավատալիքներում ընկալվում է որպես մահվան անձնավորումներից մեկը, ինչպես նաև նույնանում է մահացու տարբեր հիվանդություններ հարուցող չար ոգիների հետ⁸, երգում հանդես է գալիս իբրև մի ամբողջ ընտանիքի մեծ ու փոքր անդամների և ունեցվածքի համատարած կոտորածն իրականացնող: Այսինքն՝ չարակամին չարամաղթվում է ոչ միայն մարմնական պատժի ցանկություն, այլև «սոցիալական ծանր ու ողբալի կացություն»⁹, որն ունեցվածքից ընդմիջտ զրկվելն է:

Այս նույն անեծքների սեղմ տարբերակներ՝ իբրև առանձին բանաձևեր, առկա են նաև գրառված ժողովրդական անեծքներում՝ «Գյրողը տունդ, ավահիդ քարոքանդ անի», «Գյրողը գյա տանդ ձեթ պետ խորտի, վայնասուն իսկի մէջ տան տեղացո», «Գյրողը տղէյներդ կոտորի»¹⁰: Գրողի կատարելիք այս համատարած ջարդի ու ավերա-

⁶ Աբեղյան Մ. -1940, էջ 293:

⁷ Աբեղյան Մ. -1940, էջեր 295-296:

⁸ Հարությունյան Ս. -2000, էջ 402:

⁹ Հարությունյան Ս. -1975, էջ 208:

¹⁰ Շերենց Գ. -1899, էջեր 158, 160:

ծությունների պատկերը ցույց է տալիս, որ անիծողը նկատի է ունեցել համաճարակի ու հասարակական ավերմունքների իրական երևույթը, որի դեպքում Գրողը նույնանում է մահացու հիվանդությունները մարմնավորող ոգիների՝ անբուժելի ցավերի, ինչպես նաև մեծ ավերումներն ու կոտորածները մարմնավորող հին աստվածությունների պատկերացումների հետ¹¹:

Անեծքներում ամենախիստ պատիժը մահվան դատապարտումն է, որն իրամենատարբեր դրսևորումներով տեղ է գտել ժողովրդական երգերում: Ընդ որում, դրանք կարող են լինել բնական մահով մեռնելը, ինքնաբերաբար տեղի ունեցող փորձանք – պատահարները, մեկի կողմից կանխամտածված սպանությունը և այլն:

Հայրեններից մեկում սիրո ծոցը վայելելու խոստում է տրվել, որը չի կատարվել: Այդ պատճառով էլ սիրահար տղան զայրույթի պահին կամենում է ամենախիստ ձևով պատժված տեսնել իրեն բարկացնողին՝ նրան ուղղելով ամենադաժան եղանակով մեռնելու անեծքներ.

Թող ընկնի ի ծովն անատակ,
Չըկունքն ի մըսէն ուտեն,
Ու քաշեն ի վըտկէ – վըտակ¹²:

Այսպես, խոստում դրժողը արժանանում է ոչ միայն մարմնական, ավելի կոնկրետ՝ մահվան, այլ նաև «բարոյամարմնական պատժի ցանկությունների»¹³, այսինքն՝ անթաղ, անհիշատակ ու անգերեզման մնալու:

Մահվան դատապարտված տեսնելու ցանկությունն է արտահայտված մեկ այլ հայրենում, ուր անիծվողը կրկին սիրած աղջիկն է, որը չի խղճում սիրող երիտասարդին:

Ով որ սիրոյ տէր մանկան
Չողորմի՝ ինքըն մեռնի,
Իր մահն ի մորին լինի
Ի իր բերնին հաղորդ չի գուի.
Օձերն առ թաուրթ կապեն,
Խատ գորտերն ի սարկաւագնի,
Ագռան ալ էրէց լինի,
Սև ճայէկն իւր հաբեղանի¹⁴:

Մահվան պատժից զատ՝ երգում առաջնակարգ տեղ են գրավում նաև կրոնական ըմբռնումների ու պատկերացումների վրա հիմնված պատժի ցանկությունները, որոնցից է առանց քահանայի, անհաղորդ մեռնելը, որը մեծ դժբախտություն էր համարվում: Իսկ ահրիմանական կենդանիները՝ օձերն ու գորտերը, ինչպես նաև քրիստոնեական պատկերացումներում ագահության, դաժանության և չարության խորհրդանիշ

¹¹ Հարությունյան Ս. -2000, էջեր 401-404:

¹² Մնացականյան Ա. -1995, էջ 233:

¹³ Հարությունյան Ս. -1975, էջ 214:

¹⁴ Աբեղյան Մ. -1940, էջ 238:

դարձածագրավն ու ճայը (ագրավների ընտանիքի թոշուն) պետք է կատարեն թաղման արարողակարգը:

Հետևյալ անեծք-հայրենը հանդես է գալիս իր բազմաթիվ տարբերակներով: Առաջին քառատողում գրեթե նույնությամբ կրկնվում է նախորդ հայրենի համապատասխան հատվածը, իսկ վերջին քառատողում փոխվում են կենդանիների անուններն ու գործառույթները: Թաղման արարողությունը պետք է կատարեն պիղծ կենդանիները. մեռածի վրա պետք է սգա աղվեսը (Աղևեսն լալական լինի), գայլագռավը պիտի արեղա լինի (Գայլագռան՝ իր հաբեղանի), շունը՝ մատաղ (Շունն այլ իւր մատաղ լինի), իսկ շան պոչը մոմի պես պիտի վառվի բոլոր նրանց դիակների մոտ, ովքեր չեն խղճում իրենց սիրողներին:

Ինչպես անեծքներում, այնպես էլ ժողովրդական երգերում հանդիպում են պայմանի ու հետևության վրա ստեղծված անեծքներ, որոնցում «պայմանն ու հետևությունը պատկերացվում են իբրև փափագվող բաղձանք, իբրև ցանկալի հիմունք և հետևություն»¹⁵: Այս օրինաչափությամբ է կառուցված հետևյալ անեծք-հայրենը.

Հա՛յ իմ մագտ ուռի մուրճիկ,
Չորանա՛ս, թե՛ զիս մոռանաս.
Փուտ ու ճիճվի կեր դառնաս,
Թե՛ ծոցիկդ ա՛յլ մարդու բանաս¹⁶...

Այսպես, անեծքն ստանում է պայմանական բնույթ, այսինքն՝ կանխիկ նա, ով իրեն կմոռանա: Այստեղ ևս անեծքը մարմնական պատժի ցանկության դրսևորում է:

Երգերում սիրող տղային շարունակ մտահոգում է մոռացվելու վտանգը, ինչը դառնում է անեծքի դրդապատճառ: Դիտարկենք ևս մեկ օրինակ.

Թող չորնաս թե՛ զիս մոռանաս.
Չորնաս ճիճեկեր դառնաս,
Թե՛ զծոցիկիտ մարդու բանաս.
Մեռնիս ու յանտեն երթաս,
Անդ ճերմակ ծոցդ ի՞նչ տի ենես.
Զայդ այլ որթըներն ուտեն,
Զիս ատկից մահրում կու հանես¹⁷:

Անեծքում արտահայտվում է մեռնելու և անգամ մեռնելուց հետո այն աշխարհում ճերմակ ծոցի՝ որդերին կեր դառնալու ցանկությունը, որն էլ բարոյամարմնական պատժի դրսևորումներից է:

Մոռացվելու վախն է արտահայտված նաև պանդուխտի անտունիներից մեկում.

Կարմիր ու ճերմակ հարսնուկ,
Չորանաս, թե՛ իս մոռանաս,
Չորնաս, փուտ ուռի դառնաս,

¹⁵ Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 136:

¹⁶ Մնացականյան Ա. -1995, էջ 153:

¹⁷ Մնացականյան Ա. -1995, էջ 261:

Թը ծոցիկդ մարդու բանաս,
Շոցիկդ ուր (որ) մարդու բանաս,
Տ'անիծիմ ուր (որ) քայր տի դառնաս¹⁸:

Բերված երգ – անեծքում սիրած աղջկան կամ կնոջն ուղղված անեծքները մարմնական և բարոյամարմնական պատժի բնույթ ունեն: Իրեն մոռանալու, ուրիշին տրվելու դեպքում նա կանիծվի իր կողմից և քար կդառնա, ինչի հիմքում ընկած է անեծքի հետևանքով կերպարանափոխության ենթարկվելու նախնական հավատալիքը: Քարն իր կարծրությամբ ընկալվում է իբրև չորության, անշարժության, անկենդանության, վերջին հաշվով՝ մահվան խորհրդանիշ¹⁹, որի դրսևորումն ենք տեսնում նաև ժողովրդական անեծքներում՝ «Չոր քար դառնաս», «Քար կտրիս» ձևերով: Անեծքի հետևանքով կերպարանափոխության ենթարկվելու հավատալիքն է արտահայտված նաև հետևյալ խաղիկում, որտեղ իբրև պատիժ անիծվողին պիղծ կենդանու՝ շան կերպարանքով տեսնելու ցանկությունն է:

...Ով իմ սիրածին ինձ չի տա,
Սև շան նրման թող ոռնա²⁰:

Այսպիսով, անեծքները, ինչպես և հմայական բանահյուսության մյուս բանաձևերը՝ իբրև «ցանկության խոսքեր», շատ կողմերով առնչվում են ժողովրդական աշխարհընկալմանը, մասնավորապես հնագույն հավատալիքներին, որոնց արտահայտություններից է նաև «թուղթ ու գրի» հանդեպ ունեցած հմայական արարողության գերբնական գործողության հավատքը: Այսպես, հայրեններից մեկում սկեսուրը մխիթարում է հարսին՝ ասելով, թե գիր կանի պանդուխտ որդուն, և նա տուն կվերադառնա: Այստեղ ուշագրավ է այն փաստը, որ հարսը և՛ հավատում է գրի գործողանը, և՛ միաժամանակ զգուշացնում, որ խոստումը պահելու դեպքում նա կօրհնվի, իսկ դրժելու դեպքում կանիծվի.

-Մի՛ լար, ճահիլուկ հարսնուկ,
Մի՛ լար, սիրունիկ հարսնուկ.
Գիր կանես, որդիս կու բերես:
-Գիր անես, որդիդ բերես՝
Աստուծոյ լուսուն տիրանաս.
Գիր չանես, որդիդ չի բերես՝
Կանիծես, ուր քար կու դառնաս²¹:

Պայմանի ու հետևության հարաբերությամբ են կառուցված նաև հետևյալ սիրային անեծք – խաղիկները: Սիրող էական անսահման սեր է տածում իր սիրած յարի նկատմամբ և միաժամանակ տագնապում նրան կորցնելու վախից, ուստի պայման է դնում, որ իրենից հեռացողը կամ իր յարին տիրացողը կարժանանա մարմնական ծանր պատիժների: Օրինակ՝

¹⁸ Աբեղյան Մ. -1967, էջ 252:

¹⁹ Հարությունյան Ս. -2000, էջեր 248-249:

²⁰ Աբեղյան Մ. -1940, էջ 185:

²¹ Մնացականյան Ա. -1995, էջ 669:

1. Ով իմ սիրածըս առնի,
Չի վեղի գրլիսի թագը²²:
2. Ով իմ սիրածն առնի
Չանգալն ընկնի ծրծերը²³:
3. Ինձնից այրի յար բռնես,
Բեմուրաթ հողը մտնես²⁴:
4. Ով իմ ծաղկին ձերը տա,
Արենթաթախ տափին գա²⁵:
5. Թե ինձանից գյուման յար բռնես,
Լեզգին քեզ տանի մորթի²⁶:

Բերված օրինակներում մահվան ձևերը տարբեր են: Դրանք, մեծ մասամբ լինելով բնական ու արհեստական աղետների հետևանքներ, ունեն ողբերգականության և դրամատիզմի շեշտադրումներ, այն է՝ ջահել, անմուրազ և փորձանք-պատահարով մեռնելու, մեկի կողմից իրագործվող սպանություն և այլն:

Սիրելիին ուրանալու, մոռանալու, չսիրելու կամ խոստումը դրժելու դեպքում անհիծվողին չարամաղթվում են ոչ միայն մարմնական, այլև սոցիալական («Թե չըսիրես ինձ սրտով, // Ձեր տուն հըլնի խարաբա», «Քօ հօր տունը ավեր մընա», և այլն) ու կրոնաբարոյական («Թե չես ի սիրել սրտով // Սուրբ Սարգիս՝ Աստուած քեզ խռով, ... թե ուրանա դուն զիս, // Ստեղծօղեն գաւալ քեզի գայ, // Շալայ կռճկտուր ըլաս, // Թե չի գաս գիշերս ի մօտ իս, // «Ով որ յարը յարեն հանի, // Հոգին սատանեն տանի» և այլն») պատժի ցանկություններ:

Մահվամբ և առհասարակ պատժվելու ցանկությունը երգերում ուղղված է ոչ միայն անհիծվողին, այլև նրա ամենամոտ հարազատներին, հատկապես զավակներին և ծնողներին: Օրինակ՝

...Դու՛մա՛ն, աչքըդ կոյր կենայ,
Նենգաւոր լեզուդ չորանայ:
Թող դու՛ջմանըս շատ ապրի,
Իր մեկիկ որդին մեռանի²⁷:

Հայրեններում և խաղիկներում հաճախ է անհիծվում սիրած աղջկա մայրը, որն ըստ սիրահար տղայի՝ միշտ հանդես է գալիս սիրահարների հանդիպումները խափանողի, սիրահար գույգին բաժանողի և աղջկա վատ խորհրդատուի դերում: Անեծքներն ունեն մարմնական պատժի ցանկություն՝ ինչպես բնական մահով՝ «Քո մարն ի վերայ երեկ, // Թող բաժին լինի գրօղին», այնպես էլ ինքնաբերաբար կատարվող որևէ փորձանք – պատահարով մեռնելու՝ «Կրակն ըզքո մարն երէ, // Որ տարաւ երես զքեզ այ-

²² Աբեղյան Մ. -1940, էջ 244:

²³ Նույն տեղում, էջ 238:

²⁴ Աբեղյան Մ. -1967, էջ 287:

²⁵ Աբեղյան Մ. -1940, էջ 155:

²⁶ Նույն տեղում, էջ 246:

²⁷ Աբեղյան Մ. -1940, էջ 220:

լոց», ծանր ու անբուժելի վերքերով տառապելու՝ «Աղջի, ինձի վառեց սերըդ, // Ծակծրկվի քյաֆուր մերըդ»... կամ կրոնաբարոյական՝ «աստվածային պատժի և խոռվության»²⁸ արժանանալու: Այսպես՝

Կրակն ի յերկնից ի վայր,
Թող գքո մայրն ամէն էրէ,
Որ զիս ի քէն ի գատ,
Զքեզ յիսնէ օտար կու պահէ²⁹:

Երգերում ծանր ու անբուժելի վերքերով ծածկվելու պատժի է արժանանում ոչ միայն աղջկա, այլ նաև տղայի մայրը՝ սկեսուրը, որը հիմնականում հանդես է գալիս հարսին տանջողի, չգնահատողի դերում: Եվ հարսն իր անմեղությունը չգնահատողի հարցում ապավինում է Աստծո արդարամտությանը.

Հաց եմ թըխե փըռփըռի,
Գեշ կիսուրը քըրքըրի,
Անեմ – չանեմ՝ չիմանա,
Երթաս աստված քընընա³⁰:

Երգերում անեծքի է արժանանում նաև հայրը, որ հաճախ հանդես է գալիս սիրո գործերը խափանողի, խանգարողի դերում.

Յարը իրիկուն կ'աշէ,
Վուր ինձի իր քովը քաշէ,
Վա՛յ անիծվի քո հերը,
Վոր քե պեսն ինձ չմաշէ³¹:

Կամ՝

Մեռնի՛ քու չուխի հերը,
Դուն խի խլեցիր իմ յարը³²:

Հայրեններից մեկում սիրած աղջկա հորը չարամաղթվում է սոցիալ-քաղաքական բնույթի պատիժ.

Զալու՛մ, ես քեզի կասեմ,
Քո հոր տունըն աւեր մընա³³...

Իր յարին հալումաշ արած խանի մորը մահվան դատապարտված տեսնելու ցանկությունն է արտահայտված հետևյալ խաղիկում.

Փանահ խան, քու մարը մեռնի,
Իմ յարը ին՞ մաշալ (մաշվել) ա³⁴:

²⁸ Հարությունյան Ս. -1975, էջ 214:

²⁹ Մնացականյան Ա. -1995, էջ 329:

³⁰ Աբեղյան Մ. -1940, էջ 254:

³¹ Նույն տեղում, էջ 232:

³² Նույնը:

³³ Մնացականյան Ա. -1995, էջ 84:

³⁴ Աբեղյան Մ. -1967, էջ 318:

Խաղիկներում սիրահար երիտասարդները բողոքում են տերտերների, վարդապետների և առհասարակ եկեղեցական այն կանոնի դեմ, որը սահմանափակում է դրել ազգակցական ամուսնությանը, և նրանց անեծքն ուղղված է ոչ միայն «գլխամեռ տերտերներին», այլև նրանց զավակներին.

Վարդապետ, բալեդ մեռնի,
Սիրածն էլ չհա՞ս կըլի³⁵...

Երգերում անեծքի են արժանանում նաև դուշման – չարակամները, ստախոսներն ու չարախոսները, ինչպես նաև վատ լուր բերողները, որոնք հիմնականում հանդես են գալիս սիրող զույգերին բաժանողի դերում՝ «Ձայտ ամենն չար խօսքն արար՝// Թող կուրնա ու դառնա խաւար», կամ՝ «Կուրնա՛ չարկամնուն աչերն, // Կու կահե զիս քենէ օտար», «...Դուշման, քու աչքը խավար//, Ես սիրել եմ, կ'առնեմ», «Հաց եմ թըխել փըմփըռի//, Վատ խոտողը քըրքըրի» և այլն:

Իր խոսքի ուժին վստահ լինելու հավատով և, ինչու չէ, հոգու զայրույթը մեղմելու համար երգերից մեկում թշնամուն չարամաղթվում է միաժամանակ կուրացում և պապանձում:

Դուշմա՛ն, աչքըդ կույր կենա,
Նենգավոր լեզուդ չորանայ³⁶:

Այսպես, անեծքները հիմնականում ստանում են մարմնական պատժի՝ թշնամուն կուրացած, երբեմն պապանձված տեսնելու ցանկություն: Մարմնական տանջանքների ենթարկվելուց զատ՝ երգերում չարակամին մաղթվում են նաև անակնկալ մարմնական պատիժներ՝ փորձանք – պատահարի՝ «Կոտրի դուշմընի ոտը, // Չթողեց դեր իմ մոտը», «Օձըտա իմ դուշմանին//, Ղարա խաբարը ինձ գա», ինչպես նաև կրոնաբարոյական՝ «Ո՛վ զմեզ աժնեց – բաժնեց//, Կամ ի մեր մէջըն զրուցեց՝//, Հաշեց, թե Կայէն էր նա//, Կամ Յուդա, զոր Տերն անիծեց», և մահվան ցանկություն՝ «Թող մեռնի, ով քօ չարը կամն է», «Մեր դուշմանին յերբ կըլնի՝ // Տեսնեմ սև նաշի վըրա» և այլն:

Ուշագրավ է, որ եթե չարակամ – դուշմանին մաղթվում են մարմնական ամենատարբեր պատիժներ, ապա վատ լուր բերողին հիմնականում մաղթվում է պապանձվելու՝ լեզուն չորանալու մարմնական պատիժ.

Եկին ու խապար բերին,
Թող լեզուն չորնայ բերողին³⁷:

Կամ՝

Ա՛խ չորնա, վա՛խ, այ յար,
Չար մարդու լեզուն³⁸:

Չարակամի նկատմամբ ատելությունը միաժամանակ մարմնական և սոցիալ-քաղաքացիական բնույթի անեծքներով պատիժներ ցանկանալու առիթ է տվել:

³⁵ Աբեղյան Մ. -1967, էջ 314:

³⁶ Աբեղյան Մ. -1940, էջ 220:

³⁷ Մնացականյան Ա. -1995, էջ 164:

³⁸ Շահնազարյան Ա. -2015, էջ 65:

Այսպես օրինակ՝

Օ՛, դուն մուտ ու մի՛ վախիլ,
Խամզողին տունն աւիրի.
Երկու աչքն կուր դառնա,
Գէշ լեզուով զմեզ չանիծէ³⁹:

Չարակամի նկատմամբ ատելության չափը պատկերացնելու համար դիտարկենք հայրեններից մեկում առկա հետևյալ երկտողը.

Երթամ, աղաչեմ զԱստուած՝
Ղամազին իգայ պատուհաս⁴⁰:

Անիծողի մոտ այնքան մեծ է անիծվողին պատժված տեսնելու բաղձանքը, որ նա պատրաստ է անգամ աստծուց խնդրելու՝ պատուհաս ուղարկել չարակամին:

Երգերում չարակամն անիծվում է նաև իր չար աչքի համար, ինչպես օրինակ՝ «Ջինչ որ չար աչկունքն արաւ, // Թող կուրնայ և դառնայ խաւար» կամ «Բերանտ է փոքրիկն անուշ //, Չարկամին աչքն՝ հազար փուշ», ինչը գալիս է «չար աչքի» կամ «հայացքի» հնագույն հավատալիքից:

Այսպես, անիծողը, աղոթքի բանաձևով՝ «չարկամին աչքն՝ հազար փուշ» (հմմտ. ժողովրդական աղոթքներում «Չար աչքին՝ չար փուշ» կամ՝ «Չար աշկը՝ չար փուշ //, Չար նիաթը՝ չար փուշ» բանաձևերի հետ) զրկում է չարակամին իր չար նպատակն իրագործելու հնարավորությունից:

Երգերում անեծքի է արժանանում սիրած աղջկան խլած և նրա հետ ամուսնացած տղան.

Ով ի նորա ծոցն ի քուն,
Թող խօթէ սև օձն իր լեզուն,
Ոչ պաք տա, ոչ պաք առնու,
Ոչ խաղա հետ իւր ծրծերուն⁴¹:

Ինչպես տեսնում ենք, անիծվողին չարամաղթվում է մարմնական այնպիսի ծանր ու դաժան պատիժ, ինչպես սև օձի կողմից տղայի լեզվի խայթվելը, որ նա անկարող լինի համբուրել աղջկան ու վայելել սերը:

Հայրեններից մեկում արտահայտվում է աղջկա հետ ամուսնացած տղային կուրացած տեսնելու ցանկությունը:

... Ով իմ եարիս պագ առնու,
Նա պագսի աչկանցն ի լուսոյն⁴²:

Նույն տղան խաղիկներից մեկում արժանանում է նաև կրոնաբարոյական պատժի ցանկության.

³⁹ Մնացականյան Ա. -1995, էջ 168:

⁴⁰ Նույնը:

⁴¹ Նույն տեղում, էջ 170:

⁴² Մնացականյան Ա. -1995, էջ 182:

Աստծու կեծակը զարկի
Էն քու սեվահոգի փեսիդ⁴³:

Դառնալով սոցիալ-քաղաքացիական պատժի ձևերին, «որոնց միտումն է շրջել, փոխելանիծվող անձի նյութական տվյալ վիճակը սոցիալական ծանր ու ողբալի կացությանը» (Հարությունյան 1975, 208)՝ նշենք, որ դրանք աղերսվում են նաև պանդխտությանը:

Միջնադարից սկսած պանդխտությունը՝ որպես հասարակական չարիք, հայ ժողովրդի ազգային ճակատագրի անբաժան մասն է կազմել:

Ժողովրդական մտածողության մեջ հասարակական այս չարիքն արտացոլված ենք տեսնում անտունիներից մեկում.

Մարդ որ մարդու կանիծի,
Թող ասի՝ կարիքանաս⁴⁴:

Մեկ այլ հայրենում, չնայած կնոջ թախանձանքներին, ամուսինը այնուամենայնիվ, որոշում է մեկնել տարագրության: Վրդովված կինն անիծում է ամուսնուն.

- Երթաս ի դարիպ աշխարհ,
Ի յօտար երկիր ի հեռու,
Լայ սրտիկդ ու զիս ուզէ,
Չկտրի աչերտ ի լալու⁴⁵:

Երգ-անեծքում սոցիալ-քաղաքացիական պատժի՝ պանդխտության և տարագրության ցանկությունից զատ, սիրած տղամարդուն չարամաղթվում են նաև սիրո կարոտից տանջվելու հոգեկան տվայտանքներ կամ պատիժներ:

Սոցիալ-քաղաքացիական պատժի ցանկությունն է արտահայտված նաև այն հայրեններում, որտեղ մայրն անիծում է որդուն՝ տարագիր – դարիբ դառնալ:

Իմ մայրըս որ զիս եբեր,
Անիծեց, թէ՛ դարիպանաս,
Երթաս ի յօտար երկիր,
Հայր ու մայր՝ եղբայր չունենաս.
Ուր որ քոյր՝ եղբայր տեսնուս՝
Դարձնես զերեսիկդ ու լաս.
Մն այնքան սնարք առնես,
Ի վերայ հողին քնանաս.
Գլխարկդ այլ ի վեր կալնուս,
Քան զԱստուած այլ ճար չունենաս⁴⁶:

Կամ՝

Մարիկն անիծեց զորդին,

⁴³ Աբեղյան Մ. -1940, էջ 223:

⁴⁴ Աբեղյան Մ. -1967, էջ 245:

⁴⁵ Մնացականյան Ա. -1995, էջ 275:

⁴⁶ Մնացականյան Ա. -1995, էջ 255:

-Ի՛մ որդի, դուն դարիպանաս.
Երթաս ի յօտար երկիր,
Ձդարիպին դատրն գիտենաս.
Ջքարն անարք առնես,
Ի վերայ աւազին քնանաս.
Վաղվէնէ քնէն ի վեր ելնես,
Քան զաստուած այլ ճար չունենաս⁴⁷:

Բնական է, որ մայրը որդուն մարմնական պատժի ցանկությամբ անեծք չի չարամաղթում, այլ հարազատներից կարոտ, անտեր ու թափառական մնալու ցանկություն է արտահայտում: Այսինքն՝ տղային չարամաղթվում են սոցիալ – քաղաքացիական և հոգեկան պատիժների ցանկություններ:

Պանդուխտն իր ընտանիքի անդամների համար սուրբ և նվիրական անձ է համարվում, և խաղիկներից մեկում մարմնական ծանր ու անբուժելի վերքերով ծածկվելու անեծքի է արժանանում այն անձը, ով կմոռանա իր պանդուխտին.

Ով որ դառնա իր դարիբէն,
Թող խանա գոթու յարեն⁴⁸:

Հայրեններում գեղարվեստորեն են պատկերվում մարդու հոգեկան տառապանքները՝ սուգը, տխրությունը, վիշտը: Մասնավորապես հետևյալ հայրենում բանաստեղծական հզոր երևակայությամբ է պատկերված երիտասարդի՝ թեկուզ մահվան գնով սիրած կնոջը պատժելու բաղձանքը.

Գրբկիկ իմ վզիս ածես,
Ես մեռնիմ ի քո վրայ,
Դուն ըզքո ծամերըն կըտրես,
Կըտրես, մաշալայ վառես,
Ձեռքդ առնուս ու զիս փընտըռես,
Գաս, իմ հողուերօքս անցնիս,
Հեզ լընուս զաչերտ ու թափես.
Ջապառած վեմըն համբուրես⁴⁹:

Մանրամասնորեն նկարագրելով սգացողի հոգեվիճակն ու գործողությունները (ծամերը կտրել, արտասվել, շիրմաքարը գրկել ու համբուրել և այլն) հեղինակը չի խորշում մեռնելուց, միայն թե դրանով հոգեկան տանջանքների ենթարկի սիրած աղջկան:

Եզրահանգում. Անեծքները, պատկանելով բանահյուսության վիպական սեռին, զանազան ձևերով առնչվում են քնարական սեռի ստեղծագործությունների՝ ժողովրդական երգերի հետ, ինչը խոսում է վերոնշյալ բանաձևային այդ կառույցի՝ հնուց ի վեր ակտիվ կենցաղավարման և կիրառման, ինչպես նաև դրանց և երգերի՝ ժողովրդի կյանքում ունեցած մեծ դերի մասին: Ժողովրդական երգաշխարհում անեծքների

⁴⁷ Նույն տեղում, էջ 342:

⁴⁸ Աբեղյան Մ. -1940, էջ 155:

⁴⁹ Մնացականյան Ա.-1995, էջ 377:

տարատեսակ դրսևորումները վկայում են հմայական խոսքի հանդեպ դարերի խորքից եկող և նրանց զաղափարական իմաստ ու կարևորություն հաղորդող հավատքի մասին:

ПРОКЛЯТИЯ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ ПЕСНЯХ (айрены, антунни, песенки)

Креджян Л. Х.

Ключевые слова: *заговорно-заклинательный, прикладной фольклор, народная песня, проклятие, айрены, антунни, песенка, верования.*

Армянские народные проклятия имеют много общего с другими жанрами фольклора, в том числе с народными песнями.

Связь проклятий с народными песнями проявляется как в применении сюжетно-структурных особенностей, изобразительно-выразительных средств, так и в использовании тех или иных произведений полностью или частично. Разнообразное проявление проклятий в народном песнопении свидетельствует как о наличии пережитков первобытного синкретического состояния искусства, а также о продолжительности взаимовлияния и взаимодействия различных жанров фольклора в своем историческом развитии.

MANIFESTATIONS OF CURSES IN ARMENIAN FOLK SONGS (Hayrens, Antunis and Songs)

Ghrejyan L. KH.

Key words: *magic-applied folklore, folk song, curse, hayren, antuni, song, belief.*

Armenian folk curses have much in common with other genres of folklore, including folk songs. The connection of curses with folk songs is manifested both in the use of plot-structural features, visual and expressive means, and in the use of certain works thoroughly or partially. Various manifestations of curses in folk songs testify the presence of remnants of the primitive syncretic state of art, as well as the duration of mutual influence and interaction of various genres of folklore in its history.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Աբեղյան Մ. -1940, Գուսանական ժողովրդական տաղեր: Հայրեններ և անտունիներ, «Հայպետհրատ», Երևան:
2. Աբեղյան Մ.-1967, Երկեր, հ. Բ. ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան:
3. Աբեղյան Մ. -1940, Ժողովրդական խաղիկներ, «Հայպետհրատ», Երևան:
4. Եղիազարյան Վ. -2007, Հայրեններ, «ՄԻՄ» տպագրատուն, Վանաձոր:

Անեծքը հայկական ժողովրդական երգերում (հայրեններ, անտունիներ, խաղիկներ)

5. **Հարությունյան Ս. -1975**, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանասիրության մեջ, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան:
6. **Հարությունյան Ս. -2000**, Հայ առասպելաբանություն, «Համագգային», Բեյրութ:
7. **Մնացականյան Ա. -1995**, Հայրեններ. քննական բնագիրը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Շ.Մնացականյանի, «Նաիրի», Երևան:
8. **Շահնազարյան Ա.-2015**, Հազար ու մի խաղ: Ժողովրդական երգերի ժողովածու, վերակազմեց Ա.Շահնազարյանը, Երևան, «Կուլտուրալ ռենեսանս» հիմնադրամ:
9. **Շերենց Գ. -1899**, Վանա սագ, մասն Բ, Թիֆլիս:

*Ընդունվել է՝ 26. 02. 2022
Գրախոսվել է՝ 02. 04. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022*

Տեղեկություններ հեղինակի մասին

Լուսինե ՂԱԵՁՅԱՆ՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Գավառի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, էլ. հասցե՝ ghrejyan76@mail.ru

ՀՏԴ՝ 930.272

DOI: 10.52971/18294316-2022.25.1-30

ՄԱՐԿՆԵՐԻ ԵՐԿՐԱՆՈՒՆԸ՝ ԴԱՇՆԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ

Մարգիս Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ Ուրարտու, թագավորություն, դասեր, Տուշպա, քուրմ, դաշինք, միություն, Արևի աստված, իրանական, հնդկական, արդար:

Հոդվածում քննարկվում է Ուրարտու թագավորության՝ որպես դաշնային պետական կազմավորում ստեղծված լինելու և դրա հետ ուղղակի կապի մեջ եղող պետության անվան առաջացման հարցերը: Հնդեվրոպական միասնության դարաշրջանից եկած ավանդույթի համաձայն՝ Արևի աստվածը, իրեն վերապահված իրավարար գործառնություններից ելնելով, հանդես էր գալիս նաև որպես եռադասյա հասարակության դասերի միջև կնքված դաշինքի հովանավոր: Արևի աստվածը պաշտելի էր Ուրարտական թագավորության երեք դասերի համար, բայց առավելագույն պաշտամունքի նա արժանացել էր քրմական դասի վերնախավի կողմից: Վերջինիս կենտրոնատեղին Վանա լճի արևելյան ափին գտնվող Տոսպ-Վանն (սեպագր. Դսթա) էր: Իր ունեցած ռազմավարական կարևոր դիրքի հետ միասին այս հանգամանքը ևս իր կարևոր դերն էր ունեցել նորաստեղծ պետության մայրաքաղաքի ընտրության հարցում:

Նախաբան. Կելիշինի երկլեզվյան արձանագրության ասուրական տեքստում Իշպուինի Մարդուրդին (մ.թ.ա. 825-810թթ.) իրեն կոչում է «արքա Նաիրի երկրի», իսկ ուրարտականում՝ «արքա Շուրա երկրի, արքա Բիաինա երկրի, տերը Տուշպա-քաղաքի»¹: Նույն կերպ է վարվել Ռուսա II-ը (մոտ մ.թ.ա. 685-645 թթ.): Զվարթնոցի արձանագրության մեջ նա ասում է. «Ռուսան՝ Արգիշտիի որդին, թագավոր է, թագավոր մեծ, թագավոր Շուրայի, թագավոր Բիայնայի, թագավոր թագավորների, տերը Տուշպա քաղա-

¹ Ղափանցյան Գր.-1940, էջ 143:

քի»²: Մրանցից վերջինը՝ Տուշպան (Տոսպ-Վան) Ուրարտու թագավորության մայրաքաղաքն էր և նրա նույնանուն շրջանը: Բայց Ուրարտուի թագավորը նրա թագավորը չէր համարվում, ինչպես էր Շուրայի և Բիայնայի դեպքում:

1. Տոսպ-Վանի արևադարձային քրմության դերը:

Արտաշիայան դարաշրջանում Տոսպ-Վանը լայն ինքնավարություն ուներ, որի մասին է խոսում նրա կառավարիչների կրած «արքա» տիտղոսը: Դրանցից մեկը իր թողարկած դրամի մակագրության մեջ իրեն կոչում է «Տոսպի Միհրդատ արքա»³: Կասկած չկա, որ այդպիսի արտոնյալ կարգավիճակ Տոսպ-Վանի իշխողներն ունեցել են ավելի վաղ ժամանակներում ևս: Մեր կարծիքով, այդ կարգավիճակը նրանք ունեցել են դեռևս ուրարտական դարաշրջանում: Ուրարտական թագավորներն իրենց «թագավոր Շուրայի, թագավոր Բիայնայի» կոչելուց հետո, իրենց անվանում էին *alusi Tušpa patari*, այսինքն՝ «Տուշպա քաղաքի կառավարիչ», ինչպես Ն. Ադոնցն է նկատում, «Տուշպայի *alusi* լինել՝ նշանակում է կուսակալի տիտղոսով նահանգի, մայրաքաղաքի տեր լինել»⁴: Այլ կերպ ասած, ուրարտական թագավորը Տուշպա-Վանի աշխարհիկ տերն էր, որպես արքայից արքա, իսկ հոգևոր տերը տեղի քուրմ-արքան էր⁵:

Նույնպիսի երևույթ է հայտնի հին Արմավիրից: Այստեղ, ինչպես Հ. Մանանդյանն է նկատում, «իշխում էր իբրև գերագույն քուրմ և թագավոր Երվանդ Վերջինի եղբայր Միթրասը», որը Մովսես Խորենացու Երվանդն է: Իր թողած հունարեն արձանագրության մեջ այս Միթրասը իրեն, թագավոր եղբորը համահավասար, *βασιλεύς* է կոչում⁶: Այս քուրմ-արքայի անունն արդեն խոսում է իր պաշտամունքի մասին: *Μιθρας*-ը ծագում է *Μιθρα*//*Միհր* անունից, որն իրանական ծագմամբ դիցանուն է՝ տրված Արևի աստծուն: *Μιθρας* ձևով այն Արևի աստծու համար կիրառվել է նաև Կոմագենեում: Երվանդունի Անտիոքոս թագավորի կոմագենյան Նեմրոթ լեռան սրբավայրի սինկրետիկ բնույթի աստվածներից մեկի կուրքն ունի հունարեն հետևյալ մակագրությունը. *Απολλων Μιθρας Ηλιος Ερμης*⁷: Եթե Արմավիրում և Կոմագենեում առկա է հայկական աստծու անվան հունականացված ձևը, ապա Տոսպ-Վանում կիրառվել է հայ-իրանական *Միհր* ձևը (հմմտ. *Միհրդատ*//հուն. *Μιθριδάτης* < իրան. *Miθridāta*), այսինքն՝ «Միհր աստծու տված», «Միհրատուր»:

Սարդուրի II-ի (մ.թ.ա. 764-735 թթ.) գահակալության վերջին էին սկսվել դժգոհությունները նրա դեմ: Դրա համար խթան կարող էին հանդիսանալ նրա կրած պարտությունները Ասորեստանի թագավոր Թիգլաթփալասար III-ից: Վերջինիս կողմից Տուշպայի գրավումն ու կողոպտումը տուշպայական քրմերին դրդել էր նրա հաջորդ

² Ղափանցյան Գր. -1940, էջ 210:

³ Խուրշուդյան Է. -1998, էջեր 167-174:

⁴ Ադոնց Ն. -1972, էջ 216: Ըստ այդմ՝ Կելիշինի երկլեզվյան արձանագրության մեջ ուրարտական *alusi*-ի դիմաց դրված է ասորեստանյան *šakin* տերմինը, որը «քաղաքի կառավարիչ» էր նշանակում (*Ме-щанинов И. -1978. с 34*):

⁵ Մանանդյան Հ. -1946, էջ 19:

⁶ Նույնը:

⁷ Սարգսյան Գ. -1966, էջ 26:

Ռուսա I-ի օրոք (մ.թ.ա. 735-713 թթ.) միանալ ապստամբ զինվորականներին⁸: Ըստ երևույթին, ապստամբությունը կանխելու համար Սարդուրի II-ը իր տարեգրության վերջում նշել էր, թե ինչ բարիքներ են իրենից ստացել զինվորական և քրմական դասերը: Գանձադրոս արձանագրության՝ մեզ հետաքրքրող այդ հատվածի առաջին մասը վերաբերում է զինվորական դասին, երկրորդ մասը, մեր կարծիքով, քրմական դասին: Բերում ենք արձանագրությունից այս երկրորդ մասը, բաց թողնելով թարգմանիչ Հ. Կարապյոզյանի բերած հավասարման նշանով և փակագծերով բացատրությունները: Ահա այն. «Հարյուր քսանմեկ մարդ, տասը հազար չորս հարյուր ութ ձի, հարյուր երեսուներկու ջորի, տասներկու հազար երեք հարյուր քսանմեկ կով, ինն հազար երեսունվեց եգ: Ընդամենը՝ քսանմեկ հազար երեք հարյուր հիսունյոթ անասուն (իմա՝ տավար-Ս.Պ.), երեսունհինգ հազար չորս հարյուր վաթսունյոթ ոչխար, երկու հազար հարյուր տասներջորս զենք մարտական, հազար երեք հարյուր երեսուներկու աղեղ, քառասունյոթ հազար ինն հարյուր յոթանասուն նետ, հարյուր երկու բյուր երկու հազար հարյուր երեսուներեք «քապե» գարի, հարյուր տասնմեկ «ակարկե» գինի, ութսունվեց «ակարկե» յոթ «տերուսե» քսան «քալե» յուղ, յոթ հազար յոթանասունինը «մանա» պղինձ՝ երեք հարյուր երեսունվեց ամսում *Ուրուրդեների* համար ոչնչացրի: Սարդուրե Արգիշտորդին արքա (է) հզոր, արքա մեծ, արքա *Շուրեղե* (երկրի), արքա *Բիաինեղե* (երկրի), արքա արքաների, իշխանը Տուշպայական քաղաքի»⁹:

Նախապես ենթադրում էին, որ *ururd*-ը ցեղանուն է, և այս ցեղանունը ուրարտացիների (իբր ո՛չ հայ ուրարտացիների) ինքնանվանումն է՝ վկայված ուրարտական սեպագրության լեզվով: Ուրարտական սեպագրությունն առաջին ընթերցողներից մեկը՝ Ի. Մեշչանինովը, 1924 թ. իր առաջարկած *Uratri-Urartu-Urarda* կապը ոչ միայն մերժեց, այլև *ururda*-ի առթիվ գրեց. «Այդ բառով նշվում է մարդկանց ինչ-որ կատեգորիա, հազիվ թե ցեղի անուն, որովհետև վերջինը սովորաբար ունի անձ ցույց տվող ցուցիչ, ոչ թե AMÉLU «մարդ»¹⁰: Որ Սարդուրի II-ի հոգածության առարկա ուրուրդները արտոնյալ էին, կասկած չկա: Բայց դա ցեղանուն չէ: Ըստ Ֆ. Քյոնիգի՝ այդ բառով նշվել է ինչ-որ պետական պաշտոնյա¹¹: Ավելի ուշ Հ. Կարապյոզյանը ևս վերանայեց իր մոտեցումը՝ ուրուրդների մասին գրելով. «կամ ինչ-որ կատեգորիայի մարդիկ են, կամ Բիաինական բանակի հատուկ ռազմական միավորման մարտիկներ»¹²: Բայց բանն այն է, որ դրանից առաջ զինվորական դասին տրամադրված միջոցների մասին խոսքը Սարդուրի II-ն ավարտել է «Սույն տրվածը [=հաղորդվածը] զինվորների համար [=օգտին] ոչնչացրի [=կրճատեցի]» բառերով¹³: Էլ ինչու պետք է դրանից հետո թագավորը նորից խոսեր զինվորականության ինչ-որ տեսակի մասին: Այդ տեսակն էլ ուրարտագետը համարում է կառավարիկներ՝ նրանց անվան մեջ տեսնելով հայերեն *վարդար* / «կառավար, կա-

⁸ Պետրոսյան Ս. -2006, էջեր 194-196:

⁹ Меликишвили Г. -1960. надп. № 55: ՀԺՊԸՐ -1981, էջեր 80-81:

¹⁰ Мещанинов И. -1978. էջ 337: Իր նախկին կարծիքին էր մնում Գ. Մելիքիշվիլին (*Меликишвили Г. - 1954. с.с. 21, 155*), ըստ որի *Uratri-Urartu-Urartu* անունները փոխադարձ կապի մեջ են:

¹¹ König F. -1957, s. 208.

¹² Կարապետյան Յ. -1998, էջ 45:

¹³ ՀԺՊԸՐ. -1981, էջ 80:

ռամարտիկ» բառը՝ ծագած *վար արմատից -որդ վերջածանցով՝ ur-/uar հնչյունափոխությամբ¹⁴:

Բառի մասնատումը պետք է ճիշտ համարել: Այն բաղկացած է ur- և -urd/-ord բաղադրիչներից, բայց ստուգաբանության վերաբերյալ նույնն ասել չենք կարող, որովհետև ուրարտական դարաշրջանի հայերենում այդիմաստ վար արմատ չի եղել: Այն իրանական փոխառություն է (հմմտ. ավեստ. vādayeiti «վարել, քաշել, քարշ տալ»¹⁵)՝ կատարված հետուրարտական դարաշրջաններում: Մ.Այվազյանի կարծիքով, տերմինը նշանակել է «զինագործ, մետաղագործ, դարբին», ըստ նրա, առաջացած նախնական «երկաթ ձեռող, մրճավոր» իմաստներից¹⁶: Այս դեպքում էլ անբացատրելի է մնում, թե Սարդուրի II-ը ինչու է այդքան շոյալ գտնվել մետաղագործների համեստ և նվազ խավի նկատմամբ:

Վանա լճից արևելք տարածված շրջաններում արևի պաշտամունքի հարատև գոյության և դրանց քրմական հզոր կենտրոն լինելու իրողությունները¹⁷ հիմք են տալիս պնդելու ururd տերմինի «քրմական» բնույթի վրա: Մrurd<ur-urd տերմինի -urd բաղադրիչն իսկապես կարող է լինել հայ. -որդ կամ -ուրդ վերջածանցը. հմմտ. այգորդ, անդէորդ, նաւորդ կամ ժողովուրդ, խորհուրդ, յագուրդ բառերի համապատասխան -որդ և -ուրդ վերջածանցները: Մr- արմատը, մեր կարծիքով, ծագում է հ.-ե. *or- «աղոթել, դիմել աստվածներին» արմատի *ōr- երկար ձևից: Հայերեն ուրանալ բառի առթիվ Հ. Աճառյանը գրում է. «Բնիկ հայ բառ՝ հնիւ. ur- կամ օr- արմատից, որ հնդեվրոպացոց ծիսական տերմիններից մեկն էր և նշանակում էր «ծիսական մի բանաձև արտասանել՝ հատկապես աղերս կամ անեծք»¹⁸: Արմատակից բառեր են. հուն. α'ρνέομαι «ուրանալ, ժխտել, մերժել», α'ρύει «հակաճառել, գոչել», α'ρ'ά «աղոթք, անեծք», լատին. orō «աղոթել», ռուս. ораѣ «գոչել, բղավել, բարձրաձայն երգել», լատիշ. urdit «քշել, հեռացնել, նախատել»¹⁹: Մրանց շարքին են պատկանում նաև իւթ. arĩa- «գուշակի միջոցով հաստատել», հին հնդկ. ā'ryati «փառաբանել» և այլն²⁰: Ըստ այսմ, ururd- տերմինի ընդհանրական իմաստը «աղոթող (մարդ)», այսինքն՝ «քուրմ» էր լինելու:

Հնդեվրոպական այս նույն արմատն է, մեր կարծիքով, առկա Մrartu<Ur-artu անվան առաջին բաղադրիչի հիմքում: Բայց նախ Ուրարտու թագավորության ստեղծման պայմանների մասին: Ի տարբերություն իրեն ծնած Նաիրի ցեղամիության, որն ավելի շուտ Հայկական լեռնաշխարհի ցեղային երկրների ռազմական դաշինք էր հիշեցնում, Ուրարտու թագավորությունը հետևանք էր սոցիալ-տնտեսական առումով բարդ կառուցվածք ունեցող հասարակությունների երևան գալու, երբ Մերձավոր Արևելքում դասերից ձևավորվում էին նրանցից առաջացած դասակարգերը²¹: Ուրարտուն չէր ստեղծ-

¹⁴ Կարագեօզեան Յ, -1998, էջ 46:

¹⁵ Աճառյան Հր. -1979, էջ 313:

¹⁶ Այվազյան Մ. -2008, էջեր 94-95:

¹⁷ Պետրոսյան Մ. -2006, էջեր 339-345, 395-402, 418-421:

¹⁸ Աճառյան Հր. -1977, էջ 614:

¹⁹ Նույնը:

²⁰ Гамкрелидзе Т., Иванов В. -1984. с.с. 802-803.

²¹ Պետրոսյան Մ. -2006, էջեր 168-169, 172-174:

վել որպես միափեծան թագավորով կառավարվող պետություն, այլ ինչպես Գր. Ղափանցյանն էր նշում, այն որպես «մի ֆեդերատիվ կամ ավելի ճիշտ կոնֆեդերատիվ քաղաքական միություն»²² էր, որը միայն խաղիապաշտ Իշպուհինից սկսած հակված էր վերածվելու բացարձակ միապետության²³: Ինչպես վերևում տեսանք, նաիրյան երկրներից միայն երեքն են հիշատակվում Ուրարտուի թագավորների լրիվ տիրադատության՝ Շուրան (Վանա լճից հյուսիս), որը ներկայացրել է գինվորական դասը²⁴, Բիայնան (Վանա լճից հյուսիս-արևելք), որը ներկայացրել է բարիքներ արտադրողների դասը,²⁵ և Տուշպան (Վանա լճից արևելք), որը ներկայացրել է քրմական դասը²⁶: Հստակ է միավորման սկզբունքը՝ հնդեվրոպական միասնության դարաշրջանից և Հայկից եկած հասարակության եռադասյա ավանդական մոդելի պահպանումը²⁷:

2. Արևի աստծու դերը՝ որպես դաշինքների հովանավոր աստված:

Ո՛չ միայն ռազմավարական կարևոր դիրք ունենալու պատճառով էր դաշնային միության մայրաքաղաք ընտրվել Վանա լճի արևելյան ափին գտնվող Տուշպան: Այն Արևաստծու պաշտամունքի և քրմական դասի հնագույն կենտրոն էր, իսկ արևի և Արևաստծու պաշտամունքը նախապես դաշնային եռյակը կազմած երկրներից յուրաքանչյուրի գլխավոր պաշտամունքն էր²⁸: Ի նկատի առնենք, որ Հին աշխարհում դաշինքներ կնքում էին որևէ աստծու (կամ աստվածների) հովանավորությամբ, որոնք էլ լինում էին ծիսական աղոթքով հաստատվող պայմանի (կամ պայմանագրի) վկան և պահպանման երաշխավորը: Հնդեվրոպական շատ ժողովուրդների համար այդպիսին կարող էր լինել միայն արևի աստվածը: Արևի աստծուն ձևաված խեթական օրհներգում ասվում է. «երկրների ծեսը, պայմանները (պայմանագրերը) դու ես հաստատում»²⁹:

Իրանական Միթրան, որի անունը (*Mithra*) նախապես «պայման, պայմանագիր», «համաձայնություն» էր նշանակում, երբ հանդես էր գալիս որպես արևի աստված, վկան և պահպանող էր դառնում ամեն մի պայմանավորվածության (անգամ ամուսնական միության) և պայմանագրի³⁰: Նրա հին հնդկական անվանակից *Mitrá*-ն, որի անունը նախապես նշանակում էր «ընկեր, բարեկամ», «պայման, պայմանագիր», սոցիալական կառուցվածքների մեջ մարդկանց միավորողն էր, նրանց հետ պայմանագրեր կնքողը՝ ըստ տիեզերական ընդհանրական *rita/ṛtá* օրենքի և արեգակի ընթացքի, նա էր արդարություն իրագործողը, սոցիալական և բարոյական կարգի պահպանողը³¹: Սանսկրիտում *ṛta* նշանակում է «ուղիղ, արդարացի, իսկական, հարմար», «ճշմարիտ», «կարգ, կանոն», «ճշմարտություն, իսկություն», «բարեպաշտական գործ»³²: Անկասկած, հնդեվ-

²² Ղափանցյան Գր. -1940, էջ 94:

²³ Պետրոսյան Ս. -2006, էջեր 198-201:

²⁴ Պետրոսյան Ս. -2006, էջեր 183-185:

²⁵ Պետրոսյան Ս. -2006, էջեր 178-182:

²⁶ Պետրոսյան Ս. -2006, էջեր 182-183:

²⁷ Dumezil G. -1952; Նույնի -1968.; Նույնի -1974.

²⁸ Պետրոսյան Ս. -2008, էջեր 29-36:

²⁹ Keilschrifturkunden aus Boghazköi -1923-1939 XXXI, 127, 16-17.

³⁰ Топоров В. -1988. сс. 154-157.

³¹ Топоров В. -1988. с.с.157-158.

³² «Wörterbuch Sanskrit - Deutsch»-1980. s. 91.

րուպական եռադասյա հասարակական կարգը պահպանած մեր նախնիները ևս նույն-պիսի դերակատարում վերագրած են եղել իրենց արևաբնույթ աստվածներին, որը ևս իր դերն է ունեցել արևապաշտության կենտրոն Տուշպա-Վանը մայրաքաղաք ընտրելու հարցում:

Ուրարտու թագավորության՝ դաշնային սկզբունքով ձևավորված լինելու իրողությունը հնարավոր է դարձնում հիմնավոր մոտեցում ցուցաբերելու նաև Մարտու անվան ստուգաբանության հարցում: Ն. Ադոնցը ժամանակին նշում էր, որ «Ասորեստանցիները գործածել են *Ուրարտու* և *Նաիրի* տերմինները, բայց դրանից դեռևս չի բխում, որ սրանք ասուրական, այսինքն՝ սեմական ծագում ունեն»³³: Հ. Կարագոզյանը ենթադրում է, որ «*Ուրարտու* (^{KUR}Մարտու) երկրի անունը զուտ բիայնական է և կազմված է առայժմ անհասկանալի *ուրար* (*urar*) արմատով և, հավանաբար, հոգնակիության *տու* (*tu*) ածանցով»³⁴: Մեր կարծիքով, Մարտու բաղադրիչներից կազմված անվան մեջ առաջին Մար- բաղադրիչը (այդ նշվեց վերևում) նույնական է *ur-urd-* «աղոթող մարդ, քուրմ» նշանակող բառի առաջին բաղադրիչի հետ, իսկ երկրորդ բաղադրիչը՝ *-artu-*ն ծագում է *h.-ե. *ar-* արմատից *-t* ածականով: Այս արմատի իմաստը «միանալ, հարմար(վ)ել միմյանց» է՝ իր արտացոլումը գտած հայ. *յար* (*յ-ար*) «կից, կցորդված, կողք կողքի միացած» արմատում³⁵ (սրանից ունենք *յարմար* <*յ-ար-մ-ար* բառը՝ «պատշաճ, վայելուչ, վայել, հարմարություն» և այլն):³⁶

Հնդեվրոպական արմատի *-t* ածականով **art-* ձևը նախ հանդիպում է ուրարտական Արևի աստծու (^DUTU/^DŠiuiini) հետ սերտ կապի մեջ եղած *Արտուվարասի* (^DArtuvarasi եզ. թիվ, ^DArtuvarasae հոգն. թիվ) կոչված սրբությունների անվան մեջ: Մ. Հմայակյանը «Շիվինիի գորքեր»//*Արտուվարասիներ* հասկացությունը զուգադրում է հայ առասպելաբանությունից հայտնի «Արևի աստծու թիկնագործի» հետ³⁷: Մեր կարծիքով, *Արտուվարասի* բաղադրիչներով կազմված բառի *վարասի* բաղադրիչը ցույց է տալիս, թե ինչպիսին է եղել այդ թիկնագործի բնույթը, իսկ առաջին բաղադրիչը՝ *արտու-*ն, բացահայտում է նրա պատկանելությունը³⁸: Մեր կարծիքով, *Artu-*ն եղել է հին հայոց Արևի աստծու անուններից կամ մականուններից մեկը՝ «արդար» բազմաբովանդակ և արմատակից բառի բոլոր իմաստներով (հմմտ. *Արեգակն արդար* կայուն բառակապակցությունը):

Արտուվարասիների անվան *վարասի* բաղադրիչի իմաստը քաջ հայտնի էր անգամ XIX դարի վերջերի վանեցիներին: Առասպելն այդ առթիվ ասում էր. «Վարագա սարեն կ'երևա արշալույսեն առաջ հարևելս արևուն ծագումն. ահագին լերան մը տակեն կ'»

³³ Ադոնց Ն. -1972, էջ 269: Nairi երկրանունը բուն հայկական ծագում ունի՝բաղկացած Na-ir-i բաղադրիչներից: Հմմտ. հե. *(s)nā- «հոսել, հեղուկ» (> հայ. նայ «գաց, խոնավ») արմատը, -er մակբայակերտ վարջածանցը և (i)ā վերջածանց-տեղանվանակերտը (տե՛ս Պետրոսյան Ս./ՊԲՀ/-2006, էջեր 238-239):

³⁴ Կարագոզյան Հ. -1998, էջ 13:

³⁵ ՀԱԲ., III, էջեր 387-388:

³⁶ Նույն տեղում, էջեր 389-390:

³⁷ Հմայակյան Ս. -էջ 29:

³⁸ Պետրոսյան Ս. -2006, հ. 9, էջեր 26-27:

ելլեն նախ 12 *դավազներ*, սև սև արաբներ, և այդ լերան վրա լուսեղեն ճպոթներով ճառագայթի պես կը զարնեն. լեռը կը ցածնա, ամեն սարերը իրենց գլուխը կը խոնարհեն... հանկարծ արևու ոսկի գլուխն ու հրեղեն բրջամն կ'երևա»³⁹: Գ. Սրվանձոյանի բերած և ընդգծած *դավազ*-ը (դավաս) արաբերեն բառ է և «նետաձիգ» է նշանակում: Այն լինելու է միջնադարյան փոխառություն՝ Վանի բարբառում փոխարինած բուն հայերեն բառին: Իսկ վերջինը լինելու է **վարս*-ի (>սեպագր. **varasi*) տեսքն ունեցած մի բառ՝ բաղկացած *վարս* արմատից՝ հանրահայտ *-ի* վերջածանցով: Այս արմատը պահպանված է հայերեն *վարսամ* (<վարս-ամ) «գավազան, բիր, ցից», *վարսել* (<վարս-ել) և *վարսաւորել* (վարսաւոր-ել) «գետին գամել, հողի մեջ մխել» հավաստի ստուգաբանություն չունեցող բառերում⁴⁰: Քանի որ արևաբնույթ աստվածությունները նաև հմուտ նետաձիգներ էին, ուստի **վարսի*/*varasi* բառի համար կարելի է ընդունել «նետաձիգ» իմաստը և լուսեղեն նետեր համարել վանյան առասպելում հիշված նետաձիգ/դավասների «լուսեղեն ճպոթներ»-ը: Հիշենք Շիվինիի հերարձակ պատկերները ուրարտական արվեստի գործերում՝ նետ-աղեղը ձեռքին:

Հնդեվրոպական նույն **ar*- արմատի *-t* աճականով **art* ձևից հայերենում ունենք նաև *արդ* «կարգ, կարգավորություն, ձև, սարք», որից *արդար* (*արդ-ար*՝ *-ար* վերջածանցով) «ուղիղ, ճշմարիտ, հավատարիմ (մարդ)» և այլ նշանակություններով⁴¹: Հմտ. նաև պաշտամունքի և կրոնի ոլորտ թափանցած այնպիսի բառակապակցություններ, ինչպիսիք են՝ տիեզերական և փոխաբերական մտքով *Արեգակն արդար*-ից մինչև Մանուկի *Արդար* մականունը⁴²: Այդ բառերի հնդեվրոպական նախաձևը իրավունքի ոլորտում կիրառվելիս անգամ իրեն դրսևորում էր որպես կրոնական սկզբունք՝ աստվածային օրենք, որը մարդիկ պարտավոր էին հարգել և պահպանել: Վերոբերյալ հին հնդկ. *rita*/*ṛtá* բառի արմատակիցներից ուշագրավ են հ.-ե. **art*- նախաձևից ծագած հուն. *α'ρτός*, *α'ρτόν* (ըստ Հեսիփոսի) բառերը՝ «կարգ, կարգավորություն», «բարեկամ, ընկեր», «պայման, պայմանագիր» և այլն, թոխար. *U ortune* «բարեկամություն, ընկերություն», թոխար. *U ortum* «բարեկամական», *ortu-* «բարեկամ, ընկեր» բառերը, որոնք իրենց արմատակից հայերեն *արդ* (սեռ. հոլ. *արդու*) բառի հետ միասին, ինչպես Վ. Տոպորովն է նշում, թելադրում են նախաձևի *-u* հիմք⁴³: Նույն հիմքով մի ձև էլ, ինչպես տեսանք, առկա էր *Artu*-*varasi* անվան մեջ՝ որպես սրա առաջին բաղադրիչ և *Urartu* (<**ur-artu*) երկրանվան մեջ՝ որպես նրա երկրորդ բաղադրիչ:

3. Ուրարտուի իմաստային զուգահեռներն ազգակից լեզուներում:

Ուրարտական թագավորության նախնական կառուցվածքի բացահայտման տեսանկյունից ուշագրավ են նաև իրանական վաղ թագավորությունների օրինակները: Են-

³⁹ Սրվանձոյանց Գ. -1978, էջեր 76-77:

⁴⁰ ՀԱԲ, հ. IV-1979, էջ 325: Գ. Ջահուկյանն այս բառերի համար գրում է. «ծագումն անհայտ», իսկ *վարսամ* «փայտ, գավազան» բառը «թերևս կապ ունի *բարսամնք* «ճյուղերի տրցակ» բառի հետ» (Ջահուկյան Գ. - 2010, էջ 708):

⁴¹ ՀԱԲ, հ. I, -1971, էջեր 306-307:

⁴² Արդար Մանուկը Գյումրու Սբ Ամենափրկիչ եկեղեցու գմբեթի մեծ խաչը տեղադրողն էր՝ Ժողովրդի կողմից արժանացած Արդար մակդիր-մականվանը:

⁴³ Топоров В. -1979. с.с. 143, 151:

թաղրում են, որ Մարական պետության թագավորներն ուրարտական թագավորների նման իրենց «արքայից արքա» էին հռչակում: Ռ. Ֆրայը նշում է, որ այդ տիտղոսը, թեպետև «լայն ճանաչում գտավ շնորհիվ Իրանի, ասորեստանցիներին այն ծանոթ չէր, բայց Ուրարտում այն արդեն գործածական էր»⁴⁴, իսկ «աքեմենյան պատկերացումը «արքայից արքայի» մասին, անկասկած եղել է արդեն մարերի, ինչպես ավելի վաղ ուրարտացիների մեջ»⁴⁵: Ուրարտական թագավորության հիմնադիր երկրների եռյակն է հիշեցնում պարսկական ցեղերի առաջնային եռյակը: Ինչպես Հերոդոտոսն է վկայում. «Այդ ցեղերը, որոնցից կախում ունեն մյուս բոլոր պարսիկները, հետևյալներն են. պասարգադները, մարափները և մասպերը: Մրանց մեջ գերագանցում են պասարգադները, որոնց պատկանում է նաև Աքեմենյանների տոհմը, որից էլ ծագեցին պարսից թագավորները»⁴⁶:

Ըստ երևույթին, պարսկական թագավորության հիմնադիրների դեպքում ևս կիրառվել է հնդեվրոպական հասարակությանը բնորոշ եռադասյա մոդելը⁴⁷: Պատահական չէ, որ բուն Պարսքի (Pārsa, Περσ'ις) պաշտամունքային կենտրոն Պասարգադա քաղաքի «արքայի շրջապարսպի» պաշտամունքային կառույցները նույնպես երեքն էին՝ ենթադրաբար վերագրված կամ Ահուրամազդա, Միթրա, Անահիտա եռյակին, կամ Ահուրամազդա, Մրտա, Սրաոշա եռյակին⁴⁸: Մրտա դիցանվան հիմքում հին իրանական arta «ճշմարտություն, արդարություն» բառն է (ավեստ. aša, որից Aša-Vahišta/*Arta-Vahišta «լավագույն ճշմարտություն» դիցանունը), որը ծագում է հնդեվրոպական վերոհիշյալ *art-ից:

Ուրարտու-իրանական պետականակառույց զուգահեռների և առնչությունների մասին խոսող վերոբերյալ օրինակները հենված են ավելի լայն դաշտ ընդգրկած մշակույթային ընդհանրությունների վրա: Ըստ իրանագետ Ռ. Ֆրայի՝ «Ավելի կարևորը մեզ համար ինքը՝ Ուրարտու պետության մշակույթն ու քաղաքակրթությունն է, որը հզոր ազդեցություն է գործել հարևան բոլոր մարզերում: Այդ ազդեցության հետքերը գտնում են աքեմենյան արվեստում և ճարտարապետության մեջ, անգամ Աքեմենյանների արքայական արձանագրությունների տիտղոսավորման բանաձևերում ու ոճի մեջ»⁴⁹:

Հերոդոտոսի «Պատմության» համաձայն՝ ավելի վաղ պարսիկներն այլ ցեղանուններ են կրել. «Հելլենները հնում սրանց կոչում էին կեփաններ, իսկ իրենք իրենց, ինչպես և հարևանները, անվանում էին *արտայներ* (Αρταίοι)»⁵⁰: Վերջին անունը մեզ հնարավորություն է տալիս ուղղակի զուգահեռներ տեսնելու ոչ միայն ուրարտական Շուրա, Բիայնա, Տուշպա և պարսկական պասարգադներ, մարափներ, մասպեր պետա-

⁴⁴ Фрай Р. -1972. с. 149.

⁴⁵ Фрай Р. -1972. с. 108.

⁴⁶ Herod. -1986. с. 55.

⁴⁷ Սասանյան դարաշրջանի Իրանում եռադասյա հասարակության մոդելի պահպանմամբ էին պետական գլխավոր ատրուշաններ համարվում Ֆարնբագը՝ քրմական դասի համար, Գուշնասպը՝ զինվորական դասի համար և Բուրգեն Միհրը՝ արտադրողների դասի համար (Фрай Р. -1972, с. 325):

⁴⁸ Дандамаев М., Луконин В. -, նշվ. աշխ., էջ 328:

⁴⁹ Фрай Р. -1972. с. 100: Հմմտ. էջեր 100-102, 108-109, 113, 122-123, 149: Հմմտ. նաև Ghirshman R. - 1950, p. 205-220; Նույնի -1962. pp. 85-88.

⁵⁰ Herod., -1986, с. 407:

կանության հիմնադիր եռյակների միջև, այլև նրանց որդեգրած Ur-artu և Art-ai- անունների միջև՝ ի դեմս Ur-artu-ի երկրորդ և Art-ai-ի առաջին բաղադրիչների: Դրանց հիմքում հ.-ե. *art-ից ծագած վերոբերյալ հայերեն *արդ* (>արդ-ար) և իրան. arta (>Arta//Aša դիցանուն) բառերի հին արմատակիցներն են:

Եզրահանգում. Այսպիսով Urartu երկրանվանը՝ որպես *ur-artu բառակապակցություն կարելի է վերագրել «աղոթքով (սրբագործված) կարգ», իսկ ընդհանրապես՝ «Սրբազան դաշինք», «Սրբազան միություն» իմաստը: Այսպիսի ստուգաբանությունը հիմնավոր է նրանով, որ իրականում էլ Ուրարտու թագավորությունը կյանքի էր կոչվել շնորհիվ Šura, Biaina և Tušpa երկրների փոխադարձ համաձայնության՝ սրբագործված դաշինքի:

ТОПОНИМ URARTU – НАЗВАНИЕ ФЕДЕРАТИВНОГО ГОСУДАРСТВА

Петросян С. Г.

Ключевые слова: *Урарту, царство, сословия, Тушпа, Наири, жрец, договор, союз, бог Солнца, армянский, иранский, индийский.*

Царство Урарту возникло на основе военного союза стран Наири. В титулах урартских царей упомянуты только три наирские страны - Шура, Биайна и Тушпа. Эти страны и являлись основателями первоначально федеративного государства Урарту. Во время управления Сардури I (845-825 гг. до н. э.) город Тушпа (Тосп, современный Ван) – центр жрецов, стал столицей Урарту, а бог Солнца отождествлялся с местным солнечным богом Шивини.

Факт, что у древних армянских, иранских и индийских племен существовала трехсословная социальная структура и соответственные мифологические триады, отражена в их повседневной жизни и в религии. В армянской мифологии носителем умственной силы и социального порядка являлся бог Солнца-*Арегакн ардар*. Индоиранский бог Митра/Мифра считался управляющим всей социальной жизни – сферой деятельности жрецов.

Эпитет *Art- бога солнца (ср. арм. слово индоевропейского происхождения *ардар* и.-е. *art-) лежит в основе топонима Urartu (<*ur-artu) в виде его второго компонента. Этот эпитет налицо также в слове Artuṣarasaue (ед. число artu-ṣarasi)- в названии лучников-гвардейцев бога Солнца. Первый компонент топонима Urartu, по нашему мнению, одного происхождения с корнем глагола *уранал* «отступаться, отрекаться» армянского языка, который происходит из и.-е. *ōr-. Этот корень наличествует также в слове урартской клинописи ugurda (<*ur-urd/*ur-ord) «жрец»: ср. греч. ἄρά «молитва, мольба», «проклятье», латин. ōrō/ōrāre «просить, говорить» и т.п.). Таким образом, топоним Urartu означает «Священный порядок», т.е. «Священный договор, Священный союз».

TOPONYM URARTU – DENOMINATION OF THE FEDERAL STATE

Petrosyan S. G.

Key words: *Urartu, Kingdom, estate, Nairi, Tushpa, priest, pact, union, God of the Sun, Armenian, Iranian, Indian.*

The kingdom of Urartu emerged on the basis of the military alliance of the Nairi countries. In the titles of Urartian Kings, only three Nairian countries are mentioned-Shura, Biayna and Tushpa. These Nairian countries were the founders of primary federal state of Urartu. During the rule of Sarduri I (845-825 B.X.) the capital of the Urartu became the centre of the priests Tushpa (Tosp, present-day Van) and God of the Sun became identified with Shivini, i.e. the God of the Sun from Tushpa.

The fact that the ancient Armenian, Iranian and Indian tribes having three social estates structure of the society and existence of corresponding mythological triads, have found their manifestation in everyday life and religion. In the ancient Armenian mythology the bearers of mental power and social order were God of the Sun-*Aregakn ardar*. Indo-Iranian Mitra/Mithra also was directing all the realities of the social life which made up the spheres of activity of the priests.

The epithet *Art- of the God of the Sun (compare with Armenian word ardar “truthful, pious, righteous man”<IE *art-) lies in the basis of the second component of the toponym *Urartu* (<*ur-artu) and in the basis of the first component of the cuneiform word *Arṭuṣarasauē* (singular number *artu-ṣarasi)- the name of the marksmen-guardians of the God of the Sun. It’s not excluded that the first component of the toponym *Urartu* (<*ur-artu) is of the same origin with the Armenian verb *uranal* “recede, renounce” (<IE *ōr-), which like this in the presence of the cuneiform word *ururda* (<*ur-urd/*ur-ord) “priest”: cf. Greek. ἀρά “prayer, entreaty”, “damnation”, Latin. *ōrō/*ōrāre “ask, beg”, “say, speak”. For instance, thr toponym *Urartu* has the meaning “Holy order”, i. e. by and large “Holy alliance, Holy union”.

Գ ր ա կ ա ն ո լ յ յ ո լ ն

1. Ադոնց Ն. -1972, Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. մ.թ.ա., Երևան:
2. Աճառյան Հ. -1979, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան:
3. Այվազյան Ս. -2008, Ուրարտերեն-հայերեն. բառապաշար և պատմահամեմատական քերականություն, Երևան:
4. Խուրշուդյան Է. -1998, Տոսպի արքա Միհրդատի դրամը. «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» XVII, Երևան:
5. Կարազեօզեան Յ. -1998, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), «Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում», հ. I, գիրք 1, Երևան
6. ՀԱԲ (Հայերեն արմատական բառարան), հ. I, Երևան, 1971: հ. III, Երևան, 1977: հ. IV Երևան, 1979:
7. ՀԺՊԲ -1981, Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, հ. I, Երևան:
8. Հերոդոտոս -1986, Պատմություն ինը գրքից, թարգմ. Միմոն Կրկյաշարյանի, Երևան:
9. Ղափանցյան Գր. -1940, Ուրարտուի պատմություն, Երևան:
10. Մանանդյան Հ. -1946, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսարանությամբ, Երևան:

11. **Պետրոսյան Ս.-2006**, Արտամետի հին աստվածությունները, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IX, Գյումրի:
12. **Պետրոսյան Ս.-2006**, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, ՀՀ ԳԱԱ, Երևան:
13. **Պետրոսյան Ս.-2006**, Դրախտի գետերի և Խավիլա, Քուշ երկրների տեղադրության շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես»:
14. **Պետրոսյան Ս.-2008**, Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի:
15. **Ջահուկյան Գ.-2010**, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան:
16. **Մարգիսյան Գ.-1966**, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան:
17. **Гамкрелидзе Т., Иванов В. -1984**. Индоевропейский язык и индоевропейцы. т. II. Тб..
18. **Меликишвили Г. -1960**. Урартские клинообразные надписи. М..
19. **Меликишвили Г. -1954**. Наири-Урарту. Древневосточные материалы по истории народов Закавказья. т. I Тб..
20. **Мещанинов И. -1978**. Аннотированный словарь урартского (биайнского) языка. Л..
21. **Топоров В. -1988**. Митра, «Мифы народов мира». т. II. М..
22. **Топоров В. -1981**. Ведийский РТА-: к соотношению смысловой структуры и этимологии, «Этимология 1979». М..
23. **Фрай Р. -1972**. Наследие Ирана. М..
24. **Dumezil G. -1952**. Les dieux des Indo-Européens. Paris.
25. **Dumezil G. -1968**. Mythe et Epopée. L' ideologie dans les épopées des peuples Indo-Europeens. Paris.
26. **Dumezil G. -1974**. La religion Romaine Archaïque. Paris.
27. **Ghirshman R. -1950**. Masjid-i Solaiman Résidence des premiers **Achéménides**. "Syria". vol. 27.
28. **Ghirshman R. -1962**. La civilisation achéménide et L'Urartu, "Studies in honour of S. H. Taqizadeh". London.
29. **König F. -1957**. Handbuch der chaldischen Inscripten. II. Graz.
30. **«Wörterbuch Sanskrit - Deutsch» -1980**. von Prof. Dr. Dr. habil. Klaus Mylius, VEB verlag Enzyklopädie. Leipzig..

Ընդունվել է՝ 06. 03. 2022

Գրախոսվել է՝ 14. 04. 2022

Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ vahe1996@mail.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ИСТОРИЯ
HISTORY

ՀՏԴ՝ 93,94

DOI: 10.52971/18294316-2022.25.1-41

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՅՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՆ
ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԿՁԲՆԱՂՔՅՈՒՐ

Արշավիր Գասպարյան

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Կարինե Մովսեսյան

«Երևանի Մ. Գալշոյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

Բանալի բառեր՝ *Կիրակոս Գանձակեցի, պատմագրություն, մոնոդրակյան, արշավանք, պատմագիր, պատմություն, մատենագրություն, մոնոդր-թաթար, աշխատություն, աղբյուրագիտություն, սկզբնաղբյուր:*

Հոդվածի շրջանակներում սկզբնաղբյուրների հաղորդումների և գիտական գրականության ուսումնասիրությունների համադրմամբ առանձին ուսումնասիրման նյութ են դարձել պատմագիր Կիրակոս Գանձակեցու հաղորդումները մոնոդրակյան արշավանքների վերաբերյալ: Առանձնացվել է ներկայացված նյութի հավաստիության աստիճանը և աղբյուրագիտական նշանակությունը: Գանձակեցու աշխատությունը, հիրավի, անգուգական ու ստուգապատում աղբյուր է մոնոդրակիտության զարգացման համար:

Զուգահեռաբար համակողմանի վերլուծության են ենթարկվել ու լուսաբանվել ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունները, ինչպես նաև մոնոդրակյան արշավանքների ծանր ու աղետաբեր հետևանքները:

Նախաբան. 13-րդ դարի անվանի մատենագիր, հայ պատմագրության փայլուն ներկայացուցիչ Կիրակոս Գանձակեցին դեռևս իր կենդանության օրոք ժամանակակիցների կողմից գնահատվել է որպես բանիմաց անձնավորություն՝ «րաբունեաց պետ»¹:

¹ ՀՄՆԳ -1976, էջ 296:

Այսօր էլ նրա մատենագրական ժառանգությունը հայագիտության ու արևելագիտության տեսանկյունից մեծ արժեք է ներկայացնում ու շարունակում է մնալ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում՝ պահպանելով իր արդիականությունը և գիտականությունը:

Միջնադարյան հայ պատմագրությունը՝ մեծ մասամբ լինելով փոթորկահույզ ժամանակների արտահայտություն, միշտ չէ, որ կարողացել է լուրջ ձեռքբերումներ արձանագրել: Բացառիկ ժամանակաշրջաններից մեկն է համարվում է 13-րդ դարը, որի շրջանակներում առանձանանում է Կիրակոս Գանձակեցու մատենագրական ժառանգությունը: Վերջինս ապրել ու ստեղծագործել է բավականին ծանր ժամանակաշրջանում՝ պատերազմների, ավերածությունների, ներքին հակասությունների և մոնղոլական արշավանքների ժամանակահատվածում:

Հայ միջնադարյան պատմագիրներից շատ քչերն են, որ ինքնակենսագրական տեղեկություններ են հաղորդում իրենց երկերում: Այդ սակավաթիվ հեղինակների շարքին է դասվում նաև Կիրակոս Գանձակեցին, որն ուշագրավ տեղեկություններ է հաղորդում իր կրթության ու գործունեության մասին: Պատմագիրը ծնվել է Գանձակում, 1200-1202 թթ. ու մահացել է 1271-1272 թթ.²: 1209-1212 թթ. ուսումնառությունն իրականացրել է նշանավոր Նոր Գետիկի դպրոցում: Կիրակոս Գանձակեցու դասընկերներից են եղել դարաշրջանի անվանի պատմագիրներ Վարդան Արևելցին ու Գրիգոր Ակեցցին: Մխիթար Գոշի հիմնադրած այս դպրոցում է կրթվել պատմագիրների մի փայլուն համաստեղություն. «Յառու ժամանակաւ փայլէր ծերացեալ աւուրքք մեծ վարդապետն Վանական, աշակերտ Գոշին և լցոյց զերկիրս աշակերտելաւք, որք փայլէին գիտութեամբ, որպէս զաստեղս՝ զՎարդան, զԿիրակոս, զՌԻսեփ, զԱռաքեալն և այլք բազում, որք էին սինք եկեղեցոյ»³:

Այդ շարքում առանձնանում է Կիրակոս Գանձակեցին, որի մասին ժամանակագիր Վարդան Արևելցին գրում է. «Հարագատն մեր Կիրակոս վարդապետն»⁴:

Այս վավերագրի կապակցությամբ անվանի բանասեր Կ. Մելիք-Օհանջանյանը նշում է, որ այն նախ՝ լավագույն ընկերոջ իրավացի գնահատականն է, և, երկրորդ՝ մի ցայտուն ապացույց այն հեղինակության, որ վայելում էր Կիրակոս վարդապետը ժամանակակիցների շրջանում որպես «բաբունեաց պետ և քաղցուայնի կիրք մեր և մեծ մասն յուսոյ ի սուրբ եկեղեցի»⁵:

Վարդան Արևելցու մատենագրական ժառանգության արժեքավոր երկերից է «Մեկնութիւն քերականի» աշխատությունը, որն իրականացվել է իբրև արքայական պատվեր, 1244-1246 թվականներին՝ Կիլիկիայում, Հեթում Ա թագավորի խնդրանքով: Աշխատությունը լայն տարածում է գտել պատմական Հայաստանի ուսումնագիտական կենտրոններում⁶:

² Բաբայան Լ.-1981, էջ 197:

³ ՄԺ -1951, էջ 41:

⁴ Արևելցի -1972, էջեր 146-147:

⁵ Գանձակեցի -1961, էջեր ԻԳ:

⁶ Արևելցի -1972, էջ 5-7:

Վարդան Արևելցու գրչին են պատկանում է նաև « Պատմութիւն տիեզերական» և «Պատմութիւն թաթարաց» երկերը, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են ոչ միայն մոնոլոգական արշավանքների, այլև ժամանակի ռազմա-տնտեսական քաղաքականության հիմնախնդիրների ուսումնասիրման վերաբերյալ⁷:

Մոնոլո թաթարական արշավանքներին է անդրադարձել նաև պատմագիր Գրիգոր Ակնեցին «Վասն ազգին նետողաց» կամ «Պատմութիւն վասն ազգին նետողաց» աշխատությամբ, որը թարգմանվել է նաև արևելահայերեն: Այն շատ կարևոր սկզբնաղբյուր է, որն ընդգրկում է մոնոլո-թաթարների տիրապետության քառասունչորս տարվա ժամանակաշրջանը. «Ավարտվեց թաթարների քառասունչորսամյա պատմությունը, բայց համառոտ և ոչ ամբողջը»⁸:

Նրա նկարագրած դեպքերի հիմնական մասը տեղի է ունեցել Տավուշի և Լոռու տարածքներում, ինչպես նաև Կիլիկիայի հայկական թագավորության սահմաններում ու նրա հարակից շրջաններում 1230-1270 թվականներին⁹:

Հիշյալ պատմագիրներից շատերն ականատես ու մասնակից են եղել իրենց նկարագրած դեպքերին: Վարդան Արևելցին դիվանագիտական առաջադրանքով տեսակցել է Հուլավու խանին հետ, դարձել նրա խորհրդատուն, Կիրակոս Գանձակեցին թարգմանիչ է եղել մոնոլոների մոտ, իսկ Ստեփանոս Օրբելյանը մի քանի անգամ եղել է Ռսկե Հորդայում՝ հանդիպել Արդուն և Ղազան խաներին ու մոնոլոգական այլ տիրակալներին¹⁰:

Դա հնավորություն է տվել պատմագրին մանրակրկիտ նկարագրելու Արդուն խանի բանակում տեղի ունեցող պատակտումները, դավադրությունները, դրանց ճրնջման փորձերը և անմեղ մարդկանց կոտորածները¹¹:

Կիրակոս վարդապետը մինչև իր կյանքի վերջը զբաղվել է մատենագրական աշխատանքներով, միաժամանակ մասնակցել նաև հայ հասարակական, կրոնա-վարչական ու մշակութային կյանքին: Գանձակեցին իր աշխարհայացքով համոզված կրոնական է, բայց պատմական երևույթները չի բացատրում Աստվածաշնչով ու աստվածային կանխորոշմամբ, ինչպես ընդունված էր միջնադարում: Նա դեպքերը նկարագրում է իսկական գույներով, մանրամասնորեն, առանց չափազանցությունների, պարզ, հասարակ, անսեթևեթ ու անվերամբարձ լեզվով¹²:

Ենթադրվում է, որ նա անգամ վերակազմել ու խմբագրել է միջնադարյան եկեղեցական ծավալուն ժողովածուներից մեկը՝ «Յայսմատորքը», որը սկսել է ձևավորվել դեռևս 10-րդ դարում¹³:

Հոգևորական պատմագիրն աշակերտել է Մխիթար Գոշին ու վերջինիս մահից հետո ինչ-ինչ պատճառներով հեռացել է Նոր Գետիկից ու մեկնել Տավուշ, հայտնի Խո-

⁷ Արևելցի -1972, էջ 5-7:

⁸ Ակնեցի -2011, էջ 118:

⁹ Նույն տեղում, էջեր 7-8:

¹⁰ Աբգարյան Գ. -1962, էջ 29:

¹¹ Օրբելյան -1986, էջեր 341-342:

¹² Առաքելյան Ա. 1959, էջ 471:

¹³ ՀՄՄԳ -1976, էջ 298:

րանաշատ վանքը, որը գլխավորում էր Վանական վարդապետը: Այստեղ Կիրակոսը ձեռնադրվում է վարդապետ¹⁴:

1225 թ. Խորասանի Մուլթան Ջալալադդինի գործերը պարտության են մատնում հայ-վրացական միացյալ ուժերին ու հասնում են Տավուշ, կողոպտում Խորանաշատը և ցաքուցրիվ անում միաբանությունը: Վանահայր Վանականը և Կիրակոս Գանձակեցին Տավուշի Լորուտ գյուղի մոտ փորում են մի քարայր ու այնտեղ շարունակում իրենց գործունեությունը¹⁵:

Այս մասին Մ. Չամչյանը գրում է. «Յայն աուրսն վանական վրպ հանդերձ աշակերտօքն, որս էր և կիրակոս գանձակեցի, բնակէր՝ ի սահմանս երկրին վահրամայ՝ յայրի միում մեծի, որ իբրև դղեակ իմն էր՝ լոսամուտ լայն ունելով, յանմատչելի յարկին. և դուռն մի ի կողմանէ. ուր՝ սպ գրեցաք՝ ի վերոյ, էդ շինեալ ևս էր նա եկեղեցի մի, ևս և բնակարան միանձանց, և էր այն՝ ի հարաւոյ կողմանէ տաւուշ բերդին»¹⁶:

1235թ. մոնղոլ-թաթարական զորքը Մուլար նոյինի գլխավորությամբ շարժվում է Անդրկովկաս ու բանակում Մուղանի դաշտում: 1236թ. մոնղոլները գրավում են Տավուշը և շրջապատում Վանական վարդապետի վանք-քարայրը, ուր հավաքվել էին շրջակա գյուղերի բնակիչներից շատերը: Մովից ու ծարավից տառապող ժողովուրդը ստիպված անձնատուր է լինում, իսկ Վանականը ներկայանում է մոնղոլ զորապետին ու խնդրում ազատ արձակել ժողովրդին: Մոնղոլները ժողովրդին ազատում են, սակայն գերեվարում են վանահայր Վանականին ու Կիրակոս Գանձակեցուն: Մի քանի ամիս անց Վանականը փրկագնով ազատվում է, իսկ Կիրակոսը գիշերով փախչում է գերությունից: Վերջինս գրում է, որ իրեն օգտագործել են որպես գրագիր, նույնիսկ շոսյում էին խոստումներ, որպեսզի մնար Մուլար նոյինի բանակում ու ծառայեր մոնղոլներին: Այս հանգամանքին նպաստել են ոչ միայն վարդապետի լեզուների իմացությունը, այլև առաջին հերթին հասարակության մեջ նրա գրաված բարձր դիրքն ու հեղինակությունը:

Գերությունից ազատվելուց հետո Կիրակոս վարդապետը վերջնականապես հանգրվանում է Նոր Գետիկում, որտեղ ծավալում է ազգային ու եկեղեցական բուռն գործունեություն: Նա շրջել է Հայաստանի տարբեր վայրերում, ծանթացել ու հանդիպել շատ նշանավոր մարդկանց, գրուցել նրանց հետ ու այդ գրույցներից քաղած տեղեկությունները շարադրել իր Պատմության մեջ:

Այսպես օրինակ՝ 1255թ. Կիլիկիայի Հեթում 1-ին թագավորը, երբ վերադառնում էր մոնղոլական Մանգու խանի հետ ունեցած բանակցություններից, իջևանում է Նիզգավառի Վարդենիս գյուղում: Այստեղ Գանձակեցին տեսակցում է թագավորին ու, ստանալով հետաքրքիր ու արժանահավատ տեղեկություններ, դրանք պատմագրում է իր աշխատության մեջ¹⁷:

Անդրադառնալով Կիրակոս Գանձակեցու մատենագրական ժառանգությանը՝ Մ. Աբեղյանը նշում է. «Թեև երբեմն մեջ է բերում նաև սին գրույցներ, որոնց նա հավա-

¹⁴ Գանձակեցի -1982, էջ 5:

¹⁵ Նույն տեղում, էջ 6:

¹⁶ Չամչյանց -1984, էջ 209:

¹⁷ Գանձակեցի -1982, էջ 7:

տում է մեծ դյուրահավատությամբ, բայց նրա այդ գործն իր ամբողջությամբ մեր առաջ բաց է անում մի շատ կարևոր պատմական դարաշրջանի պատկերը: Անհերթելի բաների մասին պատմվածքներն անգամ իրենց կողմից պարզում են այն ժամանակի և իրեն՝ Կիրակոսի, հետը նաև իր ժամանակակից մտավորականների հասկացողության մակարդակը»¹⁸:

Մնահավատությունը, սակայն, չի խլում նրա ազնվությունը, ճշմարտախոսությունը, վճիտ պարզամտությունը, մի բան, որ հեռու է պահում պատմիչին կեղծ բարոյախոսական նախապաշարումներից և անմեղորեն պատմել է տալիս կենցաղային այնպիսի բաներ, որ 13-րդ դարի վարդապետը անպայման կխուսափեր պատմելուց¹⁹: Հիրավի, դիպուկ գնահատական՝ պայմանավորված հոգևորական պատմիչի բարոյական հատկանիշներով ու ժամանակաշրջանի բուռն իրադարձություններով:

Գանձակեցու աշխատությունը բաժանված է երկու հիմնական մասերի, որոնք իրենց հերթին տրոհված են 65 /ԿԵ/ գլուխների: Առկա է նաև Առաջաբան, սակայն երկն ավարտված չէ: Հեղինակը ցանկություն ունեցել է այն շարունակելու, բայց վրա հասած մահը խանգարել է այդ նպատակի իրականացմանը: Մահացել է Նոր Գետիկի վանքում ու թաղվել այնտեղ:

Առաջաբանը նվիրված է պատմության ստեղծման հանգամանքներին: Առաջին մասը սկսվում է քրիստոնեության տարածման իրադարձությունների նկարագրմամբ: Գանձակեցին օգտվել է նախորդ մատենագիրներից, ներկայացրել է նաև Կիլիկիայի հայկական պետականության համապատասխան ժամանակահատվածի պատմությունը՝ հասցնելով այն 12-րդ դարի վերջին տասնամյակները: Վերջինիս արժանահավատ ու ստուգապատում հաղորդումներն ունեն գիտական, քաղաքական ու ճանաչողական բացառիկ նշանակություն:

Պատմագիրն իր նպատակն իրագործել է աշխատության երկրորդ մասում, որն ավելի արժեքավոր է, ուշագրավ, քանզի ամբողջությամբ շարադրված է նկարագրված իրադարձություններին մասնակից, ականատես ու ականջալուր հեղինակի գրչով: Դրանք, անտարակույս, հավաստի են ու ստույգ: Այս բաժնում հանգամանորեն ներկայացված է 12-րդ դարի վերջերից մինչև 1265-1266 թթ. ընդգրկող ժամանակահատվածը՝ խիստ տագնապալի և հրատապ իրադարձությունների պատմությամբ շաղախված:

Կիրակոս վարդապետն ամեն գնով ցանկացել է սերունդներին թողնել նաև մոնղոլների տիրապետության շրջանի պատմությունը և այն իրականացրել է փայլուն կերպով: Զուգահեռաբար հանգամանորեն ներկայացնում է Վրաստանի հզորացման նախադրյալները, սելջուկյան արշավանքները՝ անդրադառնալով նաև Զաքարյանների ժամանակահատվածի պատմությանը:

Պատմագիրը խոսում է մոնղոլների անդրկովկասյան արշավանքների մասին, ներկայացնելով այն չափով, ինչ չափով, որ դրանք առնչվում են Հայաստանին ու հայ ժողովրդին: Հայրենասեր հոգևորական պատմիչն ընթերցողներին ներկայացնում է ոչ

¹⁸ Աբեղյան Մ. -1970, էջ 235,

¹⁹ Առաքելյան Վ. -1972, էջ 58:

միայն մոնոլոլների արշավանքները և դրանց ծանր հետևանքների պատկերը, այլև հայերի ցուցաբերած հերոսական դիմադրությունն ու ժողովրդական ընդվզումները:

Պատմագիտական տեսանկյունից հատկապես կարևոր է այն, որ Գանձակեցին բավականին մեծ տեղ է հատկացրել այդ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, իրավահասարակական պայմաններին ու հոգևոր մշակութային երևույթներին:

Աշխատությունում պատմում է անգամ ասիական այնպիսի ցեղերի մասին, որոնք անցել են պատմության գիրկը: Ահա թե որքան կարևոր են նման հաղորդումները հենց իրենց՝ մոնոլոլների, նրանց գրաված երկրների և 13-րդ դարի ընդհանուր պատմությանը զբաղվող մասնագետների համար²⁰:

Պատմագիրը գտնում էր, որ մոնոլոլների ձեռնարկած արշավանքների պատմությունը շարադրելը մեկ մարդու ուժերից վեր է, քանզի այն բազմաբովանդակ է ու բազմաշերտ:

Կիրակոս վարդապետն օժտված է պատմագրին վայել արժանիքներով: Նախ պետք է նշենք նրա հորդաբուխ հայրենասիրությունը, ինչպես նաև անսպառ նվիրվածությունը հայրենիքին ու ազատության վեհ գաղափարին: Պետական անկախությունը նրա ընկալմամբ ազգի համար կենսական կարևոր գործոն է: Հայրենասիրության հետ փառաբանում է ազգային արժանապատվությունը: Լինելով հումանիստ, հայ ժողովրդին բնութագրելով բարությամբ, ազնվությամբ ու կրոնասիրությամբ՝ մշտապես կանգնած է եղել հասարակ ժողովրդի կողքին՝ ապրելով նրա հոգսերով ու ցավերով:

Անկողմնակալ պատմագիրը նկարագրում է, թե ինչպես մոնոլոլները պաշարել էին Անին, իսկ ժողովուրդը հերոսաբար դիմադրում էր: Ցավոք, քաղաքի իշխանների մի մասն օգնում էր թշնամուն, ինչի արդյունքում թշնամուն հաջողվում է հիմնահատակ ավերել քաղաքը:

Մոնոլոլ-թաթարական հրոսակներն անարգել ամայացնում էին հայկական քաղաքներն ու գյուղերը, քայքայում երկրի տնտեսությունը, իրականացնում անասելի ծանր հարկային քաղաքականություն: Անի քաղաքի ավերման կապակցությամբ Գանձակեցին գրում է. «Գրավեցին բոլոր ինչքերն ու ստացվածքները, կողոպտեցին նաև բոլոր եկեղեցիները, ավերեցին ու քանդեցին ամբողջ քաղաքը, եղծեցին ու ոչնչացրին նրա վայելչության փառքը»²¹:

Այսպես վարվում էին նաև մյուս քաղաքների ու գյուղերի հետ, որի արդյունքում անկում էին ապրում առևտուրը, արհեստները, գնալով խորանում էր ժողովրդի թշվառ վիճակը: Նման պայմաններում ավելի մեծ ծավալներ էին ընդունում արտագաղթը և ընչազրկությունը:

Գանձակեցին սուկ ճակատամարտերի և թագավորների ժամանակագիր չէ: Պատմության մեջ ուշագրավ տեղեկություններ կան մոնոլոլների կենցաղային ու ազգագրական սովորույթների, հոգևոր-բարոյական խառնվածքի և նույնիսկ լեզվի վերաբերյալ²²: Այս իրողություններն անշուշտ ավելի են բարձրացնում աշխատության դերն

²⁰ Առաքելյան Վ. -1972, էջ 59:

²¹ Գանձակեցի -1982, էջ 186:

²² ՀՄՄԳ -1976, էջ 301:

ու նշանակությունը ոչ միայն աղբյուրագիտական, այլև ազգագրական ու լեզվական տեսանկյունից:

Իրատես պատմիչը գրքի 57-րդ գլխում ներկայացնում է Մանգու խանի կողմից իրականացված աշխարհագիրը²³: Հարկերն այնքան շատ էին, որ վճարելն անհնարին էր, հարկերի դիմաց տանում էին անգամ երեխաներին, իսկ թաքնվողներին բռնում էին ու սպանում:

Պատմագիրն առարկայական մոտեցում է ցուցաբերում պատմական իրադարձություններին: Նա փառաբանում է հայրենասեր ու ժողովրդասեր իշխաններին, դրվատանքով խոսում նրանց արժանավոր գործերի մասին, իսկ դավաճաններին, կողոպտիչներին, ժլատ հարուստներին, որոնք ընչաքաղցությունից ելնելով թալանում են հարազատ երկիրն ու ժողովրդին, գամում է անարգանքի այունին, դատապարտում ամենախիստ խոսքերով:

Լայնախոհ հոգևորականը քաջաձանթ է այն աշխարհագրական միջավայրին, որը նկարագրում է իր Պատմության մեջ: Հավաստի և ճշգրիտ ներկայացնում է մոնոլոգների ճակատամարտերի վայրերը, ավերված բնակավայրերը և անգամ գյուղերի անվանումները: Կիրակոս վարդապետն այդ ամենը ներկայացրել է հարցուփորձի հիման վրա, սակայն բազում պատմական իրողություններ շարադրում է որպես մասնակից ու ակնատես: Միաժամանակ նա օգտվել է բազմաթիվ աղբյուրներից՝ ցուցաբերելով *տարբերություն սկզբնաղբյուրների նախանձելի իմացություն*:

Բնականաբար աշխատության վերջին մասն անառարկելի, հավաստի և սուղգապատում պատմություն է՝ շարադրված անաչառ ու նվիրյալ հոգևորականի կողմից: Նրա հաղորդումներն ու տեղեկությունները բարձր են գնահատել մոնոլոգների արշավանքների ուսումնասիրությամբ զբաղվող օտար պատմաբանները և նույնիսկ վիպասանները: Գանձակեցու Պատմությունը հետագա պատմիչներն օգտագործել են իբրև սկզբնաղբյուր՝ մեծ հավատ ընծայելով նրա ճշմարտապատում ստեղծագործությանը:

Անդրադառնալով մոնոլոգական տիրապետության շրջանի պատմության հիմնահարցերին՝ ակադեմիկոս Կ. Օհանջանյանը ամենայն իրավամբ Կիրակոս Գանձակեցուն համարում է մոնոլոգական տիրապետության շրջանի ճշմարտախոս պատմագիր: Նրա երկը յուրատեսակ պատմագիտական վավերագիր է, որի մեջ բացահայտվել է թաթար-մոնոլոգական ռազմավարչական և սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, հարկադրման ու հարկահավաքման համակարգը²⁴:

Օտար պատմագիրները հաստատում են Կիրակոս Գանձակեցու հաղորդումների իսկությունը, որը մեզ լիարժեք հնարավորություն է ընձեռում հստակեցնելու ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունների հավաստիությունը²⁵:

Անաչառ պատմագիրը նկարագրում է նաև մոնոլոգական տերության թուլացման ժամանակաշրջանը, մասնավորապես նշելով, որ Մանգու խանի մահից հետո (1259թ.) մոնոլոգական աշխարհակալության մեջ սկիզբ են առնում գահակալական կռիվներ

²³ **Գանձակեցի -1982**, էջեր 260-261:

²⁴ **Գանձակեցի -1961**, էջ 22:

²⁵ Նույն տեղում, էջ 1Գ –1Ե:

Մանգու խանի եղբայրների՝ Ղուբիլայի և Արիք Բուղայի միջև: Նա գոհունակությամբ է խոսում այս ամենի մասին, համոզված լինելով, որ չար ուժերը վերջնականապես պատժվելու են:

Պատմագիր Գանձակեցին բացահայտում է նաև Անդրկովկասում մոնղոլներին չդիմադրելու պատճառները: Եկեղեցական պատմագիրն անհեթեթ է համարել այն առասպելը, որ իբր մոնղոլները մոզեր են ու հավատով քրիստոնյաներ, որ եկել են վրեժ-խնդիր լինելու մահմեդականներից քրիստոնյաների նկատմամբ բռնության համար: Եվ իբր դա է եղել պատճառը, որ բնակիչները չամրացան, չպաշտպանվեցին²⁶: Իրական պատճառը, ըստ պատմագրի, այն էր, որ. «Թագաւորութիւն վրաց նուագեալ էր... Եւ ոչ էին կարող գղէ ունել անհնարին բքոյն եկելոյ. վասն այդորիկ անձնապան եղեն ամենեքեան՝ գայթակղեալք յամրոցս, ուր և կարացին»²⁷:

Իրապես, մոնղոլական այս մեծ արշավանքին ո՛չ Հայաստանում և ո՛չ էլ Վրաստանում ցույց չտրվեց կազմակերպված լուրջ դիմադրություն: Ահաբեկված ու անպաշտպան ժողովուրդը ամենուր մնացել էր իր սեփական ուժերի հույսին: Բնականաբար, նման պայմաններում մոնղոլներին հեշտությամբ հաջողվեց գրավել հսկայական տարածքներ²⁸:

Անի քաղաքի գրավման կապակցությամբ գրում է, որ քաղաքի իշխանները չկարողացան պատասխան տալ Չարմադանի պատվիրակությանը, իսկ ամբոխը և ռամիկները սպանեցին պատվիրակներին: Եվ դառնությամբ ավելացնում է. «Այլև ոմանք յիշխանաց քաղաքին ձեռնատու եղեն առ թշնամիսն՝ գապրուստ անձանց շահելով»²⁹:

Շամքոր քաղաքի բնակիչները օգնության խնդրանքով դիմել են քաղաքից փախած իրենց իշխան Վահրամին ու նրա որդուն: Վահրամը պատճառաբանել է, որ թշնամին բազմամարդ է, անօգուտ է կռվելը և անգամ արգելել է իր որդուն օգնել քաղաքի պաշտպաններին³⁰:

Իսկ Լոռի քաղաքի իշխան Շահնշահը ընտանիքով գաղտագողի ճողոպրել էր՝ քաղաքի վերակացությունը թողնելով իր աներոջը և նրա որդիներին, որոնք, լինելով թուլամորթ, զբաղված էին հարբեցողությամբ՝ հույսը դնելով պարիսպների ամրության վրա: Իսկ թշնամիները քանդեցին պարիսպները, կոտորեցին ժողովրդին ու թալանեցին Շահնշահի գանձերը³¹:

Պատմագիրը դառնությամբ է նշում, թե ինչպես մոնղոլները սաստկացրեցին հարկահանությունը՝ նոր բազում տառապանքներ պատճառելով ժողովրդին. «Ի դրունս մահու հասուցին գամենայն ազգս»³²:

Այս ամենից հետո, հասկանալի է, որ հայրենասեր պատմագիրը ատելությամբ պետք է տրամադրված լիներ մոնղոլների նկատմամբ, նրանց անվանելով արյունար-

²⁶ Բարայան Լ. -1981, էջեր 209-210:

²⁷ Գանձակեցի -1961, էջ 238:

²⁸ Մանանդյան Հ. -1952, էջ 200:

²⁹ Նույն տեղում, էջ 254:

³⁰ Բարայան Լ. -1981, էջ 210:

³¹ Գանձակեցի -1982, էջեր 182-183:

³² Գանձակեցի -1961, էջ 374:

բու, գազանաբարո ազգ³³: Այդ ատելությունը կարմիր թելի նման անցնում է անգամ նրանց արտաքինի, կենցաղի ու բարքերի նկարագրություններում³⁴:

Գանձակեցին շատ լավ գիտակցում էր իր երկասիրության արժանիքները, նրա դերն ու նշանակությունը ապագա սերունդներին, ուստի անկեղծ սրտով գրում է. «Լիցի սա մեզ արձան գերեզմանի, ոչ ըստ նմանութեան Աբիսողոմեան քարին, այլ կենդանի, զի յիշեսցի ի նմա անուն Կիրակոսի»³⁵:

Եզրահանգում Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմություն» աշխատությունը չափազանց կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանում ու Մերձավոր Արևելքում մոնոլոգների արշավանքների և մոնոլոգական տիրապետության շրջանի պատմության հիմնահարցերի լուսաբանման համար:

Աշխատության մեջ հանգամանորեն շարադրված են մոնոլոգական արշավանքները, Անդրկովկասի և Փոքր Ասիայի նվաճումը, մոնոլոգների վարած նվաճողական պատերազմները, ներքին հակամարտությունները, ինչպես նաև հայ ժողովրդի պայքարն օտար նվաճողների դեմ:

Գանձակեցու Պատմությունը պարունակած նյութով հավասարաչափ աղբյուր է նաև Անդրկովկասի ժողովուրդների, Բյուզանդիայի և Մերձավոր Արևելքի երկրների պատմության շատ հիմնահարցերի ուսումնասիրման համար: Հիրավի, այն նաև անգուցական ստուգապատում ու չափազանց անկողմնակալ աղբյուր է ժամանակաշրջանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության շարադրման, այդ թվում նաև Հայաստանի սոցիալական պայքարի պատմության լուսաբանման համար³⁶:

Գանձակեցու աշխատությունը բազմաբովանդակ պատմական շտեմարան է, պատմագիտական-գրական հուշարձան ու վավերագիր, որն ամենայն մանրանասնությամբ ներկայացնում է հայ ժողովրդի բազմադարյա պատմության շրջաններից մեկը՝ արտահայտելով այդ դարաշրջանի տագնապալի իրադարձությունների անսքող պատկերը:

Գանձակեցու երկասիրությունն առանձնահատուկ սկզբնաղբյուր է հատկապես մոնոլոգափոխության համար³⁷: Աշխատության հաղորդումները հետագա պատմիչներն օգտագործել են որպես սկզբնաղբյուր՝ մեծ հավատ ընծայելով նրա ստուգաբանությանը և արժանահավատությանը: Այդ հաղորդումներն ունեն ոչ միայն հայագիտական, այլև արևելագիտական ու պատմագիտական բացառիկ նշանակություն:

³³ **Գանձակեցի -1961**, էջ 292:

³⁴ Նույն տեղում, էջեր 271-272:

³⁵ Նույն տեղում, էջ ԴԱ:

³⁶ ՀԺՊ -1976, հ. III, էջ 808:

³⁷ **Բաբայան Լ. -1981**, էջ 223:

ТРУД КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ КАК ПЕРВОИСТОЧНИК ДЛЯ ИЗУЧЕНИЯ МОНГОЛЬСКИХ НАШЕСТВИЙ

Գասպարյան Ա. Ա., Մովսեսյան Կ. Կ.

Ключевые слова: *Киракос Гандзакети, историография, монгольский, поход, историограф, история, библиография, монголо-татар, труд, источниковедение, первоисточник.*

В рамках статьи, сопоставлением передач первоисточников и исследований научной литературы, предметом отдельного изучения стали сообщения историка Киракоса Гандзакети о монгольских походах.

Выделена степень достоверности и источниковедческое значение представленного материала. Работа Гандзакети – поистине непревзойденный и проверяющий источник для развития монголоведения.

Параллельно всестороннему анализу подверглись и освещались социально-экономические и политические отношения периода, а также тяжелые и катастрофические последствия монгольских нашествий.

KIRAKOS GANDZAKETSI'S WORK AS A SOURCE OF STUDY ON MONGOLIAN INVASIONS

Gasparyan A. A., Movsesyan K. K.

Key words: *Kirakos Gandzaketsi, historiography, Mongolian, invasion, historian, history, bibliography, Mongol-Tatar, work, source studies, source.*

Within the framework of the article, a combination of source reports and scientific literature studies has become the subject of a separate study by historian Kirakos Gandzaketsi's reports on the Mongol invasions.

The degree of reliability of the presented material and the source-scientific significance were singled out. Gandzaketsi's work is unique and is the source for the development of Mongol studies.

At the same time, the socio-economic and political relations of the period, as well as the severe and catastrophic consequences of the Mongol invasions, were comprehensively analyzed and covered.

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն ն

1. **Աբեղյան Մ. -1970**, Երկեր, հատոր Դ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
2. **Աբգարյան Գ. -1962**, Մատենադարան, Երևան, Հայպետհրատ:
3. **Առաքելյան Վ. -1972**, Կիրակոս Գանձակեցի (Մահվան 700-ամյակի առթիվ)//«Պատմա-բանասիրական հանդես», N 1, էջ 48-62:
4. **Առաքելյան Ա. -1959**, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն /I. մ.թ.ա. - XIVդ./ Երևան, Հայպետհրատ:
5. **Բարսեղյան Լ. -1981**, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, Երևան, ՀՍԳԱ հրատ.:

6. **Ակներցի -2011**, Գրիգոր Ակներցի, Պատմություն նետաձիգների ազգի մասին, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ.:
7. **Գանձակեցի -1982**, Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, խմբ. Լ. Խանլարյան, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
8. **Գանձակեցի -1961**, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ.Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍԳԱ հրատ.:
9. **ՀՄՆԳ -1976**, Հայ մշակույթի նշանավոր գործիչները V–XVIII դարեր, խմբ. Էդ. Աղայանի, Երևան, ԵՀ հրատ.:
10. **ՀԺՊ -1976**, Հայ ժողովրդի պատմություն, հատոր III, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
11. **ՄԺ -1951**, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ. կազմեց Վ.Հակոբյանը, հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
12. **Մանանդյան Հ. -1952**, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր III, XI դարից մինչև XV դարի սկիզբը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
13. **Չամչյանց -1984**, Միքայել Չամչյանց, Հայոց Պատմություն, Գ հատոր, Երևան, ԵՀ հրատ.:
14. **Օրբեյան -1986**, Ստեփանոս Օրբեյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Աբրահամյան, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
15. **Արևելցի -1972**, Վարդան Արևելցի, Մեկնութիւն Զերականի, աշխատասիրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Ընդունվել է՝ 12. 03. 2022
Գրախոսվել է՝ 06. 04. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակների մասին

Արշավիր ԳԱՄՊԱՐՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԿԳՄՍ Շիրակի պետական համալսարանի պատմության և
փիլիսոփայության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ,
էլ. հասցե՝ Arshavirgasparyan@mail.ru

Կարինե ՄՈՎՍԵՍՅԱՆ՝ ՀՀ ԿԳՄՍ Երևանի Մ. Գալշոյանի անվ.
ավագ դպրոցի պատմության ուսուցչուհի, էլ. հասցե՝ karinmov@gmail.com

ՀՏՂ՝ 93.94

DOI: 10.52971/18294316-2022.25.1-52

ԱԶՈՐԴԱՑՓՈՐ ԳԱՎԱՌԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՁ¹

Արկաղի Ակոպով, Դավիթ Նահատակյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *Տայք, Թորթում, Ճորոխ, Ագորդ, հուշարձան, Օշկ, եկեղեցի, ամրոց, բնակավայր, հայեր:*

Սույն հոդվածի շրջանակներում առանձին ուսումնասիրության առարկա են դարձել պատմական Մեծ Հայքի Տայք աշխարհի Ագորդացիոր գավառի պատմաճարտարապետական հուշարձանների տեղագրության և արդի վիճակի վերաբերյալ հարցերը: Զուգահեռ ներկայացվում են ժողովրդագրական տվյալներ, որոնք ընդգրկում են XIX դարից մինչև Հայոց Մեծ եղեռն ընկած ժամանակաշրջանը:

Նախաբան. Աշխատության նպատակը մեր կողմից իրականացված ոչ ամբողջական այցերի հետևանքով ստացված նյութերի, աղբյուրագիտական, պատմամատենագրական և ճարտարապետական հետազոտությունների արդյունքների համատեղումն է, որը պետք է հիմք հանդիսանա առաջիկա դաշտային աշխատանքների համար:

Տայքի կենտրոնական Ագորդացիոր գավառը տեղագրվում է Թորթում գետի ստորին հոսանքի շրջանում և Թորթումի լճի շրջակայքում: Հյուսիսից այն սահմանակից էր Ճակք գավառին, որից բաժանվում էր Օլթի գետով, արևմուտքից Արսեացիոր գավառից բաժանված էր Ճորոխի աջափնյա ջրբաժան լեռներով, հարավ-արևմուտքից սահմանակից էր Ոքաղեին, որից բաժանվում էր Օղիկ գետակի ձորահովտով մինչև

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Մամրվանի վարչական սահմանը², իսկ հարավ-արևելքից և արևելքից՝ Բողխա գավառին, որից բաժանված էր Թորթում և Օլթի գետերի ջրբաժան լեռներով:

Ագորդացվոր գավառի կենտրոնն էր Ագորդ բնակավայրը. «Ագորդ գետը նշանակել գլխաւոր տեղի Ագորդափոր գաւառի Տայոց»³: Օսմանյան տիրապետության շրջանում Տայքի Ոքաղե և Ագորդացվոր գավառների տարածքում ձևավորվում է նոր վարչամիավոր՝ Թորթումի սանջակը նույնանուն կենտրոնով, որն ընդգրկվում է Էրզրումի նահանգի մեջ:

Ագորդացվոր գավառի բնակավայրերի տեղանունները միջնադարում գավառի գրեթե համատարած հայաբնակ լինելու լավագույն առիավատյան են: XVII դարում մեկնարկած բռնի մահմեդականացումը էապես փոխեց գավառի էթնոկրոնական դիմագիծը: Բռնություններից ազատվելու համար քրիստոնյաների մի հատվածը նախընտրեց ընդունել մահմեդականություն, չնայած նրանցից շատերը շարունակում էին պահպանել քրիստոնեական որոշ սովորույթներ և մայրենի լեզուն: «Երկիրս մէկ ծայրէն միւս ծայրը հայ նկարագիրը պահած է անով որ բոլոր անուանք մնացած են հայերէն, ոչ միայն մահմետականացած գիւղերուն, այլ անոնց անթիւ մանրամասնութիւնք ալ՝ անուանք գիւղամասերու կամ թաղերու, լեռանց, գետոց ու առուակաց, արտերու... Լեզուի կողմանէ ի հարկէ օտար ուղեւորի մ'առաջին տպաւորութիւնն այն կ'ըլլայ թէ մեծ մասն այլեւս թրքախօս եղած է: Բայց նախ նկատելի է որ հայ մահմետականը ստիպուած էր եւ է մանաւանդ Համիտական շրջանէն ի վեր՝ խորշիլ հայութեան արտաքին երեւոյթներէն իսկ, չհալածուելու համար»⁴, - գրում էր Հ. Տաշյանը:

Ագորդացվոր գավառը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով՝ եկեղեցիներով, բերդերով և ամրոցներով: Գրեթե բոլոր բարձր ժայռերի անմատույց գագաթները որպէս բնական ամրություններ էին ծառայում: Նրանց վրա կառուցված բերդերը և ամրոցները թեպէս աչքի չէին ընկնում մեծությամբ, սակայն իրենց դիրքի շնորհիվ հենարան էին դարձել թշնամիների դեմ պայքարում⁵: Գավառի հուշարձանների տեղագրության և արդի վիճակին է նվիրված սույն հետազոտությունը:

Թորթում գետի աջ ափի պատմաճարտարապետական հուշարձանները

Ագորդացվոր գավառը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ արևելյան և արևմտյան, իսկ գավառի երկու հատվածների բաժանարար գիծ կարելի է ընդունել Թորթում գետը և Թորթումի լիճը, որոնք հստակ ձգվում են հարավից հյուսիս ուղղությամբ: Այսպիսով, Թորթում գետի աջափնյա հատվածում են գտնվում դեռևս միջնադարից հայտնի ներքոհիշյալ բնակավայրերը՝ *Օսխա, Խաթղա, Թն, Իս, Օթղա, Օշկիձոր, Օսեթ, Ագորդ և Ապոնես*:

Օլթի գետից ոչ հեռու գտնվում էր Օսխա գյուղը (այժմ՝ Arpacık): Գյուղի միջնադարյան եկեղեցին գտնվում էր բնակավայրից մոտ 1,5 կմ հարավ, սակայն հիմնահա-

² Բաղայան Գ. -2016, էջ XVI:

³ Ալիշան Ղ. -1856, էջ 38:

⁴ Տաշեան Հ. -1972, հ. 7-9, էջեր 292-293:

⁵ Ерицов А. -1884-1885, т. 8, с. 78.

տակ ավերվել է ճանապարհաշինության ժամանակ, և այժմ կարելի է տեսնել միայն եկեղեցու հետքերը⁶:

Թորթումի ջրվեժի հարևանությամբ էր գտնվում Թն գյուղը (այժմ՝ Çağlayan): Գյուղից 2 կմ արևելք պահպանվում են սկզբնաղբյուրներում չհանդիպող եկեղեցու մնացորդները: Եկեղեցին կառուցված էր կոպտատաշ քարով և կրաշաղախով: Տեսանելի է եկեղեցու հատակագիծը: Պահպանվել են խորանի կլոր հատվածը և հյուսիսարևմտյան անկյունը⁷: Գյուղից 500 մ հյուսիս-արևմուտք՝ Թորթում գետի աջ ափին՝ ժայռոտ բլրի վրա, պահպանվում են բերդի առանձին հատվածներ: Բերդն ուներ քառակուսի հատակագիծ՝ 11x11 մ⁸: Պահպանված պատերի առավելագույն բարձրությունը 7 մ է, իսկ հաստությունը՝ 1,8 մ⁹:

Թորթումի լճից մոտ 2,5 կմ հարավ էր գտնվում Իս գյուղը (այժմ՝ Altınçanak): Գյուղի հյուսիսային մասում՝ տներից մեկին կից, պահպանվում է գյուղի միջնադարյան եռախորան կենտրոնագմբեթ եկեղեցին: Կիսամշակ քարով և կրաբետոնով կառուցված եկեղեցին, ըստ Է. Թաղայշվիլու, պետք է որ կառուցված լիներ ոչ ուշ քան IX դարում¹⁰: Եկեղեցու հյուսիսային մասը վնասված է: Մնացած հատվածները տեղացիներն օգտագործում են տարբեր նպատակներով: Տարեցները հիշում են նաև, որ «տեսել են նաև եկեղեցու գմբեթը»¹¹:

Իսի եռախորան կենտրոնագմբեթ եկեղեցին կարևոր դեր է խաղում Տայք և Գուգարքի IX-XI դդ. հայկական ճարտարապետության դպրոցի կայացման հարցում: Նույն տիպով են կառուցված հանրահայտ Օշկվանքի գլխավոր տաճարը Տայքում, իսկ Գուգարքում՝ Զաքի եկեղեցին ու մի փոքր փոփոխված Կումբուրդոյի տաճարը: Մակայն Իսի հատակագծային հորինվածքը սերում է վաղքրիստոնեական հայկական ճարտարապետության ավանդույթներից, ինչպես օրինակ հնեվանքի VII եկեղեցուց:

Իսից մոտ 4 կմ դեպի արևելք Օթդա գյուղն էր (այժմ՝ Kirazlı): Օթդայում դեռևս XIX դարում կանգուն էր տաճարը, որը, ըստ Ատրպետի, ի սկզբանե հեթանոսական մեհյան էր և «հեթանոսականից փոխադրած է քրիստոնեականի»¹²: Ցավոք, այսօր տաճարը հիմնահատակ ավերված է:

Իսից մոտ 5 կմ հարավ էր միջնադարյան բազմաթիվ հուշարձաններով հայտնի Օշկիձոր (Էշկիձոր) գյուղը (այժմ՝ Sapaca): Գյուղի ծայրամասում՝ բլրի վրա պահպանվում է միջնադարյան ամրոցը՝ 2 աշտարակներով¹³: Պատերի բարձրությունը հասնում է

⁶ Թաո-վլարձեթոսի ժեղեթոսի 2016 թվոսի սազվեթոսի յեթսթեդոցոթոսի ադգարոթեթոս, տ. իսցոթեթոս, Բ. ցոթալոթեթոս, յ. օթեդաթեթոս, Մ. ցոլլաթեթոս, Ը. Մաոթրաթե, Լ. թոթարոթեթոս, ցազցասոսի յոթոցերոսոթեթոսի ցաթոթցեթոթոս, տեթոսոս, 2017, ցց. 58.

⁷ Թաո-վլարձեթոսի ժեղեթոսի 2016 թվոսի սազվեթոսի յեթսթեդոցոթոսի ադգարոթեթոս, ցց. 108.

⁸ Թաո-վլարձեթոս: օսթորոսոսա Ըա ցոլլաթեթոսի ժեղեթոսի ցաթալոցո, թեդ. Բ. ցոլլազա, տեթոսոս, ցաթոթցեթոթոս աթաթաթուցո, 2017, ցց. 252.

⁹ Թաո-վլարձեթոսի ժեղեթոսի 2016 թվոսի սազվեթոսի յեթսթեդոցոթոսի ադգարոթեթոս, ցց. 109.

¹⁰ Թաոթաթաթոս Ը. -1952. ց. 80.

¹¹ Թաո-վլարձեթոսի ժեղեթոսի 2016 թվոսի սազվեթոսի յեթսթեդոցոթոսի ադգարոթեթոս, ցց. 119.

¹² Թաոթաթաթաթ -1929, էջ 156:

¹³ Թաո-վլարձեթոս: օսթորոսոսա Ըա ցոլլաթեթոսի ժեղեթոսի ցաթալոցո, ցց. 266.

10 մետրի: Գյուղում պահպանվում են նաև զմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցու ավերակները: Եկեղեցին պատված է եղել սրբատաշ քարերով, որոնցից մի քանիսն են պահպանվել: Խորանին, ինչպես նաև եկեղեցու արևմտյան և հյուսիսային պատերին նշմարվում են որմնանկարների հետքեր: Գյուղի տարածքում՝ այգիներից մեկի մեջ, պահպանվում են մեկ այլ՝ կոպտատաշ քարերով և կրաբետոնով կառուցված սրահավոր եկեղեցու մնացորդներ: Պահպանված հատվածում պատերի առավելագույն բարձրությունը հասնում է 4 մետրի¹⁴:

Ագորդացվոր գավառի վարչական կենտրոնը Ագորդ բնակավայրն էր (այժմ՝ Uzundere), որը XIX դարի երկրորդ կեսի դրությամբ վեր էր ածվել ոչ մեծ մի գյուղի¹⁵: Այստեղ՝ Շաշարոզ թաղամասում, պահպանվում է սրահավոր եկեղեցի, որը վերջերս վերականգնվել է: Պատերը ամրացված են և ծածկված բազալտե քարով, իսկ ներսից սպիտակեցված է: Եկեղեցու մուտքը արևմուտքից է, ներքին որմերը ծածկված են եղել որմնանկարներով, որոնց մնացորդները պահպանվել են միայն հարավարևմտյան անկյունում: Մուտքի բարավորին փորագրված են արձանագրություններ¹⁶: Ագորդի Մովսես թաղամասում՝ փոքրիկ ժայռի վրա, կա նաև մեկ այլ եկեղեցի, որից պահպանվել են միայն հյուսիսային պատը և խորանի մի մասը¹⁷:

Օսեթ գյուղը գտնվում էր Ագորդի անմիջական հարևանությամբ: Այսօր այն Ուզունդերեի Էրիկլի թաղամասն է: Գյուղի գերեզմանատանը պահպանվում են միանավ սրահավոր եկեղեցու մնացորդները, պահպանվել են խորանը և հյուսիսային պատի մի մասը: Կառուցված է կոպտատաշ քարերով և կրաշաղախով¹⁸:

Ագորդացվոր գավառի հարավային մասում՝ Թորթում գետի աջ ափին էր Ապոնես գյուղը (այժմ՝ Suyatağ): Ապոնեսում 1878 թ. դրությամբ ապրում էին 280 հայեր, գյուղն ուներ իր վարժարանը և եկեղեցին¹⁹: Վերջինս կառուցված էր բարձրադիր վայրում: Այսօր պահպանվում են եկեղեցու և կից կառույցների մնացորդները: Եկեղեցին կառուցված է եղել միջին չափսերի կոպտատաշ քարերով և կրաբետոնով՝ հատուկ հարթեցված վայրում: Ձորի կողմում այն հենված է հատուկ կառուցված պատվանդանի վրա: Եկեղեցին շրջապատված էր պարիսպով, որը հիմնականում պահպանվում է և վնասված է միայն որոշ հատվածներում²⁰: Պահպանված հատվածների ամբողջականությունը թույլ է տալիս մեզ ենթադրել, որ այստեղ միջնադարում գոյություն է ունեցել վանական համալիր:

Թորթում գետի ձախ ափի պատմաճարտարապետական հուշարձանները

¹⁴ ԵՊՀ-Կոնսերվացիայի 2016 թ. հունիսի 15-ի հրահանգի համաձայնությամբ, հ. 120-123.

¹⁵ Էփրիկյան Ս. -1907, էջ 51:

¹⁶ ԵՊՀ-Կոնսերվացիայի 2016 թ. հունիսի 15-ի հրահանգի համաձայնությամբ, հ. 128.

¹⁷ ԵՊՀ-Կոնսերվացիայի 2016 թ. հունիսի 15-ի հրահանգի համաձայնությամբ, հ. 129.

¹⁸ ԵՊՀ-Կոնսերվացիայի 2016 թ. հունիսի 15-ի հրահանգի համաձայնությամբ, հ. 117.

¹⁹ Ակոպով Ա. -2018, էջ 104:

²⁰ ԵՊՀ-Կոնսերվացիայի 2016 թ. հունիսի 15-ի հրահանգի համաձայնությամբ, հ. 196.

Ազորդացվոր գավառի արևմտյան մասում՝ Թորթում գետի ձախափնյա հատվածում են գտնվում ներքոհիշյալ բնակավայրերը՝ *Ասպարաշեն (Աշմիշեն), Լեք, Խարս, Ծիսիկ, Օշկ, Վանք, Ճալա, Ընկուզեք, Վիսիկ և Խախու*:

Գավառի հյուսիսում՝ Օլթի և Թորթում գետերի միախառնման վայրից ոչ հեռու էր գտնվում դեռևս միջնադարյան շրջանից հայտնի Ասպարաշենը (այժմ՝ Kınalıçam): Գյուղի բակերից մեկում մինչև 1970-ական թթ. պահպանվում էր եկեղեցին, սակայն տեղացիները քանդում են այն, իսկ եկեղեցու քարերով իրենց համար տներ կառուցում: Ի տարբերություն եկեղեցու՝ բավականին պահպանված է բերդը: Այն գտնվում է գյուղի հյուսիսային հատվածում՝ ներկայիս Թորթում-Յուսուֆեյի ճանապարհի կողքին²¹: Միջնադարում բերդը կառուցված էր այնպես, որ կարծես այն նայում է մի քանի կմ հյուսիս-արևելք գտնվող պատմական Տայքի Ճակք գավառի Բշխանաց բերդին:

Ազորդացվոր գավառի Խարս²² գյուղի (այժմ՝ Սլուբաջ) «Վերին թաղի» այգիներում պահպանվում է բավականին մեծ սրահավոր եկեղեցի՝ հարավային կցակառույցով: Եկեղեցու արևմտյան պատը քանդված է, մնացած պատերը թեպետ վնասված են, սակայն հիմնականում պահպանվել են: Պատերի առավելագույն բարձրությունը 4 մետր է: Հարավային կցակառույցը խորանով է: Եկեղեցին կառուցված է կոպտատաշ քարով և կրաբետոնով: Տեղացիները եկեղեցու գտնվելու վայրն անվանում են «Քիլիսե Բաղլար» («Եկեղեցու այգիներ»)²³:

Թորթումի լճի ափին էր Ծիսիկ գյուղը (այժմ՝ Balıklı): Ի սկզբանե գյուղը գտնվում էր Թորթում գետի ափին, սակայն 1791 թ. երկրաշարժի հետևանքով, երբ փակվեց գետի հունը, բնակիչները հաստատվեցին իրենց ամառանոցում²⁴: Գյուղն ուներ երկու եկեղեցի, որոնցից առաջինը գտնվում է ներկայիս Դեղիրմենթեփե թաղում: Պահպանվել է հյուսիսային պատը, ինչպես նաև արևելյան և արևմտյան պատերի մի մասը: Եկեղեցին կառուցված է կոպտատաշ քարերով և կրաբետոնով: Տեղացիները եկեղեցու գտնվելու վայրը անվանում են «Քիլիսե սիրթ» («Եկեղեցու լեռնաշղթա»), իսկ եկեղեցին՝ «Յուքարը Քիլիսե» («Վերին եկեղեցի»): Գյուղի մեկ այլ եկեղեցի գտնվում է «Ստորին» թաղում: Եկեղեցին գրեթե ամբողջությամբ պահպանվել է, քանդված է միայն տանիքը: Կառույցը բոլոր կողմերից ունի մեկ փոքրիկ պատուհան: Եկեղեցու մուտքն արևմուտքից է: Կառուցված է կոպտատաշ քարերով և կրաբետոնով: Տեղացիները եկեղեցին անվանում են «Աշաղը Քիլիսե» («Ստորին եկեղեցի»)²⁵:

Թորթումի լճից մոտ 8 կմ դեպի արևմուտք Օշկ (Աշունք, այսօր՝ Gölbasi)²⁶ գյուղն էր, որի հարևանությամբ էր Օշկվանք կամ ուղղակի Վանք գյուղը (այսօր՝ Çamlıyamaç): Գյուղը նշանավոր է X դարի երկրորդ կեսին կառուցված նշանավոր վանքով: Վանքի

²¹ Գառ-Վարձյեթի: Իստորիոսա Եւ Կըլթըրոս Եւ Երկրաբանական Կատալոգ, ԵՅ.ԵՅ. 60, 241.

²² 1791 թ. Տայքում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ Խարս գյուղի հարևանությամբ գտնվող նույնանուն լեռան վրայից մի խոշոր ժայռ է պոկվել, որը, գլորվելով ցած, փակել է Թորթում գետի ճանապարհը, ինչի արդյունքում առաջացել են Թորթումի լիճը և 48 մ բարձրությամբ ջրվեժը:

²³ Գառ-Վարձյեթի Եւ Երկրաբանական Կատալոգ 2016 Վ.Լոս ՏԱՅՔՎԱՆՔԻ ԵՅՏԵԴԵԿՆԵՐԻ ՆԵՐՄԱՐԿԵՐԱՍԿԻՎ ԵՅՏԵԴԵԿՆԵՐԻ ՆԵՐՄԱՐԿԵՐԱՍԿԻՎ, ԵՅ. 111.

²⁴ «Շիրակ» -1905, 5, էջ 377:

²⁵ Գառ-Վարձյեթի Եւ Երկրաբանական Կատալոգ 2016 Վ.Լոս ՏԱՅՔՎԱՆՔԻ ԵՅՏԵԴԵԿՆԵՐԻ ՆԵՐՄԱՐԿԵՐԱՍԿԻՎ ԵՅՏԵԴԵԿՆԵՐԻ ՆԵՐՄԱՐԿԵՐԱՍԿԻՎ, ԵՅ.ԵՅ. 110-111.

²⁶ Աշունք տարբերակով գյուղը հանդիպում է Վարդան Արևելցու մոտ: (Տե՛ս ՀԱՍՏԱՐՈՒՄ...-1862, էջ 85):

գլխավոր եկեղեցին նվիրված էր Հովհաննես Մկրտչին և իր ճարտարապետությամբ նշանավորներից մեկն էր Տայքում՝ համարվելով «Տայքի յոթ հրաշալիքներից մեկը»²⁷: Հակոբ Կարնեցին, խոսելով Օշկվանքի, ինչպես նաև Տայքի մյուս հրաշակերտ կառույցների մասին, գրում է. «...յար և նման ոչ գոյ նոցա, բայց թէ լինի միայն սուրբ Սուփի ի Կոստանդինուպոլիս»²⁸:

Օշկվանքի գլխավոր եկեղեցին հայկական միջնադարյան ճարտարապետության գագաթներից մեկն է և իր արժանի տեղն է գրավում այնպիսի գոհարների հետ, ինչպեսիքն են Ախթամարի Սբ Խաչք, Անիի Մայր տաճարը և այլն: Օշկվանքի տիպով են կառուցվել նաև այլ տաճարներ հարևան երկրներում²⁹:

Վանք գյուղի տարբեր մասերում պահպանվել են վանական համալիրի մաս կազմող տարբեր շինություններ, այդ թվում՝ մի քանի փոքր եկեղեցիներ: Օշկի գլխավոր տաճարից մոտ 270 մ հարավ-արևմուտք գտնվում է միանավ սրահավոր եկեղեցի, որը բավականին լավ է պահպանված: Կառուցված է մոխրագույն սրբատաշ քարերով: Եկեղեցու մուտքը հարավից է: Այն ուներ մեկական պատուհան դեպի արևմուտք, արևելք և հարավ: Պատուհանների վերևի հատվածները զարդարված են դեկորատիվ զարդարանքներով մշակված կամարունքերով: Խորանի վրա առկա են երկու խորշեր: Պահպանվել են որմնանկարների մնացորդներ: Ներկայումս եկեղեցին օգտագործվում է տեղի բնակիչների կողմից որպես գյուղատնտեսական շինություն³⁰: Օշկի գլխավոր եկեղեցուց 220 մետր հարավ-արևմուտք է գտնվում մեկ այլ միանավ սրահավոր եկեղեցի՝ հյուսիսից կից շինությամբ: Եկեղեցին բավականին վնասված է: Պահպանվել են միայն արևմտյան պատը և հյուսիսային պատի մի մասը: Մեկ այլ եկեղեցի գտնվում է գլխավոր եկեղեցուց 80 մ դեպի հարավ: Պահպանվել է եկեղեցու հյուսիսային պատը, ինչպես նաև արևելյան և արևմտյան որմերի մի մասը³¹: Բացի վերոնշյալներից՝ պահպանվել են նաև վանական համալիրի մաս կազմող սեղանատունը, գրատունը և այլ օժանդակ կառույցներ:

Ճալա գյուղը գտնվում է ներկայիս Ուզունդերե քաղաքի Չայբաշի թաղամասի տարածքում: Նրանից 2 կմ հյուսիս՝ Փառիձոր կոչվող ամառանոցում էր գտնվում գյուղի եկեղեցին՝ կառուցված մեծ չափերի սրբատաշ քարերով: Եկեղեցու մուտքը հարավից էր: Պահպանված պատերի առավելագույն բարձրությունը մինչև 4 մետր է³²:

Ճալայի հարևանությամբ էր Ընկուզք գյուղը (այժմ՝ Dikyar): Գյուղի ներկայիս թաղամասերից մեկում՝ Դերեյում, անմատույց ժայռի վրա պահպանվում է Ընկուզկա վեհաշուք բերդը: Այն գտնվում է Թորթում-Յուսուֆեյի ճանապարհի մոտ: Բերդը բավականին մեծ չափերի է՝ 78x38 մ, բավականին լավ է պահպանված, ունի մինչև 30 մետր բարձրությամբ պարիսպներ, ինչպես նաև ներքին շինություններ, եկեղեցի, ջրամբարներ, պահեստներ և օժանդակ շինություններ: Ընկուզկա բերդը կառուցված է միջին չա-

²⁷ Ատրպետ, նշվ. աշխ., էջ 171:

²⁸ Յակովբ Կարնեցի -1903, էջ 17:

²⁹ Նահատակյան Գ. -2020, հ.2/4/, էջեր 144-151:

³⁰ Ժառ-Վլադիմիր Դեյլեյ 2016 թվ. հունիսի 2-ի համաժողովի անցումային ակտի, թ. 114.

³¹ Նույն տեղում, էջ 116:

³² Նույն տեղում, էջ 126:

փի կոպտատաշ քարերով և կրաբետոնով: Ամրոցի ստորոտին առկա է նաև բաղնիքը: Ընկուզեքից հյուսիս՝ Քարոտ կոչվող ամառանոցի տարածքում, պահպանվում են միջնադարյան ամրոցի մնացորդներ: Պահպանված հատվածում պարսպի բարձրությունը հասնում է 2,5 մետրի³³:

Ընկուզեքից 2,5-3 կմ հարավ գտնվում էր Վխիկ գյուղը (այժմ՝ Pehlivanlı): Գյուղի տարբեր մասերում պահպանված են եկեղեցիների և բերդի մնացորդներ: Գյուղից հյուսիս-արևմուտք են գտնվում միջնադարյան միանավ սրահավոր եկեղեցու մնացորդները: Տանիքը բացակայում է: Միջին մեծության եկեղեցին կառուցված է կոպիտ մշակված քարերով և կրաբետոնով: Խորանում կան երկու ուղղանկյուն խորշեր: Ունի մուտքեր հարավից և արևմուտքից: Միջնամասում պահպանվել են սյուները³⁴:

Վխիկից ոչ հեռու է հռչակավոր Խախուն (այժմ՝ Bağbaşı): 1878 թ. դրությամբ Խախու գյուղում բնակվում էր 467 հայ³⁵: Գյուղը հայտնի է IX-X դարերում կառուցված իր հռչակավոր վանքով: Վանքի գլխավոր եկեղեցին է Սբ Աստվածածինը: Եկեղեցու կառուցման կոնկրետ տարեթվի մասին կարելի է կարդալ խորանին կից աջակողմյան սյան վրա՝ «ՄԲ Գ ՅԺԷ» հայատառ գրությունը, որը «իցէ թերևս Սուրբ Գրիգոր, և թին Հայոց (868 ամ Քրիստոսի)»³⁶: Սբ Աստվածածին եկեղեցու հարևանությամբ են 2 մատուռները և եկեղեցուց մոտ 30 մ արևելք գտնվող բավականին ընդարձակ կառույցը (ամենայն հավանականությամբ՝ սեղանատուն): Վանքի տարածքը շրջապատված է պարիսպով: Խախու գյուղի տարբեր հատվածներում պահպանվել են վեց ավելի փոքր չափերի եկեղեցիներ, ինչպես նաև Խախուի բերդը, որոնց ավելի մանրամասը կանդադրանք մեր հետագա ուսումնասիրությունների շրջանակներում:

Եզրահանգում. Այսպիսով, հետազոտության արդյունքում ճշտվել է պատմական Մեծ Հայքի Տայք աշխարհի Ագորդացիոր գավառի հիմնական պատմաճարտարապետական հուշարձանների տեղագրությունը: Ագորդացիոր գավառի տարածքում ցայսօր պահպանվող պատմաճարտարապետական հուշարձաններից շատերը՝ եկեղեցիներ ու վանքեր, բերդեր ու ամրոցներ, վկայված են դեռևս վաղ միջնադարյան սկզբնաղբյուրներում և կազմում են հայկական պատմամշակութային ժառանգության մաս: Ցավոք, գավառի հուշարձաններից շատերը չեն հասել մեր օրեր գավառի ներկայիս բնակչության և նրանց նախնիների բարբարոս վերաբերմունքի պատճառով:

³³ Թառ-Վարձեթոսի մեջլեթի 2016 թվականի հունիսի 12-13-ի նիստի 124, 127.

³⁴ Նույն տեղում, էջ 129:

³⁵ Էփրիկյան Ս. -1907, էջ 51:

³⁶ Սարգիսյան Ն. -1864, էջ 92: Հմմտ. Ерицов А. -1884-1888, h. 8, էջ 80:

О РАСПОЛОЖЕНИИ И СОВРЕМЕННОМ СОСТОЯНИИ ИСТОРИЧЕСКИХ И АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКОВ ПРОВИНЦИИ АЗОРДАЦПОР

Акопов А. А., Наатакян Д. С.

Ключевые слова: *Тайк, Тортум, Чорох, Азорд, памятник, Ошк, церковь, крепость, замок, поселение, армяне.*

В результате исследования была уточнена топография основных историко-архитектурных памятников провинции Азордацпор исторической области Тайк Великой Армении. Многие исторические памятники, сохранившиеся на территории провинции Азордацпор – церкви и монастыри, крепости и замки – засвидетельствованы в раннесредневековых источниках и являются частью армянского историко-культурного наследия. К сожалению, многие памятники провинции не сохранились из-за варварского отношения нынешнего населения провинции и их предков.

ON THE LOCATION AND CURRENT CONDITION OF THE HISTORICAL AND ARCHITECTURAL MONUMENTS OF AZORDATSPOR PROVINCE

Akopov A. A., Nahatakyan D. S.

Key words: *Tayk, Tortum, Chorokh, Azord, monument, Oshk, church, fortress, castle, settlement, Armenians.*

As a result of the study, the topography of the main historical and architectural monuments of the Azordatspor province of the Tayk - historical region of Greater Armenia was clarified. Many historical monuments preserved in the Azordatspor province - churches and monasteries, fortresses and castles - are attested in early medieval sources and are part of the Armenian historical and cultural heritage. Unfortunately, many monuments of the province have not been preserved due to the barbaric attitude of the current population of the province and their ancestors.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Ալիշան Գ.-1856, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ:
2. Ակոպով Ա. 2018, Թորթումի գավառի հայ բնակչությունը 1830-1878 թթ., ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 21, Գյումրի, էջ 96-106:
3. Ատրպետ -1929, Ճորոխի ավազանը, Վիեննա:
4. Բաղայան Գ.-2018, Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին, ՎԷՄ համահայկական հանդես, Ը (ԺԿ) տարի, թիվ 1 (53) հունվար-մարտ, հավելված:
5. Էփրիկյան Ս. -1907, Պատկերագարդ բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ:
6. Հաւարումն պատմութեան Վարդանայ վարդապետի 1862, Վենետիկ:
7. Յակովբ Կարնեցի -1903, Տեղագիր Վերին Հայոց, յիշատակարան ԺԷ դարու, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի տպ.:

8. **Նահատակյան Գ. -2020**, Տայք-Գուգարք միջնադարյան հայկական դպրոցի կայանմը՝ Օշկվանքի օրինակով // Արվեստագիտական Հանդես, համար 2/4 / ՀՀ ԳԱԱ Արվեստի ին-տ., Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 144-151, 2016:
9. **«Շիրակ» -1905**, Աղեքսանդրիա, թիվ 5:
10. **Սարգիսյան Ն. -1864**, Տեղագրությունք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ:
11. **Տաշեան Հ. -1972**, Տայք, դրացիք և Խոտորջուր, Հանդես ամսօրնայ, 7-9:
12. **Ершов А. -1884-85**, Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном управлении России, "Известия Кавказского отдела императорского русского географического общества", т. 8, Тифлис. Дополнения. Такайшвили Э. -1952, Археологическая экспедиция 1918 года в Южные провинции Грузии, Тб.
13. Երևան-Վարդգեսի: Իստորիս և քուլտուրիս մեղեքիս կատալոգի, ռեդ. Զ. Կլեմյան, Թբիլիսի, Գամոմցեմլոբա արտանայ, 2017.
14. Երևան-Վարդգեսիս մեղեքիս 2016 Վիլիս Տակվեքիս յեքսքեդիքիս անգարիքի, Թ. Խեքիմչի-Լի, Զ. Գոռալիմչիլի, Ե. Իմեդաշիլի, Մ. Կոլոբաշիլի, Դ. Մայիսյան, Լ. Վիքարիմչիլի, Կազկասիս Մնիքրիտիքիս Գամոմցեմլոբա, Թբիլիսի, 2017.

Ընդունվել է՝ 30. 01. 2022
Գրայտակել է՝ 18. 03. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակների մասին

Արևիկի ԱԿՈՒՊՎ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի գիտքարտուղար, էլ. հասցե՝ arkadone1@gmail.com

Դավիթ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ, ճարտարապետության թեկնածու,
ՀՀ ԳԱԱ ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական
մասնագիտության վերականգնման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի
ասիստենտ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի գիտաշխատող, էլ. հասցե՝ davit.nahatakan@gmail.com

ՀՏԴ՝ 82-9

DOI: 10.52971/18294316-2022.25.1-61

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գևորգ Այվազյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ տիրացու, սաղմոս, պատիժ, Գյումրի, ծեծ, հրամայել, Մք
Աստվածածին եկեղեցի, խանութ, կտակարան:

Սույն հրապարակման մեջ առաջին անգամ ներկայացվում է ալեքսանդր-
գի բանասեր, մանկավարժ Կարապետ Կոստանյանցի (1849-1920) «Ման-
կութեանս Գիւմրին» անտիպ հուշագրությունից ընդարձակ մի բաժին:
Դրանում հեղինակը վարպետորեն վեր է հանում XIX դարի կեսերի Գյում-
րու և ընդհանուր առմամբ, տվյալ ժամանակաշրջանի հայկական կրթա-
կան միջավայրի թերությունները: Նրա հետահայաց ակնարկներն ընթեր-
ցողին ստիպում են խորամուխ լինել ազգային դպրոցների գործերի մեջ և
հեռուն տանող ընդհանրացումներ կատարել:

Նոթագրության նշված հատվածն ընտրվել է 1860-80-ականների մշա-
կութային զարթոնքի գործիչների՝ հայ կյանքը բարեփոխելու ջանքերը
երիցս արժևորելու նպատակով: Արխիվային նյութն այդ իմաստով լիար-
ժեք և պարունակային ընկալման հնարավորություն է ընձեռում:

Նախաբան. Պատմության ցանկացած դրվագի բազմակողմանի և ամբողջական
լուսաբանում կարոտ է ապրված ժամանակը կերտողների թողած ինքնակենսագրական
անաչառ տեքստերի: XIX դարի երկրորդ կեսը և XX դարի սկիզբը, բարեբախտաբար,
հայոց պատմության և հայ գրականության հետազոտողներին պարզել են հոգեբանա-
կան ելևէջների և անմիջական տպավորությունների միջև ճոճորվող նմանատիպ սկզբ-
նաղբյուրներից օգտվելու «հաճույքը»:

Ալեքսանդրապոլ քաղաքի սոցիալ-կրթական և մշակութային պատմության ուսումնասիրությունը մեծապես թերի կլիներ, եթե դրա հիմքում դրված չլինեին Ղազարոս Աղայանցի, Գրիգոր Խալաթյանցի, Հովհաննես Տեր-Միրաքյանցի, Գարեգին Լևոնյանի, Նիկողայոս Նիկողոսյանի, Մնացական Թամրազյանի, Սուքիաս Ջահրիյանի (Խայթաթ), Պետրոս Մոճոռյանի և ուրիշների հուշերը: Այդ շարքը գալիս են լրացնելու արմատներով դարսեցի, բայց Ալեքսանդրապոլում ծնված Կարապետ Կոստանյանցի՝ իրենց մեջ ահռելի գիտուժ պարունակող գրական-բանասիրական աշխատանքները¹:

«Մանկութեանս Գիւմրին» ձեռագիր հուշագրութեան (69 էջ) հեղինակը Ալեքսանդրապոլում իր հոգևոր-հասարակական գործունեությամբ հայտնի Հովսեփ քահանա Կոստանյանցի որդին է, քաղաքի նշանավոր հոգևորականներից մեկի՝ Պետրոս քահանա Կոստանյանցի թոռը: Տեղի դպրոցն ավարտելուց հետո 1865-1870 թթ. սովորել է Թիֆլիսի գիմնազիայում, 1870-1878 թթ.՝ Ս. Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետում: 1875-1876 թթ. ուսումը կատարելագործելու հնարավորություն է ունեցել Գերմանիայում: 1878-1905 թթ. աշխատել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, 1891-1894թթ. եղել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, իսկ 1911-1920թթ.՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի տեսուչը:

Մանկավարժական գործունեության մեջ թրծված, մանկավարժական գիտության անխոնջ մշակը իր կեսդարյա փորձառությամբ ժամանակակիցների հետ կիսել է ազգային դպրոցի հոգսերը և ուրախությունները: Նրա հուշագրությունն անցյալի պարզ ցուցադրություն է՝ գրված հայկական լուսավորականության շրջանի առաջադիմական գաղափարների ոգով: Զուգահեռներն ունի Ստեփանոս Նազարյանցի «Հյուսիսափայլ» ամսագրում տպագրված նյութերում: Դրանցում անխնա ծաղրի է ենթարկվում տգիտությունը. «... Իմ գիտցածէս տղին շատ կարդալն ալ զարար է. (մատով համարելով) մէկ մարդս գիտցաւ Հայնակ քերական, պզտի սաղմոս, մեծ սաղմոս, Կտակարան, Վարժութիւն մանկանց և Նարեկ. ան է որ խալֆայ եղաւ գնաց: Ռուսնակէն ալ գրել կարդալ, քիչ մը վարժվելու համար ալ ֆռանցուզնակ, լաթիննակ կալաճի գիտնայ, փօլքայ և քատռիլ խաղալ, աս խատարն ալ մանչերու համար. չէ նէ աղջիկներուն հիչ պէտք չէ. գրել կարդալ գիտցածներովը, մեմալ նայիս տանք տէյին կելլեն գիր կը գրին մարդուն մեկին, բանն ալ պուրթ կանին կը խալսին...»:²

Հրատարակման համար պատրաստել ենք հուշագրության «Ս. Աստուածածնի եկեղեցու տիրացուները» հատվածը (17-ից 32-րդ էջեր), որը տիրացու Մարտիրոսի դպրոցի օրինակով Ալեքսանդրապոլի առնվազն 8 մասնավոր կրթարանների պատմության շարադրանքն է:³ Ինքնակենսագրական մեծ պատումի մաս հանդիսացող նոթերում իրադարձությունները ծավալվում են 1850-ական թթ. Գյումրիում:

Կ. Կոստանյանցը ժանրի յուրահատկություններին հատուկ տեքստ է ստեղծել. սուբյեկտայնության ցածր մակարդակ, անմիջականություն, գործողություններին հնարավորինս քիչ միջամտություններ, տարբեր տարածական դիրքորոշումների համակ-

¹ Բեհրուդյանց Ս. -1960, էջ 50-56: Հարոյան., 2007, էջեր 219-225: Աղանյան Գ., -2020 թ.:

² Սուլթան-Շահ Ա. -1859, էջ 803:

³ Մանրամասն տես Այվազյան Գ. -2020, էջեր 125-130:

ցում, լեզվական տարբեր ժամանակաձևերի կիրառում և այլն:⁴ Մեր կարծիքով, այն արժեքավոր տեղեկություններ է պարունակում հայկական դպրոցներում տիրող վիճակի, ուսուցման և դաստիարակության, պատժի ձևերի, կիրառվող դասագրքերի, երեխաների արտադասարանական զբաղմունքի, խաղերի, և այսպես ասած՝ «փողոցի» դերի մասին: Կարող է օգտակար լինել Ալեքսանդրապոլի տնտեսական պատմությամբ զբաղվող մասնագետներին, պատմամշակութային հուշարձանները քարտեզագրողներին: XIX դարի կեսերի արևելահայ քաղաքի տիպիկ պատկերներ են ստեղծել Գյումրու խոսվածքի գեղեցիկ նմուշներով միմյանց հետ հարաբերվող նրա կերտած Գաբո, Գալո և Շահպազ ամիների, Նազարեթ (Կոստանյանց) և Հարություն աղաների, Հակոբ աղբոր, Սալվինազի և, իհարկե, փոքրիկ Կարոյի անսահման սերն ու հարգանքը վայելող պապի՝ Պետրոս քահանայի կերպարները:

Հուշերի բնօրինակը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Կ. Կոստանյանի ֆոնդում:⁵ Հրապարակման մեջ պահպանված է հեղինակի ուղղագրությունը: Փակագծերի ծանոթագրությունները ևս հեղինակային են: Մեզ չի հաջողվել պարզել հիշողությունների գրության ժամանակի հանգամանքները: Դատելով բառապաշարից՝ հակված ենք մտածել, որ այն գրվել է 1910-ական թթ.: Հարագատ ենք մնացել բնօրինակի լեզվական և կետադրական իրողություններին:

«Բ. Ս. Աստուածածնի եկեղեցու տիրացուները.

Տիրացուների մեջ յայտնի էին տիրացու Մարտիրոս (յետոյ տեր Վրթանէս) տիր. հաճի⁶ Մարտիրոս (յետոյ հաճի տեր Մարտիրոս) տիր. Աղեքսան (յետոյ տեր Աղ. Ամատունեաց) տիր. Խաչատուր սովորաբար Քեալաշողլի կոչուած (յետոյ տեր Խաչատուր) տիր. Աւետիք (յետոյ սարկաւազ) տիր. Յարութիւն սովոր. էշաքճի⁷ կոչուած և այլն: Մոքա բոլորն էլ պահում էին մասնաւոր վարժարաններ և սոցա մօտ էին սովորում Գիւմրուայ տղաներն առաջին գրագիտութիւնը: Տիրացու Մարտիրոսի վարժատունն էր մի սենեակ երկու լուսամտով, որոնք ունէին շրջանակ և ապակիներ, կային այդ սենեակում խիտ իրար մոտ շարուած դպրոցական երկար նստարաններ (սովորական), որոնց իւրաքանչիւրի վերայ տեղաւորուած էին բաւական խիտ 8 - 10 հոգի դասաւորուած ըստ գիտութեան: Այն ժամանակ գիտութեան աստիճանները չափուում էին այն գրքով կամ ձեռնարկով, որով ուսանում էին այսպէս՝ 1. տախտակ, 2. հեգերէն կամ քերեկան (այլբենարան) 3. պգտի Սաղմոս,⁸ 4. վենձ (մեձ) Սաղմոս, 5. կտակարան 6. Յիսուս որդի, 7. Նարեկ: Նարեկից յետոյ սովորում էին քերականութիւն, բայց տիր. Մարտիրոսի մոտ այդ բարձրագոյն շրջանը չկար և ոչ մի տիրացուի վարժարանում չկար այդ: Յիշում եմ տերտեր պապս առաջին անգամ ինձ վարժատուն տուեց այն ժամանակ երբ ես տանն արդէն տախտակը պրծել էի. տախտակ (պնակիտ) ասածդ քառակուսի փոքր տախտա-

⁴ Չարոյան Է. -2014, էջ 30-41:

⁵ ԳԱԱ՝ -Կ.Կոստանյանի ֆոնդ, վավերագիր 5:

⁶ Հաջի՝ Մեքքա ուխտի գնացած մահմեդական: Մահտեսի՝ Երուսաղեմ ուխտի գնացած քրիստոնյա:

⁷ Eşek (թուրք.)՝ էշ, ավանակ:

⁸ Աստվածաշնչի մի մասը՝ կրոնական քնարերգական հատվածների ու աղոթքների ժողովածուն: Սաղմոսների ժողովածուն որպես ուսումնական ձեռնարկ ընթերցանության համար:

կի կտոր է առանձին կոթով նոյն տախտակից հանած, և ունէր այս ձևը.⁹ Երկու երկու էլ մաքուր յղկած էր և երկու երեսին էլ մաքուր սպիտակ թուղթ կպցրած շրէշով¹⁰ իւրաքանչիւր երեսի վերայ նախ մաքուր բարակ տողեր էին գծում և այդ տողերի վերայ Հայոց բոլորագրով (որն այն ժամանակ ասում էր պասմագիր - տպագիր) գրուած էր նախ առաջին երեսի ճակատին՝ «Խաչ օգնեա ինձ» ապա երկրորդ տողից սկսած ամբողջ այբբենը կարգով, յետոյ «Աստուած իմ», ապա աա բբ (այբայբ բենբեն) մինչև վերջն յետոյ միւս երեսին «աճճո, բիմ» (այբբէճէռա, բենինիմենսէ) և այլն մինչև վերջը: Ինչ էր համոզել տէրտէր պապիս որ ինձ վարժատուն տայ չգիտեմ, իբրև տան մէջ միակ մանչ տղայ և իւր անդրանիկ թոռը նա ինձ շատ գուրգուրում էր և համարեա ծնկան վրայ էր պահում միշտ. դժուարանում էր հեռու տեղ տալ և որպէսզի մեր տունն Ս.Աստուածածնի ժամին մոտիկ տեղ լինի. նա յառաջ տարաւ ինձ տիրացու Բարսեղի մոտ (յետոյ տէր Մովսէս) տիրացու Բարսեղի վարժատունը մի քառակուսի յարկ էր, որի լոյսը կտորից էր ընկնում, գետինն հող էր, առաստաղը գերաններ (դառնաւուջ) պատերն առանց ծեփի. գետնին այստեղ այնտեղ փռուած էին կարպետի կտորտանք, թաղիք, իսկ տոռան դէմը պատի առաջ մի ցածրիկ աթոռակ կար, այդ վարժապետի սեղանն էր, վրէն դրուած էր մի հաստ քանոն և երկու ձողկիչ (բարակ ճիպոտներ) տիրացու Բարսեղն իւր դէմքով դժնահայեաց, թուխ խոշոր գանգուրն ուսերին թափուած աշխարհականի տեղական հագուստով աննպաստ տպաւորութիւն արաւ ինձ վերայ. առաւօտեան ժամից յետոյ էր տէրտէր պապս ուղղակի ձեռքիցս բռնած ինձ եկեղեցուց տարաւ նորա մոտ երևի փորձելու համար. երբ մտանք «վարժատուն» և ես տեսայ խոշոր խոշոր և կասկածելի դէմքեր փողոցում չարութիւն անող տղաների, որոնք վարժատան աշակերտներն էին, տէրտէր պապիս վերաբերուի փէշի տակ ծածկուեցայ երկիւղից. չգիտեմ ինչ խօսաւ նա տիրացու Բարսեղի հետ, նա եկաւ մօտեցաւ ժպտալից և ուզեց ձեռքիցս բռնել և տանել իւր մօտ նստեցնել, ես չհամբերեցի լաց եղայ և մի ակնթարթում ձեռքից պոկ եկայ և փախաւ դէպի մեր տուն, որ հեռու չէր, տանը լալիս էի և ոչ ոք չէր հասկանում ինչու մինչև եկաւ տէրտէր պապս, ինձ գրկեց դրեց ծնկանն և սկսեց փայփայել ու հանգստացնել. նորա գրկում ես քնել եմ, և այդպէս մոռացութեան մէջ էի: Յիշում եմ երբ աչքս բացի տէրտէր պապս արդէն իւր ճաշն էր ուտում (այն ժամանակ գիւմրեցիք կորեկիացը 12 ժամին էին ուտում), նա մօտեցաւ ինձ դարձեալ շոյեց ու փայփայեց ինչոր չոր մրգեր տուեց, բայց ոչ մի խօսք չարաւ առաւօտուայ դէպքի մասին: Երկ օր յետոյ մեր փեսայ տիրացու Յովհաննէսին (հորաքրոջս մարդն էր, գրավաճառ) պատուիրեց, որ մի լաւ «նշխուն» քերեկան բերէ. երբ այդ գիրքը բերին, նա ցոյց տուեց ինձ գովեց գրքի սիրունութիւնը գրքի շապիկն յիրաւի պայծառ կարմիր փայլուն թուղթ էր զարդարուն շերտերով. մէջն առաջին երեսին պատկեր կար, միւս երեսին զարդարանքներ, երեկոյին ինձ յետը տարաւ ժամ, Ս.Աստուածածնի խորանը մոմ վառեց պատկերի առաջ և գիրքը դրեց ս. պատկերի տակ սեղանի վերայ (Այսպէս էր սովորութիւնը, որ ինչ նոր գիրք որ տղան փոխելու լինէր պէտք է այդ գիրքը նախ և յառաջ մի երկ օր դրուած լինէր ս. պատկերի առաջ որ շնորհալի լինի տղան): Աշնան մի առաւօտ էր տէրտէր պապս կախեց վզիցս «չանթէն»

⁹ Նկարված է բռնակով քառակուսի տախտակ:

¹⁰ Շուշանագիների ընտանիքին պատկանող կոճղարմատավոր բույսից պատրաստվող սոսինձ:

(չանթայ այն պարկն է, որ աշակերտը պարտաւոր էր ունենալ գրքերի ու տետրակների համար) նորա մէջ դրեց «քերեկանը» և ձեռքից բռնած ճամբայ ելաւ տանից դէպի տիրացու Մարտիրոսի վարժատունը, որը թէն մեր փողոցի վերայ էր, բայց բաւական հեռու էր մեր տանից: Տիրացու Մարտիրոսի մօտ արդէն կարդում էին մեր ազգականներից Զուրաբ և Համբարձում Կոստանեանց եղբայրներն և ուրիշներն, այդ աւելի խրախուսել էր տէրտէր պապիս ինձ այնպէս տեղ տալու, որ մենակ չլինեմ: Տիրացու Մարտիրոսի վարժատան վերնի նկարագիրն արդէն ցոյց է տալիս, որ սա նման չէր տիրացու Բարսեղի անպաճոյճ և գռեհիկ յարկին: Չեմ իմանում ինչ կատարուեցաւ, բայց ես չդժուարացայ մնալ այնտեղ և տէրտէր պապս էր որ գլուխս շփեց, տիրացուին ջերմ պատուէրներ տուեց լաւ նայել «ձագիս», տիրացուն «ծառայ եմ աջիդ» ասաց ու խորին ակնածութեամբ խոստման նշաններ անելով նորահարսի նման խոնարհեցաւ աջն համբուրեց և ճանապարհ դրեց մինչև դրսի դուռը. այդ միջոցին մի մեծ տղայ ձաղկիչը ձեռին գնում գալիս էր ու արտասանում «եղբայրներ կարդացէք վէլ օր չըկարդայ թող հրամէ ատեան» ես այդ խօսքերը չէի հասկանում. երբ որ տիրացուն եկաւ և իւր բարձր աթոռին բազմեցաւ ու հրամայեց այն մեծ տղային, որ ինձ իմ տեղս ցոյց տայ, այդ ժամանակ Համբարձումն ինձ ասաց «խալֆէն ետիկէ». խալֆայ ասածդ աւագ աշակերտներից մէկն էր, որին վարժապետն ընտրում էր իբրև իրեն օգնական, որ դասարանի մէջ կարգ պահէ և իւր կարգադրութիւնները գործ դնէ. Շուտով տեսարանը փոխուեցաւ. խալֆէն ինչ որ զեկուցում արաւ վարժապետին, յանկարծ ատենում երևցաւ մի տղայ, խեղճ ու կրակ մի բան, հրաման ելաւ որ խալֆէն նորան չափեցնէ մի փոքր յետոյ մի այլ տղայ կանչուեցաւ ատեան հրաման ելաւ որ խալֆէն նորան հինգ թաթ գարնէ. թաթ ասածդ տափակ քանոն է բաւական հաստ մէկ ծայրը թաթածն լայն. յանցաւոր տղան իւր թաթը պարզեց ու խալֆայից ստացաւ փայտէ թաթի մի հարուած, միւս թաթը ևս պարզեց և ստացաւ միւս հարուածն, և այսպէս հինգ. տղան լալով մղկտալով առանց ձայն ծպտուն հանելու գնաց նստաւ տեղը, նորից հնչեց. «Եղբայրներ. կարդացէք, վէլ որ չըկարդայ թող հրամէ ատեան». և կարդում էին. պետք էր ներկայ լինել և լսել թէ ինչ է նշանակում տիրացու Մարտիրոսի վարժատան մէջ այդ կարդալը. բոլոր աշակերտներն միաժամանակ թէն ոչ բարձրաձայն բայց ամենին լսելի կերպով միաձայն կարդում են, որը Նարեկ, որը Յիսուս որդի, որը կտակարան, որը Մաղմոս որը քերեկան և որը տախտակ: Այսպէս երբ դուք լսում էք մի կողմից «խաչ օգնեա ինձ», միւս կողմից մի ուրիշ խումբ արտասանում է «Ձայն հառաչանաց հեծութիւն սրտի ողբոց աղաղակի» երկրորդ կողմից լսում էք «զբանն առաջին գոր արարի և վասն ամենայնի» չորրորդ կողմից «երանեալ է այր որ ոչ զընայ ի խորհուրդը ամբարըշտաց, ի ճանապարհի մեղաւորաց» ժխոր և անտանելի ժխոր, միաձայն, միաշէշտ խառնիխուռն վայրենի ձայներ, միևնոյն ժամանակ կատարեալ թութակային պատկեր, դեմքերի վերայ ապշութիւն կամ թախիծ, գիտակցութեան ոչ մի նշոյլ... Այն ինչ այդ ամենն ամենայն կարգապահութեամբ անխափան շարունակւում էր, տիրացու Մարտիրոսը հոգեկան կատարեալ զմայլանքի մէջ հրաւիրեց ինձ իւր բարձր աթոռի մոտ, ցոյց տուեց ինձ քերեկանը, փորձեց թէ գրերը ճանաչում եմ, գովեց որ հարցերին պատասխան տուի և ինձ նոր դաս տուեց «այբաշաւաշ, խէ այբ, խաաշխա» և այլն կարդալ «աշխատողականաց» խօսքը ես սկիզբը դժուարանում էի, յետոյ ինձ

խրախուսեց ասաց «շուտով քերեկանը կը պրծիս Պզտի Մաղմոս կը կարդաս» և դրկեց տեղն: Դուրս եկան դաս պատասխանելու ուրիշները. վարժապետն հարցնում և նոր դաս էր տալիս ամեն մեկին. մի մեծ տղայ դասը չգիտեր նորան «առանց կորեկհացի կըմնաս» ասաց. մի ուրիշ տղայ ոչ միայն դասը չգիտեր, այլ և միւս տղայի մօրն էր քրֆել (հայհոյել) և նորան էլ բռունցքով զարկել էր. վարժապետն հրամայեց նորան ատեան կանչել և հրապարակ եկաւ մի նոր գործիք որին փալախայ էին ասում. այդ գործիքը մոտ երկու կանգուն երկար կլօր հաստ փայտ էր, վրէն երկու ծայրից մի թոկ կապած տղային պարկեցուցին գետնին ներբանները մերկացուցին, երկու ոտն անցուցին թոկն և ուրեցին այնքան, որ ոտներն ամուր իրար կապուած փակուեցան փայտի և պարանի մէջ և շարժուել չէին կարող. երկու ձաղկիչ ձեռքերին երկու տղայ վարժապետի հրամանով ամենայն բարեխղճամ խփում էին խփում տղայի մերկ ներբաններին, տղան լալիս գոռում, ճշում «մեղայ Աստծու, վարժապետ ոտքդ պակնեմ բաշխէ» գոռում էր նա, բայց հարուածները դեռ շարունակուում էին, շատերս վախեցանք, սկսեցինք լալ աղիողորմ արտասուել, իսկ վարժապետն իւր բարձր աթոռին բազմած անշարժ նայում է ու կարծէս գոհ է իւր անագորոյն դատաստանից, տղայի ճիչն աշխարհ էր բռնել, երևի դրսի անցուդարձ անողները լսում էին, յանկարծ դուռը բացուեցաւ և մի պառաւ կին ներս եկաւ ու յանդիմանական ձայնով կանչեց վարժապետին «տիրացու ի՞նչ կէնես, մարդ կապանես, Աստուած ունիս բաշխէ հերիք է». դահիճները կանգ առան տիրացուն ասաց «աղօթքի ելէք», բոլորը ոտքի կանգնեցան, այն խեղճ տղան միայն լալիս մղկտում էր և անկարող եղաւ կանգնել, նորից տեղն ու տեղը վար ընկաւ, ինչոր աղօթքի նման մի բան ասացին և ամենքն արձակուեցան ցորեկհացի գնալու խեղճ տղան մնաց այնպէս ընկած և տիրացուն մօտեցաւ ինչոր կարգադրութիւն անելու վարժատան դռնից դուրս գալուս պէս կարծես վանդակից ազատուած թռչուն լինէի, մինչև մեր տունը մէկ շնչով վազեցի, չանթես մի կողմ քցեցի, բերանքսիվար ընկայ տախտին և լացի. տէրտէր պապս արդէն ճաշ կերել պարկել էր. տնեցիք մօտեցան ուզեցին բան հասկանալ, ես ձեռով ոտով նոցա քշում էի ինձանից, և այդպէս ընկած քնել մնացել էի մինչև իրիկուն. յիշում եմ, որ այնուհետև ինչոր բժիշկ էր գալիս, դեղ էին տալիս չէի ուզում ընդունել ու շարունակ լալիս էի. Քանի՞ օր տնեց հիւանդութիւնս, չգիտեմ, բայց յիշում եմ, որ առողջանալուս օրերում տէրտէր պապս կողքիցս չէր հեռանում, և շարունակ ասում էր «անաստուածները մանչուս լեղին պատռել են». ես չէի հասկանում և կարծում էի թէ ինձ մօտ մի բան պատռուել է, շարունակ փորս էին տրորում, տաք բաներ էին կապում և շուտ շուտ բոյախանայ էին դրկում (ներկարարի մօտ) մի պառաւ գալիս էր գօտիկով վախս էր չափում, և ուրիշ այսպիսի ինձ համար անհասկանալի բաներ էին անում: Այդ ժամանակից ամաչկոտութիւնն և վախն ինձ պաշարել էր ամեն բանի մէջ: Թէպէտ ես սկսեցի շարունակել այլ ևս մի քանի շաբաթ տիրացու Մարտիրոսի վարժատունը, բայց ակամայ և միշտ վախով խելով: Մի հանգամանք առիթ տուեց ինձ կամակորուել և չգնալ նորա մոտ: Դէպի ինձ տիրացու Մարտիրոսը միշտ բարեհաճ էր և երբ ուզէի, աւելի շուտ էր արձակում տուն գնալու: Այդ պայմանների մէջ ես պզտի Մաղմոսն աւարտեցի և սկսել էի մեծ Մաղմոսը, երբ աշակերտների մէջ տարածուեցաւ խալֆայի այն կարգադրութիւնը, թէ ով որ քսուի Զուրաբ և Համբարձում Կոստանեանցներին պիտի պատժուի: Թէ ինչ էին

այն երկու եղբայրները որոնց համար այդպես արգելք էր դրում ես չէի կարող հասկանալ: Նոքա մեզ ազգական էին, տներս իրարու մօտ էր, մենք իրար մօտ գնում գալիս էինք. բայց մեր և նոցա դրութեան մէջ մեծ զանազանութիւն կար. նոցա հայրը Նազարէթ աղան «Մոսկոֆու կուպեց» էր: Ամենալաւ խանութը նորանն էր և ասում էր «կուպեցի թուքան» գտնում էր այժմեան Ալեքսանդրովկա¹¹ և Պուշկինսկայա¹² փողոցների այն անկիւնում, որ ընկնում է Տիգրանեանց Սարգիս աղայի տան դէմը Աղեքսանդրեան փողոցի կողմից: Այդ կուպեցի թուքանը շատերի հետաքրքրութեան կենտրոնն էր, մանաւանդ երեխաների. այժմեան պայմաններում մարդու ծիծաղը պիտի շարժէր այդ վաճառատունը, որի մէջ ամէն բան կար և ամէն բան էլ մանր ու կարծէս անարժէք էին բայց թանգ գներով տարածում էին. գլխաւորապէս յիշում եմ խաղալիքները՝ ձի, նապաստակ, արջ, բզգաններ, խամաջուկներ որոնք կամ «մաթուշքայ» էին ասում և կամ «կուպեցի խանջուկ». սոքա հագած կապած զուգած զարդարուած մեծ ու փոքր տիկիներ էին, շատ նման այն ժամանակ մեր Գիւմրիում հազիւհազ փողոցում երևցող ռուս պաշտօնեաների տիկիներին, որոնք նյոնպէս մաթուշկայ էին կոչւում. և որովհետև նոքա երեկոները բաց էին երևում փողոցում, այդ պատճառով գիւմրեցիք, երբ ուզում էին մէկի կնոջ անպարկէշտութիւնը կամ համարձակութիւնը յանդիմանել ասում էին. «գրօղմ երեսին մաթուշկայ է» (матышка): Բայց Նազարէթ աղայի վաճառատան մաթուշկաները մանաւանդ այնպիսիները որոնք մեծ չափ ունէին, շատ երկար ու երկար կանգնած մնում էին նորա լուսամուտների ապակու յետնն և դրսից հրապուրում էին մտիկ տուող երեխաներին և անցորդներին, երևի, թէ բացի ռուս ծառայողներից ոչ մի ընտանիք էլ պահանջ չէր զգում գնելու: Իսկ վաճառատան միւս հագուագիւտ ապրանքներն երևի գնում էին. գլխաւոր տեղը բռնում էին պատկերազարդ թղթերով պատած շաքարեղէնները «պատկերքով կանփէթ» մեծ ու փոքր դիրքերով զանազան արկղներում լուսամուտի ապակու յետնը շարուած. նոքա իրենց խայտաճամուկ նկարներով ու ոսկէթել տուփերով աւելի էին հրապուրում և պէտք է մատչելի էլ լինէին որովհետև հատով էլ էին վաճառում և երեխաների համար ցանկալի ընծաներ էին նոր տարու օրը: Թղթով կանֆետներից ոչ պակաս գեղեցիկ ու հրապուրիչ էին առանձին տուփերի մէջ ապակու տակ ճաշակով դարսած այն շաքարեղէնները, որոնք մեծ մասով վարդագոյն և սպիտակ էին և զանազան ձևեր ունէին, գլխաւորապէս վարդի ձև և կոչւում էին վարդաշաքար կամ գիւլշաքար: Դոքա հատով չէին ծախում այլ ոչ տփով և համարում էին աւելի ազիզ ընծայ նշանած աղջիկների և նորահարսների համար: Վերջապէս՝ Նազարէթ Կոստանեանցի խանութն յիսնական թուականների Գիւմրուայ հետաքրքիր տեղերից մէկն էր, ուր մտնում էին սպաներ, մաթուշկաներ, աստիճանաւորներ, և գնում էին ամէն delicatessen և galanterie: Նորա երկու որդիք, Զուրապ և Համբարձում, մէկը միւսից երկու տարով մեծ էին, երկուսն էլ բարետես և զուարթ երեխաներ, համեմատաբար լաւ պահուած և կարծէս աւելի առանձնարարած միւս երեխաների շրջանից: Միւս երեխաները. մի թէ կարելի է ճիշտ բնորոշել այ ժամանակուայ միւս երեխաների շրջանը Գիւմրուայ մէջ: *Երևակայեցէք մի խաժամուժ մանր մարդուկների, որոնց մէջ մանուկները*

¹¹ Արովյան փողոց:

¹² Գայի փողոց:

կամ մանկահասակները զոհեր էին իսկ աւելի մեծերը բռնակալներ և կեղեքիչներ (ընդգծումը-Գ.Ա.):¹³ Այս երկրորդ խմբի մէջ, թէև աշակերտ բայց կային խոշոր խոշոր երիտասարդներ, անկիրթ, վայրենի և անբարոյական: Այդպիսիներին այն ժամանակ սալախանայ¹⁴ էին ասում. «սալախանայ տղայք» կային որ արդէն կատարելագործուած էին, այսինքն վարժատունն անցել պրծել էին կամ անընդունակութեան կամ չարութեան կամ հասակի շատ մեծութեան պատճառով տուրսն էին, բայց դեռ ունէին ընկերներ վարժատան մէջ. այս վերջիններս չկատարելագործուած սալախանայէն էին, որոնք դրսի հետ յարաբերութիւնը չէին կարող խզել իսկ ներսը վարժատան մէջ ծածուկ որսում էին իրենց նոր ընկերներ: Ի՞նչ էր նոքա բանն ու գործը. քիչ ուսանել կամ ամենևին չուսանել բայց ջանալ մի կողմից խաբել վարժապետին և ծնողին, միւս կողմից ժամանակ վատակել խաղերի և ծածուկ չարութիւնների համար: Երբ նոքա բռնուում էին, ամենից շատ նոքա էին տուժում. վարժապետը ծեծում էր նոցա խալֆայի ձեռքով, և երբեմն անձամբ և ի՞նչ ծեծ տանջանք ու անտանելի հարուածներ էին քիթ բերան, գլուխ, թիկունք, ոտք ձեռք ամէն ինչ այդ սոսկալի ծեծի տակ էին: Ուսանք ծեծի ազդեցութեան տակ, իհարկէ վախենալով առժամանակ զգուշանում էին, բայց այնպիսիները կային որոնց ծեծը կարծես աւելի խրախուսում էր խիզախելու և օրուայ մէջ մի քանի անգամ էին ճաշակում ձաղկիչի դառնութիւնները: Այդ րօպէներին վարժատունը դառնում էր դահճատուն. մենք փոքր երեխաներս սարսափից լաց ու գառնագոչում էինք բարձրացնում, և մեր արտասուքներն էին որ վարժապետին ստիպում էին երբեմն մեզ աւելի վաղ տուն արձակել: Ծեծուող տղան անզեղջ կերպով երբեմն աղաղակում ու հայիտում էր վարժապետին և արտասանում փողոցային խօսքեր, որոնք աւելի գրգռում էին վարժապետին և խստացում հարուածները. երբեմն վերջիններիս ծանրութեան տակ տղան աղաչանք պաղատանք խոստումներ մեղաներ փախչելու փորձեր խալֆային քացով կամ բռունցքով զարնելու ձևեր էր անում և այլն: *Ինչնիցէ, այդ դժոխք էր որ դարձնում էր այդպիսի տղային մի դժոխային ոգի կատաղած անբարոյականացած և միանգամայն անզգամ մարդ:* Ազատուելով հարուածների ճանկից նա պետք էր համարում ինքն իրեն համար մի զոհ որոնել և այդ զոհն աւելի թոյլ ընկերներն էին. նա ընկնում էր նոցա յետևից, ահաբեկում պաշարում և ստիպում էր յաճախ անտանելի ստորութեան էթէ ոչ նա նորան ծեծում ջարդում էր աւելի շատ քան ինչոր վարժապետն էր ծեծել իրեն: Այս հանգամանքն այնքան պարզ էր, որ ծնողներն և վարժապետն ստիպուած էին այդպիսի թոյլ և փոքր երեխաներին անջատել և առանձին հսկողութեան տակ դնել: Ով որ տանը ծառայ ունէր այն ժամանակուայ Գիւմրիում այդ բանն էլ շատ հազուադիւս էր ծառան գալիս էր փոքրիկի յետևից և տանում էր տուն, կամ տանից վարժատուն բերում էին նորան մեծերը: Ով որ տանն ծառայ չուներ կամ մեծերն հոգ չէին տանում, վայ այն երեխային. նա ստիպուած էր դիմել մի ուրիշի հովանաւորութեանը որն այնքան վտանգաւոր չէր երևում, երբեմն վարժապետը փոքրերին յանձնում էր խալֆաներից մէկին, որ նոքա նոցա խումբ խումբ առաջնորդէն և անցնեն վտանգաւոր տեղերից. իսկ այդ վտանգաւոր տեղերը ով կարող էր իմանալ. այն ժամանակուայ Գիւմրիին իւր ցածիկ հողակտուր տներով և դատարկ գրե-

¹³ Այսուհետ ընդծումները մեր են (-Գ.Ա.):

¹⁴ Դատարկաշրջիկ, փողոցային սրիկա, անկարգ վարքի տեր:

թե ամայի փողոցներով մի այնպիսի բան էր, որ մարդ մենակ անցնել միշտ վախենում էր. մեկ էլ տեսար մի հեռուոր կտուրից չար տղայի մեկը իւր բաւականութեան համար տարորինակ փորձեր էր անում. մանր քարեր հաւաքած կտուրի բարձրութիւնից նա այս ու այն անցորդին նշան էր բռնում և ահա քարը հասաւ մեկի ճակատին, միւսի աչքի երրորդի գլխին դօշին, մէջքին, և այլն և շատ հազիւ ընկաւ գետին առանց նպատակին հասնելու: Մեղք չէ համարում երբ այդ նշանը բռնում էին ծանօթ չար տղային, որպէսզի նորան հրապուրեն ճանապարհը փոխել և վազել կտուր վրէժ առնելու կամ ոյժերը փոխադարձաբար չափելու: Եւ այդ լինում էր շատ յաճախ: Մէկ էլ տեսար մի ակնթարթում կարծես կախարդական գաւազանով թաղի երեխաները մտեցան մի տեղ և սկսուցաւ ընդհանուր մրցութիւն: Բանն հասնում էր մեծերի միջամտութեանը, մինչև որ գալիս ամենքն իւր երեխան գտնում էր, ականջից բռնած ապտակներ ու քացիներ տալով տանում էր նորան տուն: Երեխաների կեանքը վարժատնից դուրս նոցա իսկական կեանքն էր, որը տնում էր երկու ժամ: Իբրև թէ արձակուում էին 12 ժամին այն նպատակով, որ գնան ցորեկհացի՝ ճաշի և ապա ժամը 2ին վերադառնան վարժատուն: Ի՞նչ ցորեկհաց, ի՞նչ տուն. վանդակից դուրս պրծած թռչունի նման մեծ ու պատիկ հէնց որ փոքր ինչ հեռանում էին վարժատնից, ամենքն մի կողմնակի ճանապարհ էին ընտրում տանից հեռանալու և դիտող աչքից ծածկուելու, որպէսզի մի որևէ կտուր բարձրանան խումբ խումբ և այնտեղ ճան խաղան՝ վեգ.¹⁵ այդ էր այն ժամանակուայ քիչ թէ շատ պարկեշտ երեխաների սպորտը: Բայց յաճախ ճանը փոխուում էր ուրիշ խմբական խաղերի որոնց ղեկավարը մեծ տղայք էին: Բազմատեսակ էին այդ խաղերը աչքախփուկ, պահմտնոց կամ պախմտնոց, գերի գերի, աթոտուրմայ, ըմբշամարտ (գիւլաշ), հիւսէին դուպպասի և այլն: Այս խմբական խաղերն յաճախ վերջանում էին կռուով, որի ֆինալն էր մուշտակոյիւր, մի թաղի տղայոց մինչև միւս թաղն էին հալածում և յաղթանակում: Այս վերջին սպորտին նուիրում էին երեկոյեան ժամից յետոյ, երբ համարեա բոլոր վարժապետների տղէք գալիս էին եկեղեցու (Ս. Աստուածածին) պատերի տակ ճան խաղալու և այնտեղից տուն ցրուելու ժամանակ տեղի էր ունենում իրար դնքսելու և մուշտով իրար հալածելու վայրենի բաւականութիւնը: Շատ երեխաներ տուն էին հասնում կամ քիթուբերան արնոտած կամ երեսը ճանկոտած մեծ մասով շորերը փոշոտած և ցեխոտած և վրէն գլուխը պատռոտած փոխանակ իրիկնահացի այդպիսի երեխաները տան մէջ վայելում էին հոր կամ մօր ծեծ ու դմփոցը, որի ճնշման տակ սոված քուն էին մտնում առանց շորերն հանելու, որովհետև առանց այն էլ խիստ յոգնած էին լինում: Շատ ուշ, երբ ծնողք քնելու էին գնում, իրենց երեխային չկարողանալով խոր քնից զարթեցնել, մի կերպ հալաւն հանում և տեղն էին դնում: *Թէ կուզէք այն ժամանակուայ Գիւմրին իւր մատաղ սերունդին անգիտակցաբար ուժասպառ էր անում վարժատան և ընտանիքի մէջ, առանց տալու նոցա որևէ լաւ բան:* Միակ բանը՝ որ երեխաներն ունէին այդ ծածուկ կամ յայտնի վաստկած խաղի ժամերի ազատութիւնն էր, երբ նոքա իրենց մանկական եռանդի լիութեամբ վայելում էին հաճելի կեանք: *Միւս բոլոր ժամերն էին ստրկութեան կեղծիք կրաւորական հանգիստ, և յաճախ անմեղ տեղը կրած տանջանքներ:* Բարեբաղդաբար ես մեծանում էի տարբեր պայմանների մէջ. տանը միակ մանչ տղան էի

¹⁵ Կճղակաբաշխ կենդանիների ծնկան հողի ոսկորը, որով երեխաները խաղում են կոռ, կոճի, ճան:

անմիջական հարևանները չունեին արու գաւակ ինձ ընկեր մօտիկ ազգականների մէջ կային այդպիսիները, բայց նոցա միշտ չէի տեսնում գլխաւոր բանն այն է, որ ես փոքրիկս ունէի ինձ մշտական և գրեթէ անբաժան ընկեր այդ իմ տէրտէր պապս էր. նա ինքն ինձ տանում էր վարժատուն, ինքն էլ գալիս էր տուն բերելու. եթէ ինքը չէր կարող, իւր անբաժան հաւատարիմ ժամկոչ¹⁶ Շահպազը (որին Շահպազ ամի էինք ասում) կատարում էր նոյն պարտականութիւններն ինձ թիկնապահ լինելու: Ինձ փայփայում էին ամէնքը. վարժատուն գնալիս և գալիս եթէ հետո Շահպազն էր ճանապարհին երեք չորս տեղ կայարաններ ունէի կամ ես էի մտնում կամ ինձ կանչում էին հետո մի բան խօսելու կամ ինձ հետ հանաքներ անելու. այդ պատահում էր վարժատնից վերադառնալիս: Առաջին կայարանս էր մամոնցս տանը. սա մօրս հէրանց տունն էր. ճանապարհից փոքր ինչ շեղուում էի մտնում էի կամ մի բան ասելու կամ անպէս տեսնելու մէկն ու մէկին. յաճախ իմ այդպիսի այցելութիւնս վերջանում էր նորանով, որ Շահպազին ուղարկում էին մենակ և ինձ պահում էին, ասելով թէ մենք կըբերենք: Երկրորդ կայարանս էր Գալօ ամու խանութը. սա պապիս եղբայրն էր. անուշ լիզու և գուարճալի մի ծերունի, որի խանութի դռնովն էի միշտ անցնում. հէնց որ ինձ նկատում էր, նա ինքը միականի էր «գա՛նս, ձայնում էր, արի՛ նես, բան պիտիբ ըսիմ». ես հնազանդում էի որովհետև գիտէի որ մի անուշ բան էլ կըստանամ, բայց գլխաւորն է՝ Գալօ ամին և Շահպազ ամին երկուսն էլ գուարճախօս մի ծիծաղելի, բան կասէն իրարու: Մտնում մտնում էի, ձեռքը պագում էի, եթէ խանութում ուրիշ մարդիկ կային, պատուիրում էր, որ նոցա ձեռն էլ պագիմ և ինձ տալիս էր մի երկու հատ շաքարլամայ շաքարեղէն է (ինքը վաճառում էր սուրճ, շաքար, շաքարլամայ և այլն) և արձակում: Մի անգամ Շահպազն ասում է. «Օրինա՛ճ, ամէն օր թոռիդ պատիւ կենես օրմ էլ ինձի էրա՛, ի՞նչ կէղնի: Ա՛յ, օդն՛ւլ,¹⁷ ասաց Գալօ ամին՝ իշտէ՛ քեզի վինձ պատիւ է, օր թոռիս հետ տեղ կերթաս»: «Հա՛ դուրբան էղնիմ էսպէս մանչուն, յամէն հեղի ինչոր կուտաս, ընձէլ մաս կը հանէ», ասաց Շահպազն և դուրս եկանք: Բայց նա ուղիղ չասաց. ես ինչոր ստանում էի տանում տալիս էի տէրտէր պապիս, որն և ինքն էր կարգադրում ամէն բան: *Երրորդ կայարանս Գաբօ ամու խանութը. սա հօրս մոտիկ ընկերներից էր, ասում էին աստար Գաբօ. ինքը միականի էր, բայց շատ գուրաճախօս և ուրախ մարդ. նրա խանութն էլ «կուպէցի» խանութ էր, բայց Նազարէթ աղի խանութի պէս ճոխ չէր. Գալօ ամու խանութից հեռու չէր, միայն շատ ընդարձակ էր և ամէն մի այն ժամանակուայ պատուաւոր նորահաս երիտասարդի համար մի ժողովարան էր. այդտեղ գալիս էին որոշ ժամերին հօրս մի քանի մտերիմ ընկերներն և բարեկամներն. երբեմն հայրս էլ, երբ դէռ աշխարհական էր և քաղաքական ծառայութեան մէջ, այդտեղ էր գտնուում: Հէնց որ մեզ դէմից նկատում էին, կամ Գաբօ ամին, կա՛մ ուրիշ մէկ բարեկամ ձայն էին տալիս «Կարօնի՛, Կարօնի՛». ես իսկոյն վագում էի և շատ ուրախ էի լինում որ ինձ այնտեղ կանչում էին: Սկսում էին հետո հանաքներ անել. մի անգամ Գաբօ ամին ասում է. «հա՛, ուստատան դաչա՛ն, էլի փախիրիս» (ուստատան դաչան ասում էին վարժատնից փախչողներին, նշանակում է՝ վար-*

¹⁶ Եկեղեցու սպասավոր, որի գլխավոր պարտականութիւնն է եկեղեցու զանգերը հնչեցնել ըստ պետքի և պատշաճի:

¹⁷ Օջմ (թուրք.)-որդի: Գործածվում է որպէս փաղաքշական բառ՝ բալա, բալիկ:

պետի մօտից փախչող): Շահպագն իմ տեղս պատասխանում էր, և ես կարմրում էի, որովհետև նա ասում էր, թե տղեն Ասծու գառն է, ի՞նչ փախնիլ, ինչ բան: Յընտա, Աստու գառն է կըսիս, յենօրն ընձի էնպէս կզմթից ու փախաւ, ասում է Գաբօ ամին: Տէ՛, տէ՛ ձենդ կտրէ՛ Գաբօ՛, մէջ մտաւ Յարութին աղէն, որ մի կողմ նստած էր էս աղա մանչու վրայ հէջ չիս կրնար խօսել: Մեղա՛յ Աստու, աղբէ՛ր, ես էլ գիտեմ օր էտպէս է ասաց Գաբօն և ինձ տուեց մի հատ փէնիրլի կլոր մէջը ծակ շաքար, որը գիտէին որ ես շատ եմ սիրում: Ամաչում էի չէի ուզում վերցնել, Յարութին աղէն ասաց «առ, առ»: Ես նորան շատ հաւանում, հաւատում և հնազանդում էի. առայ շաքարն և ուզում էի դնել չանթիս մէջ, մէկ էլ տեսնեմ ներս եկաւ Յակոբ աղբէրը, որ նոյն խմբից էր, որ սորա հետ էին ֆերշիլ Գիրգորը և հայրս. նոքա դեռ դռան մէջ էին, Յակոբը վրայ պրծաւ, փարեցաւ փայփայեց ինձ և ձեռքիս շաքարը որ տեսաւ, ասում է, «էդ ի՞նչ է, տուր ես ճնճողուկ շինեմ» Ես չհասկացայ և ուրախ էի, որ շաքարէ ճնճողուկ կունենամ, ուզում էի տալ. Շահպագ ամին ասում է «չտա՛ս կուտե՛» Ես չհաւատացի, միամիտ տուի Յակոբին. միւսներն էլ հետաքրքիր նայում էին, երևի, գիտէին ինչ պիտի լինի, բայց ուզում էին տեսնել թէ ես ինչ կանեմ: Յակոբ աղբէրը շաքարն առաւ ձեռքիցս, աջ դառուց, ձախ դառուց, վեր նայեց, վար նայեց, «ջանը՛մ, ասաց, էսիկ շատ պզտիկ է վա՛յ թէ ճնճողուկ չէղնի»: Ես ուզեցի իր ձեռքից քաշել և գնալ, նա ասում է. «չէ կէղնի, կեցիր, ահան տես» ասաց ու շաքարը բերանը քշեց: Ես հասկացայ, որ խաբուել եմ, ուզում էի լալ, հայրս գլուխս շփեց, Յարութին աղէն ասաց ամօթ քեզ Յակոբ, իսկ Գաբօն տուեց ինձ մէկի տեղն երկու փէնիրլի, և ինձ ուրախ ուրախ ճանապարհ դրին: Եկանք տուն, տերտեր պապիս պատմեցի ամէն բան. նա բարկացաւ, թքեց մրեց Շահպագ ամուն, չհասկացայ ի՞նչու համար. յետոյ ինձ ասաց շաքարի մէկը Սալվինագին, մէկը քեզ տարէք, ուրիշներին էլ փայ էրէք: Սալվինագն իմ հորաքոյրս էր, բայց ինձանից 2 տարի մեծ լինելով իմ ամենալաւ խաղընկերս էր. նա իւր փէնրջին պահեց իսկ իմս կտրտեցինք և տան մէջ ամէնքին էլ բաժին հանեցինք: Պատահում էր, և աւելի յաճախ, որ ես ոչ մի կայարանում էլ չէի մնում, ուղղակի գալիս էի տուն երբեմն կանգ առնելով «կուպեցի թուքանի» լուսամուտների առաջ. մի անգամ Շահպագ ամին ասում է «Կարօնի՛ ջան իտա մաթուշքայ ընչին կաշես, մէկ իսա առջին աշէ գիտիս թէ էշշաքճի տիրացուին չպլոցուցեր սնկիր ին իդտեղ. քէլէ՛, քէլէ՛ հիմի տերտերը մեզի կաշէ, պիտի էրթամ դահվայ բերիմ». Նա բնաւ չէր սիրում նայել մաթուշքաց վրայ և չէր ուզում, որ ես էլ նայեմ, եկանք, տերտեր պապս շատ բարկացած էր Շահպագի վերայ, չիմացայ թէ ինչու: Երևի Շահպագը մի մեղք ուներ, եկանք թէ չէ, հետհետին յետ դառաւ: Բանից երևցաւ, որ այդ օրը տերտեր պապն առանց սուրճի էր մնացել առաւօտունանից, որովհետև Շահպագը մոռացած է եղել ժամանակին գնալ և բերել: Այդ օրն էս տերտեր պապիս պատմեցի թէ վարժատան մէջ ըսին ովոր քսուի Զուրաբին ու Համբարձումին, փալախայ կուտէ: Նա շատ բարկացաւ, հա՛յ անիրաններ ասաց ես էլ քեզի չեմ թողնիր էրթաս, կեցիր քովս, ես քեզի ուրիշ տեղ պիտի տամ: Բանն որ վինձ սաղմոսը պրծիր իս: Ես շատ ուրախացայ, գնացի Սալվինագին պատմեցի, նա էլ ուրախ եղաւ, որ պիտի տանը մնամ, ու միասին պիտի խաղանք: Անցաւ մի քանի շաբաթ, տերտեր պապս իմ ձեռքիցս բռնած ինձ հետը տանում էր եկեղեցի ս. եօթըվերքի խորանը, ուր նորա կողքին կանգնում էի. եթէ ժամն երկարում էր, կանչում էր ժամկոչին և պատուիրում էր, որ ինձ

տուն տանի: Մի օր ժամ գնալիս իմ թնիս տակը դրեց մի փոքր հասալիկ գիրք, ասաց թե իսիկ կտակարան է, տարանք խորանն, և տերտեր պապս կտակարանը դրեց ս. Պատկերի առաջ: Երկոր անցաւ, հէնց եկեղեցուց կտակարանը չանթիս մէջ դրեց և ինձ տարաւ հոգևոր դպրոց կարդալու: *Տիրացու Մարտիրոսի վարժատնից պրծայ. կարծում էի թէ դժոխքից պրծայ. բայց մանկական առաջին խիստ տպաւորութիւններ խտացած գոյներով պիտի մնացել է յիշողութեանս մէջ:* Այն ժամանակ ես ութն (1857թ. - Գ.Ա.) տարեկան երեխայ էի, թոյլ վախկոտ և չափազանց ամաչկոտ, միննոյն ժամանակ ամէն ինչ սրտիս մոտ էի առնում. ինձ ծանր էին երևում դէպքերն: Երբ հոգևոր դպրոց մտայ աւելի լաւ բանի հանդիպեցայ. ինքս քիչ քիչ սկսում էի ըմբռնել յարաբերութիւններն և հասկանալ որ պէտք է ես ինքս էլ մասն ունենամ այն աշխատուժի մէջ, որը գործ էր դրում իմ դաստիարակութեան վերայ. այլևս ուշադրութիւն չէի դարձնում ուրիշ տղաների վերայ և հեռու քաշուած շատ կարդում ու գրում էի. իմ այդ առաջին ինքնորոյնութեանս քայլերն 8 - 9 տարեկան հասակիցս քաջալերութիւն էր գտնում տերտեր պապիս կողմից: Ես արդէն կտակարանը պրծել էի, նարեկ էի կարդում, որ նա ինձ իւր մոտ նստեցնում էր և առաջս դնում էր մեծ գրքեր, որոնք ես բարձր ձայնով կարդում էի նորա և ծերունի տեր Սահակի ունկնդրութեան համար»:

ИСТОРИЯ ШКОЛ АЛЕКСАНДРОПОЛЯ В ВОСПОМИНАНИЯХ УЧЕНИКОВ

Айвазян Г. С.

Ключевые слова: *дьячок, псалтырь, наказание, Гюмри, избивание, церковь Сурб Аствацацин (церковь Святой Богородицы), лавка, Завет.*

В данной работе представлены мемуары видного филолога и опытного педагога-организатора Карапета Костанянца «Гюмри моего детства». Архивный материал даёт четкое и ясное представление об установленном порядке обучения в частных школах Александрополя. Автор перед читателями художественными выдумками открывает всю глубину отношений, царствующих в таких образовательных заведениях.

THE HISTORY OF ALEXANDRAPOL SCHOOLS IN THE MEMOIRS OF STUDENTS

Ayvazyan G. S.

Key words: *sexton, Psalter, punishment, Gyumri, beating, Surb Astvatsatsin Church, shop, Covenant.*

The paper presents the manuscript of the memoirs of the prominent philologist and experienced teacher-organizer Karapet Kostanyants' "Gyumri of My Childhood". Archival material gives a clear and precise idea of the established order of education in private schools in Alexandrapol. The author reveals the full depth of relations reigning in such educational institutions with artistic inventions.

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. **Աղանյան Գ.-2020**, Կարապետ Կոստանյանի անտիպ հուշերը որպես Ալեքսանդրապոլի քաղաքային համայնքի ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուր // «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում». «Հայ ժողովրդական մշակույթ» 19-րդ գիտաժողով, Երևան, օգոստոսի 20-22: Գիտաժողովի ծրագիր և ամփոփագրեր:
2. **Այվազյան Գ.-2020**, Ալեքսանդրապոլի դպրոցների պատմությունից // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, հ. 2(23):
3. **Բեհբուդյանց Ս. -1960**, Կարապետ Կոստանյանց (Մահվան 40-ամյակի առթիվ) // «Էջմիածին», Երևան, հատոր ԺԷ, համար Դ:
4. **ԳԱԹ**. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Կ.Կոստանյանի ֆոնդ, վավերագիր 5:
5. **Չաղոյան Է. -2014**, Հուշագրության ժանրի գեղարվեստական հայեցակերպը ժամանակի կարգի քննության լույսի ներքո // «Կանթեդ». Գիտական հոդվածներ, Երևան, № 2-3:
6. **Հարոյան Մ.-2007**, Ալեքսանդրապոլի երաժշտական ավանդույթները Կ.Կոստանյանի «Ինչ երգեր էինք լսում մեր մանկության օրերում» հուշագրությունում // ԾՊՄԺ հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի: .
7. **Սուլթան-Շահ Ա.-1895**, Հայ ազգի լուսաւորիչքը // «Հիւսիսափայլ», Մոսկվա, ամսատետրակ 10:

Ընդունվել է՝ 12. 03. 2022
Գրախոսվել է՝ 04. 04. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
գիտաշխատող, էլ. հասցե՝ AyG.84@mail.ru

ՀՏԴ՝ 93,94

DOI: 10.52971/18294316-2022.25.1-74

ՂՐՎԱԳՆԵՐ ԱՆՂՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմեն Հայրապետյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Բանալի բառեր՝ *Անդրկովկաս, Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուլֆա, գնացք, Հայկական երկաթուղիներ, հաղորդակցություն, շինարարություն, երկաթուղային կայարան:*

XIX դ. 60-ական թվականներից ձեռնամուխ լինելով Անդրկովկասում երկաթուղային ճանապարհների կառուցմանը՝ ռուսական իշխանությունները հետապնդում էին մեկ գերնպատակ՝ ամրապնդել սեփական ներկայությունը տարածաշրջանում: Սակայն, կապի և հաղորդակցության նոր միջոցը երկրամասի համար ունեցավ նաև տնտեսական անգնահատելի նշանակություն: Միացնելով Սև և Կասպից ծովերը՝ երկաթուղին տարածաշրջանը մոտեցրեց կենտրոնական Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի շուկաներին, տեղական արտադրողին հնարավորություն տվեց մաս կազմելու միջազգային առևտրին:

Նպատակ ունենալով առաջիկայում առանձին քննության առարկա դարձել Հայկական երկաթուղիների շինարարության պատմությունը, այս հոդվածի շրջանակներում գիտական գրականության, արխիվային վավերագրերի և պարբերական մամուլի հաղորդումների համադրմամբ համառոտ ներկայացրել ենք «Անդրկովկասյան երկաթուղիներ» նախագծի պատմությունը, լուսաբանել շինարարության ընթացքն ու արդյունքները:

Նախաբան: Ռուսական կապիտալի կողմից Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի տնտեսական յուրացումը սկսվեց նրա քաղաքական նվաճումից անմիջապես հետո: Այսօր, այդ գործընթացը դժվար է պատկերացնել առանց բարեկարգ ճանապարհների գոյության: Սակայն, մինչև XIX դ. կեսերը իշխանություններն Անդր-

կովկասում ճանապարհներ կառուցում էին առաջնորդվելով գերազանցապես ռազմավարական դրդապատճառներով (դա երևում է այդ ճանապարհներին տրված անուններից՝ ռազմական-վրացական, ռազմական-օսական և այլն)¹: Անդրկովկասը կայսրության ամենահարավային երկրամասն էր, և թուրքերի հետ պատերազմի մշտական սպառնալիքը ստիպում էր մեծ քանակությամբ զորք կուտակել այստեղ: Մինչդեռ բարեկարգ ճանապարհների բացակայության պայմաններում հաղորդակցությունն իրականացվում էր հիմնականում Դարիալի կիրճով ու Կովկասյան Մեծ լեռնաշղթայի լեռնանցքով անցնող խճուղով, ինչը խոչընդոտում էր զորքերի տեղաշարժը և դանդաղեցնում բանակի մատակարարումը: Թե հաղորդակցության ոլորտում ինչքան էր Ռուսաստանը հետմնացել քաղաքակիրթ աշխարհից, երևաց 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմի տարիներին. վատ ճանապարհներն ու երկաթուղու բացակայությունը նրա պարտության հարցում էական դերակատարում ունեցան: Պատերազմից հետո երկրամասում երկաթուղու կառուցման անհրաժեշտությունը ռազմավարական կարևորություն ստացավ, և իշխանությունները արագացված տեմպերով ձեռնամուխ եղան դրա իրագործմանը:

XIX դ. վերջին քառորդից Անդրկովկասում ճանապարհների կառուցման գործում առաջին պլան մղվեցին արդեն տնտեսական նկատառումները: 1872 թ. կայսերը հղված իր զեկույցում Կովկասի փոխարքան այդ մասին գրել է. «Նախկինում ճանապարհների կառուցումը ենթարկվում էր ռազմական կարիքներին և ծառայում որպես տարածաշրջանում մեր գերիշխանությունն ամրապնդելու արդյունավետ միջոց: Այժմ, սակայն, ճանապարհները կապի օգտակար միջոց են հիմնականում առևտրի և արդյունաբերության համար»²:

Երկաթուղային ցանցի կառուցումը ահռելի ազդեցություն ունեցավ երկրամասի տնտեսության վրա: Երկաթուղին մի կողմից խթանեց ռուսական կապիտալի ներթափանցմանն այստեղ, իսկ մյուս կողմից՝ լայն հեռանկարներ բացեց տեղական արտադրանքի վաճառահանման համար: Այն նպաստեց երկրամասի առանձին շրջանների միջև տնտեսական կապերի ամրապնդմանն ու տարածաշրջանը կապեց մետրոպոլիսյի հետ:

Անդրկովկասյան երկաթուղու շինարարության ընթացքը

Անդրկովկասյան երկաթուղու առաջին նախագիծը ի հայտ եկավ 1857 թ., երբ հաղորդակցության ճանապարհների ինժեներ շտաբս կապիտան Ստատկովսկին Կովկասյան զորքերի գլխավոր շտաբի պետ Դ. Ա. Միլյուտինին ներկայացրած իր զեկուցագրում առաջարկեց երկաթուղային կապով միացնել Բաքու և Թիֆլիս քաղաքները³: Մինչ իշխանությունները կպատասխանեին այս առաջարկին, երևան եկան ևս երկու նախագծեր. ինժեներներ Զգուրսկին և Չերևինը առաջ քաշեցին Փոթի-Թիֆլիս⁴, իսկ Կոկորևը և Բելին՝ Փոթի-Բաքու երկաթուղիների կառուցման հարցը⁵:

¹ ՎԿՊԱ, ֆոնդ 12, ցուցակ 6, գործ 1292, թ. 27-28:

² «Отчет -1873, сс.175-176; Сборник документов -2014. сс. 78-86.

³ Аргутинский-Долгоруков А. -1896. сс. 4-5.

⁴ ՀԱԱ, ֆոնդ 113, ցուցակ 2, գործ 95, թ. 24:

⁵ Սահրադյան Հ. -1962, էջ 7:

Անդրկովկասյան երկաթուղու շինարարության նախագիծը հաստատվեց 1861թ.: 1864 թ. սկսվեցին շինարարական աշխատանքները, իսկ ութ տարի անց՝ 1872 թ. հոկտեմբերի 10-ին, առաջին գնացքը Փոթի կայարանից ժամանեց Թիֆլիս՝ անցնելով 290 վերստ (308 կմ) ճանապարհ⁶: 1883 թ. մայիսի 5-ին ավարտվեց նաև Թիֆլիս-Բաքու երկաթուղու շինարարությունը (515 վերստ կամ 546 կմ): Հաջորդ տարիներին կառուցվեցին նույն այդ մայրուղուց սկսվող և դեպի երկրամասի ծայրագավառները ձգվող ճյուղերը՝ Թիֆլիս-Թելավ, Խաշուրի-Բորժոմի, Բաքու-Սուրախանի-Մարունչի և այլն:

Հաջորդ քայլը պիտի լիներ դեպի Իրան երկաթուղու կառուցումը: Պարսկահովկասյան սահմանին երկաթգիծ կառուցելու հարցը ռուսական կառավարող շրջանակների քննարկման առարկա էր դարձել դեռևս XIX դ. 70-ական թվականների սկզբներին: Ըստ Արտաքին գործերի նախարար իշխան Գորչակովի՝ այն նպաստելու էր Իրանի հետ առևտրային հարաբերությունների զարգացմանը և ի հակակշիռ Անգլիայի՝ ուժեղացնելու էր ռուսական ազդեցությունն այդ երկրում: Նախատեսվում էր Վլադիկավկազից Կովկասյան գլխավոր լեռնաշղթայով ճանապարհ կառուցել դեպի Թիֆլիս, ապա Ջուլֆա և Թավրիզ: Սակայն, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը ստիպեց ժամանակավորապես հետաձգել շինարարությունը: Պատերազմը նաև բացահայտեց ռուսական երկաթուղիների անմխիթար վիճակը: Պատերազմից հետո Նախարարների կոմիտեն ստիպված էր խոստովանելու, որ ռուսական երկաթուղիները բացարձակապես անպատրաստ էին քաղաքական բարդ իրադրության պայմաններում հոգալու պետության կարիքները: «Անդրկովկասյան երկաթուղու ցածր թողունակությունը, զրկված է Կոմիտեի եզրակացության մեջ, -1876-1878 թթ. ձախողման վտանգի տակ դրեց գործերի մոբիլիզացման գործընթացը»⁷: Հայրենական երկաթուղիների գրեթե լիակատար անպատրաստությունը բարդ և պատասխանատու առաջադրանքի կատարմանը ստիպեց իշխանություններին կասկածի տակ դնել երկաթուղու կառավարման գործող կարգի նպատակահարմարությունը:

Բանն այն է, որ XIX դ. 80-ական թվականների սկզբներին երկաթուղու կառավարումը գտնվում էր մասնավոր ընկերությունների ձեռքում: Պետական գանձարանի անմիջական ենթակայության տակ Անդրկովկասում կար ընդամենը 57 վերստ (60կմ) երկաթուղային ճանապարհ: Մասնավոր երկաթուղային ընկերությունների անարդյունավետ գործունեությունը, նրանց ֆինանսական խնդիրներն ու գանձարանին ունեցած հսկայական պարտքերն իշխանություններին ստիպեցին բարեփոխումներ կատարել երկաթուղիների կառավարման ոլորտում: Առաջ եկավ մասնավոր երկաթուղային ընկերությունները լուծարելու և ճանապարհների կառավարման միասնական պետական համակարգ ստեղծելու անհրաժեշտություն, և որոշումն իրեն երկար սպասել չտվեց: 1889 թ. ապրիլին Անդրկովկասյան երկաթուղին անցավ պետական կառավարմանը:

⁶ «Վաճառական» -1866, N 3, էջ 11:

⁷ **Погребинский А. -1954.** с. 166.

Ռուս-թուրքական պատերազմից հետո ռազմական նախարար Պ.Ս. Վաննովսկին Ալեքսանդր III կայսեր ուշարությունը կրկին հրավիրեց Անդրկովկասը երկաթուղային ճանապարհներով Իրանի հետ կապելու անհրաժեշտության վրա⁸:

Սկսվեց ռազմա-ստրատեգիական տեսանկյունից Անդրկովկասյան երկաթուղու ամենակարևոր հատվածի՝ Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուլֆա գծի՝ կամ այսպես կոչված Հայկական երկաթուղիների շինարարությունը: Երկաթուղային նոր ուղիներ կառուցելու մասին որոշումը կայացվեց Ռազմական նախարարի նախագահությամբ 1894 թ. մարտի 11-ին կայացած հատուկ ժողովում: Որոշվեց Թիֆլիսից Կարս և Երևան երկաթուղային հաղորդակցությունն ապահովելու համար 1894 թ. ընթացքում ավարտին հասցնել նախագծային աշխատանքները և 1895 թ. սկսել շինարարությունը⁹: Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղու համար հաստատվեց Բորչալուի վրայով, Դեբեդ ու Փամբակ գետերի հովտով դեպի Ալեքսանդրապոլ, ապա Կարս ուղղությունը¹⁰: Միաժամանակ որոշվեց այդ գծի կառուցումից անմիջապես հետո սկսել Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուլֆա երկաթուղու շինարարությունը:

Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ շինարարական աշխատանքները սկսվեցին 1895 թ.¹¹: Չորս տարի անց՝ 1899 թ. նոյեմբերի 30-ի գիշերը ժամը 24.00-ին, երկաթուղին փոխանցվեց Անդրկովկասյան երկաթուղու վարչության կառավարմանը, իսկ դեկտեմբերի 1-ից սկսեց կանոնավոր գործել¹²: Առաջին գնացքն Ալեքսանդրապոլ կայարան ժամանեց 1899 թ. փետրվարի 7-ի առավոտյան ժամը 12-ին (հուլիսի 21-ի առավոտյան ժամը 11-ին առաջին գնացքը ժամանեց Կարս)¹³: Այդ կապակցությամբ «Մշակ» պարբերականն իր 1899 թ. փետրվարի 9-ի համարում գրել է. «Այսօր վերջապես, երկաթուղու վագոնները կանգնեցին Ալեքսանդրոպոլի կայարանում: Մեր վաղուց ցնօրք համարված ցանկությունը այսօր իրականացավ. Ալեքսանդրոպոլը երկաթուղու գծով կապվեց Թիֆլիսի և Ռուսաստանի հետ, պատրաստվելով ընդունել անհամար փոփոխություններ իր ներքին հասարակական կեանքի մեջ: Մեզ շրջապատող երկրների վրա այդ դեպքը անշուշտ իր խոր և անջնջելի հետքերն է թողնելու, բայց տայ Աստուած, որ այս անմտաց օրն ընդ միշտ բերկրությամբ յիշատակվեր Կովկասի պատմութեան մեջ և մի դարագլուխ համարվեր մեր ներքին կեանքի բարեփոխությունների, կրթական գործի առաջադիմութեան և բարգաւաճման ու հասարակական բարենպաստակ գործունեությունների համար»¹⁴: Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղու կառուցմամբ հացառատ Շիրակն ու Կարսի շրջանը կապվեցին Թիֆլիսի հետ:

⁸ Погребинский А. -1954. с. 171:

⁹ Mirzoyan S., Badem C. -2013. s. 21.

¹⁰ "Кавказ" -1895, N 198, с. 2.

¹¹ Հ.Սահրադյանը Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղու շինարարության սկիզբը համարում է 1896թ. մայիսի 22-ը, սակայն մեզ չհաջողվեց այդ փաստն ապացուցող որևէ փաստաթուղթ հայտնաբերել (Մանրամասն տե՛ս **Սահրադյան Հ. -1962**, էջ 12):

¹² Памятная книжка -1902, с. 45.

¹³ Обзор Каресской области -1900, с. 36.

¹⁴ «Մշակ» -1899, N 24, էջ 2:

1894 թ. ավարտվեցին նաև Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուլֆա երկաթուղու հետազոտական աշխատանքները: Ինժեներներ Թագիրբուրակյան, Տեր-Միքայելյանի, Գրիգոր և Լևոն Շահբուդաղյան եղբայրների համատեղ մշակած նախագիծը 1898 թ. ներկայացվեց հաստատման¹⁵: Կառուցվելիք երկթգիծն Ալեքսանդրապոլից Սարդարապատի և Ուլուխանլուի (Մասիս) վրայով ուղիղ անցնելու էր ռուս-պարսկական սահմանագլխին գտնվող Ջուլֆա՝ շրջանցելով Երևանը, որ Ուլուխանլուից հեռու էր 13 վերստ (մոտ 12 կմ)¹⁶: Սա մեծ հարված էր նահանգային կենտրոնի համար, և քաղաքային իշխանություններն այդ մտքի հետ չհաշտվեցին: 1898 թ. հունիսի վերջին կայացած Երևանի քաղաքային Դումայի արտահերթ նիստում որոշվեց քաղաքային վարչության միջոցով հարց բարձրացնել Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին Երևանով անցկացնելու մասին: Այդ նպատակով նույնիսկ 6 հոգանոց հանձնաժողով կազմվեց: Սակայն, քաղաքային դումայի պահանջն անտեսվեց: Փակուղում մնացած Երևանը հիմնական գծին միանալու էր միայն առանձին գծով¹⁷:

Երկաթգծի շինարարությունը սկսվեց 1899 թ.: Ճանապարհի առաջին 6 վերստն անցնում էր Ալեքսանդրապոլ-Կարս գծին զուգահեռ, ապա թեքվում դեպի հարավ-արևելք և շարունակվում մինչև Ուլուխանլու¹⁸: Շինարարական աշխատանքներն ընթացան արագացված տեմպերով: Երկաթուղու կառուցման վարչության տվյալներով արդեն 1901 թ. հունվարի 1-ի դրությամբ ավարտին հասցվեց հիմնական գծի և կայարանային գծերի հողային աշխատանքների 60 %-ը, Ալեքսանդրապոլից սկսած տեղադրվեցին 35 վերստ (37կմ) ռելսեր, 100 վերստի (106կմ) համար պատրաստվեց 200000 շալա, նաև՝ բուքից և ձնից պաշտպանվելու հարմարանքների կետը, ինչպես նաև գծի ողջ երկարության 2/3 մասում զցվեց հեռագրագիծ և կառուցվեց ջրամատակարարման ցանց¹⁹: Եվս մեկ տարի անց երկաթուղու գծածիրն (трасса) արդեն պատրաստ էր շահագործման հանձնելուն. քարի թափվածքը, կամուրջների կառուցումը, ռելսերի տեղադրման աշխատանքներն ավարտվել էին: 1902 թ. գարնան վերջերին Ալեքսանդրապոլից մինչև Երևան 146 վերստ (154,8 կմ) երկարությամբ գծի շինարարությունն ավարտվեց, իսկ դեկտեմբերի 5-ին առաջին գնացքը ժամանեց Երևան²⁰:

1906 թ. ավարտվեց նաև Անդրկովկասյան երկաթուղու հարավային կամ Հայաստանի մայրուղու վերջին հատվածի՝ Երևան-Ջուլֆան գծի շինարարությունը: 1908 թ. հունվարի 21-ին առաջին գնացքը ժամանեց Ջուլֆա²¹:

Երկաթուղու մուտքն Արարատյան դաշտ ցնծությամբ ընդունվեց հայության առաջադեմ շրջանակների կողմից: «Մշակ» պարբերականն իր 1902 թ. նոյեմբերի 26-ի համարում այդ կապակցությամբ գրել է. «Արաքսի առաջանը սկսել է հետաքրքրութեան առարկալ դառնալ գործնական նպատակներով: Առաջ Արաքսի շուրջ գտնվող երկրնե-

¹⁵ ՀԱԱ, ֆոնդ 271, ցուցակ 2, գործ 14, թ. 54:

¹⁶ Վերստ-երկարության ռուսական չափման միավոր = 1,06 կմ:

¹⁷ Ա.Գ.Օ -1902, N 6, էջ 196:

¹⁸ Дороги, мосты и переправы -1899, с. 16.

¹⁹ Նույն տեղում, էջ 17:

²⁰ «Մշակ» -1902, թիվ 273, էջ 2:

²¹ Օհանյան Ա.-1950, էջ 257:

րը միայն հնագիտական և պատմական հետաքրքրություն էին զարթնեցնում օտարների մեջ: Այժմ Արաքսի աւազանը սկսել է գրաւել ընդհանուր ուշադրություն իր... այն դերով, որ կարող կը լինի կատարել, իբրև հաղորդակցութեան ճանապարհ մի կողմից Պարսկաստանի, իսկ միւս կողմից մեր Կովկասի, Ռուսաստանի ու Եվրոպայի միջև: Պարսկաստանի սահմանակից մասերը կարող են շինվող երկաթուղու միջոցով փոխադրել իրանց ապրանքները, ... փոխանակություն կատարել: Երկաթուղու յոյսով արդէն սկսել են մշակել մի շարք ծրագիրներ՝ շահագործելու Պարսկաստանի սահմանակից մասի հանքերը:»²²:

Եզրահանգում. Ի սկզբանե կառուցված լինելով որպէս ռազմա-ստրատեգիական նշանակության օբյեկտ՝ Անդրկովկասյան երկաթուղին ունեցավ սոցիալ-տնտեսական մեծ նշանակություն: Այն ոչ միայն բարձրացրեց երկրամասի պաշտպանվածությունն, այլև հնարավորություն տվեց ներգրավելու Անդրկովկասը Ռուսական կայսրության առևտրաշրջանառության մեջ, նպաստեց երկրամասի արդյունաբերության զարգացմանը, ներքին շուկաների ընդլայնմանը, Իրանի և Օսմանյան կայսրության հետ առևտրաշրջանառության զարգացմանը, Մերձավոր Արևելքի երկրների հետ տարանցիկ ճանապարհի զարգացմանը: Երկաթուղին նպաստեց քաղաքային ազգաբնակչության թվի աճին, ստեղծեց իր կազմակերպվածությամբ մեծ ուժ ներկայացնող բանվոր դասակարգ: Երկաթուղու Հայկական հատվածի շինարարության ժամանակ կիրառվեցին տեխնիկայի վերջին նվաճումները: Օրինակ, Ռուսաստանյան իրականության մեջ առաջին անգամ Ջաջուռի թունելի աշխատանքներում օգտագործվեցին էլեկտրահորատման մեքենա և էլեկտրալուսավորություն:

ЭПИЗОДЫ ИЗ ИСТОРИИ СТРОИТЕЛЬСТВА ЗАКАВКАЗСКОЙ ЖЕЛЕЗНОЙ ДОРОГИ

Այրաբետյան Ա. Ս.

Ключевые слова: Закавказье, Тифлис-Александрополь-Ереван-Джульфа, поезд, Армянские железные дороги, коммуникация, строительство, железнодорожный вокзал.

Приступая к строительству железных дорог на Закавказье с 60-ых годов XIX века, власти преследовали одну главную цель - усилить свое военно-политическое присутствие в регионе. Однако железная дорога имела и неопределимое экономическое значение для региона: соединив Каспийское море с Черным, приблизила регион к рынкам центральной России и Западной Европы, что позволило местным производителям стать частью международной торговли.

Первый проект строительства Закавказской железной дороги появился в 1857 г.. Уже в 1872-1883 гг. были сданы в эксплуатацию пути Поти-Тифлис и Тифлис-Баку, а в 1895-1906 гг. - участок Тифлис-Александрополь-Ереван-Джульфа или так называемая Армянская железная дорога, имеющая важнейшее военно-стратегическое значение.

²² «Մշակ» -1902, թիվ 261, էջ 1:

Благодаря железнодорожному сообщению стала развиваться промышленность Закавказья, расширились внутренние рынки, увеличился товарооборот с Ираном и Османской империей, стало транзитным путем для стран Ближнего Востока. Железная дорога поспособствовала также росту городского населения, поскольку она создала высокоорганизованный рабочий класс.

EPISODES FROM THE HISTORY OF TRANSCAUCASIAN RAILWAY CONSTRUCTION

Hayrapetyan A. S.

Key words: *Transcaucasia, Tiflis-Alexandropol-Yerevan-Julfa, Armenian railways, train, communication, construction, railway station.*

By starting to build railways in Transcaucasia in the 60ies of the 19th century, the authorities pursued one main goal: to strengthen their military-political presence in the region. However, the railway was also of invaluable economic importance for the region. Connecting the Black and Caspian Seas, brought the region closer to the markets of central Russia and Western Europe, allowing local producers to become part of international trade.

The first project for the construction of the Transcaucasian railway appeared in 1857. Already in 1872-1883, the Poti-Tiflis and Tiflis-Baku railways were put into operation, and in 1895-1906 the most important part, from the military-strategic aspect, was the Tiflis-Alexandropol-Yerevan-Julfa line or the so-called "Armenian railways".

Due to the railway communication, the industry of the Transcaucasian region developed, the internal markets, the trade with Iran and the Ottoman Empire, and the transit route with the countries of the Middle East expanded. The railway also contributed to the growth of the urban population, as well as created a significant and well-organized working class.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **ԱՂՕ -1902**, Երևանի քաղաքային ինքնավարության քառամեայ գործունեությունը, «Մուրճ», Թիֆլիս, N 6, էջեր 195-199:
2. «**Վաճառական**» -1866, Կովկասի երկաթե նանապարիը, Թիֆլիս, N 3, 20 մարտի:
3. **ՀԱԱ** Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 113, ցուցակ 2, գործ 95, թ. 24:
4. **ՀԱԱ**, ֆոնդ 271, ցուցակ 2, գործ 14, թ. 54:
5. **Սահրադյան Հ. -1962**, Երկաթուղու շինարարությունը Հայաստանում, Երևան, Հայպետհրատ:
6. «**Մշակ**» -1899, Թիֆլիս, N 24, 9 փետրվարի:
7. «**Մշակ**» -1902, Թիֆլիս, թիվ 261, 26 նոյեմբերի:
8. «**Մշակ**» -1902, Թիֆլիս, թիվ 273, 11 դեկտեմբերի:
9. **ՎԿՊԱ** Վրաստանի կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ 12, ցուցակ 6, գործ 1292, թ. 27-28:
10. **Օհանյան Ա.-1950**, Երկաթուղային տրանսպորտը նախասովետական Հայաստանում, ԵՊՀ «Գիտական աշխատություններ», հ. 30, Երևան, էջեր 241-279:
11. **Аргутинский-Долгоруков А.-1896**. История сооружения и эксплуатации ЗКВ. Ж.Д. за двадцать пять лет 1871-1896гг.. Тифлис. Изд. Закавказской железной дороги.
12. **Дороги, мосты и переправы -1899**. «Обзор Эриванской губернии за 1899 год». Эривань. «Типография Р.К. Эдельсона».
13. "**Кавказ**" -1895. Тифлис. N 198.

14. **Сборник документов -2014.** Между централизмом и регионализмом: административные преобразования на Центральном Кавказе в 70-х гг. XIX-начале XX в. Сборник документов. Сост. Е.И. Кобахидзе, Владикавказ, ИПЦ СОИГСИ ВНИЦ РАН и РСО-А.
15. **Обзор Карсской области -1900.** Обзор Карсской области за 1899 год, Карс, Типогр. Военного Губернатора Карсской Области, отд. III.
16. **Отчет -1873.** Отчет по главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем Вел. кн. Михаилом Николаевичем. 6 дек. 1862-6 дек. 1872 г., Представлен Николаю, Тифлис, 1873.
17. **Памятная книжка -1902.** Памятная книжка Эриванской губернии на 1903 год. Эривань. «Типография Р.К. Эдельсон. отд. V.
18. **Погребинский А. -1954.** Строительство железных дорог в пореформенной России и финансовая политика царизма (60-90-е годы XIX в.). Исторические Записки 47. АН СССР. Институт Истории. сс. 149-180.
19. **Mirzoyan S., Badem C.-2013,** Tiflis-Gümrü-Kars Demiryolu İnşası (1895-1899). IHJR.

Ընդունվել է՝ 30. 04. 2022
Գրախոսվել է՝ 18. 05. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն,
Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի դոցենտ,
Էլ. հասցե՝ a.hayrapetyan@shirakcenter.sci.am

ՀՏԴ՝ 930.85

DOI: 10.52971/18294316-2022.25.1-82

**ՇԻՐԱԿԸ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ
(ըստ XVI-XVIII դարերի դրամների)**

Վեռա Բոյան

Հայաստանի պատմության ազգային թանգարան

Բանալի բառեր՝ մետաղադրամ, գանձ, դրամական հավաքածու, ռուսական կոպեկ, եվրոպական դրամներ, առևտուր, վաճառական, ճանապարհ:

Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում քաղաքական, սոցիալական և տնտեսական ծանր պայմաններում գոյատևման և ինքնության պահպանման միջոցներ է որոնել և մշակույթի ազգային դրսևորումներով նպաստել դրանց պահպանմանն ու սերնդեսերունդ փոխանցմանը: Այդ միջոցներից կարելի է համարել առևտրական մշակույթի հմտությունների յուրացումը և համաշխարհային առևտրում էական դեր ունենալը:


Հայաստանն իր աշխարհագրական դիրքով զբաղեցրել է տարածաշրջանում կարևոր ռազմաքաղաքական տարածք: Այն հանդիսացել է Արևելքը Արևմուտքին կապող կարևոր հանգույց, որտեղով անցել են ռազմական, առևտրական՝ ժամանակաշրջանի համար կենսական նշանակություն ունեցող ուղիները:

Հայաստանի ճանապարհները հանգեցրել են պետության ներսում առևտրի զարգացմանը և նրա սահմաններից դուրս առևտրական մշակույթի ու ձևերի տարածմանը, ինչպես նաև առևտրական գործունեության նոր որակի ստեղծմանը: Դեռ վաղ ժամանակներից Հայաստանի հյուսիսային հատվածը ներգրավված է եղել առևտրային ակտիվ գործունեության մեջ:

Նախաբան. Գրավոր աղբյուրների և դրամագիտական նյութի վկայմամբ՝ Շիրակը տարանցիկ առևտրային ճանապարհներով կապվում էր հարևան երկրների և համաշխարհային առևտրի գլխավոր մայրուղիների հետ: Շիրակից և սոցիալ-տնտեսական,

մշակութային և առևտրական ճանապարհներով նրա հետ կապված հարակից տարածքներից գտնված դրամական գանձերը, առանձին դրամները և որոշ վերապահումներով նաև դրամական ժողովածուները, որոնք, հավանաբար, հավաքվել են նշված տարածքներից, կարևոր և հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում տարածաշրջանի առևտրական կապերի ու հարաբերությունների վերաբերյալ:

Այս ամենի համատեքստում ուսումնասիրության է արժանի Թալինի Իրինդ գյուղում 1949 թ. հայտնաբերված XVII դարի արծաթե դրամների գանձը՝ կազմված գերմանական, հոլանդական, ավստրիական, բելգիական, իսպանական դրամներից (ՀՊԹ 16287/1-30):




Թալինն այսօր Արագածոտնի մարզի մեջ է մտնում, սակայն նախկինում այն մաս է կազմել Ալեքսանդրապոլ գավառի:¹ 1921թ. Հայկական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի «ՀԽՍՀ վարչական վերաբաժանումների մասին» դեկրետով Ալեքսանդրապոլի գավառը բաժանվեց 7 գավառակների, որոնց մեջ էր մտնում նաև Թալինը՝ Ամասիայի, Ախուրյանի, Արագածի, Աշոցքի, Անիի և Արթիկի գավառակների հետ:² Բացի այդ՝ Թալինը գտնվում է Գյումրին Արարատյան դաշտին կապող մայրուղու վրա և իր դրամական գտածոների տիպային համամասնությամբ նույնն է, ինչ Շիրակի տարբեր վայրերից հայտնաբերված խմբերը:

¹ Բոյաջյան Ա. -2009, էջ 126:

² ՀԺԳ, 7, -1967թ., էջ 194:

Քիչ չեն նաև Գյումրիում կազմված դրամական ժողովածուները, որոնք, պետք է ենթադրել, հավաքվել են նշված տարածքից և շրջակա բնակավայրերից: Դրանցից է արձաթե ութ դրամից բաղկացած հավաքածուն, որը Հայաստանի պատմության թանգա-



րան է բերվել 1947թ., որից 4-ը XVI դարի ավստրիական դրամներ են (ՀՊԹ 15324-15328, 15611-15614):

Մեկ այլ ժողովածու՝ հավաքված Գյումրիում, որը թանգարանը ձեռք է բերել 1977 թ., ներառում է XVIII-XIX դդ. 251 պղնձե դրամ (ՀՊԹ 28827-29078): Հավաքածուի 87 ռուսական դրամներից 10-ը իշխանական շրջանի են՝ XVII-XVIII դդ.: Եվս մեկ պղնձե դրամների ժողովածու Գյումրիից նույնպես բաղկացած է տարբեր երկրների թողարկումներից (ՀՊԹ 19692/1-9)՝

- ռուսական (XVIII-XIX դդ.) - 5 դրամ
- ֆրանսիական (1801թ.) – 1 դրամ
- լեհական (1766 թ.) – 1 դրամ
- հունգարական (1765 թ.) – 1 դրամ
- գերմանական – 1 դրամ

Իր դրամական կազմով հետաքրքրություն է ներկայացնում Կարսում և Սասունում հավաքված 200 արծաթե (ՀՊԹ 19377/1-200) և 20 պղնձե (ՀՊԹ 19378/1-20) դրամների հավաքածուն, որը թանգարան մուտք է գործել 1985թ.: Այն ներառում է սելևկյան (1), Թաբարիստանի (2), բյուզանդական (1), օմայյան (3), աբասյան (28), սասանյան (30), սելջուկյան (5), վրացական (5), մոնղոլական (4), հուլավոյան (13), սեֆյան (37), հնդկական (4), թուրքական (2), եվրոպական (40), ռուսական (11) արծաթե և տասնինը պղնձե դրամներ (հռոմեական, Բոսպորի թագավորության, բյուզանդական, վրացական, իրանական):

Քննելով հավաքածուն՝ կարելի է ենթադրել, որ գանձում առկա XVII-XVIII դդ. ռուսական և եվրոպական դրամները ձեռք են բերվել Կարսում, այլ ոչ թե Սասունում: Այդ ժամանակաշրջանում վերջինս դուրս էր աշխույժ առևտրական ճանապարհային ուղիներից, որոնք անցնում էին առավել նշանակալի քաղաքներով: Նման դրամները, որոնք չէին կապվում տարածաշրջանի դրամական տնտեսության հետ, կարող էին

Շիրակը առևտրական ճանապարհների վրա (ըստ XVI-XVIII դարերի դրամների)

հայտնվել միայն առևտրականների միջոցով կամ բանակների ռազմական գործողությունների ժամանակ, որոնք կանգ էին առնում ռազմական և առևտրական մայրուղիների վրա գտնվող բնակավայրերում: Այդպիսի բերդաքաղաք էր Կարսը, որը կապվում էր առևտրական մայրուղու հետ:

Հավաքածուի եվրոպական դրամները լեհական, հունգարական, ավստրո-հունգարական, իսպանական, նիդեռլանդական, գերմանական և ֆրանսիական են:

Կարսի հավաքածուի ռուսական դրամները			
Փահակալ	Անվ. արժեք	Թվական	քանակ
Իշխանական շրջ.	կոպեկ	XVI-XVII դդ.	2 հատ
Աննա Իվանովնա (1730-1740 թթ.)	գրիվեննիկ	1733 թ.	1 հատ
	պոլպոլտիննիկ	17xx թ.	1 հատ
Ելիզավետա (1741-1761 թթ.)	գրիվեննիկ	1751 թ.	1 հատ
	պոլպոլտիննիկ	1752 թ.	2 հատ
Եկատերինա II (1762-1796 թթ.)		1769 թ.	1 հատ
	պոլպոլտիննիկ	1771 թ.	2 հատ
		1778 թ.	1 հատ

Հավաքածուի ռուսական և եվրոպական դրամները թվագրվում են XVI-XVIII դդ., երբ Հայաստանը դեռևս չէր գտնվում Ռուսաստանի քաղաքական և տնտեսական իշխանության ներքո: Հետևաբար կարելի է ենթադրել, որ այդ դրամները Հայաստան են հասել բացառապես առևտրական ճանապարհով: Չի բացառվում սակայն, որ դրանք Կարս հասած լինեն նաև ռուս-թուրքական պատերազմների արդյունքում:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի պատմության թանգարանում (ՀՊԹ 12776-15852) պահվող ռուսական դրամների գանձը՝ բաղկացած 3077 արծաթե դրամներից, գտնված 1934 թվականին Արագածոտնի մարզի Կոշ գյուղում, որը, ըստ Պետինգերյան քարտեզի, հնում գտնվել է Հայաստանով անցնող հինգ մայրուղիներից մեկի՝ Արտաշատ-Սեբաստոպոլիս ուղղությամբ ճանապարհի վրա: Այն անցել է Շիրակով դեպի Վրաստան և Աբխազիա³: Այդ ճանապարհը իր նշանակությունը պահպանել է նաև միջնադարում և շարունակել է գործել նաև ավելի ուշ շրջանում: Չի բացառվում, որ այդ ճանապարհն է հիմք հանդիսացել ժամանակակից գլխավոր մայրուղու՝ Երևան-Գյումրի ավտոճանապարհի համար:

Անեցի հարուստ վաճառական Տիգրան Հոնենցի կառուցած Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (1215թ.) արևելյան որմի ընդարձակ արձանագրության մեջ թվարկվում են Հոնենցի նվիրատվությունները⁴, այդ թվում՝ այգիներ Երևանում, Օշականում, Կոշում, ինչպես նաև թվարկումների շարքում նշվում է Խուզած-Մախմուդ գյուղը Կարսում⁵: Սա վկայում է Արագածոտնի և Շիրակի տարածքային ընդհանրության մասին՝ ընդգրկված մեկ միասնական ռազմաառևտրական ճանապարհային հանգույցի մեջ:

³ Մանանդյան Հ. -1936, էջեր 120, 133:

⁴ ԴՀՎ -1966, էջ 62 (տախտակ XXI):

⁵ Манандян Я. -1954. с.с. 279-281.

Կոշի գանձն ամբողջությամբ բաղկացած է «կոպեկ» դրամական միավորից, տվյալ ժամանակաշրջանի կոպեկին հատուկ պատկերագրությամբ. ձիավոր՝ նիզակը ձեռքին:

Գանձի դրամները ուսումնասիրվել են, կատարվել է չափագրական տվյալների գրանցում, դրամների դասակարգում, դրամահատարանների որոշում: Նախնական ուսումնասիրությամբ դրամները բաժանվել են ըստ գահակալների և դրամահատարանների՝ ներկայացված տոկոսային հարաբերակցությամբ:

Կոշի գանձը		
Գահակալ	դրամների թիվ	%
Իվան IV Ահեղ (1533-1584 թթ.)	5	0.16
Բորիս Ֆեոդորովիչ Գոդունով (1589-1605 թթ.)	4	0.12
Վասիլի Իվանովիչ Շոյսկի (1606-1610թթ.)	6	0.19
Վլադիսլավ Սիգիզմունդովիչ (1610-1612 թթ.)	5	0.16
Միխայիլ Ֆեոդորովիչ Ռոմանով (1613-1645 թթ.)	1650	54.6
Ալեքսեյ Միխայլովիչ (1645-1676 թթ.)	281	9.3
Ֆյոդոր III Ալեքսեևիչ (1676-1682 թթ.)	24	0.78
Իվան V Ալեքսեևիչի համատեղ Պետրոս I Ալեքսևիչի հետ (1682-1696 թթ.)	7	0.23
Պետրոս I Ալեքսևիչ (1689-1725 թթ.)	8	0.26
Մորդովկա XV-XVIII դդ.	75	2.5
Անորոշ	1012	31.7

Գանձի ամենավաղ դրամը Իվան IV Ահեղի (1533-1584 թթ.) կոպեկն է, իսկ ամենաուշը՝ Պետրոս I Ալեքսևիչի (1696-1717 թթ.) նախառեֆորմյան կոպեկը: Դրամական գանձը թաղվել է, ամենայն հավանականությամբ, XVIII դարի առաջին տասնամյակի ընթացքում:

Ամբողջական գանձի կշիռը կազմում է մոտ 1,3 կգ, դրամների կշիռը 0,28-0,69 գրամի միջակայքում է, իսկ տրամագծի միջինացված ցուցանիշը մոտ 13,5-14 մմ է: Գանձն առանձնահատուկ է իր թվաքանակի մեծությամբ:

Քննվող ժամանակահատվածում ռուսական դրամաթողարկումը կենտրոնացված էր չորս հիմնական դրամահատարաններում՝ Մոսկվա, Նովգորոդ, Պսկով և Տվեր⁶: Կոշի գանձի դրամների զգալի մասը պատկանում է Մոսկվայի դրամահատարանին՝ իր տարատեսակ դրամահատարանային նշաններով:

Տվյալ ժամանակաշրջանի ռուսական դրամներն այնքան սակավաթիվ են Հայաստանի տարածքում, որ դրանց, անկախ քանակից, հայտնաբերումը պատմական,

⁶ Спасский И. -1970. с. 113.

դրամագիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում և կարևոր եզրահանգումների առիթ տալիս:

Հայերը, գաղութներ հիմնելով, մեծ դեր են խաղացել ռուսական և արևմտաեվրոպական առևտրի զարգացման գործում: Սակայն հայ-ռուսական փոխառնչությունները ոչ միայն տնտեսական բնույթ էին կրում, այլ նաև դրսևորվում էին հասարակական կյանքի մյուս ոլորտներում:

Միջնադարում ձևավորվեց հայերի՝ որպես առևտրական ժողովրդի մասին պատկերացումը Եվրոպայում: Հենց առևտրա-արհեստավորական հարուստ դասն էր դառնում այն կորիզը, որի շուրջ ձևավորվում էին առավել ազդեցիկ հայկական կենտրոնները Եվրոպայում, և նա էր իր միջոցներով հովանավորում մշակույթը հայկական գաղթօջախներում: Սակայն հայերն առանձնակի աչքի ընկան հատկապես Արևելյան Եվրոպայի, մասնավորապես Ռուսաստանի առևտրի զարգացման գործում:

Նույն ժամանակաշրջանով թվագրվող գանձեր են գտվել նաև Կովկասյան տարածաշրջանի⁷: ՀՊԹ-ում պահվող մի շարք գանձեր ու առանձին դրամներ բերվել են Էջմիածնի թանգարանից ու Լազարյան ճեմարանից, դրանց ծագումը, ցավոք, անհայտ է: Չի բացառվում, սակայն, դրանց՝ Հայաստանից գտնված լինելու հավանականությունը, հատկապես Էջմիածնի թանգարանից բերվածներինը:

Հայտնի են նաև Շիրակից և հարակից տարածքներից գտնված համաժամանակյա պարսկական և թուրքական դրամներ, սակայն դրանց մասին տվյալները նպատակահարմար չգտանք քննարկել այստեղ, քանի որ դրանք հանդիսացել են Հայաստանում շրջանառվող պաշտոնական վճարման միջոց: Հայաստանը, բաժանված օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի միջև, հետևաբար ընդգրկված էր այդ կայսրությունների դրամական տնտեսության մեջ: Այնինչ ռուսական և արևմտաեվրոպական դրամները այստեղ են հասել վաճառականների միջոցով:

Եզրահանգում. Այսպիսով հայտնաբերված ռուսական և եվրոպական դրամների գանձը, առանձին դրամները և դրամական հավաքածուները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, և հետագա ուսումնասիրությունը նոր բացահայտումների հիմք կարող է հանդիսանալ: Նմանօրինակ բազմաքանակ գանձերի հայտնաբերումը մեկ անգամ ևս փաստում է տարածաշրջանի ներգրավվածությունը առևտրական ակտիվ գործունեության մեջ:

ШИРАК НА ТОРГОВЫХ ПУТЯХ (ПО МОНЕТАМ XVI-XVIII ВВ.)

Боян В.

Ключевые слова: монета, клад, монетная коллекция, русская копейка, европейские монеты, торговля, купец, дорога.

Представленные в статье монетные клады, отдельные монеты и, с некоторыми оговорками, монетные коллекции, которые, по всей вероятности, были составлены из монет,

⁷ Пахомов Е. -1940. с. 66; Пахомов Е. -1954. с. 64; ՀՊԹ 17150:

обнаруженных в Шираке и ближайших районах, дают интересную информацию о торговых связях в XVI-XVIII веках.

На основании изученного материала можно констатировать, что транзитными торговыми путями Ширак был связан не только с соседними странами, но и с Россией и Европой.

SHIRAK ON TRADE ROUTES (ACCORDING TO COINS OF XVI-XVIII CENTURIES)

Boyan V.

Key words: *Coin, hoard, coin collections, Russian kopeck, European coins, merchant, road.*

The hoard presented in the article, individual coins and, with some restrictions, coin collections, which, most likely, were composed of coins found in Shirak and nearby areas, provide interesting information about trade relations in the 16th-18th centuries.

Based on the studied material, it can be stated that Shirak was connected not only with neighboring countries, but also with Russia and Europe through transit trade routes.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Բոյաջյան Ա. -2009**, Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի ժողովրդագրական դրությունը 1914-1930-ական թթ., ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հատոր 12, Գյումրի:
2. ԴՀՎ -1966, Դիվան հայ վիճագրության պրակ I, Անի քաղաք, կազմ. Հ. Ա. Օրբելի, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան:
3. ՀԺՊ-1967, Հայ ժողովրդի պատմություն, հ. 7:
4. **Մանանդյան Հ. -1936**, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պետինգերյան քարտեզի, հրատ. Մելքոնյան ֆոնդի, Երևան:
5. **Манандян Я. -1954**. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, V в. до н. эры – XV в. н. эры, изд. ЕУ. Ереван.
6. **Пахомов Е. -1940**. Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, вып. III, изд. АзФАН. Баку.
7. **Пахомов Е. -1954**. Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, вып. VI, изд. АН Аз. ССР. Баку.
8. **Спасский И. -1970**. Русская монетная система, Историко-нумизматический очерк, изд. "Аврора", Л.

Ընդունվել է՝ 13. 03. 2022
Գրախոսվել է՝ 14. 04. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Վեռա Բոյան՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ասպիրանտ, էլ. հասցե՝ veraboyan777@gmail.com

ՀՏԴ՝ 93.94

DOI: 10.52971/18294316-2022.25.1-89

**ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ
1918 թ. ՄԱՅԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ**

Կարինե Ալեքսանյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Հերմինե Աբրեյան

Գյումրու Գր. Լուսավորչի անվան թիվ 31 դպրոց

Բանալի բառեր՝ քաղաքային վարչություն, քաղաքային խորհուրդ, թուրքական իշխանություններ, փախստականներ, քաղաքական իրավիճակ, հայ բնակչություն, պատերազմ, հաշտության կոնֆերանս:

1918թ. մայիսյան հերոսամարտերից հետո, ստիպված լինելով հաշտվել Հայաստանի անկախության հետ, թուրքերը միաժամանակ ջանք չեն խնայել Արևելյան Հայաստանի ռազմակալած շրջաններում կոտորելու և թալանելու բնակչությանը, թուլացնելու և տնտեսապես քայքայելու երկիրը՝ անհնար դարձնելով պետականության հետագա գոյությունը Հայաստանում:

Իրենց առաջխաղացումը պայմանավորելով իբր մահմեդականների նկատմամբ հայերի բռնությունները կանխելու, օրինականություն և կարգ ու կանոն հաստատելու հանգամանքով և, ընդհանրապես, իրենց գործողություններին օրինական տեսք տալու նպատակով, գրավված Ալեքսանդրապոլում նրանք ստեղծում են տեղական իշխանության մարմիններ՝ քաղաքային խորհուրդ և վարչություն:

Հոդվածի շրջանակներում ձեռնամուխ ենք եղել Ալեքսանդրապոլում թուրքական բռնազավթման պայմաններում ստեղծված տեղական իշխանության մարմինների գործունեության և ժամանակակիցների կողմից նրանց տրված գնահատականների ուսումնասիրությանը:

Նախաբան. Մինչ հայ քաղաքական կուսակցություններն ու ազգային հասարակական կազմակերպությունները 1918 թ. ապրիլի 6-8-ը Ալեքսանդրապոլում տեղի ունեցած խորհրդակցությունում քննարկում էին Անդրկովկասի պաշտպանության հարցերը, Թուրքիայի հետ հաշտության պայմանները և ճշտում իրենց վերաբերմունքը պատերազմի և խաղաղության նկատմամբ,¹ թուրքերը դիվանագիտական խարդավանքներով 1918թ. մայիսի 15-ին գրավում են Ալեքսանդրապոլը²: Թուրքական անսպասելի հարձակումը մեծ խուճապ է առաջացնում Ալեքսանդրապոլում, որի հետևանքով քաղաքը գրեթե դատարկվում է: Քաղաքը խուճապահար լքում են ոչ միայն բնակիչների մեծ մասը, այլ նաև քաղաքային ինքնավարությունն իր ամբողջ կազմով, հասարակական, գաղթականական, բանկային, կոոպերատիվ, մթերային բոլոր կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքային ամբողջ միլիցիան: Ընդ որում, քաղաքից հեռանում է նաև Ալեքսանդրապոլի փոխթեմակալ առաջնորդ Արտակ վարդապետը³:

Ալեքսանդրապոլում մնացած անպաշտպան բնակիչները, ձգտելով ապահովել իրենց կյանքն ու գույքը, թուրքերի քաղաք մտնելու ժամանակ նրանց ընդառաջ են ուղարկում պատվիրակություն Մկրտիչ Ղազարյանի գլխավորությամբ⁴: Թուրքերը խոստանում են չվնասել բնակչությանը՝ չդիմադրելու և քաղաքը չայրելու պայմանով:

Չնայած կողոպուտներն ու միջադեպերը կանխելու թուրքական իշխանությունների ջանքերին՝ հասկանալի պատճառներով դրանք անխուսափելի էին: Քաղաքում կարգուկանոն հաստատելու նպատակով, թուրքերի համաձայնությամբ, Ալեքսանդրապոլում կազմավորվում են տեղական իշխանության մարմիններ՝ քաղաքային խորհուրդ և քաղաքային վարչություն⁵: Թուրքերն իրենց հերթին տեղական իշխանության մարմինների միջոցով փորձում են օրինականացնել իրենց գործողությունները⁶: Ընտրված քաղաքային վարչությունը պատասխանատու էր լինելու թուրքական կառավարության առաջ և վարելու էր քաղաքային գործեր⁷:

Քաղաքային վարչության իրավունքներն ու ֆունկցիաները շատ լայն էին ու բազմակողմանի: Նրան էին ենթարկվում ոչ միայն քաղաքի վարչական, տնտեսական ու ուսումնական կյանքը, այլև գավառինը՝ ամբողջապես: Քաղաքային գործերը վարելու համար քաղաքային խորհուրդն ընտրում է բաժնի վարիչներ⁸: Թուրքական իշխանու-

¹ Համահայկական խորհրդակցություններ -2004, էջեր 312-317:

² Ավետիսյան Հ. -1997, էջ 199:

³ Վիրաբյան Ա., Ալեքսանյան Կ. -2020, էջեր 85-115:

⁴ ՀԱԱ, Ֆ. 105, ց. 1, գ. 2711, թ. 3:

⁵ Նույն տեղում, թ. 4-5: ԲՀԱ -2011, 1, էջեր 12-24:

⁶ Ալեքսանյան Կ. -2005, էջեր 49-52:

⁷ ՀԱԱ, Ֆ. 105, ց. 1, գ. 2711, թ. 4:

⁸ Բոլոր հարցերի վերաբերյալ իշխանությունների հետ հարաբերությունների իրականացման բաժին՝ Ս.Ղազարյան, Այարշաֆ, քաղաքի պահպանության՝ Խ.Ստեփանյան և Աբովյան, գավառային գործերի՝ քահ. Տեր-Գրիգորյան, սանիտարական մասի՝ Ցիխիստով և Լեյբովիչ, բժշկական հիմնարկությունները կառավարող՝ բժ. Գուլբինսկի, ապաստարանների և բոլոր խնամակալական հիմնարկությունները կառավարող՝ Ա.Բաբայան, և Ա.Ավետիսյան, պարենավորման գործի՝ Ս.Տեր-Գրիգորյան, ազգաբնակչության տեղաշարժման, էվակուացիայի և արտագաղթի՝ Դ.Պապանդուպոլ, Պ.Մերկուրով, Յուսուպով, քաղաքացիների միջև իրավաբանական բնույթի կրող վեճերի քննության՝ Ս.Տեր-Մարտիրոսյան, առևտրական գործերի՝ Բերուրով, Մամեդ Չաֆար և Կալեռոֆ, դրամական՝ քահ. Իգո-

թյունները քաղաքին ու գավառին վերաբերող բոլոր տեսակի կարգադրություններն անում էին քաղաքային ինքնավարության միջոցով և նրա միջոցով էլ ընդունում բոլոր խնդրագրերը: «Շատ գործերի մասին,- գրում է տեղական թուրքական կառավարության նախագահ Ռեջեբ բեյը քաղաքային վարչության ուղղված գրության մեջ, - ժողովուրդը խնդիր է տալիս ուղղակի բանակի հրամանատարին, քանի որ նախ պետք է դիմել տեղական կառավարությանը, ուստի այդ կարգի դիմումները հրամանատար փաշայի կողմից չեն ընդունուի»⁹:

Քաղաքային ինքնավարությունն անմիջապես ենթարկվում էր տեղական իշխանության նախագահին (գավառապետ), իսկ վերջինս իր հերթին՝ թուրքական բանակի հրամանատարին (Ղարսի գորահրամանատար)¹⁰:

Տեղական իշխանության մարմինների գործունեությունը 1918 հունիս-դեկտեմբերին

Տեղական իշխանության մարմինները, օգտվելով թուրքական դիվանագիտության ընձեռած հնարավորությունից, ձգտում են պաշտպանել հայ բնակչության շահերը, զսպել թուրքական բռնությունները, ապահովել բնակչության ֆիզիկական գոյությունը: Իսկ թուրքական դիվանագիտությունը վեց ամիսների ընթացքում բազմիցս փոխվում է՝ «հայերին իսպառ բնաջնջելու ծայրահեղությունից անցնելով «հայասերի» համբավ հանելու ծայրահեղությանը»¹¹:

Քաղաքային վարչության հարաբերությունները թուրքական իշխանությունների հետ նոր փուլ են մտնում 1918թ. հունիսին, երբ Բաթումի պայմանագրի վավերացման առիթով Թուրքիայից զիջումներ կորզելու նպատակով Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը մեկնում է Կ. Պոլիս: Թեև հայ պատվիրակների բազմաթիվ հանդիպումները օսմանյան պետության ղեկավարների հետ որևէ արդյունք չեն տալիս, բայց այստեղ հստակ երևում էր Հայաստանի Հանրապետության նկատմամբ թուրքական կառավարող շրջանների վերաբերմունքի փոփոխությունը: Այն պայմանավորված էր Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան Թուրքիայի մոտալուտ պարտությամբ և հաշտության կոնֆերանսում պատասխանատվությունից խուսափելու ցանկությամբ: Չնայած վերաբերմունքի փոփոխությանը, այնուամենայնիվ միայն օգոստոսին է Հայաստանի Հանրապետությանը թույլատրվում ունենալ իր ներկայացուցիչն Ալեքսանդրապոլում, որը սակայն սեպտեմբերից է միայն սկսում իր գործունեությունը: Մինչ այդ հայ բնակչության շահերի պաշտպանությամբ զբաղվում էր քաղաքային ինքնավարությունը:

Տեղական իշխանությունների առաջնային խնդիրներից էին փախստականների վերադարձն ապահովելը և կյանքը բնականոն հունի մեջ դնելը: Քաղաքային վարչությունը մեծ ջանքեր էր թափում քաղաքից հեռացողների սեփականությունը թալանից

տով, կոոպերատիվ խանութների՝ (Փեշոմալջյան), բոլոր տեխնիկական խնդիրների՝ Չախմասագով և Տեր-Պողոսով, վերստուգիչ՝ Կուրբատով, Մ.Տեր-Պողոսյան, Ս.Մուրայադջյան, ազգաբնակչության ցուցակագրման՝ Ապուն, և ընդհանուր ղեկավարության՝ Լ.Սարգսյան (Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 105, ց. 1, գ. 2711, թ. 4):

⁹ ՀԱԱ, Ֆ. 105, ց. 1, գ. 2768, թ. 51:

¹⁰ ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 125, թ. 8:

¹¹ **Խաչատրյան Ա. - 2010**, էջ 134:

փրկելու համար: Բանն այն է, որ թուրքերը իրենց առաջխաղացումը պայմանավորելով իբր գրավված տարածքներում կարգ ու կանոն հաստատելու հետ, քաղաքից հեռացողներին մեղադրում էին մահմեդականների նկատմամբ բռնություններ իրականացնելու մեջ և իրենց իրավունք վերապահում սեփականացնել նրանց ունեցվածքը¹²: 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրի կնքումից հետո քաղաքային վարչությունն ամեն հնարավոր միջոցներով ձգտում էր օժանդակել փախստականների վերադարձին և իրենց գույքին տիրանալուն: Մասնավորապես, քաղաքային վարչության հունիսի 25-ի նիստում վարչական բաժնի ղեկավար Մ. Ղազարյանին հանձնարարվում է՝ խնդրել Ռեջեբ բեյին կարգադրություն անել դատարկելու քաղաք վերադարձած հայերի տները թաթարներից: Իսկ փակ դռները նախատեսում էին բացել վարչության անդամների և տանտիրոջ ներկայությամբ¹³:

Ընդհանուր առմամբ հունիսից կյանքը մտնում է բնականոն հունի մեջ: Քաղաքային վարչության միջնորդությամբ բացվում են ճաշարաններ, ռեստորաններ, հյուրանոցներ, հասարակական սննդի կենտրոններ, խանութներ: Հայերի հետ այդ խանութները գործարկում էին թաթարները: Քաղաքը գրաված շատ թաթարներ առաջարկում էին բացել քաղաքից հեռացած հայերի խանութները վարձակալական հիմունքներով՝ նախապես խոստանալով վերադարձնել դրանք տերերի՝ քաղաք վերադառնալու ժամանակ¹⁴: Հունիսի 26-ին քաղաքային վարչությունը վերակազմավորվում է: Վարչության բոլոր գործերը կենտրոնացվում է մեկ ընդհանուր ղեկավարությամբ հինգ հետևյալ բաժիններում՝ ֆինանսա-տնտեսական (ՏերՄարտիրոսով), վարչական՝ (Մ.Ղազարյան), սանիտարա-բժշկական (Յիսիստով), տեխնիկական՝ (Չախմասազով) և պարենավորման (Յուսուֆով)¹⁵: Նշված բոլոր բաժինները ունեին իրենց ենթաբաժինները: Բոլոր բաժինների ընդհանուր ղեկավարը ժողովի կողմից ընտրված քաղաքագլուխն էր (Լ. Մարգսյան): Բոլոր կարևոր խնդիրները վարչության մեջ վճռվում էին խմբային կերպով, իսկ խորհրդի վճիռ պահանջող հարցերը մտցվում էին խորհուրդ: Ալեքսանդրապոլի գավառը ժամանակավորապես բաժանվում է գյուղախմբերի (հին սահմաններով): Քաղաքային ինքնավարությանն էին ենթարկվում նաև գավառի վարչական պաշտոնյաները՝ բաշ մուխտարները (գյուղախմբերի համար) և մուխտարները (գյուղերի համար): Դրանք փաստորեն նշանակվում էին քաղաքային վարչության և ընդունվում թուրքական իշխանության կողմից:

Քաղաքային վարչությունը ջանքեր չէր խնայում հայ բնակչության հարկերը թեթևացնելու ուղղությամբ: Թեև 1918 թ. Շիրակում առատ բերք էր ստացվել, բայց ցանքսերի մեծ մասը փչացել էր գաղթի ժամանակ, մյուսներին տիրացել էին քրդերն ու թաթարները, մի մասը փչացրել էր կարկուտը: Իսկ մնացածից էլ հավաքում էին մուրայան ու աշարը: Օսմանյան կառավարության որոշմամբ՝ թուրքերի ռազմակալած վայրերի գյուղացիներն իրենց բերքի երեք ութերորդը պետք է հանձնեին կառավարությանը, մեկ

¹² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 126, թ. 46-47:

¹³ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2710, թ. 1-2:

¹⁴ Նույն տեղում, թ. 8:

¹⁵ Նույն տեղում, թ. 5:

ութերոդը՝ իբրև աշար (ձրի), իսկ երկու ութերոդը՝ զորքի կարիքների համար (մուբայա) վաճառելու կառավարությանը որոշված գնով, մեկ փութ ցորենը՝ 33 ռուբլով, իսկ գարին՝ 16 ռուբլով: Սկզբում գյուղացիները փորձում էին թաքցնել բերքը, սակայն դատան ծեծի էին ենթարկվում, գրավվում էր նրանց ամբողջ բերքը: Կարկուտի խփած տեղերում հարկի երեք ութերոդը որոշվում էր ծղոտի չափով: Բոլորովին բերք չունեցողներից հարկը վերցնում էին դրամով:

Օրթաքիլիսա գյուղի բնակիչները օգոստոսի 17-ի գրությամբ խնդրում են քաղաքային ինքնավարությանը՝ միջնորդել թուրքական կառավարության առաջ իրենց հարկերից ազատելու համար:¹⁶ Նման խնդրանքով գավառի մի շարք գյուղերի նույն օրը և նույն բովանդակությամբ արված գրությունները հիմք են տալիս ենթադրելու, որ որոշակի պայմանավորվածություն գոյություն ունեւ քաղաքային ինքնավարության և գյուղերի միջև: Դիմումները մնում էին անպատասխան, և միայն քաղաքական դրության փոփոխության հետ է ներվել մուբայան և հետո՝ այն գյուղերի աշարը, որոնք մինչ այդ դրանք չէին տվել: Հայաստանի Հանրապետության Արտգործնախարարությանն ուղղված զեկուցման մեջ ներկայացնելով այս ամենը՝ Գ.Խոյեցյանը բարձր է գնահատել քաղաքային վարչության ներկայացուցիչ Մկրտիչ Ղազարյանի դերը՝ գրելով. «Այս կարգադրութիւնից յետոյ շատ տեղերում զապութներն ու ժանդարմները փորձում են հաւաքել մուբայան, սակայն ամէն անգամ դիմել եմ Տեղական իշխանութեան նախագահին, նրա համապատասխան կարգադրութիւնն ուղարկել տւել այդ գիւղերը և ազատել մուբայան, որը տանելուց յետոյ վերադարձնել չէր լինի: Այսպիսով ազատուել է Մաստարա գիղում ամբարած երեսուն հազար փութ հացահատիկը: Անգնահատելի է այս խնդրում քաղաքային վարչութեան անդամ Մկրտիչ Ղազարեանի դերը: Նա շարունակ դիմել է, խնդրել, շրջել գիւղերը, քննել ապօրինութիւնները, հեռացնել տւել ապիկար պաշտօնեաներին»:

Քաղաքական իրադրության փոփոխությանը համընթաց՝ քաղաքային վարչությունն ավելի համարձակորեն է պաշտպանում քաղաքացիների շահերը: 1918 թ. օգոստոսի 20-ին Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը գրությամբ դիմում է Գյումրու նահանգապետին՝ առանց վարչության կարգադրության չբռնագրավելու քաղաքացիների և հաստատությունների իրերը¹⁷: Թուրքերի բռնակալման շրջանում ստեղծված քաղաքային ինքնավարության մարմինները ոչ միայն փորձում են մեղմել թուրքական բռնությունները, այլ նաև սաստել տեղական մանր իշխանությունների՝ մուխտարների և բաշմուխտարների կամայականությունները, որոնցից շատերը, միանալով թուրքերին, հանցագործություններ էին կատարում սեփական ժողովրդի նկատմամբ, մասնավորապես, միանալով և պայմանավորվելով ասկյարների հետ, շատ դեպքերում հայ գյուղացիներից վերցնում էին ամբողջ բերքը, լցնում իրենց ամբարները կամ վաճառում: Գյուղացիները ստիպված էին լինում կաշառք տալու, շաբաթներով կերակրելու նրանց անասուններին: Այդ մասին են վկայում քաղաքային վարչությանն ուղղված բազմաթիվ բողոքները: Մասնավորապես, 1918 թ. հոկտեմբերին Ղազարապատ գյուղի բնակիչները

¹⁶ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2768, թ. 166:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2758, թ. 20:

բողոքելով իրենց գյուղի մուխտար Ալեքսան Յակոպովի և Եփրեմ Թաթոսովի դեմ, մեղադրում են նրանց բնակչությունից ավելի շատ հարկեր պահանջելու և նրան ճնշելու համար, խնդրում հեռացնել վերջիններիս գյուղից, հակառակ դեպքում՝ սպառնում ողջ բնակչությամբ լքել գյուղը¹⁸:

Քաղաքային իշխանությունները մեծ ծավալի աշխատանքներ են իրականացնում գյուղական բնակչությանը անխուսափելի սովից փրկելու համար: Մասնավորապես, քաղաքային վարչությունը դիմում է Ռեջեբ Բեյին, խնդրելով ձրի հաց տալ այն գյուղացիներին, որոնք վերադառնալով իրենց տները՝ գտել են այն թալանված վիճակում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վեհիբ փաշան առաջարկել էր ընտրել քաղաքից ներկայացուցիչներ Ռուսաստան մեկնելու և հաց գնելու, քաղաքային վարչությունը որոշում է խնդրել օսմանյան իշխանություններից մթերային գնումների համար այդ ներկայացուցիչներին ուղարկել հարևան Ելիզավետպոլի նահանգ: Եվ նկատի առնելով հարցի կարևորությունը՝ որոշվում է այն դնել Խորհրդի քննարկմանը¹⁹: Օգոստոսի 27-ին Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդը որոշում է քաղաքի համար հաց գնելու նպատակով պատգամավորներ Գ. Փեշտմալջյանին և Յուսուֆ Ջադեին Ելիզավետպոլի նահանգ գործուղել²⁰: Ալեքսանդրապոլի քաղաքային խորհրդի մեկ այլ որոշմամբ խորհրդի նախագահ Լ.Սարգսյանը գործուղվում է Թիֆլիս՝ իրականացնելու քաղաքային խորհրդի հանձնարարությունը՝ վերադարձնելու հին քաղաքային վարչությունից այն քաղաքային և հասարակական գումարները, որոնք նրանք տարել էին իրենց հետ թուրքերի քաղաք մտնելուց առաջ²¹: 1917 թ. սեպտեմբերի 17-ին Թիֆլիսում Լ. Սարգսյանը քաղաքային նոր վարչության կողմից ժողով է հրավիրում, որտեղ նոր վարչության ստեղծումը պայմանավորելով քաղաքում կարգ ու կանոնի պահպանման և քաղաքում մնացածների կարիքները բավարարելու անհրաժեշտությամբ, առաջարկում է Թիֆլիսում գտնվող հին վարչությանը լիկվիդացվել և ընդունել նոր վարչության իրավասությունը՝ վերջինիս փոխանցելով իրենց մոտ եղած քաղաքային գործերի հաշիվը և առձեռն գումարը²²:

Ալեքսանդրապոլի քաղաքային հին վարչությունը պատասխանում է, որ քաղաքից հեռանալիս նրանց հիմնական մտահոգությունը եղել է քաղաքային ինքնավարության գործունեության հաշվետվությունը կազմելը և իրավունակ որևէ օրգանի հանձնելը: Հաշիվների մի մասն արդեն կազմված է և տպված, իսկ մյուսը՝ պատրաստվում է արագությամբ, և վերջացնելուց հետո դրանք պետք ստուգվեն Ալեքսանդրապոլում գտնվող փաստաթղթերով: Հին վարչությունը միաժամանակ գտնում էր, որ սեպտեմբերին կայացած ալեքսանդրապոլիցիների ժողովը չի կարող լինել այն իրավունակ մարմինը, որի դիրեկտիվներով պետք է առաջնորդվի ինքը²³: Նոր վարչությունը անբավարար համարելով հին վարչության բացատրությունները, և գտնելով, որ ձգձգումները մեծ

¹⁸ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2768, թ. 265-266:

¹⁹ Նույն տեղում, գ. 2710, թ. 20:

²⁰ Նույն տեղում, գ. 2758, թ. 29:

²¹ Նույն տեղում, թ. 28:

²² ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2713, թ. 8-9:

²³ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2713, թ. 40-41:

վնաս են հասցնում գործին՝ որոշում է դիմել Վրաստանում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ա. Ջամալյանի միջամտությանը, իսկ արդյունք չունենալու դեպքում՝ թուրքական կառավարությանը, և նրա միջոցով պահանջել քաղաքային վարչության հաշիվներն ու գումարները»²⁴:

Քաղաքային վարչության ներկայացուցչության ջանքերն առավել արդյունավետ են դառնում քաղաքական իրավիճակի փոփոխման ժամանակ: Խոյեցյանի հավաստմամբ՝ քաղաքային ինքնավարությունը խոշոր օգնություն է ցույց տվել նաև զանազան շրջաններից փախած գաղթականներին, որոնք ապաստանել են քաղաքում, նրանց համար բացել որբանոցներ, հանրակացարան և այլն: Այս ձեռնարկումներին աջակցելու համար դիմել է բոլոր քաղաքացիներին և հասարակական հիմնարկություններին, այդ թվում նաև ներկայացուցչությանը, որը, սակայն, չի կարողացել օգնել միջոցներ չունենալու պատճառով²⁵:

Թուրքերն Ալեքսանդրապոլի գավառն ամբողջովին թալանելուց և բնակչությանը կոտորելուց հետո, զգալով պատերազմում իրենց մոտալուտ պարտությունը և պատասխանատվությունից վախենալով, 1918թ. սեպտեմբերից փորձում են հանդարտեցնել կրքերը, հաստատել բարիդրացիական հարաբերություններ հայ հասարակության հետ: «Հայերու վերաբերմամբ այնքան դաժան ու անողոք քաղաքականությունը հիմա մեկէն կը փոխուեր,- գրում է Գ. Խոյեցեանը իր զեկուցումներում, - եւ կը դառնար ջերմ, սիրալիք բարեկամութեան եւ ամէն ջանք գործ կը դրուեր օր առօր հայերու հետ խնդիրը կարգադրել եւ «թեւանցուկ», ինչպէս իրենք կըսէին, մտնել ընդհանուր ժողովասրահը»²⁶:

Արևելյան ռազմաբեմի զորահրամանատար Հալիլ փաշան, սիրալիք ընդունելով Գ. Խոյեցյանին, նույնիսկ փոխայցելություն է կատարում²⁷: 1918 թ. հոկտեմբերի կեսերին օսմանյան կառավարությունը, որի զլուխ կանգնած էին երիտթուրքական կուսակցության ղեկավարները, հրաժարական են տալիս: Նոր կառավարությունը Իզզեթ փաշայի գլխավորությամբ շտապում է իր զորքերը Անդրկովկասից մինչև Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հաստատված սահմանները դուրս բերելու մասին որոշում ընդունել: Սակայն, թուրքերն իրենց հատուկ քաղաքականությամբ երկար ժամանակ, ձգձգում էին այն իրականացնել՝ մինչև վերջին հնարավորությունը թալանելով և կոտորելով հայ բնակչությանը: Իրենց հերթին՝ տեղական իշխանությունները փորձում են օգտվել ստեղծված քաղաքական նոր իրավիճակից և վերականգնել քաղաքի բնականոն կյանքը: Մասնավորապես, Ալեքսանդրապոլի քաղաքային դպրոցների տեսուչ Ա. Բաբայանը Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին ուղղած 1918 թ. հոկտեմբերի 22-ի գրությամբ խնդրում է դպրոցական կյանքը վերականգնելու համար ապահովել հմուտ ուսուցիչների վերադարձը Թիֆլիսից և Երևանից²⁸: Գնահատելի է հատկապես քաղաքային ինքնավարության կողմից դեռևս նոյեմբերին Փամբակի, Լոռու և Ալեքսանդրապոլի շրջաններում օսմանյան զորքի և թաթար խուժանի պատճառած վնասների ար-

²⁴ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2713, թ. 40-41:

²⁵ Նույնը:

²⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 126, թ. 1-2:

²⁷ Նույնը:

²⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 97, թ. 26:

ձանագրությունների կազմումը: Այդ նպատակով առանձին գործակալներ պատրաստի բլանկներով²⁹ ուղարկվում են գյուղեր, արձանագրում թուրքական գազանությունները, և պարզ է դառնում, որ թուրքերն այստեղ հայ բնակչությանը կոտորել են մարդկությանը հայտնի բոլոր սարսափելի մահերով և թալանել մինչև վերջին հնարավորությունը: ³⁰

Պատահական չէ, որ քաղաքային վարչության գործունեությունը բարձր են գնահատել ժամանակակիցները, որոնց թվում մասնավորապես Ալեքսանդրապոլում ՀՀ Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Գ. Խոյեցյանը: «Երբ նախկին քաղաքային վարչությունը հեռացավ քաղաքից ու մնացողներից ամեն մեկը ահով էր դիտում մոտիկ ապագային,-գրում է նա իր զեկուցագրերից մեկում,-սպասելով անխուսափելի կոտորածի ու մնացածների կորուստի, քաղաքագլուխ Լ. Սարգսեանը և Մկրտիչ Ղազարեանը, որոնց անձնական շատ քիչ բան էր կապում քաղաքի հետ, միայն նահատակուղ, անգլուխ մնացած ժողովրդին իրենց ուժերի չափ օգնելու համար, մնում են քաղաքում: Այն, ինչ նրանք կրում են այս վեց ամսում, այս կամայականութեան ու բռնութեան շրջանում, նրանց տոկունությունը, նրանց հուժկու և յամարձակ բողոքը այն բոլորի դեմ, ինչ նոյնիսկ նրանց իրաւասութիւնից վեր էր և աւելի լայն բնույթ էր կրում, այն անձնագոհ պաշտպանությունը ժողովրդի շահերի, ու միայն հրաշքով կարողացել են այսօր խաւարի իշխանութիւնից դուրս բերել իրենց խնամքին յանձնած ժողովուրդը և հանգիստ սրտով դիմաւորել հայ զինուորներին և Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը, այս բոլորը՝ նրանց անձնագոհությունը, նրանց ազնւութիւնը, կորովն ու համարձակութիւնը միայն խորին յարգանքի զգացմունք է զարթեցնում իմ մեջ ու այս բոլորի վրայ դարձնում եմ կառավարութեան ուշադրութիւնը»³¹: 1919 թ. հունվարի 15-ի արտակարգ նիստում քաղաքային վարչությունը, հարգելով տիֆից մահացած Մկրտիչ Ղազարյանի հիշատակը, որոշում է նրան հուղարկավորել Պատվո Բլուր կոչվող գերեզմանատանը³²: Իսկ 1919 թ. ապրիլի 16-ի նիստում Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդը որոշում է «...մահացածի ընտանիքին թոշակ նշանակել, նրա օրագիրը հրատարակել, որպես հատուկ բրոշյուր և վաճառել հատը երկու ռուբլով, իսկ հասույթը հատկացնել նրա երեխաներին»: Ավելի ուշ՝ 1919 թ. հունիսի 3-ին, Ալեքսանդրապոլի քաղաքային խորհրդի արտակարգ նիստը որոշում է ընդունել Լևոն Սարգսյանին Ալեքսանդրապոլի պատվավոր քաղաքացու կոչում տալու մասին, նրա անունով անվանակոչելով քաղաքի հիվանդանոցներից մեկը³³:

Թուրքերի հեռանալուց հետո ևս մի քանի ամիս Ալեքսանդրապոլի տեղական իշխանությունները շարունակում են գործել մինչ ընտրությունների միջոցով տեղական իշխանությունների վերակազմավորումը: Հետագայում, երբ թուրքական վտանգն արդեն չկար, հասարակական գիտակցության մեջ սկսեցին արմատավորվել թուրքերի դեմ չկովելու, նրանց հետ գործակցելու համար ալեքսանդրապոլցիներին մեղադրելու միտումները: Ավելին, 1930-ական թվականների քաղաքական բռնաճնշումների ենթարկ-

²⁹ ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 92, թ. 99:

³⁰ Ալեքսանյան Կ. - 2020, էջ 96:

³¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 126, թթ. 90-96: Ալեքսանյան Կ. -2014, էջ 142:

³² ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2711, թ. 163:

³³ Նույն տեղում, թ. 1:

ված Ալեքսանդրապոլի պետական և քաղաքական գործիչներին ուղղված մեղադրանքներից էին նաև թուրքերի հետ գործակցելու, ժողովրդի թշնամի լինելու անհիմն մեղադրանքները: Մինչդեռ հայ պատմագիտության մեջ փորձեր չարվեցին գիտականորեն ուսումնասիրել այդ երևույթի պատճառները:

Եզրահանգում. Թուրքական բռնազավթման պայմաններում ստեղծված քաղաքային ինքնավարություն գործունեությունը բացահայտող արխիվային մեծաքանակ նյութերի ուսումնաքննությունը բերում է այն համոզման, որ քաղաքային ինքնավարությունը, միջնորդ հանդիսանալով հայ բնակչության և թուրք զինվորականների միջև, թեև չէր կարող ազատ մնալ թուրքական իշխանությունների ազդեցությունից, սակայն աշխատել է հնարավորության սահմաններում պաշտպանել խաղաղ բնակչության շահերը, զսպել թուրքական բռնություններն ու կամայականությունները:

**ДЕЯТЕЛЬНОСТЬ МЕСТНЫХ ОРГАНОВ ВЛАСТИ В
АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ ОТ МАЯ
ДО ДЕКАБРЯ 1918 ГОДА
Алексаян К. В., Абреян Э. М.**

Ключевые слова: *городская администрация, городской совет, турецкие власти, беженцы, политическая ситуация, армянское население, война, конференция по примирению.*

После майских героических сражений, вынужденные смириться с независимостью Армении, турки не жалели сил для резни, грабежа населения, ослабления и экономического разрушения страны в оккупированных районах Восточной Армении, сделав невозможным существование государства в Армении.

Якобы для предотвращения насилия армян над мусульманами, для установления легитимности, для установления законности и порядка вообще, для того, чтобы вообще узаконить свои действия, они учредили в оккупированном Александрополе местные органы власти, городской совет и управление.

В рамках статьи мы приступили к изучению деятельности местных органов власти, созданных в период турецкой оккупации Александрополя, и оценок, данных им современниками.

**ACTIVITIES OF LOCAL AUTHORITIES IN
THE PROVINCE OF ALEXANDROPOL IN MAY-DECEMBER 1918
Aleksanyan K. V., Abreyan H. M.**

Key words: *City administration, city council, Turkish authorities, refugees, political situation, Armenian population, war, reconciliation conference.*

In 1918 after the May heroic battles, having to reconcile with Armenia's independence, the Turks spared no effort to massacre, plunder the population, weaken and destroy the country economically in the occupied regions of Eastern Armenia, making it impossible for the state to exist in Armenia.

In order to prevent their violence against the Muslims, to establish legitimacy, to establish law and order, in general, in order to legitimize their actions, they set up local authorities in the occupied Alexandropol, a city council.

In the framework of the article, we have started to study the activities of the local authorities created during the Turkish occupation in Alexandropol and their assessments by their contemporaries.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Ալեքսանյան Կ. -2011**, Փաստաթղթեր 1918թ. մայիսին թուրքական բանակի կողմից Ալեքսանդրապոլի գրավման և քաղաքային ինքնավարության նոր մարմինների ձևավորման վերաբերյալ// Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան:
2. **Ալեքսանյան Կ. -2005**, Տեղական կառույցների օգտագործման թուրքական քաղաքականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1918-1921թթ.//ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.8, Գյումրի:
3. **Ալեքսանյան Կ. -2014**, Ալեքսանդրապոլի գավառում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի զեկուցագրերը Արտաքին գործերի նախարարին՝ ներկայացուցչության գործունեության և Ալեքսանդրապոլի գավառի իրադրության վերաբերյալ (1918 սեպտեմբեր-դեկտեմբեր) // Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, թիվ 122:
4. **Ալեքսանյան Կ. -2020**, Ալեքսանդրապոլի գավառի բնակչության կորուստները թուրքական բռնազավթման ընթացքում, Գյումրի:
5. **Ավետիսյան Հ., -2020**, Հայկական հարցը 1918թ. , Երևան:
6. **Խաչատրյան -2010**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, կազմ Վ. Ղազախեցյան և ուրիշներ, Երևան:
7. **Համահայկական խորհրդակցություններ -2004**, (1912-1920թթ.), խմբ. Վիրաբյան Ա., Երևան:
8. Հայ ժողովրդի կորուստները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին // «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ. Ա. Չաքառյան, Երևան, 2005:
9. **Վիրաբյան Ա., Ալեքսանյան Կ. -2020**, «Երևանի թեմի Ծիրակի շրջանի փոխառաջնորդ Արտակ վարդապետ Սմբատյանի հուշերը 1918թ. մայիսի 15-ին Ալեքսանդրապոլը թուրքական զորքերի կողմից գրավելու մասին // «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, ՀԱԱ հրատ., N 129:
10. ՀԱԱ (Հայաստանի ազգային արխիվ), ֆ. 105, ց. 1, գ. 2710, թ. 1-2: թ. 5: թ. 8: թ. 20:
11. ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2711, թ. 1: թ. 3: թ. 4: թ. 4-5: թ. 6: թ. 163:
12. ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2713, թ. 8-9: թ. 40-41:
13. ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2758, թ. 20: թ. 28: թ. 29:
14. ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2768, թ.51: թ. 166: թ. 265 -266:
15. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 97, թ. 26: գ. 125, թ. 8: գ. 126, թ. 1-2:
16. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 126, թ. 46-47: թթ. 90-95: թ. 96:
17. ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 38, թթ.16-17: գ. 92, թթ. 99:

Ընդունվել է՝ 20. 02. 2022
Գրախոսվել է՝ 28. 04. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակների մասին

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
ավագ գիտաշխատող, էլ հասցե՝ teachersunionshirak@gmail.com

Հերմինե ԱԲՐԵՅԱՆ՝ Գյումրու Գր. Լուսավորչի անվ. թիվ 31 դպրոցի
պատմության ուսուցչուհի, էլ հասցե՝ hermineabreyan@gmail.com

Ք Ա Ղ Ա Ք Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ПОЛИТОЛОГИЯ
POLITOLOGY

ՀՏԴ՝ 324

DOI: 10.52971/18294316-2022.25.1-99

ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ
«ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՍՏԵՂԾՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Արտակ Հովհաննիսյան

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Բանալի բառեր՝ Պաղեստին, Իսրայել, Արևմտյան ափ, Գազա, ինքնավարություն, Պաղեստինի ազատագրության կազմակերպություն:

Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրության առարկա է դարձել պաղեստինյան հակամարտության կարգավորման գործընթացում «երկու՝ արաբական և հրեական պետությունների ստեղծման» հայեցակարգը, որը՝ առաջարկվելով 1940-ական թթ., արդիական է մնում մինչ օրս:

Նախաբան. Առաջին աշխարհամարտի ընթացքում բրիտանական երկդիմի քաղաքականությունը նախադրյալներ ստեղծեց Պաղեստինում արաբա-իսրայելական հակամարտության համար, քանի որ հրեաները ազգային պետության ստեղծման հարցում հույս էին կապել 1917 թ. նոյեմբերի 2-ի Բալֆուրի հռչակագրի հետ¹, իսկ արաբները՝ Մեքքայի շերիֆ Հուսեյնի և անգլիական գործերի հրամանատար Հենրի Մակմահոնի միջև 1915 թ. հոկտեմբերի 24-ին կնքված պայմանագրի հետ², ըստ որի՝ Անգլիան պարտավորվում էր ճանաչել արաբական անկախ թագավորությունը՝ Պաղեստինով հանդերձ: Հռչակագրի ընդունման պահին Պաղեստինի բնակչության 91%-ը կազմում էին արաբները, իսկ 9 %-ը՝ հրեաները: Խաբելով երկու կողմերին էլ՝ Մեծ Բրիտանիան 1920 թ. Պաղեստինում հաստատեց իր մանդատը, սակայն Պաղեստինը հրեաների և արաբների միջև բաժանելու գաղափարը ակտիվացավ 1936-1939 թթ. արաբական ապստամբության ընթացքում, երբ բրիտանական կառավարությունը հատուկ հանձնաժողով ուղարկեց Երուսաղեմ՝ լորդ Ռ. Փիլի գլխավորությամբ, որը տեղում իրավիճակն ուսումնասիր

¹ Khalidi W.- 1971. p. 174.

² Jeffries J. - 1971, p. 647.

րելուց հետո խորհուրդ տվեց Պաղեստինը բաժանել երկու պետությունների: Բրիտանական կառավարության հայտարարության մեջ ասվում էր, որ բաժանումը կապահովի արաբներին անկախությամբ, իսկ հրեաներին՝ ազգային օջախով, որը կվերածվի հրեական պետության³: Նմանօրինակ բաժանումը կտրականապես մերժվեց արաբների կողմից, որոնք համարում էին, որ այդ դեպքում իրենց տարածքների մի մասը վերջնականապես կկորցնեն: 1937 թ. սեպտեմբերին Ազգերի լիգայի խորհուրդը, քննարկելով այս հարցը, առաջարկեց բրիտանական մանդատային իշխանություններին շարունակել «Պաղեստինի կարգավիճակի ուսումնասիրությունը՝ կենտրոնանալով տարածքի բաժանման տարբերակի վրա⁴:

Երկրորդ աշխարհամարտը ձգձգեց գործընթացը, որից հետո 1946թ. ապրիլին ստեղծվեց Պաղեստինի հարցերով զբաղվող անգլո-ամերիկյան կոմիտե, որն առաջարկեց անգլիական մանդատի շարունակման փոխարեն իրագործել տարածքը ՄԱԿ-ի հովանավորության տակ դնելը, «մինչև անհանդուրժողականությունը արաբների և հրեաների միջև վերանա»⁵: 1946 թ. ԱՄՆ-ը առաջարկեց Պաղեստինը բաժանել արաբական և հրեական ինքնուրույն պետությունների՝ ի տարբերություն անգլիական նախագծի, որը նախատեսում էր ստեղծել Պաղեստինյան ֆեդերացիա՝ «բաղկացած 4 նահանգներից՝ արաբական, հրեական /որն ունենալու էր մասնակի ինքնուրույնություն /Նեզև և Երուսաղեմ»⁶: Իր հերթին պաղեստինյան հարցերով ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովն առաջ քաշեց երկու ծրագիր: Առաջինը՝ «մեծամասնության ծրագիրը», նախատեսում էր Պաղեստինը տնտեսական միասնության պահպանման հիմքի վրա բաժանել արաբական և հրեական ինքնուրույն պետությունների՝ Երուսաղեմը թողնելով միջազգային հսկողության տակ: Երկրորդ ծրագիրը՝ «փոքրամասնության ծրագիր», նախատեսում էր ստեղծել միասնական պաղեստինյան պետություն՝ կազմված 2 ինքնավար մասերից, Երուսաղեմ մայրաքաղաքով⁷:

1947 թ. ՄԱԿ-ի ԳԱ II նստաշրջանում ձայների մեծամասնությամբ ընդունվեց 181 (II) բանաձևը, որը նախատեսում էր Պաղեստինի բաժանում՝ արաբական պետության (Պաղեստինի 42,9%-ը) և հրեականի (տարածքի 56,5%-ը)⁸: Երուսաղեմը՝ որպես հատուկ տարածքային միավորում՝ *corpus separatum* ստանում էր միջազգային կարգավիճակ: 1948թ. սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի 194-րդ բանաձևը կրկին հաստատեց Երուսաղեմի միջազգային կարգավիճակը⁹: Բանաձևն ընդունելու պահին Պաղեստինի հողային տարածքների 93 տոկոսը պատկանում էր արաբներին, և միայն 7 տոկոսը հրեաներին¹⁰: Այսպիսի պայմաններում արաբները բնականաբար չէին կարող ընդունել Պաղեստինի այսօրինակ բաժանումը: Մյուս կողմից, հրեաների համար Պաղեստինի առաջին

³ John R., Hadawi S.- 1970. p. 275.

⁴ John R., Hadawi S.- 1970. p. 277.

⁵ Department of Statet -1946.

⁶ Roosevelt K.-1971. p. 516.

⁷ Report to The General Assembly-1947.

⁸ Muhammad Z.- 1948. pp. 6-23.

⁹ Report To The General Assembly- 1947.

¹⁰ Roosevelt K.- 1948. pp.13-16.

բաժանումը փաստացի եղել էր 1922 թ. երբ Անգլիան առանձնացրեց Անդրհորդանանը¹¹, և Իսրայելի կառավարող շրջանակները հայտարարեցին, «թե արդեն գոյություն ունի Պաղեստինյան արաբական պետություն, որպիսին է Հորդանանը»¹²:

Իսրայել պետությունը հռչակվեց 1948 թվականի մայիսի 14-ին, սակայն Պաղեստինի արաբական պետություն այդպես էլ չստեղծվեց: Դրան նպաստեցին նաև հարևան արաբական երկրների եսասիրական շահերը. նրանք իրենց տեսակետներն ունեին պաղեստինցիների համար նախատեսված տարածքների վերաբերյալ, ինչպես նաև Պաղեստինի ազատագրության կազմակերպության քաղաքական ծրագիրը՝ Իսրայելի՝ որպես հրեաների ազգային միավորման գոյության իրավունքի մերժումը և պայքարը Պաղեստինի ողջ տարածքը վերադարձնելու համար¹³: 1967 թ. պատերազմից հետո իրավիճակը փոխվեց, և առաջնային դարձավ Արևմտյան ափի և Գազայի ճակատագիրը:

Արաբագետ Գրիգորյանի կարծիքով՝ «242-րդ բանաձևը կրում էր փոխզիջումային բնույթ, բայց առկա էր նաև մի էական թերություն՝ կապված գլխավորապես այն բանի հետ, որ մերձավորարևելյան ճգնաժամի հիմնական բովանդակություն կազմող պաղեստինյան հարցը, հանգեցվելով միայն պաղեստինցի փախստականների խնդրին, բանաձևում պատշաճ լուծում չէր ստացել: Երկրաշրջանի բոլոր պետություններին կոչ անելով ճանաչել 1948-49 թթ. պատերազմի հետևանքով ձևավորված սահմանները, բանաձևը առաջ չէր քաշում անկախ պաղեստինյան արաբական պետության ստեղծման հարցը: Այսպիսով, 242-րդ բանաձևը որոշակիորեն հակասում էր 1947թ. նոյեմբերի 29-ի բանաձևին, որը նախատեսում էր «արաբական պետության ստեղծում Պաղեստինում»¹⁴: Հարկ ենք համարում նշել, որ և՛ 242-րդ, և՛ 1973 թ. հոկտեմբերի 22-ին ընդունված ՄԱԿ-ի ԱԲ 338-րդ բանաձևերը երկու պետությունների ստեղծման առումով որևէ հստակություն չունենին¹⁵:

1970-ականների կեսերից Պաղեստինյան շարժման մեջ նկատվում են միտումներ Պաղեստինի տարածքի մի մասում ազգային պետություն ստեղծելու հնարավորության ճանաչման ուղղությամբ¹⁶, որի արդյունքում 1974թ. հոկտեմբերին ՊԱԿ-ը՝ որպես Պաղեստինի ժողովրդի ներկայացուցիչ, մասնակցեց ՄԱԿ-ի ԳԱ 29-րդ նստաշրջանին, որի քննարկման արդյունքը եղավ 1974թ. նոյեմբերին 3236 (XXIX) բանաձևի ընդունումը¹⁷, որով ՊԱԿ-ին շնորհվեց դիտորդի կարգավիճակ ՄԱԿ-ի բոլոր կազմակերպություններում, և ճանաչվեց պաղեստինցի արաբների ինքնորոշման իրավունքը¹⁸: Յ. Արաֆաթը հայտարարեց իր պատրաստակամությունը բարձրացնելու Պաղեստինի

¹¹ Muhammad Z.-1948. pp. 6-23.

¹² Briscoe R.- 1971. p. 446.

¹³ The Palestinian National Charter-1971. p. 393.

¹⁴ Գրիգորյան Հ.- 1987, էջ 47:

¹⁵ Building for Peace in Middle East: pp. 147-148.

¹⁶ Political programme -1977. p. 449.

¹⁷ Дмитриев Е., Лапунин С., Носенко В., Звягельская И.- 1988. с. 223

¹⁸ Gresh A. PLO: -1988.

դրոշը, թեկուզ միայն Արևմտյան ափին գտնվող Երիթով քաղաքում կամ պաղեստինյան տարածքի որևէ մասում, նույնիսկ եթե դրա լայնությունը 5կմ ոչ ավելի է¹⁹:

1981թ. սեպտեմբերի 1-ին ԱՄՆ-ի նախագահ Ռեյգանի ծրագիրը, ըստ էության, մերժում էր 2 պետությունների հայեցակարգը, բայց ճանաչում էր պաղեստինցիների ինքնավարությունը Հորդանանի հետ նրանց ասոցիացիայի որոշակի ձևերի պայմաններում, Իսրայելի կողմից գորքերի որոշակի հետքաշման և միասնական Երուսաղեմի պահպանման պայմաններում²⁰:

Մերձավորարևելյան կարգավորման երկրորդ՝ արաբական ծրագիրը, իր բովանդակությամբ այն խիստ մոտ էր երրորդ ծրագրին, որը կոչվում էր «Բրեժնևի ծրագիր»²¹: Առաջարկվում էին իսրայելական գորքերի դուրսբերում 1967 թ. արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ գրաված տարածքներից, «Հորդանան գետի արևմտյան ափում և Գազայում պաղեստինյան արաբական պետության ստեղծում, պաղեստինցի փախստականների վերադարձ»:

Պաղեստինի Ազգային խորհրդի 19-րդ նստաշրջանում՝ 1988 թ. նոյեմբեր, Ալժիր, միակողմանիորեն հռչակվեց Պաղեստին պետությունը Հորդանանի Արևմտյան ափում, Գազայի հատվածում և Երուսաղեմի արաբական մասում (Ալ-Քուդս)²²: Միննույն ժամանակ, Յասեր Արաֆաթը հրապարակային հայտարարություն արեց Պաղեստինի բաժանման մասին ՄԱԿ-ի ԳԱ 1947 թ. 181 և ՄԱԿ-ի ԱԽ 1967 թ. 242 բանաձևերի ճանաչման մասին, փաստացի ընդունելով Իսրայելի դուրսբերումը գրավյալ տարածքներից՝ խաղաղության հաստատման դիմաց սկզբունքը²³:

Մադրիդյան խաղաղության կոնֆերանսը (1991թ. հոկտեմբեր) խաղաղության և Իսրայելի ճանաչման դիմաց առաջարկեց 1967թ. պատերազմի ժամանակ Իսրայելի կողմից օկուպացված տարածքների փոխանակում: Պրիմակովի կարծիքով, «Արաբական պետությունների և ՊԱԿ-ի համաձայնությունը Մադրիդյան բանաձևին նշանակում էր 1948-1949 թթ. առաջին արաբա-իսրայելական պատերազմի արդյունքների ճանաչում, որի արդյունքում ընդլայնվեց Իսրայելի տարածքը»²⁴:

1992-1993 թթ. Օսլոյի Խաղաղության գործընթացի նպատակը, ինչպես նշված է 1993 թ. սեպտեմբերին²⁵ ստորագրված Սկզբունքների հռչակագրի I հոդվածում, ՄԱԿ-ի ԱԽ-ի 242 և 338 բանաձևերի հիման վրա վերջնական կարգավորման հասնելն էր: Համաձայնագիրը կրում էր հետևյալ վերնագիրը. «Հռչակագիր ժամանակավոր ինքնավարության սկզբունքների մասին»²⁶, որի նախաբանում ասվում էր. «Իսրայելի կառավարությունը և ՊԱԿ-ը համաձայն են ճանաչել միմյանց քաղաքական իրավունքները՝ հասնելու համար վերջնական և համապարփակ խաղաղության պայմանագրի կընթ-

¹⁹ Walker T. -2003. p. 130.

²⁰ Овинников Р.- 1986. с. 278.

²¹ Պրիմակով Ե.- 1987, էջ 360:

²² Political Statement -1990. p. 264.

²³ Wallach John & Janet Arafat- 1992. p. 453.

²⁴ Примаков Е.- 2009.

²⁵ The Israeli-PLO Declaration -1996. Ap. XIV.

²⁶ The Israel-Palestinian Agreement: -1993.

ման»²⁷: Համաձայնագիր նախատեսում էր առավելագույնը հնգամյա անցումային փուլ՝ ազատ ընտրությունների արդյունքում ձևավորված պաղեստինյան ինքնակառավարվող իշխանությանը, որի ավարտին ՄԱԿ-ի ԱԽ-ի 242 և 338-րդ բանաձևերի վրա պետք է ձևավորվեր պաղեստինյան անկախ պետությունը: Պաղեստինյան ազգային խորհրդի ընտրությունները նշանակվեցին 1996 թ. հունվարին և նշված ժամկետում էլ տեղի ունեցան: 1999 թ. ժամկետը լրանալուց հետո, Պաղեստինյան պետություն չստեղծվեց, և նոր նախաձեռնություն՝ 2 պետությունների սկզբունքի հետ բանակցային ֆորմատով տեղի ունեցավ 2000 թ. ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ՄԱԿ-ի և Ռուսաստանի նախաձեռնությամբ: Առաջարկվող «Ճանապարհային քարտեզը» սահմանում էր քայլ առ քայլ անկախ Պաղեստինի պետության ստեղծում: Խաղաղության բանակցությունները վերսկսվեցին 2007թ. Աննապոլիսում, սակայն Արևմտյան ափի հրեական բնակավայրերի առկայությունն ու աճը դարձան գլխավոր բանակցային խոչընդոտը: Պաշտոնապես, իսրայելական բնակավայրերը զբաղեցնում են Հորդանան գետի Արևմտյան ափի տարածքի ընդամենը 1,7%-ը, սակայն բնակավայրերի շուրջ մունիցիպալ գոտիներով, անվտանգության գոտիներով և բնակավայրերը կապող ճանապարհներով, իսրայելական ենթակառուցվածքները, ըստ ՄԱԿ-ի, զբաղեցնում են գրեթե 40%-ը: Դրանով Արևմտյան ափի պաղեստինյան բնակչությունը բաժանված է մի քանի մեկուսացված կանտոնների՝ իսրայելական պաղեստինյան գլխավոր քաղաքների շուրջը և շրջապատված անցակետերով: Իսրայելը վերահսկողություն է պահպանում Գազայի և Արևմտյան ափի միջև մարդկանց և ապրանքների տեղաշարժի վրա: Մյուս կողմից՝ ինքնավարության հաստատումից հետո մոտ 2 տասնամյակ պաղեստինցիները չկարողացան պետականության լուրջ հիմքեր ստեղծել: Պաղեստինի տնտեսության ներկայիս վիճակը շատ ավելի վատ է, քան 15-20 տարի առաջ, բյուջեի 30%-ը արտաքին օգնությունն է, իսկ ինքնավարության բոլոր կառույցներում կոռուպցիայի բարձր մակարդակը բացասաբար է անդրադառնում ողջ իրավիճակի վրա²⁸:

Այժմ երկու պետությունների սկզբունքի իրականացման իրական պայմանների բացակայության պայմաններում պաղեստինցիները վերադառնում են հակամարտությունը մեկ պետության սկզբունքի հիման վրա լուծելու գաղափարին: Առաջարկներ են արվում Պաղեստինի ինքնավարության լուծարման և տարածքների կառավարումը 1994 թ. առաջ սխեմայով վերադարձնելու հնարավորության մասին: Նույնիսկ Պաղեստինյան ռազմավարական խումբը, գտնվելով Եվրոպայում²⁹ և 2008 թ. Մեծ Բրիտանիայում ներկայացնելով իր մանիֆեստը երկու պետությունների սկզբունքի պաշտպանությամբ, այդ մոտեցումը դիտարկում է ավելի շուտ որպես զգուշացում, եթե Իսրայելը արգելափակի մի պետության ստեղծումը: Անշուշտ, տասնամյակների պայքարի արդյունքում պաղեստինցիների հակվածությունը մեկ պետության գաղափարին կարելի է որակել որպես ազգային ողբերգություն, եթե հաշվի առնենք, որ նրանք այդպես էլ չեն ուզում հաշտվել Իսրայելի գոյության հետ:

²⁷ Declaration. -1993.

²⁸ Bitterlemons.-2008. Ed. 38, Vol. 6 // <http://www.bitterlemons-international.org/previous.php>

²⁹ The Jerusalem Review -2006-2007. p. 67.

Մյուս կողմից, ստատուս քվոյի պահպանումը և երկու պետությունների սկզբունքով բանակցային գործընթացի բացակայությունը Իսրայելին հանգեցնում են մեկ պետության կերտման իրականության: 5-6 տարի հետո արաբները կկազմեն բնակչության մեծամասնությունը կամ առնվազն 40%-ից ոչ պակաս, որի արդյունքում Իսրայելը երկարաժամկետ հեռանկարում չի կարողանա պահպանել իրեն որպես հրեա ժողովրդի պետություն, որտեղ մեծամասնությունը պետք է լինեն հրեաները:

Իսրայելցի հայտնի պատմաբան և քաղաքագետ Ա.Մասերը այս կապակցությամբ նշել է. «Վերջացավ այն իդեալական իրավիճակը, որը մենք ժառանգեցինք 1967թ.-ից հետո, երբ, ինչպես մեզ թվում էր, այնքան ժամանակ ունեինք, որքան ուզում էինք ոչ մի որոշում չընդունելու համար»³⁰: Վերջերս Մերձավոր Արևելքի փորձագիտական շրջանակներում առաջարկվում է Հորդանանի հետ Արևմտյան ափի, իսկ Եգիպտոսի հետ Գազայի հատվածի ինտեգրումը: Դա լուրջ չէ, քանի որ արաբական երկու երկրներն էլ պատրաստ չեն ստանձնելու այդ պատասխանատվությունը: Եգիպտոսի համար, որը երկար տասնամյակներ շարունակ ներքին պայքար է մղում իսլամական արմատական խմբավորումների՝ Մուսուլման եղբայրների դեմ, դա ռիսկային կարող է լինել: Հորդանանում, ի տարբերություն 1940-50-ականների, երբ Հաշիմյան դինաստիան իրեն ողջ Պաղեստինի իրավատերն էր համարում, այժմ կա կոնսենսուս սեփական ազգային ինքնության վերաբերյալ՝ արտահայտված «Հորդանանը Հորդանանն է» բանաձևով: Հորդանանում արդեն ապրում է գրեթե 2 միլիոն պաղեստինցի՝ բնակչության մոտ մեկ երրորդը: Պետության մեջ միլիոնավոր պաղեստինցիների լրացուցիչ ընդգրկումն անխուսափելիորեն վտանգում է Հորդանանի և նրա ազգային էլիտայի շահերը³¹:

Եզրահանգում. Այսպիսով, կարծում ենք՝ խնդրի կարգավորումը երկու պետությունների հայեցակարգի կիրառմամբ ունի հետևյալ խնդրահարույց կողմերը.

1. Պաղեստինի արաբների ինքնագիտակցության մեջ շարունակվում են պահպանվել հակամարտության ազգային-ազատագրական բնույթը և գաղութատերերից պաղեստինյան հողերի ազատագրման մղումը:

2. Մուսուլման արմատականները չեն ճանաչում Իսրայել պետությունը՝ գտնելով, որ հրեաները սեփական պետություն ունենալու իրավունք չունեն:

3. Իսրայելի բնակչության հրեական մի հատված բոլոր պաղեստինցիներին համարում է ահաբեկիչների հանցակիցներ, իսկ ծայրահեղ իսլամական խմբավորումներին՝ պետության համար վտանգ:

4. Իսրայելական հասարակության մեծ մասը չի ուզում ապագայում լինել մի պետության կողքին, որն ավելի թշնամական է Իսրայելի նկատմամբ, քան տարածաշրջանի արաբական շատ այլ պետություններ, չնայած ընդունում է տարածքային զիջումների անխուսափելի լինելը:

³⁰ <http://www.palestinestrategygroup.ps>

³¹ Lynch M. -2002. p. 47.

ПОПЫТКИ УРЕГУЛИРОВАНИЯ ПАЛЕСТИНСКОГО КОНФЛИКТА НА «ПРИНЦИПЕ СОЗДАНИЯ ДВУХ ГОСУДАРСТВ»

Оганнисян А. Г.

Ключевые слова: *Палестина, Израиль, Западный берег, Газа, автономия, Организация освобождения Палестины.*

В рамках данной статьи изучена концепция «создания двух государств» в процессе урегулирования палестинского конфликта. Среди различных предложений по урегулированию «двухгосударственное» решение, а именно создание двух отдельных – арабского и еврейского государств в Палестине, всегда считалось одним из наиболее вероятных вариантов разрешения конфликта. Он остается актуальным и по сей день.

“THE TWO-STATE CONCEPT” AS A PRINCIPLE FOR THE SETTLEMENT OF THE PALESTINIAN CONFLICT

Hovhannisyán A. H.

Key words: *Palestine, Israel, West Bank, Gaza, autonomy, Palestine Liberation Organization.*

Within the framework of this article, the concept of "creating two states" in the process of resolving the Palestinian conflict has been studied. Among the various proposals for a settlement, a "two-state" solution, namely the creation of two separate Arab and Jewish states in Palestine, has always been considered one of the most likely options for resolving the conflict. It remains relevant to this day.

Գ ր ա կ ա ն ն լ թ յ ու ն

1. **Գրիգորյան Հ. -1987**, Միբիայի ձախբաասական դեկավարության դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ 1967-1970 թթ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, հ.14, Երևան:
2. **Պրիմալով Ե. -1987**, Մի դավադրության պատմություն, Երևան:
3. **Дмитриев Е., Лапутин С., Носенко В., Звягельская И., -1988.** См. раздел: Палестинское движение сопротивления // Новейшая история арабских стран Азии. М., "Наука".
4. **Овинников Р. -1986**, Зигзаги внешней политики США, от Никсона до Рейгана.
5. **Примаков Е. -2009**, Основополагающий конфликт // Россия в глобальной политике. № 3.
6. **Binationalism Not Partition -1971**, Binationalism Not Partition From Haven To Conquest Beirut.
7. **Bitterlemons -2008.** Ed. 38, Vol. 6 // <http://www.bitterlemons-international.org/previous.php>
8. **Briscoe R. -1971**, The Polish Robbinat and Jewish Emigration To Palestine, From Haven to Conquest, Beirut.
9. **Declaration... -1993**, Declaration of Principles on Interim Self-Government Authority. Washington.
10. **Department of State -1946**, Department of State Anglo-American Committee of Inquiry: Report to The US Government and His Majesty's Government in the UK, Washington.
11. **Jeffries J. -1971**, Analysis of The Balfour Declaration. From Haven to Conques.
12. **John R., Hadawi S. -1970**, The Palestine Diary. Volume one 1914-1945. Beirut.

13. **Khalidi W. -1971**, From Haven to Conquest. Readings in Zionism and the Palestine Problem Until 1948, Beirut, The Institute for Palestine Studies.
14. **Lynch M. -2002**, Jordan's Identity and Interests/ Identity and Foreign Policy in the Middle East / Ed. by Sh.Telhami
15. **Muhammad Z. -1948**, KH. Palestine in The UNO, -1948, From Haven To Conquest.
16. **Palestinian National Charter -1968**, Palestinian National Charter Adopted by the Fourth Palestine National Assembly. Beirut: Institute for Palestine Studies - Kuwait: The University of Kuwait.
17. **Political Statement -1988**, Political Statement of the 19th Session of the Palestine National Council, Algiers, Middle East Contemporary Survey / Eld. by A. Ayalon, H. Shaked. Vol. XII.
18. **Political programme -1974**, adopted by the twelfth session of the Palestine National Council // International Documents on Palestine. Beirut: The Institute for Palestine Studies - Kuwait: The University of Kuwait.
19. **Report to The General Assembly -1947**, Report to The General Assembly By The UN Special Committee on Palestine, Official Records of The Second Session of GA. Supplement #11
20. **Roosevelt K. -1948**, The Partition of Palestine, A Lesson in Ppressure Politics, The Middle East Journal, II, # 1.
21. **Wallach John & Janet Arafat -1992**, In the Eyes of the Beholder. London: Mandarin.
22. **Walker T. -2003**. Arafat: the Biography, London.
23. **The Israeli-PLO Declaration -1996**, The Israeli-PLO Declaration of Principles // Makovsky D. Making Peace with the PLO. Boulder: Westview Press. Appendix XIV.
24. **The Israel-Palestinian Agreement -1993**: The Israel-Palestinian Agreement In the Footsteps of Camp David, Appendix D, International Affairs Report, Anti-Defamation League, New York.
25. **The Jerusalem Review - 2006-2007**. A Journal of Foreign Policy. Vol. 1. № 1.
26. <http://www.palestinestrategygroup.ps>

Ընդունվել է՝ 02. 03. 2022
Գրախոսվել է՝ 14. 03. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Արտակ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
Շիրակի պետական համալսարանի քաղաքագիտության և իրավունքի
ամբիոնի, վարիչի ժ/պ, դոցենտ , էլ. հասցե՝ artakh76@mail.ru

Գ. ՄՐՎԱՆՃՏՅԱՆՑԻ՝ ՄԱՆԿԱՇԽԱՐՀԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ
(բանահյուսական այլ նյութերի համադրությամբ)

Հասմիկ Մատիկյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ բանահյուսություն, տեքստ, հեքիաթ, օրորոցային, ոճական հնար, օրորոց, բարբառ:

Աշխատանքում ներկայացվում են երեխային ու նրա պարագաներին առնչվող բանահյուսական պատահիկներ, որոնք տեղ են գտել Գարեգին Սրվանձտյանցի գրառած նյութերում. առկա են նաև տեքստային այլ հյուսվածքներ: Ուսումնասիրությունը կատարվում է լեզվա-բանագիտական տեսանկյունից՝ համեմատական մեթոդի կիրարկմամբ:

Լախարան. Գարեգին Սրվանձտյանցը՝ որպես նշանավոր բանահավաք, ազգագրագետ, ունի բանահյուսական նյութերի ուշագրավ գրառումներ: Մեր նպատակն է ներկայացնել նրա գրառումներից այն պատահները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են մանկաշխարհին՝ հայոց մանկանոցին: Անդրադարձել ենք նաև մանկական բանահյուսական (օրորոցային) և ժողովրդական այլ տեքստերի (հեքիաթ) լուսաբանմանը:

Գ. Սրվանձտյանցի «Իմաստուն Ջուլիակն» հեքիաթի տարբերակում ունենք *երեխայի և օրորոց* պատկերի հետևյալ նկարագիրը. *Ինկան իմաստուն մարդ փնտրել և պատահեցան տան մը ներս մտան, տեսան, որ տղան օրորոցի մեջը, և մեկը չ'կա տուն, ու օրորոց կ'օրորվի. Քովի տունը մտան, նույնպես օրորոցը կ'օրորվի, և մարդ չկա: Ջարմանք կը բռնե զիրենք ու կ'իջնան տակի տունը. կը տեսնան, որ ջուլիակ մը կտավ կը գործե. թել մի կա կապած մըքուքի մի ծայրը, թել մի ան սանդրին կապած. կտավը գործելու հետ՝ թելերը կը շարժին, և երկու օրորոց ու տանիքի եղեգն կերերան¹:*

Բովանդակային գրեթե նույն նկարագիրն ունենք հայ ժողովրդական «Ջուլիակ» հեքիաթում: Հատկանշական է, որ երկու հեքիաթներում էլ նշված հատվածներն ա-

¹ Սրվանձտյանց Գ. -1978, էջ 459:

ռանցքային են. ջուլիակի հնարամիտ լինելը նկարագրվում է օրորոցի՝ ճղորի կապելու և օրորվելու հետ. *մարդ լե ֆքրավ, բերեց ուր վերն տանիք ծակեց, բերեց կրկան փետրմ հանեց տանքեն, բերեց կապեց ուր դազկրիի մաքուքն, հ'ետևե կավ բերեց, լցեց գուր ու ճժու ճղոր կապեց թելըմ*²: Երկու տարբերակներում էլ գործողությունների հարուստ շարք է թվարկվում: Ժողովրդական հեքիաթում *ջուլիակ մաքուր կթալե՝ ճղոր կօրորվի* տողերը կրկնվում են՝ շեշտադրելով և ընդգծելով ջուլիակի հնարամտությունը.

*Կնիկ կասե. - Մարդ, էսօր վլացք կենիմ, տանիք ցորեն կպարզիմ, ճրճուղներ պըտի քշիս, թունդրա կավ լե պըտի շաղիս, ճիժ լե պըտի օրորիս...*³

Թե՛ Սրվանձտյանցի գրառումներում, թե՛ «Հայ ժողովրդական հեքիաթների» բազմահատորյակում օրոր/ճղոր տարբերակային միավորներն ունենք. մի դեպքում՝ *օրորոց կօրորվի*, մյուս դեպքում՝ *ճղոր կօրորվի*:

Հայոց լեզվի բարբառային բառարանում ճղոր բառն ունի հետևյալ նշանակությունը. *Վերնից կապած պարան, որի մեջ դնում են երեխային, կախովի օրորոց, ճոճք: Ճղոր* բառից ունենք նաև *ճղորել* բայը, որը նշանակում է *ճլորի ճոճքի մեջ օրորել, տարուբերել*⁴:

Սրվանձտյանցի գրառումներում առանձնանում են նաև գովք պարունակող օրորներն ու խաղերգերը: Այս առումով նշենք *Օրո՛ր, օրո՛ր, քուն ունիս* սկսվածքով օրորը.

Օրո՛ր, օրո՛ր, քուն ունիս,

Պեշիկթաշը տուն ունիս,

Մարգրտե յորդան ունիս...⁵

Ռ. Գրիգորյանի գրառած նյութերում այս օրորոցային տեքստը նույնպես առկա է: Ավելին՝ նրա «Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր» խորագիրը կրող համահավաք ժողովածուի ծանոթագրություն բաժնում նշվում է, որ այս օրորերգը կազմված է եղել մի շարք օրորների միախուսումից: Ենթադրաբար կարող ենք նշել ներքին տրամաբանական և կառուցվածքային միատարրության հենքը:

Մոր օրորերգն ու օրորելը՝ որպես մանկան խնամքի կարևոր բաղադրիչ, հիշվում են ամբողջ կյանքի ընթացքում: Մեծն բանահավաքի գրառումներում ևս այս մասին ակնհայտ տողեր կան.

Աղջիկ, աղջիկ, իու՛ր կ'ոլրտիս էրերուն,

Մամիդ ի՛նչ քաշեր է քեզի բերելուն.

*Գըշեր քուն չէ քրներ օրան օրրելուն*⁶:

Ընդգծենք, որ երերալը՝ գնալ-գալը հատուկ է օրորոցին: *էրերուն, բերելուն, օրրելուն* նույնահանգ, ուղիմահանգ միավորներն ստեղծում են օրորոցի վիճակային բնութագիր: Ուշագրավ է մեջբերված տողերում նշված *օրան օրորելը*-ը, որը տեքստը դարձնում է հուզիչ և բնորոշ է հին հայերենին (նմանությամբ՝ *լաց լացեցին*):

² ՀԺՀ -1985, էջ 407:

³ Նույն տեղում:

⁴ ՀԼԲԲ -2004, էջ 401:

⁵ Սրվանձտյանց Գ. -1978, էջ520:

⁶ Սրվանձտյանց Գ. -1978, էջ544:

Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանում» վկայվում են *օրանը օրել*- բրբ. խնամել, *օրրանը դնել օրորել*/բրբ/-երկար բամբասել դարձվածքային միավորները:⁷ Ըստ էության, *Գրչեր քուն չէ քրներ օրան օրրելուն* տողում ընդգծվում է երեխայի խնամողի հոգատարությունը:

Մայրը իր գավակին զվարճացնելու համար երգել է .

Ճոր գնա, բոր էկո՛,
Հըմա կ'իգա մոնձ մաման,
Բերե քեզի արմադան,
Ուտես, ուտես, մեծանաս,
Չոչուներուն հեծընաս...

...

Նաննի ըսեմ՝ քընցնեմ,
Նուշ ու շաքար կերցնեմ⁸:

Նշված տողերում կարծես խախտվում է քնամուտի և մանկախաղացի հստակեցումը, որը նկատելի է նաև Ռ. Գրիգորյանի գրքում:

Ըստ ժողովրդական մտածողության՝ երեխան պետք է խաղ կապի, աշխուժանա, թմրի ու քնի, խաղն ու քունը պետք է դիտարկել կարևոր բաղադրիչներ: Խաղալը ենթադրում է ուժի ծախսում, որին կհաջորդի հոգնությունը. *Նաննի ըսեմ՝ քընցնեմ, Նուշ ու շաքար կերցնեմ* տողերը տեքստային տիրույթում ձեռք են բերել բանաձևային նշանակություն: Նուշ ու շաքար բանաձևի մեջ արտացոլված են մայրական սիրո բոլոր դրսևորումները:

Ռ. Գրիգորյանի գրառումներում հանդիպում են *Ճոր, ճոր միավորով, նեննի ըսեմ քնացնիմ* ձևերը.

Նեննի ըսիմ, քնացնիմ,
Շաքրեվ մեղրով կշտացնեմ.
Ճո՛ր, ճո՛ր, ճո՛ր կընոյ,
Պապանին պեշոր օո կընոյ,
Տար ճամբեքը համ էրոյ,
Պապանին ծծիկդ առ կընոյ⁹:

Ճոր բառն ունի ուրույն նկարագիր. մանկական խաղ, երբ երեխայի թևերից բռնելով՝ ետ ու առաջ են քաշում և ճորճորի երգը երգում... գնալ-գալը ճորճի երերուն ընթացքն է՝ աջ ու ձախ գնալը: Մոնոտոն գործողությունները բերում են նիրհ: Հակադրենք *թռի, թռի* աշխուժացնող մանկախաղաց տեքստերի հետ, *թռի, թռի*-ն վեր ու վարն է, *ճոր ճորի* մեջ օրոցքի համանմանություն կա:

Մանկանց ուղղված որոշ տեքստեր ունեն բարոյախրատական նշանակություն՝ հացը տան անդամի հետ կիսելու ցանկությամբ.

Ճոր գնա, բոր էկո,

7 Բեդիրյան Պ.-2011, էջ1396:

⁸ Սրվանձոյանց Գ. -1978, էջ545:

⁹ Գրիգորյան Ռ. -1970:

Եղիկ ու մեղրիկ բեր,
Կեսն իտանք լղճորկան,
Կեսն իտանք պղճորկան,
Կեսն իտանք մամային,
Կեսնի իտանք դադային,
Կեսն իտանք բաբային.....¹⁰

Եղիկ ու մեղրիկ բառերում նվազափաղաքշական մասնիկներ ունենք, որոնք բնորոշ են մանուկ հասցեատիրոջ դիմելաձևին:

Բանահյուսական բազում օրոքներում *ճոր-ճորը* և *նանի ասեմ* կամ նմանատիպ այլ քնարեր միավորներ համընթաց օգտագործվում են նույն տեքստային տիրույթում:

Մանկական խաղերի բացառիկ անուններ ու վերջիններիս բացատրություններ է ամփոփում Գ. Սրվանձտյանցի I հատորը («Բառարան» խորագրով): Ընդգծենք մի քանիսը՝ *ականջքաշուկ* (խաղ մի է մանկանց. մեկը միրգ կը ձգե գետին, որո վրա կը ժողվի մանկտին...), *յոլ* (խաղ ինչ մանկանց), *կտրոց* (մանկանց իրարու ետև վազելու խաղ մը)¹¹:

Եզրահանգում. Ամփոփելով նշենք, որ թեմատիկ այլ արծարծումների համատեքստում ևս Գարեգին Սրվանձտյանցը հայացքը բևեռում է մոր ու մանկան թեմային: Այս տեսակետից՝ նրա գրառումները, ինչպես նաև հեղինակային խոսքը, անշուշտ նպաստաբեր են բանահյուսական տեքստերի խորքային ու բազմաշերտ ուսումնասիրությանը:

Հարկ է նշել այն իրողությունը, որ թե՛ Գ. Սրվանձտյանցի գրառումներում, թե՛ բանահյուսական այլ նյութերում դժվար է սահմանագծել օրորոցայինի ու մանկախաղաց երգերի տարածքը, որը մեծ մասամբ պայմանավորված է օրոր երգողի կամ խաղ կապողի գովքով:

ЗАМЕТКИ Г. СРВАНДЗТЯНЦА, ОТНОСЯЩИЕСЯ К МИРУ РЕБЁНКА (на основании других фольклорных материалов)

Матикян А. А.

Ключевые слова: фольклор, текст, сказка, колыбельная, стилистический прием, колыбель, диалект.

В работе представлены фольклорные фрагменты, связанные с ребенком и его аксессуарами, которые имели место в материалах Гарегина Срвандзтянца. У нас есть другие фрагменты текста. Надо отметить, что работа сделана с лингвистических позиций, применен сравнительный метод.

¹⁰ Սրվանձտյանց Գ. -1978, էջ 545:

¹¹ Նույն տեղում, էջ 328:

Следует отметить, что как в материалах Г. Срвандзтянца, так и в других фольклорных источниках, адресованных детям, нет четкой границы между колыбельной и потешкой. Одной из основных причин является похвала ребенка. Мать или воспитатель вкладывает в свою речь похвалу независимо от текста.

G. SRVANTSYANTS' FIELD WORK ON NURSERY (With special Reference to other Folklore materials)

Matikyan H. H.

Key words: *folklore, text, fairy tale, lullaby, stylistic device, cradle, dialect.*

The article discusses the folklore fragments that are interwoven for the child and his/her nursery. Garegin Srvantsyants' recorded materials are at our disposal; we have compared them to other textual components. The paper will be carried out by the implementation of comparative analysis in the context of Linguo-Folkloristics.

It is worth mentioning that both in G. Srvandztyants' materials and in other folklore sources addressed to children, there is no exact boundary between a lullaby, or a nursery rhyme. One of the main reasons is the praise of the child. The mother or the caregiver praises the child.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Բեդիրյան Գ.-2011**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Գրիգորյան Ռ. -1970**, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
3. **ՀԺՀ -1985**, Հայ ժողովրդական հեքիաթներ, Պատրաստեց և ծանոթ. Ղազիյան Ա., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
4. **ՀԼԲԲ -2004**, Հայոց լեզվի բարբառային բառարան, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հ. 3, Երևան, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա:
5. **Սրվանձտյանց Գ.-1978**, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Ընդունվել է՝ 05. 03. 2022

Գրախոսվել է՝ 27. 03. 2022

Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ՝ բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի դասախոս, էլ. փոստ՝ hasvrej@mail.ru

ՀՏԴ՝ 81՝02

DOI: 10.52971/18294316-2022.25.1-112

**ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ
ԴԻՐՔԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ (տարժամանակյա հայեցակետ)**

Հայիկ Խաչատրյան

Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա

Բանալի բառեր՝ *քերականական մասնիկ, մասնիկավորում, տարժամանակյա տիպաբանություն, դիրքափոխություն, հոլովիչ, հոլովակերտ, բառաձև, կցական կառուցատիպ, մասնիկների շարադասություն:*

Հնդվածում տարժամանակյա տիպաբանության տեսանկյունից քննվում է հին հայերենի *քերականական մասնիկների դիրքափոխությունը*: Այդ իրողության ուսումնասիրությունն ի հայտ է բերում որոշակի տարբերություններ հայերենի տարբեր գոյավիճակների միջև. քերականական մասնիկների դիրքափոխությունն առավելապես բնութագրական է հին և արդի հայերենների հոլովման համակարգերին և ներառում է հոլովիչների ու հոլովակերտների դիրքային զանազան փոփոխությունները բառաձևերի արտահայտության պլանում, լեզվի տարժամանակյա կտրվածքում կարող է փոխվել հոլովաձևերի քերականական իմաստների արտահայտման եղանակը, ըստ որի՝ բառաձևի կառուցվածքային պլանում փոխվում է նաև մասնիկների դասավորությունը, բառի ձևաբանական կառուցվածքում քերականական *մասնիկների դիրքափոխությունը* կարող է փոխել հոլովի տիպաբանական բնութագիրը, բառաձևի կառուցվածքում քերականական մասնիկներն ունեն կայուն շարադասություն, և նրանց տարժամանակյա դիրքային փոփոխությունները պայմանավորված են լեզվակիր հանրության լեզվամտածողությամբ:

Նախաբան. Հին հայերենի քերականական համակարգը բնութագրվում է կցակա-նությամբ՝ զուգակցված թեքականությամբ, որի դիմաց արդի հայերենը հատկանշվում է թեքականության կորստով: Լեզվի քերականական համակարգի այդօրինակ փոփո-խությունները բացահայտվում են տարժամանակյա տիպաբանության մեթոդիկայով:

Տարժամանակյա տիպաբանությունն ուսումնասիրում է լեզվի տիպական հատ-կանիշների փոփոխությունները տարբեր գոյավիճակների միջև, բացահայտում է այդ փոփոխությունները պայմանավորող գործոնները, փոփոխությունների սկզբունքներն ու ուղղությունները և ցույց է տալիս լեզվի քերականական համակարգի նոր տիպական հատկանիշը կամ հատկանիշները, որոնք բնութագրական են լեզվի տվյալ գոյավիճա-կին՝ իբրև համաժամանակյա իրողություններ¹:

Ընդհանուր հայերենի նկատմամբ կիրառելով տարժամանակյա տիպաբանության սկզբունքները՝ կարելի է որոշակի գծերով ցույց տալ հին հայերենի քերականական հա-մակարգի տիպային փոփոխությունների դրսևորումները, որոնք ընթացել են նրա կա-ռուցվածքային տարբեր մակարդակներում ու կայունացել ժամանակակից հայերենում:

Լեզվի քերականական համակարգում արձանագրված քանակական փոփոխու-թյունները հանգեցնում են որակական փոփոխությունների, որի հետևանքով փոխվում է նաև լեզվի տիպաբանական բնութագիրը: Այդ կարգի փոփոխությունների դրսևորում-ներից է *քերականական մասնիկների դիրքափոխությունը*, որ դիտարկվում է տարժա-մանակյա տիպաբանության տեսանկյունից:

Ընդհանրապես, մասնիկների դիրքափոխությունը (դրափոխությունը) պատմա-կան հնչյունափոխության տեսակ է, որ հանդիպում է բառի արտահայտության պլա-նում՝ պայմանավորված մի շարք գործոններով: Օրինակ, այն գործում է իրանական փո-խառություններում, ինչպես՝ *իսշան – իշխան, նիշար – նշխար, աիշար – աշխարհ, բաիշել – բաշխել* և այլն, բարբառներում՝ *կամուրջ – կարմունջ, ականջ – անկաջ, աշ-խատել – աիշատել, լվացք – վլացք* և այլն: Դրափոխությունը կարող է կայունանալ բա-ռի արտահայտության պլանում՝ ստեղծելով հոմանշային տարբերակներ, ինչպես՝ արևմտահայերեն՝ *ձգել, խստոր* – արևելահայերեն՝ *զցել, սխտոր* և այլն:

Դրափոխության վերոբերյալ դեպքերում չի փոխվում բառերի բովանդակային պլանը՝ գրական թե բարբառային տարբերակներում, սակայն հարցն այլ է քերականա-կան մասնիկների դրափոխության պարագային: Այս դեպքում փոխվում են թե՛ բառի-մասունքները և թե՛ նրանց խոսքիմասային արժեքները:

Սույն հոդվածում տարժամանակյա տիպաբանության տեսանկյունից դիտար-կելու ենք հին հայերենի *քերականական մասնիկների դիրքափոխությունը*, որ առավե-լապես բնութագրական է հոլովման համակարգին և ներառում է հոլովիչների և հոլո-վակերտների դիրքային զանազան փոփոխությունները բառաձևերի արտահայտության պլանում:

¹ Լեզվաբանական տիպաբանության մասին տե՛ս **Маслов Ю., 2007**, էջեր 250-258: **Խաչատրյան Լ., 2017**, էջեր 272-282:

Այդ իրողությունը որոշակի դրսևորումներով դիտարկվում է ընդհանուր հայերենի զարգացման ընթացքում, երբ համեմատում ենք հին և արդի հայերենների քերականական համակարգերի տիպաբանությունը:

Չոլովական համակարգում մասնիկները ծառայում են քերականական իմաստների արտահայտմանը՝ որպես մասնիկավորման եղանակի բաղադրիչներ:

Մասնիկավորումը լեզուներում տիպաբանական հատկանիշ է: Բառաձևի կառուցվածքում յուրաքանչյուր մասնիկ բնութագրվում է որոշակի քերականական իմաստով կամ իմաստներով և նրա արտահայտության պլանում որոշակի տեղ է զբաղեցնում. մեկից ավելի մասնիկները, լեզվամտածողությամբ պայմանավորված, բառաձևի կառուցվածքում ունեն կայուն շարադասություն, և նրանց արտահայտած քերականական իմաստներն ըմբռնվում են սլվյալ լեզվամտածողությունը կրող հանրության կողմից:

Լեզվի և մտածողության հարաբերակցված փոփոխություններն արտացոլվում են լեզվում՝ առաջին հերթին, որոնք իրենց դրսևորումն են գտնում լեզվական ձևերի մեջ՝ տարածվելով հաջորդ ժամանակային կտրվածքներում:

Այդ առումով, երբ համեմատում ենք հին հայերենի և արդի հայերենի գոյականական որոշակի բառաձևերի արտահայտության պլանները, նկատում ենք, որ գոյականի հոլովաձևերում որոշ հոլովիչներ, հոլովակերտ թեքություններ և հոգնակիակերտ մասնիկներ ենթարկվել են դիրքային փոփոխությունների: Մասնիկների դիրքային փոփոխությունը չի ազդել նրանց արտահայտած քերականական իմաստների վրա. պարզապես փոխվել է հանրության լեզվամտածողությունը, որն ազդել է լեզվական միջոցների արտահայտման ձևերի վրա:

Մասնիկավորումը, որպես քերականական իմաստների արտահայտման միջոց, առավելապես բնորոշ է կցական կառուցատիպի լեզուներին, որոնք լեզուների ձևաբանական դասակարգման առանձին տեսակ են²: Կցական տիպի լեզուներում յուրաքանչյուր մասնիկ արտահայտում է մեկ հիմնական քերականական իմաստ³. միմյանց հանդիպող (բաղադրյալ) մասնիկները, ինչպես նաև առանձին մասնիկներ կարող են արտահայտել մեկից ավելի իմաստներ: Եթե հին հայերենը դիտարկենք կցականության տեսանկյունից, ապա կարող ենք ասել, որ *գաւառի* – *գաւառաց*, *ազգի* – *ազգաց* բառաձևերում –ի հոլովիչն արտահայտում է եզակի թվի և սեռական-տրական հոլովների քերականական իմաստներ, *-աց* մասնիկը՝ հոգնակի թվի և սեռական հոլովի իմաստներ: Նմանապես՝ *այգւոյ* – *այգեաւ*, *պատանոյ* – *պատանեաւ* բառաձևերում –ո մասնիկն արտահայտում է եզակի թվի և սեռական – տրական հոլովների իմաստներ, իսկ *-աւ* մասնիկը՝ եզակի թվի և գործիական հոլովի իմաստներ:

Յուրաքանչյուր քերականական մասնիկ որոշակի դիրք է զբաղեցնում՝ արտահայտելով այս կամ այն քերականական իմաստը կամ իմաստները:

² Լեզուների ձևաբանական դասակարգման մասին տե՛ս **Кодухов В. -1977**, էջեր 289-302:

³ Էդ.Ադայան -1976, էջ 690:

Այժմ դիտարկենք հոգնակի գործիական հոլովի արտահայտության պլանը և տեսնենք՝ մասնիկների ի՛նչ կարգի դասավորություն է հատուկ հին հայերենին, և արդյոք այդ դասավորությունը պահպանվել է արդի հայերենում:

Այսպես, *արտաքին թեքման* պատկանող *քաղաք, որդի, արքայ, այգի* բառերի եզակի գործիականն ունի հետևյալ կազմությունը՝ *քաղաքաւ, որդուվ, արքայիւ, այգեաւ*: Այս բառաձևերի մեջ *ա, ո, ի* ձայնավորները հոլովիչներ են, որոնք ցույց են տալիս բառի հոլովական պատկանելությունը, իսկ *-ւ* և *-վ* մասնիկները հոլովակերտներ են, որոնք ցույց են տալիս տվյալ բառի հոլովը, տվյալ դեպքում՝ գործիական⁴:

Եթե տվյալ բառաձևերի քերականական մասնիկների դասավորության կարգը համեմատենք արդի հայերենի համապատասխան հոլովաձևի՝ գործիականի մասնիկների շարադասության հետ, ապա կտեսնենք, որ արտահայտության պլանի փոփոխություն տեղի չի ունեցել (թեև առկա է մասնիկների անհամարժեքություն), հմմտ. *Քաղաքով, որդուվ, արքայով, այգ(ի)ուվ*: Այս դեպքում էլ ունենք մասնիկների նույն դասավորությունը՝ հոլովիչ, ապա՝ հոլովակերտ մասնիկ:

Այժմ դիտարկենք այդ նույն բառերի հոգնակի գործիականում մասնիկների դասավորության կարգը լեզվի տարժամանակյա կտրվածքներում:

Վերոբերյալ բառերի հոգնակի գործիականը հին հայերենում կազմվում է *-ք* մասնիկով և եզակի գործիականի հիմքով⁵. դրանք ունեն հետևյալ կառուցատիպերը՝ *քաղաքաւք, որդուվք, արքայիւք, այգեաւք*:

Փորձենք անդամատել այդ բառաձևերի կառուցվածքն ըստ հիմնական և երկրորդական ձևայինների և ցույց տալ դրանցից յուրաքանչյուրի արտահայտած քերականական իմաստը: Կստանանք հետևյալ պատկերը՝ *քաղաք-ա-ւ-ք, որդու-ն-վ-ք, արքայ-ի-ւ-ք, այգե-ա-ւ-ք*⁶:

Այս բառաձևերի կառուցվածքում հոգնակիակերտ մասնիկը՝ *ք*, շարադասորեն հաջորդում է հոլովակերտ մասնիկին և գտնվում է բառաձևերի վերջում: Եթե բառաձևերն ընկալենք ըստ մասնիկների շարադասական դիրքի, ապա արդի լեզվամտածողությամբ այդ բառաձևերի բառաքերականական իմաստները կդառնան անըմբռնելի, ինչպես՝ *քաղաք-ն-վ-ներ, որդի-ն-վ-ներ, արքա-ն-վ-ներ, այգի-ն-վ-ներ*:

Լեզվի տարժամանակյա կտրվածքում փոխվել է քերականական իմաստներ արտահայտող մասնիկների դասավորության կարգը. շարահյուսական մակարդակում փոխվել է հին հայերենի բառերի շարադասության կարգը, բառաձևերի շրջանակ-

⁴ Գ.Ջահուկյանը, քննելով հին հայերենի հոլովման միջոցների ծագումը, եզակի գործիականի վերաբերյալ այն կարծիքն է հայտնում, որ այն կարող է ծագած լինել հոգնակի ձևից՝ ք-ի՝ որպես հոգնակի տարր գիտակցվելու և այն եզակիից հանելու միջոցով, եթե միայն չենթադրենք, որ հնդեվրոպական բարբառներում հակառակը տեղի չէր ունեցել. այսինքն՝ եթե հոգնակին չէր կազմվել մի հին կորած եզակիից (*s-ի* հավելմամբ), որ հայերենը պահպանել է (**Ջահուկյան Գ. -1959**, էջ 224):

⁵ Գ.Ջահուկյանը հին հայերենի հոգնակի գործիականի ձևերը բխեցնում է հնդեվրոպական *-bh-* (*-bhis-* ով) ձևերից և նկատում, որ *-bh-*ն ձայնավորից հետո (երկու ձայնավորի միջև) տվել է *ւ* (*վ*), բաղաձայնից հետո՝ *ք*. *իւիք* բառի (բառաձևի)՝ մեջ ք-ի առկայության շնորհիվ *ւ* - ին հաջորդող *ի*-ն պահպանվել է (**Ջահուկյան Գ. -1959**, էջ 224):

⁶ Գործիականի կազմության մասին տե՛ս **Քաղաքառունի Ա. -1852**, էջեր 8, 28: **Աբրահամյան Ա -1976**, էջ 23:

ներում՝ մասնիկների շարադասության կարգը: Հին հայերենի *քաղաք -ա-ւ-ք, որդւ-ն-վ-ք, արքայ-ի-ւ-ք, այգե-ա-ւ-ք* բառաձևերի (հոգնակի գործիականի) իմաստներն արդի հայերենում դրսևորվում են մասնիկների այնպիսի դասավորությամբ, որ համապատասխանում է արդի հայերենի լեզվամտածողությանը, ինչպես՝ *քաղաք-ներ-ն-վ, որդի-ներ-ն-վ, արքա-ներ-ն-վ, այգի-ներ-ն-վ* և այլն: Արդի հայերենում, ի տարբերություն հին հայերենի, հոգնակիակերտ մասնիկը տեղափոխվել է դեպի ձախ և նախորդում է հոլովակերտ մասնիկին՝ *- ներ-ն-վ*⁷:

Այս կաղապարը հին հայերենի հոլովական հարացույցի հոգնակի թվում կրում է համակարգային բնույթ. գոյականների հոգնակի թվի հոլովման համակարգում՝ ուղղականում և գործիականում, հոգնակիակերտ *-ք* մասնիկը եզրափակում է բառաձևի կաղապարը, թեք ձևերում այդ իմաստն արտահայտվում է *ք-ց*, հերթագայությամբ, հայցականում՝ *ք-ս*, հմմտ. *տիտան-ք – տիտան-ա-ց, տիտան-ա-ց, (գ)տիտան-ս, ի տիտան-ա-ց, տիտան-ա-ւ-ք, ագարակք – ագարակ-ա-ց, ագարակ-ա-ց, (գ)ագարակ-ս, յագարակ-ա-ց, ագարակ-ա-ւ-ք* և այլն:

Արդի հայերենում համապատասխանաբար ունենք՝ *տիտան-ներ, տիտան-ներ-ի, տիտան-ներ-ի-ն, տիտան-ներ-ի-ց, տիտան-ներ-ն-վ, ագարակ-ներ, ագարակ-ներ-ի, ագարակ-ներ-ի, ագարակ-ներ-ի-ց, ագարակ-ներ-ի-ց, ագարակ-ներ-ն-վ* և այլն:

Մասնիկների դասավորության այս կարգը բնորոշ է հին հայերենի անվանական հոլովում ունեցող բառերին (գոյական, ածական, թվական, մասամբ՝ դերանուն, դերբայ և այլն), սակայն պետք է նկատի ունենալ, որ արդի հայերենում ածականն ու թվականը չեն հոլովվում, իսկ դերբայական ձևերը հոլովվում են փոխանվանաբար գործածվելիս:

Հմմտ. այդ բառերի հոլովումը հին հայերենում (հոգնակի թվում).

մեծք – մեծ-ա-ց, մեծ-ա-ց, (գ)մեծ-ս, ի մեծ-ա-ց, մեծ-ա-ւ-ք (մեծօք),

վեցք – վեց-ի-ց, վեց-ի-ց, (գ)վեց-ս, ի վեց-ի-ց, վեց-ի-ւ-ք⁸,

ընթերցողք – ընթերցող – աց, ընթերցող -ա-ց - (գ) ընթերցող -ս, ի ընթերցող -ա-ց, ընթերցող -ա-ւ-ք (ընթերցող օք),

հանգուցեալք – հանգուցել-ն-ց, հանգուցել-ն-ց, (գ)հանգուցեալ-ս, ի հանգուցել-ն-ց, հանգուցել-ն-վ-ք և այլն:

Վերոնշյալ համակարգային փոփոխություններն ամրակայվել են արդի հայերենի հոլովական կառուցատիպերում. հոգնակի թվի ցուցիչը շարադասորեն տեղափոխվել է հոլովակերտից առաջ: Այսպես՝

⁷ Գ.Ջահուկյանը նկատում է, որ հին հայերենի հոլովման սխառնը թեև գերազանցապես թեքական բնույթ ունի, բայց առկա է նաև հոլովաձևերի կցական կառուցատիպ, որ նպաստում է հիմքակազմ տարրերի ու վերջավորությունների՝ իբրև միասնական, անվերլուծելի ամբողջություններ՝ «գուտ» վերջավորություններ ըմբռնվելուն, ուստի այս դեպքում «հոգնակերտ մասնիկների և հոլովական վերջավորությունների հաջորդման կարգը համընկնում է բարբառների և գրական աշխարհաբարի համապատասխան մասնիկների հաջորդման կարգի հետ (հմմտ. *բարձկներս – բարձկներոյ* և *բարձկներ – բարձկների* կամ արևմտահայ *բարձկներու*)» (Ջահուկյան Գ.-1959, էջեր 93-94):

⁸ Արդի հայերենում քանակական թվականների հոգնակի թվի փոխանվանական գործածությունը ընդունված չէ (ինչպես՝ վեցերը – վեցերի, վեցերից և այլն):

մեծերը – մեծ-եր-ի, մեծ-եր-ի, մեծ-եր-ին, մեծ-եր-ից, մեծ-եր-ով,
ընթերցողներ – ընթերցող – ներ-ի, ընթերցող – ներ-ի, ընթերցող – ներ-ին,
ընթերցող – ներ-ից, ընթերցող – ներ-ով,
հանգուցյալներ – հանգուցյալ-ներ-ի, հանգուցյալ-ներ-ի, հանգուցյալ-ներ-ին,
հանգուցյալ-ներ-ից, հանգուցյալ-ներ-ով և այլն:

Նույն իրողությունը կարելի է դիտարկել հին հայերենի *ներքին թեքման* գոյականների հոլովման համակարգում. այստեղ, սակայն, կառուցատիպի փոփոխությունը մի փոքր այլ բնույթի է:

Հին հայերենի ներքին թեքման հոլովման հարացույցում թեքումը կատարվում է բառի ներսում՝ վերջին ձայնորդից առաջ. ներքին թեքման ցուցիչը ձայնդարձի հետևանք է, հմմտ. *աստղ-աստ-ե-ղ*, իսկ հոլովակերտ մասնիկը եզրափակում է բառաձևի կաղապարը⁹. *աստ-ե-ղ-բ*, հոգնակի թվում թվակազմական -ք մասնիկը ավելանում է բառաձևի վերջին մասնիկին՝ ընդարձակելով բառաձևի կաղապարը. *աստ-ե-ղ-բ*¹⁰:

Բառի ձևաբանական այս կաղապարը բնորոշ է ներքին թեքման բոլոր բառերին՝ անկախ խոսքիմասային արժեքից, և օրինաչափություն է համարվում հին հայերենի գոյավիճակում: Հմմտ. *ատամն – ատաման, գազաթն – գազաթան, ուսումն – ուսման, կորին – կորեան, անուն – անուան, մահ – մահուան, ժողովուրդ – ժողովրդեան* և այլն (Ա ներքին թեքում), *կայսր -կայսեր, անգղ – անգեղ, եղջիր – եղջեր, աղբիր – աղբեր, վագր – վագեր, մեղր – մեղեր, ծաղր – ծաղեր, ասր – ասեր* (Ե ներքին թեքում): Նույն օրինաչափությունն է գործում ներքին թեքման խառը հոլովման դեպքում, ինչպես՝

անձն – անձին – անձանց, հարսն – հարսին – հարսանց, լեառն – լերին – լերանց, գառն – գառին – գառանց (Ի-Ա հոլովում) և այլն:

Այս կարգի բառաձևերի քերականական իմաստներն արտահայտվում են ներքին թեքման՝ ձայնդարձի միջոցով. Ա ներքին թեքման բառերի դեպքում գործում է Ը-Ա հերթագայությունը [ատամ(ը)ն - ատամ-ա-ն], Ե ներքին թեքման դեպքում՝ Ը-Ե հերթագայությունը [անգ(ը)ղ - անգ-ե-ղ], Ի-Ա խառը հոլովման դեպքում՝ եզակի թվում՝ Ը-Ի [անձ(ը)ն - անձ-ի-ն], հոգնակիում՝ Ի-Ա հերթագայությունը [անձ-ի-նք - անձ-ա-նց] և այլն:

Լեզվի տարժամանակյա կտրվածքում փոխվել է հոլովաձևերի քերականական իմաստների արտահայտման եղանակը, միաժամանակ բառաձևի կառուցվածքային պլանում փոխվել է նաև մասնիկների դասավորությունը:

Եզակի թվում *աստ-ե-ղ-բ* և *աստղ-ով* բառաձևերի համեմատությունը ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում փոխվել է հոլովի ձևաբանական տիպը, և արձանագրվել է թեքականությունից անցում կցականության, որի հետևանքով մասնիկը (հոլովիչը) տեղաշարժվել է դեպի աջ:

Եթե համեմատենք հոգնակի թվի *աստ-ե-ղ-բ-ք* և *աստղ-եր-ով* բառաձևերը, ապա ակնհայտ կդառնան այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել բառաձևերի արտահայտության պլանում: Նախ՝ փոխվել է բառի հոլովման տիպը. ներքին թեքումը

⁹ Գոյականի հոլովի կարգի և նրա կաղապարների մասին տե՛ս **Խաչատրյան Լ. -2011**, էջեր 163-180:

¹⁰ **Տե՛ս Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ. -1992**, էջ 51: **Խաչատրյան Լ., Թոսունյան Գ. -2004**, էջ 71:

դարձել է արտաքին, փոխվել է նաև հոլովիչը: Հոգնակիակերտ մասնիկը, որ հին հայերենում եզրափակում է բառաձևի կաղապարը (բ-ք), արդի հայերենում տեղափոխվել է ձախ՝ նախորդելով հոլովակերտ մասնիկին, իսկ հոլովակերտ մասնիկը հաջորդում է հոգնակիակերտ մասնիկին (ներ-ով): Հոլովակերտ մասնիկն արդի հայերենում բաղադրյալ մասնիկ է՝ հոլովիչի և հոլովակերտ մասնիկի համադրությամբ (ո+վ): Բառաձևի արտահայտության պլանում մասնիկների դիրքափոխությունը պայմանավորված է, ինչպես նշել ենք, լեզվամտածողության փոփոխությամբ:

Լեզվի տարժամանակյա կտրվածքում արձանագրվել է նաև *կրկնակի մասնիկների վերացման իրողություն*, որ կարելի է դիտարկել դերանվան հոլովման համակարգում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է քերականական միևնույն իմաստն արտահայտող մասնիկներին, որոնցից մեկը ժամանակի ընթացքում ընկել կամ չեզոքացել է:

Հին հայերենի *սա, դա, նա* ցուցական դերանունների հոգնակի ձևերն են՝ *սոքա, դոքա, նոքա*, որոնց հոգնակիության իմաստն արտահայտվում է -ք հոգնակիակերտ մասնիկի միջոցով: Հին հայերենի հոլովման համակարգում ընդհանրապես հոգնակի թվի քերականական իմաստն արտահայտվում է *ք-ց* և *ք-ս* հերթագայություններով, ինչպես՝ *սոցա, դոցա նոցա, (զ)սոսա, (զ)դոսա, (զ)նոսա* և այլն: Հոգնակի գործիականում ունենք *սոք -ա-լ-ք (սոքօք), դոք -ա-լ-ք (դոքօք), նոք -ա-լ-ք (նոքօք)* ձևերը: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ *սոքա, դոքա, նոքա* բառերի արտահայտության պլանում -ք մասնիկը հոգնակի թվի ցուցիչ է, ապա հոգնակի գործիականի ձևերից ելնելով՝ կարող ենք ավելացնել, որ դրանց արտահայտության պլանում ձևաբանական կաղապարը եզրափակող -ք մասնիկը կրկնակի հոգնակիակերտ ցուցիչ է:

Լեզվի տարժամանակյա կտրվածքում բառաձևերի երկրորդ հոգնակիակերտ մասնիկն ընկել է, և այդ բառերն արդի հայերենում *սրան-ց-ով, դրան-ց-ով, նրան-ց-ով* ձևերով արտահայտում են հոգնակի գործիականի քերականական իմաստ:

Ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը, բառի ձևաբանական կառուցվածքում քերականական *մասնիկների դիրքափոխությունը* կարող է նաև փոխել հոլովի տիպաբանական բնութագիրը, իսկ *մասնիկների անկումը* կարող է ազդեցություն չունենալ լեզվի տիպաբանական բնութագրության հարցում: Սակայն մի բան ակնհայտ է. փոխվել են բառաձևերի ձևաբանական կաղապարները՝ պայմանավորված քերականական մասնիկների դիրքափոխության և անկման գործոններով. վերջիններս իրենց հերթին պայմանավորված են լեզվամտածողական փոփոխություններով, որոնք արտացոլվել են լեզվական համակարգում և նրա կառուցվածքային մակարդակներում:

Հոլովաձևի կառուցվածքային պլանում, մասնիկների դիրքի այլ կարգի փոփոխություն կարելի է ցույց տալ հին հայերենի և արդի հայերենի հոլովական համակարգերում¹¹. դա վերաբերում է միևնույն հոլովաձևում կրկնակի մասնիկների առկայությանը՝ քերականական իմաստների արտահայտման տեսանկյունից:

Արդի հայերենում կրկնակի մասնիկավորումը որոշակիորեն տարբերվում է հին հայերենի համատիպ կառուցվածքներից, մասնավորապես հոգնակի թվի հոլովաձևերում: Այսպես, հին հայերենում հոգնակի թվի թեք հոլովաձևերը վերջանում են 3 հո-

¹¹ Արդի հայերենի դերանունների հոլովական համակարգի մասին տե՛ս Աբրահամյան Ս.-1956:

լովակերտով (որն ունի հոլովիչի դեր), ինչպես՝ *կանանց, ի կանանց*, իսկ գործիականը՝ *Ք* մասնիկով (որն ունի թվակազմական դեր), ինչպես՝ *կանաւրք*. արդի հայերենում այդ հոլովաձևերի կառուցվածքային կաղապարն ընդարձակվել է. հոլովամասնիկները բոլոր դեպքերում ավելանում են Յ տարրով գրաբարյան հոլովաձևերի վրա, ինչպես՝ *կանանց+ից, կանանց+ով*, համաբանությամբ՝ *Գրիգորենց+ից, մերոնց+ից, Գրիգորենց+ով, մերոնց+ով* և այլն:

Վերջին կառուցատիպերում հոլովական հիմքերի Յ տարրը (-ենց, -ոնց ձևույթներում), իբրև հոլովիչ, մթագնել է և հանդես է գալիս իբրև թվակազմական ցուցիչ. հոլովական իմաստներ արտահայտում են միայն -ից և -ով մասնիկները¹²:

Եզրահանգում. Այսպիսով, երբ *քերականական մասնիկների դիրքափոխությունը* դիտարկում ենք տարժամանակյա տիպաբանության տեսանկյունից, ի հայտ են գալիս որոշակի տարբերություններ հայերենի տարբեր գոյավիճակների միջև.

ա) այդ իրողությունն առավելապես բնութագրական է հին և արդի հայերենների հոլովման համակարգերին և ներառում է հոլովիչների ու հոլովակերտների դիրքային զանազան փոփոխությունները բառաձևերի արտահայտության պլանում,

բ) բառաձևի կառուցվածքում քերականական մասնիկներն ունեն կայուն շարահասություն, և նրանց տարժամանակյա դիրքային փոփոխությունները պայմանավորված են լեզվակիր հանրության լեզվամտածողությամբ,

գ) լեզվի տարժամանակյա կտրվածքում կարող է փոխվել հոլովաձևերի քերականական իմաստների արտահայտման եղանակը, ըստ որի՝ բառաձևի կառուցվածքային պլանում փոխվում է նաև մասնիկների դասավորությունը,

դ) բառի ձևաբանական կառուցվածքում քերականական *մասնիկների դիրքափոխությունը* կարող է փոխել հոլովի տիպաբանական բնութագիրը,

ե) լեզվի տարժամանակյա կտրվածքում արձանագրվել է նաև *կրկնակի մասնիկների վերացման իրողություն*, որ դիտարկելի է արդի հայերենի դերանվան հոլովման համակարգում

Լեզվի քերականական համակարգում արձանագրված քանակական փոփոխությունները հանգեցնում են որակական փոփոխությունների, որի հետևանքով կարող է փոխվել նաև լեզվի տիպաբանական բնութագիրը:

**МЕТАТЕЗА ГРАММАТИЧЕСКИХ ЧАСТИЦ
ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА /диахронический аспект/
Хачатрян Л. М.**

Ключевые слова: *грамматическая частица, аффиксация, метатеза, диахроническая типология, словоформа, агглютинативный структурный тип, порядок частиц.*

Квантитативные изменения в грамматической системе языка приводят к качественным изменениям, вследствие которых изменяется типологическая характеристика языка.

¹² Հմմտ. Պետրոսյան Հ. -1972, էջ 131:

Изменением подобного типа является метатеза грамматических частиц, которая наблюдается с точки зрения диахронической типологии.

Изучение такого явления проявляет некоторые различия между разными языковыми фазами армянского языка.

а/ метатеза грамматических частиц в основном характерна системе склонения древне-армянского языка, которая включает разные изменения частиц склонения в плане выражения словоформы,

б/ в процессе диахронического развития языка могут меняться способы выражения грамматических значений, вследствие которого изменяется порядок частиц в структуре словоформы,

в/ метатеза грамматических частиц в морфологической структуре слова может поменять типологическую характеристику падежей,

г/ в диахроническом развитии языка возможно явление исчезновения двойных частиц, которое наблюдается в системе склонения местоимения современного армянского языка,

д/ в структуре словоформы грамматические частицы имеют устойчивый порядок, диахронические позиционные изменения частиц обусловлены языковым мышлением данного языкового общества.

METATHESIS GRAMMATICAL PARTICLES OF OLD ARMENIAN (diachronic point) *Khachatryan L. M.*

Key words: *grammatical particle, affixation, diachronic typology, metathesis, particles of case, word-form, prefix type, syntax of particle.*

Quantitative changes recorded in the grammatical system of the language lead to qualitative changes, as a result of which the typological characteristics of the language also change. One of the manifestations of such changes is a change in the positions of grammatical particles, which is considered from the point of view of diachronic typology.

The study of this reality reveals certain differences between the various forms of coexistence of the Armenian language:

a) the change in the positions of grammatical particles is mainly characteristic of the declension systems of ancient and modern Armenians and includes various changes in the position of cases in the plan of expression of wordforms,

b) in a diachronous segment of the language, the way of expressing grammatical meanings of case forms may change, according to which the arrangement of particles also changes in the string-linear plan of the word-forms,

c) in the morphological structure of the word, the metathesis of grammatical particles can change the typological characteristic of the case,

d) in a different segment of the language, the reality of eliminating double particles, observed in the system of declension to the pronouns of the modern Armenian language, was also recorded.

e) grammatical particles in the structure of a word-forms have a stable character, and their temporary changes in position are due to the language thinking of the language community.

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. Աղայան Էդ.-1976, Լեզվաբանության հիմունքներ, Երևան:
2. Աբրահամյան Ա.-1976, Գրաբարի ձեռնարկ, Երևան:
3. Աբրահամյան Ա.-1956, Արդի հայերենի դերանունները, Երևան:
4. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ.-1992, Գրաբարի ձեռնարկ, Երևան:
5. Բազրատունի Ա.-1852, Հայերեն քերականություն ի պետս զարգացելոց, Վենետիկ:
6. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ.-2004, Գրաբարի դասագիրք, Երևան:
7. Խաչատրյան Լ.-2011, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Երևան:
8. Խաչատրյան Լ.-2017, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Երևան:
9. Պետրոսյան Հ.-1972, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան:
10. Չահուկյան Գ. -1959, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան:
11. Кодухов В.-1977, Введение в языкознание, М.
12. Маслов Ю. -2007, Введение в языкознание, М.-С.-Петербург.

*Ընդունվել է՝ 30. 01. 2022
Գրախոսվել է՝ 21. 02. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022*

Տեղեկություններ հեղինակի մասին

Լալիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների գիտական
լաբորատորիայի վարիչ, էլ. հասցե՝ linguala51@mail.ru

ԿԵՆՂԱՆԱՆՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԴԱՐՉՎԱԾՍՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ

Հոփսսիմե Թորոսյան

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Բանալի բառեր՝ դարձվածային միավոր, իմաստային առանձնահատկություն, կառուցվածքային առանձնահատկություն, փոխաբերական իմաստ, դարձվածային համարժեքներ, դարձվածային համապատասխանություններ:

Հոդվածի նպատակն է արդի հայերենի և պարսկերենի *կենդանանուն* բաղադրիչով դարձվածային միավորների իմաստային և կառուցվածքային յուրահատկությունների բացահայտումը՝ նկարագրական, զուգադրական և համեմատական մեթոդներով: Չուգադրվող լեզուների տարբեր դարձվածաբանական բառարանների լեզվական նյութի հիման վրա ներկայացվում են *կենդանանուններով* կազմված անվանական և հաղորդակցական կապակցությունները, դրանց ձևավորման կաղապարները, դարձվածային համարժեքներն ու համապատասխանությունները¹:

Նախաբան. Դարձվածային ընդհանուր իմաստի ձևավորումը պայմանավորված է գերադաս բաղադրիչով, որի շուրջ խմբավորվում են դարձվածքի մյուս անդամները: Այդ կարգի բաղադրիչներ են դառնում նաև կենդանի նշանակող բառային միավորները:

Այն դարձվածքները, որոնք ունեն կենդանանուն բաղադրիչ, մյուս միավորների նման արտահայտում են փոխաբերական իմաստներ: Այս դարձվածային միավորները հիմնականում վերաբերում են անձին, բնութագրում են մարդու այս կամ այն հատկանիշը՝ արտաքին տեսքը, բնավորությունը, մտավոր կարողությունները և այլն, երբեմն էլ արտահայտում են առարկայի հատկանիշներ: Կենդանանուններով բաղադրված դարձ-

¹ Բեդիրյան Պ. -2011: Սուքիասյան Ա., Գալստյան Ս., -1976; Голева Г. – 2006; Anväri H. -1383; Najafi A. -1378.

վածային միավորների մեջ անձի հատկանիշ արտահայտող կապակցությունները մեծամասնություն են կազմում: Կենդանիների անուններով կազմված դարձվածքների գերադաս բաղադրիչ դառնում են կենդանիների, թռչունների, սողունների, միջատների և կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչների անունները:

Կենդանանուններով ձևավորված դարձվածքների բաղադրիչ են դառնում հիմնականում *շուն, կատու, գայլ, գառ, աղվես, առյուծ//ասլան, էջ//ավանակ, մուկ* և այլ բաները:

Շուն բաղադրիչով դարձվածքների ընդհանուր իմաստը ձևավորվում է այդ կենդանուն բնորոշ փոխաբերական իմաստների հիման վրա. հայ. 1.«անհամակրելի, հարգանք ու վստահություն չառաջացնող մարդ, 2.խորամանկ՝ հնարամիտ մարդ, 3. անառակ, շնացող մարդ, 4. անարգ, չարագործ մարդ. 5. (ծծկլ.) լրտես»: Հետաքրքրական է, որ շանը բնորոշ դրական հատկանիշները՝ նվիրվածությունը, հավատարմությունը, ազնվությունը չեն ամրագրվել այս բառի փոխաբերական իմաստների մեջ: Հետևաբար, *շուն* բաղադրիչով կազմված դարձվածքների մեծ մասն արտահայտում է բացասական իմաստներ, օրինակ՝ *շուն խաղացնող (արհմրհ.)*-խեղկատակ, ծաղրածու, *շան ճրագ*-ուրիշի համար պիտանի, տան համար անպետք, *կապելու շուն*- 1.խենթ 2.հանդուգն գործեր կատարելու ընդունակ, *յոթ(ը) դրան հաչող շուն*-լուրեր՝ խոսք տանող-բերող և այլն:

Պարսկերենում *շուն*-ը փոխաբերաբար նշանակում է «ստոր, ցածր, ճղճիմ մարդ», ինչպես նաև զուգորդվում է վատի, աղքատության և չարքաշ կյանքի հետ²: Պարսկերենում այս բաղադրիչով դարձվածքները գործածվում են հետևյալ իմաստներով.

mesl-e sag-e pā suxte - աննպատակ դրնեղուր ընկնող, թափառող (բոց. ոտքն այրած շան նման)	مثل سگ پا سوخته
mesl-e sag-e hasan-dale - քիթն ուրիշի գործերի մեջ խոթող (բոց. ծուլ, անբան շան նման)	مثل سگ حسن دله
mesl-e sag-e harze maraz - կոպիտ, անտաշ (բոց. թափառական, անտուն շան նման)	مثل سگ هرزه مرض
Mesl-e sag haft jān dārad. -շատ աշխույժ (բոց. Շան պես յոթ հոգի ունի (ըստ իրանցիների հավատալիքների՝ շունը յոթ հոգի ունի))	مثل سگ هفت جان دارد.
mesl-e sag-e tātule xorde - անհանգիստ (բոց. ապտակ կերած շան նման)	مثل سگ تاتوله خورده
sag-e Nāziābād- պնդերես լկտի (բոց. Նազիաբադի շուն)	سگ نازی آباد

Կատու (փխբ. «խորամանկ մարդ») բաղադրիչով դարձվածքները հայերենում և պարսկերենում արտահայտում են հիմնականում նույն բացասական իմաստները՝ *խորամանկություն, ժլատություն, խեղճություն, փնթիություն*: Այս բաղադրիչով համարժեք մեկ դարձվածք է հանդիպում՝ *կատվի նման- mesl-e gorbe* - խեղճ: Հայերենին հատուկ դարձվածքներից են. *կատվի աչքերը փակող* - ժլատ, *թրջված կատու* - խեղճացած, թուլացած, *խանձած կատու*- անճար, հալից ընկած, *շուն տեսած կատու* - սարսափած, *սև*

² Anvāri H. –1383. էջ 951; Najafi A., -1378. էջ 914:

կատու-չար, վայրի կատու - գազազաձ, անգուսպ, գող կատվի պես - աննկատ, գաղտագողի:

Պարսկերենում հանդիպում են հետևյալ դարձվածքները.

gorbe-ye 'ābed - կեղծավոր, երեսպաշտ (բոց. հավատացյալ կատու)	گر به عابد
gorbe-ye kur - անշնորհակալ, անաղուհաց (բոց. կույր կատու)	گر به کور
gorbe-ye Morteza 'Ali - շատ ճարպիկ, ամեն ինչի տակից դուրս եկող (բոց. Մորթեզա Ալիի կատու)	گر به مرتضی علی

Գայլ (փխբ. «գազանաբարո մարդ, խորամանկ») բաղադրիչով կազմված դարձվածքները հայերենում և պարսկերենում համարժեք են. դրանք արտահայտում են անձին բնորոշ *հմտություն, ճարպկություն ու խորամանակություն*: Օրինակ՝

Հայ.	Պրսկ.
ծեր գայլ	گرگ پیر
գառան մորթի հագած գայլ	گرگ در لباس میش
	gorg-e pir
	gorg dar lebās-e miš

Հայերենում հանդիպում են այնպիսի դարձվածքներ, որոնք պարսկերենին հատուկ չեն. դրանք արտահայտում են *քաջություն, բախտավորություն, գրավչություն. գայլի մագ ունենալ* – բախտավոր լինել, *գայլի սիրտ ուտել* – քաջ, անվախ լինել: Հայերենում որոշ դարձվածքներ արտահայտում են բացասական իմաստ, ինչպես՝ *քարափի գայլ* – կոպիտ անտաշ, *Քրիստոսի հոտի գայլ* – մոլորեցնող, խաբեբա, *գայլի պես* – գազանավարի, վայրենավարի, *գայլ տեսած* – սարսափած և այլն:

Գայլ բաղադրիչով որոշ դարձվածքներ հատուկ են պարսկերենին, ինչպես՝

gorg-e dahān ālude o yusef nadaride - անմեղ մեղավոր (բոց. բերանն արյունոտած ու Յուսեֆին չպատառոտած գայլ ³)	گرگ دهان آلوده و یوسف ندریده
gorg- e bārān dide - փորձառու (բոց. անձրև տեսած գայլ)	گرگ باران دیده

Գառ // *գառնուկ* (փխբ. հեզաբարո, անմեղ, անվնաս մարդ) բաղադրիչով դարձվածքներ պարսկերենում հազվադեպ են հանդիպում. դուրս է գրվել մեկ դարձվածք, որն ունի հայերեն համարժեք՝ *مئل بړه - mesl-e barre – գառան պես* - 1. խելոք, խելոքացած 2. մեղմ՝ փափուկ բնավորության տեր 3. խեղճացած:

³ Յուսեֆն աստվածաշնչյան Հովսեփի Գեղեցիկն է, որի մասին առաջին գեղարվեստական գործը Ֆիրդուսու՝ «Հովսեփի և Չոլեյխա» պոեմն է: Այստեղ պատմվում է, որ Հովսեփի եղբայրները հանդիպում են բերանն արյունոտ գայլի, որն իբր կերել է Հովսեփին: Գայլը պատմում է Հակոբին, որ Հովսեփին չի տեսել և փնտրում է իր ձագին: Այս թեմայով գրել են Ջամին, Հաֆեզը, Մաադին: Տե՛ս ՓՓԾԸ, էջ 445:

Հայերենում *գառ* բաղադրիչով դարձվածքներն արտահայտում են *խոնարհություն, մաքրություն, մոլորություն, բարություն. անլեզու գառնուկ* – հլու, խոնարհ, *անմեղ գառ* – մաքրահոգի, *մոլորյալ գառնուկ* – ուղեկորույս, *գառան մորթով* – բարի, բարեպաշտ:

Առյուծ // *ասլան* (փխբ. «քաջ, սրտոտ, հզոր մարդ») բաղադրիչներով դարձվածքներն արտահայտում են *քաջություն, խիզախություն, արիություն*. հայ. *առյուծի պես, ասլանի բերան ճղող, ասլանի սիրտ ունենալ*, պրսկ. دل شیر داشتن - *del-e šir dāstan* – առյուծի սիրտ ունենալ:

Էջ (փխբ. «ապուշ՝ բթամիտ, անհասկացող մարդ, գոեհիկ, անտաշ մարդ») բաղադրիչով դարձվածքները հայերենում և պարսկերենում հիմնականում արտահայտում են *համատարություն, պնդաճակատություն, անտեղյակություն, կոպտություն, հիմարություն, զարմանք, հաջողություն*: Հմնտ. հայ. *էջի ականջում քնած, էջի ականջում գուռնա փչող* – անտեղյակ, անտարբեր, անտաշ, *էջ արածացնող* – ապուշ, հիմար, *աղոթած էջ* – շշմած, մոլորված, *կոպիտ էջ* – անտաշ, անկիրթ, *էջի գլուխ* – անգրագետ, անհասկացող, *պաղած էջ* – ապուշ կտրած, և այլն:

Պրսկ.

mesl-e xar-e afsār gosixte - անսանձ, նպատակասլաց (բոց. սանձը կտրած էջի նման)	مثل خر افسار گسیخته
Xar-aš xub mi ravad. - հաջողակ (բոց. Իր էշը լավ է գնում:)	خرش خوب می رود.
xar-e xoš-rāh - դյուրահավատ (բոց. լավ ճամփի էջ)	خر خوش راه
xar rang-kon - խաբերա (բոց. էջ ներկող)	خر رنگ کن
xar bā tašdid - երկակի հիմար (բոց. կրկնապատկումով էջ)	خر با تشدید

Աղվես (փխբ. «խորամանկ՝ նենգադավ մարդ») բաղադրիչով դարձվածքներն ավելի շատ են հայերենում, քան պարսկերենում: Այս կապակցությունները գլխավորապես արտահայտում են անձին բնորոշ *խորամանկությունը*: Որոշ դարձվածքներ էլ՝ անձի *փորձառությունը, նիհարությունը*: Օրինակ՝ *ագին ծաղիկ աղվես* – կեղծավոր, երկերեսանի, *աշնան աղվես* – շատ նիհար, *գիտուն աղվես* – խորամանկ, *խորամանկ աղվես* – ճարպիկ, խորամանկ, *մաշկած աղվես* – չափազանց նիհար, *մորթը դուրս տված աղվես* – խորամանկ, ճարպիկ, *օգոտոսի աղվես* – խորամանկ, ճարպիկ և այլն:

Պարսկերենում հանդիպում է մեկ դարձվածք՝ روباهه پیر - *rubāh-e pir` ծեր աղվես* (նույն կապակցությունը վկայված է նաև հայերենում. 1. իր մարզում հմուտ, փորձված 2. Խորամանկ):

բ) Սողունների, միջատների անուններով կազմված դարձվածքներ

Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների գերադաս անդամ կարող են դառնալ նաև սողունների ու միջատների անունները: Սողունների անուններից առավել շատ է գործածվում *օձ*, իսկ միջատների անուններից՝ *ճանճ* բաղադրիչը:

Օձին (փխբ. «նենգավոր՝ խարդախ, թունոտ մարդ») բնորոշ հատկանիշները՝ *խորամանկություն, մոռյալություն, չարություն* արտահայտվում են այդ բաղադրիչով կազմ-

ված դարձվածքներում. հայ. *օձի կծած* – չար, անգութ, *օձին նայի՝ օձը կսատկի* – չարաղետ, ժանտ մարդ, *փորում լիքը օձեր* – նախանձոտ, *օձի թույն* – չար, նախանձոտ, *օձի պոչ կծած (խսկց.)* – նենգ, խաբեբա: Պրսկ.

mesl-e mār-e zaxm xorde - գայրութը՝ վրեժը թաքցնող (բոց. վիրավորված օձի նման)	مثل مار زخم خورده
mār dar āstin dāstan- գայրույթը թաքցնող (բոց. թեզանիքի մեջ օձ ունենալ)	مار در آستین داشتن

Ճանճ բաղադրիչով ձևավորված կապակցություններն արտահայտում են անձի *պնդերեսությունը, տկարությունը, շահամոլությունը*. հայ. *ճանճի պես* – պնդերեսորեն, *ճանճի ճնուռ* – տկար, վատուժ: Պրսկ.

magas dour-e širini - շահամոլ (բոց. ճանճ՝ քաղցրավենիքի շուրջ)	مگس دور شیرینی
magas rā dar havā rag zadan - չքավոր, աղքատ (բոց. օդում բաց թողնել ճանճի արյունը)	مگس را در هوا رگ زدن

զ) Թռչնանուններով կազմված դարձվածքներ

Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների կազմությանը մասնակցում են նաև թռչունների անունները՝ *հավ, ագռավ, աղավնի* և այլն:

Հավ բաղադրիչով դարձվածքները հայերենում գերակշռում են: Դրանք արտահայտում են անձի տարբեր հատկանիշներ՝ *հոգատարություն, բարություն, անկարողություն, թուլություն, տկարություն, անխելքություն, վախկոտություն*, ինչպես՝ *ոտը կապած հավ* – անկարող, անճար, *փետտած հավ (բրբ.)* – հալածված, *թխական հավի պես* – հոգատար, *հավի խելքով* – մտավոր կարողություններով թույլ և այլն:

Պարսկերենում հանդիպում է *հավ* բաղադրիչով երկու դարձվածք.

morq-e gorizpā - բարձիթողի (երեխայի մասին) (բոց. փախչող հավ)	مرغ گریزیا
mesl-e morğ-e parākande - անխելք, ցրված (բոց. հավի նման ցրված)	مثل مرغ پراکنده

Ագռավ բաղադրիչով դարձվածքները հայերենում քիչ են, իսկ պարսկերենում չկան (հիմնականում ասացվածքներ են): Հայերենում այս կապակցություններն արտահայտում են բացասական իմաստներ, օրինակ՝ *կլկած ագռավ* – նիհար, վտիտ, *ագռավի ճուռ* – տգեղ, անճոռնի և այլն:

Աղավնի բաղադրիչով դարձվածքները բնորոշ են հայերենին: Պարսկերենում այդպիսի դարձվածքներ չեն հանդիպում: Պարսկերենում այդ կապակցությունները ասացվածքներ են: Հայերենի կապակցությունները արտահայտում են աղավնուն բնորոշ հատկանիշները՝ *մաքրություն, բարություն, վախկոտություն* և այլն: Աղավնի բաղադրիչով դարձվածքներից են, օրինակ՝ *անմեղ աղավնի* – պարզամիտ, *խաղաղության աղավնի* – հաշտարար, *մաքուր աղավնի* – անմեղ, անարատ:

Աղավնի բաղադրիչով դարձվածքները կարող են նաև բացասական իմաստ արտահայտել, ինչպես՝ *աղավնու կերպարանքով//աղավնու փետուրներ հագած* – անմեղ, միամիտ ձևացող:

Կենդանանուններով դարձվածային միավորները գործառնապես լինում են անվանողական և հաղորդակցական: Վերջիններս քանակապես զիջում են անվանողականներին:

1. *Անվանողական դարձվածային միավորները* վերաիմաստավորված բնութագրում են առարկա, երևույթ, քերականորեն օժտված են որևէ խոսքի մասին բնորոշ հատկանիշներով: Այս կարգի դարձվածային միավորները նախադասության մեջ կատարում են տարբեր պաշտոններ: Ըստ խոսքիմասային արժեքների՝ դրանք լինում են անվանական՝ գոյականական, ածականական, մակբայական և բայական:

Ա. *Անվանական* (գոյականական, ածականական, մակբայական) դարձվածային միավորները հիմնականում երկբաղադրիչ, եռաբաղադրիչ կամ քառաբաղադրիչ կառուցատիպերով են: Երկբաղադրիչները կազմվում են հետևյալ կաղապարներով.

Հայ.գոյական+գոյական. շան հոտ - անդուրեկան՝ անախորժ հոտ, գարշահոտություն, *շան հավատարմություն* - կույր՝ ծայրահեղ նվիրվածություն (իբրև բացասական երևույթ), թուլացած, *քարափի գայլ*-կուպիտ անտաշ, *էջի գլուխ* - անգրագետ, անհասկացող:

գոյական+դերբայ (ենթակայական) կամ դերբայ+գոյական. շուն խաղացնող (ար-հմրհ.) – խեղկատակ, ծաղրածու, *շուն բռնող* – անպետք մարդ, ոչնչություն, *թրջված կատու* – խեղճացած, *աղոթած էշ* – շշմած, մոլորված, *կլկած ագռավ* – նիհար, վտիտ:

ածական+գոյական - կուպիտ էշ – անտաշ, անկիրթ, *խորամանկ աղվես* - ճարպիկ, խորամանկ, *մաքուր աղավնի* – անմեղ, անարատ:

Պարսկերենում *կենդանանուններով* երկբաղադրիչ դարձվածային միավորները ձևավորվում են *գոյական+գոյական* կամ *գոյական+ածական* կաղապարներով, օրինակ՝

sag-e Nāziābād - պնդերես լկտի (բոց. Նազիաբադի շուն)	سگ نازی آباد
mesl-e sag-e hār - ջղային, կատաղած (բոց. կատաղի շուն)	سگ هار
gorg-e pir - հմուտ, ճարպիկ (բոց. ծեր գայլ)	گرگ پیر
gorbe-ye kur - անշնորհակալ, անաղուհաց (բոց. կույր կատու)	گربه کور

Շոքաբաղադրիչ դարձվածային միավորները լինում են հետևյալ կառույցներով.

ա) *գոյական+գոյական+գոյական* – *ճակատը շան կաշի* – 1. աներես, պնդաճակատ 2. անամոթ, անպատկառ, *շան մսի գին* – չափազանց էժան, *Քրիստոսի հոտի գայլ* – մոլորեցնող,

բ) *գոյական+գոյական+դերբայ (հարակատար կամ ենթակայական)* կամ *գոյական+դերբայ+գոյական* – *շան ծիծ կերած* – շան ծնունդ, շան որդի, *շան բերանից ընկած* // *~քաշած* – խիստ տրորված՝ ճմռթված, պատառոտված շորեր, *էջի ականջում քնած* –

անտեղյակ, անտարբեր *ասլանի բերան ճղող – քաջ, անվախ, շուն տեսած կատու* – սարսափած:

Պարսկերենում եռաբաղադրիչ անվանողական կառույցները հիմնականում համեմատություն դարձվածային միավորներ են՝ ձևավորված *mesl-e+ կենդանանուն* կապական կառույցով և տարբեր խոսքի մասերով.

Mesl-e+ կենդանանուն+ածական

mesl-e sag-e hasan-dale - քիթն ուրիշի գործերի մեջ խոթող մարդ (բոց. թափառական շուն)	مثل سگ حسن دله
mesl-e sag-e hār - ջղային, կատաղած (բոց. կատաղի շան նման)	مثل سگ هار
mesl-e sag-e harze-maraz - կոպիտ, անտաշ մարդ (բոց. Թափառական, անտուն շան նման)	مثل سگ هرزه مرض
<i>mesl-e + կենդանանուն + շաղկապ+գոյական</i>	
mesl-e sag o darviš - անհաշտ մարդիկ (բոց. շան ու դերվիշի նման)	مثل سگ و درویش
<i>mesl-e + կենդանանուն+դերբայ</i>	
mesl-e morğ-e parākande - անխելք, ցրված (բոց. հավի նման ցրված)	مثل مرغ پراکنده

Քառաբաղադրիչ անվանական դարձվածային միավորները հայերենում կազմվում են տարբեր կաղապարներով. *թվական + գոյական+ դերբայ+ գոյական – յոթ(ը) դրան հաչող շուն* – 1. հարմարվող, համակերպվող, անսկզբունքային մարդ, 2. լուրեր՝ խոսք տանող-բերող, *գոյական+գոյական+գոյական+դերբայ – էջի ականջում գուննա փչող* – անտեղյակ, անտարբեր, *գայլի բերան ընկած գառ* - վտանգի մեջ գտնվող, փորձանքն ընկած մարդ:

Պարսկերենում քառաբաղադրիչ կառույցները նույնպես համեմատություն-դարձվածային միավորներն են *mesl-e sag+կենդանանուն+անցյալ դերբայ* կառուցատիպով, հմմտ.

mesl-e sag-e pā- suxte - աննպատակ դրնեղուտ ընկնող, թափառող մարդ (բոց. ոտքն այրած շան նման)	مثل سگ پا سوخته
mesl-e sag-e tātule –xorde - անհանգիստ (բոց. ապտակ կերած շան նման)	مثل سگ تاتوله خورده
mesl-e xar-e afsār gosixte - անսանձ, նպատակասլաց (բոց. սանձը կտրած էջի նման)	مثل خر افسار گسیخته
mesl-e mār-e zaxm xorde - գայրութը՝ վրեժը թաքցնող (բոց. վիրավորված օձի նման)	مثل مار زخم خورده

Բ. *Բայական դարձվածային միավորները* անվանողական դարձվածքներ են երկբաղադրիչ, եռաբաղադրիչ կամ քառաբաղադրիչ կառուցատիպերով, որոնց հարա-ցուցային ձևերը կատարում են հաղորդակցական գործառույթ:

ա) Երկբաղադրիչ բայական դարձվածային միավորները բաղկացած են անվանական և բայական բաղադրիչներից: Անվանական բաղադրիչը միշտ արտահայտված է լինում շուն գոյականով, բայական բաղադրիչը՝ համադրական բայով: Հայ. *շուն հաչեցնել* (գռհկբ.) – առիթ տալ չարախոսելու, իզուր տեղը վրան խոսք բերել, *շուն աղալ* – սուտ խոսել, *շուն կտրել* – կատաղել, *շուն խուզել* – աչքածակ լինել, *այծերը (էծերը) բռնել / գալ* - 1. չարությունը, բարկությունը բռնել, վատ տրամադրության մեջ ընկնել 2. գժվել, խենթությունը բռնել, *այծեր (էծեր, իծաներ) ունենալ* - երբեմն-երբեմն համատել, ժամանակ առ ժամանակ գժվել, *կատու դառնալ* – հպատակվել, հնազանդվել, խոնարհվել, խեղճանալ, *կատու կապել* – հարստանալ, ունևոր դառնալ: Պրսկ.

sag-koš kardan - խայտառակ՝ չարաչար մահով սպանել (բոց. շան պես՝ նման սատկացնել)	سگ کش کردن
sagi kardan- կատաղեցել, սաստիկ բարկացնել, գայրացնել (բոց. շուն դարձնել (գռհկբ.))	سگی کردن
boz raqsāndan - անհիմն պատճառներով ինչ-որ մեկի գործի մեջ թերություններ գտնել ու նրան շփոթեցնել (բոց. այծ պարեցնել)	بز رقصاندن

բ) Եռաբաղադրիչ դարձվածային միավորներում անվանական բաղադրիչը թեք կամ ուղղական հոլովով է, օրինակ՝ հայ. *այծին բանջարանց թողնել* - մեկի համար եկամուտի, գոփելու պայմաններ ստեղծել, մեկին այնպիսի տեղ թողնել, որտեղից նա ցանկանում է օգուտ քաղել, *էջի դրախտն ընկնել* - հարբել, կերուխումի մեջ ընկնել, *շան հոտառություն ունենալ* – հեշտությամբ կարողանալ կռահել, ճանաչել, գտնել մի բան, *շուն կերած (կուլ տված) լինել* – փորձված, ճարպիկ լինել, *շան բախտ ունենալ* – հաջողակ լինել, բախտը բերել:

գ) Քառաբաղադրիչ դարձվածային միավորներն ունեն տարբեր կառուցատիպեր, որոնցում նույնպես անվանական բաղադրիչը ուղիղ կամ թեք հոլովով է. հայ. *գայլերից վախենալով անտառ չգնալ* – խուսափել դժվարություններից, *կատվի նման (պես) մեջքի(ն) չգալ (չընկնել)* – 1. միշտ նույն դիրքում մնալ 2. ինչ էլ լինի, կարողանալ խուսափել, *էջը խելքին քացի տալ* – հիմարություն անել, չարաչար սխալվել, *շան պես պոչ պտտեցնել* – քծնել, շողոքորթել մի բանի ակնկալությամբ, *շան մածուն (միս) կերցնել* – նեղել, չարչարել, տանջահար անել և այլն:

Պարսկերենում գերակշռում են բազմաբաղադրիչ դարձվածային միավորները, որոնք ունեն տարբեր կառուցատիպեր՝

savār-e xar-e šeytān šodan - համատել (բոց. սատանի ավանակը հեծնել)	سوار خر شیطان شدن
xar rā bā āxor o morde rā ba gur xordan - շատակեր, որկրամուլ ուրիշի բարիքը վատնող (բոց. էջին փալանով ուտել, մեռածին՝ գերեզմանով)	خر را با آخور و مرده را با گور خوردن
az damāğ-e fil oftādan - մեծամիտ լինել (բոց. փղի քթից ընկնել)	از دماغ فیل افتادن

Հանդիպում են նաև համեմատություն դարձվածային միավորներ՝ կազմված mesl-e + կենդանանուն կապական կառույցով: Օրինակ՝

mesl-e xar tu (be) gel māndan (oftādan) - անհաջողության մեջ ընկնել (բոց. էշի նման ցելիսի մեջ մնալ)	مثل خر تو (به) گل مانند (افتادن)
mesl-e sag vāq vāq kardan - չարախոսել (բոց. շան պես հաչել)	مثل سگ واق واق کردن
mesl-e sag pāšne-ye hame rā gereftan - բոլորի մեջ թշնամի տեսնել (բոց. շան նման բոլորի ոտքը բռնել)	مثل سگ پاشنه همه را گرفتن

2. *Կենդանանուն* բաղադրիչով կազմված *հաղորդակցական դարձվածային միավորներն* ունեն նախադասությանը բնորոշ հատկանիշներ՝ ստորոգում, հնչերանգային ավարտվածություն, շարադասություն: Հայ. *Սուկը հանդում պոչը շարժի՝ կիմանան* (ամեն ինչից տեղյակ են): *Էշը, որ ընկնի, ատամը կկոտրվի* (շատ քարքարոտ տեղի մասին): *Շու՛նը չի դիմանա՛ չի տանի* (անտանելի է): *Շունը ձեռից հաց չի առնի՛ չի վերցնի (չի ուտի)* (1. Շատ խեղճ, խեղճացած 2. սպառնական արտ. է (շան օրը կզգեմ՝ կզգի ...)): Պրսկ.

Gorbe dar xāne-ye sāheb-aš šir ast. - Կատունն իր տիրոջ տանը առյուծ է:	گریه در خانه صاحبش شیر است
Xar rā gom karde pey-e na'l-aš (pālān-aš) mi gardad. հայ. էշը կորցնել՝ պարան (չվան) հարցնել Մեծ խնդիրներ ունի, մանրությունների մասին է մտահոգվում (բոց. էշին կորցրել է, պայտն է փնտրում:)	خر را گم کرده پی نعلش (پالانش) می گردد
Mesl-e sag haft jān dārad - շատ աշխույժ (ըստ իրանցիների հավատալիքների՝ շունը յոթ հոգի ունի) (բոց. Շան նման յոթ հոգի ունի:)	مثل سگ هفت جان دارد.
Haft (yā sad) tā sag surat-aš rā be-lisad sir mi-šavad! - Շատ կեղտոտ մարդ (բոց. Յոթ (կամ հարյուր) շուն դեմքը լիզեն, կկշտանան:)	هفت (یا: صد) تا سگ صورتش را بلیسد سیر می شود!
Čašm-aš sag dārad. Գրավիչ հայացք ունի: (բոց. Աչքը շուն ունի:)	چشمش سگ دارد.

Հայերենի և պարսկերենի՝ *կենդանանուններով* կազմված դարձվածային միավորները դասակարգվում են նաև իմաստային համարժեքության տեսանկյունից՝ առանձնացնելով *դարձվածային համարժեքները և դարձվածային համապատասխանությունները*: Զուգադրվող լեզուներում այս միավորների առկայությունը վկայում է հայերի և իրանցիների լեզվամտածողության ընդհանրությունների, ինչպես նաև յուրահատկությունների ու տարբերությունների մասին:

Ա. *Դարձվածային համարժեքներ*. այս դարձվածային միավորները կան և՛ հայերենում, և՛ պարսկերենում: Երկու լեզվում էլ այս կապակցություններն ունեն նույն իմաստն ու նշանակությունը: Օրինակ՝

Կենդանանուններով կազմված դարձվածային միավորների իմաստակառուցվածքային ...

հայ.	պրսկ.
գառան մորթի հագած գայլ – անմեղության տակ թաքնված խաբեբա	گرگ در لباس میش gorg dar lebās-e miš
շան բերան - լկտիաբար հայիոյող, չարաբանող	سگ دهن sag-dahan
շան թուլա, լակոտ	توله سگ tule-sag
շուն ու կատվի պես	مثل سگ و گربه mesl-e sag o gorbe
շան տեղ դնել (չդնել) - ոչ մի նշանակություն, արժեք չտալ, արհամարհել	محل سگ به کسی گذاشتن (نگذاشتن) mahal-e sag be kasi gozāštan (nagozāštan)
կատվավա անել – թեթև լվանալ	گربه شور کردن gorbe-šur kardan

Բ. Դարձվածային համապատասխանություններ. Ա. Կունինը դարձվածային համապատասխանությունները համարում է այն կայուն կապակցությունները, որոնք իմաստով նույնական են զուգադրվող լեզուներում, սակայն ձևով մասամբ կամ ամբողջությամբ տարբերվում են⁴: Այս կապակցությունները արտահայտվում են միայն տվյալ լեզվին բնորոշ հասկացություններով և կառուցատիպերով: Դարձվածային համապատասխանությունները համեմատվող լեզուներում արտահայտվում են տարբեր բառերով և քերականական ձևերով:

Հայ.	Պրսկ.
էշին փալանով կուլ տալ – անկուշտ ուտել, սպառել	خر را با آخور و مرده را با گور خوردن xar rā bā āxor o morde rā ba gur xordan
էշը կորցնել՝ պարան (չվան) հարցնել- մեծ խնդիրներ ունի, մանրուքների մասին է մտահոգվում	خر را گم کرده بی نعلش (پالانش) می گردد. Xar rā gom karde pey-e na'l-aš (pālān-aš) mi gardad.
էշից վախենալ, փալանին ծեծել – ուժը փոքր բաների վրա պատել	به خر دستش نمی رسد پالانش را می زند. Be xar dast-aš nemi-resad pālān-aš rā mi zand.
շան բաժին դարձնել – նույնն է՝ շուն ու գելի բաժին դարձնել	سگ خور کردن sag-xor kardan
շան պես քարշ գալ - շատ քայլելով սաստիկ չարչարվել, տանջվել	سگ دو زند ، سگ دوی کردن sag-do zadan, sag-davi kardan
Շան առաջ գցես՝ չի ուտի – ուտելու բան չէ	[اگر] پیش سگ بیندازند (بیندازی) بو نمی کند. [Agar] piš-e sag bi-andāzand (bi-andāzi) bu nemi- konad.

Եզրահանգում. Այսպիսով՝ հայերենի և պարսկերենի՝ կենդանանուն բաղադրիչով կազմված դարձվածային միավորները կառուցվածքային տեսանկյունից անվանողական (երկբաղադրիչ, եռաբաղադրիչ, քառաբաղադրիչ) կամ հաղորդակցական դարձվածքներ են, որոնք արտահայտում են ինչպես անձի, այնպես էլ առարկայի հատկանիշներ: Իմաստային համարժեքության տեսանկյունից զուգադրվող լեզուներում այս դարձվածային միավորներն ունեն համարժեքներ և համապատասխանություններ:

⁴ Кунин А., -1987. էջ 110:

**СЕМАНТИКО-СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ
ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ С КОМПОНЕНТОМ-ЗООНИМОМ
В СОВРЕМЕННЫХ АРМЯНСКОМ И ПЕРСИДСКОМ ЯЗЫКАХ**

Торосян Р.

Ключевые слова: армянский язык, персидский язык, фразеологическая единица, семантическая особенность, структурная особенность, переносное значение, фразеологизмы эквиваленты, фразеологические аналоги.

В статье представлены фразеологические единицы с компонентом-зоонимом в армянском и персидском языках. С точки зрения структуры эти сочетания номинативные (двухкомпонентные, трехкомпонентные, четырехкомпонентные) или коммуникативные фразеологизмы, которые выражают признаки личности и предметов. По аспекту семантической эквивалентности эти фразеологизмы имеют эквиваленты и аналоги.

**STRUCTURAL-SEMANTIC PECULIARITIES OF PHRASEOLOGICAL
UNITS WITH ZOONYM-COMPONENT IN ARMENIAN
AND PERSIAN LANGUAGES**

Thorosyan H.

Key words: Armenian language, Persian language, phraseological unit, semantic peculiarity, structural peculiarity, metaphorical meaning, phrase-equivalents, phrase-analogues.

The article discusses phraseological units with zoonym-component in Armenian and Persian languages. From the structural point of view these units are nominative (two-component, three component, four-component) or communicative phraseologisms which express person's or subject's quality. From the point of view of semantic equivalency these units have equivalents and analogues.

Գ ր ա կ ա ն ն լ թ յ ն ի ն

1. Բեդիրյան Պ. -2011, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան:
2. Սուրիապյան Ա., Գալստյան Ս.-1976, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան:
3. Голева Г. -2006. Фарси-русский фразеологический словарь. М.
4. Кунин А. -1987. О фразеологической дефиниции. // Вопросы английской фразеологии: сб. науч. трудов. М.
5. Anvāri H. -1383. Farhang-e kenāyāt-e soxan. Tehrān.
6. Najafi A. -1378. Farhang-e fārsi-ye ā'miāne. Tehrān.

Ընդունվել է՝ 10. 03. 2022
Գրախոսվել է՝ 21. 04. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Հոփսիմէ ԹՈՐՈՍՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ Հր. Անառյանի անվ. լեզվի ինստիտուտ,
Կոմիտասի անվ. Երևանի պետական կոնսերվատորիա,
Էլ. հասցե՝ hripsimehtorosyan@yahoo.com

ՀՏԴ՝ 81՝3

DOI: 10.52971/18294316-2022.25.1-133

ԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՔՈՎ

ՎԵՐՋԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Աննա Վարդանյան, Մերգո Հայրապետյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ գրաբար, բայական հոլով, վերջածանց, վերջածանց-բարդակազմություն, մոդել, համատեղելիություն, գործառական ծանրաբեռնվածություն.

Նպատակ ունենալով վեր հանել ածանցման ընդհանուր օրինաչափություններ՝ կապված գրաբարյան վերջածանցների գործառական կենսունակության հետ, հողվածում քննության առարկա ենք դարձրել վերջածանցման այն կաղապարները, որոնցում միջուկային բաղադրիչը բայական նախաստիպ է: Ուսումնասիրությունը հենվում է 5-րդ դարից ավանդված մատենագրության բառապաշարի վրա՝ քաղված Նոր հայկազյան բառարանից¹:

Նախաբան. Հայերեն գրական լեզվի բառակազմական համակարգի զարգացման հիմնական ուղղությունը պայմանավորված է բառաբարդման և ածանցման գործուն կիրառությամբ, ասել է թե՛ ածանցումը հայերենի բառակազմության հիմնական եղանակներից մեկն է: Ածանցման հիմնակաղապարը ենթադրում է նվազագույնը մեկ միջուկային և մեկ առմիջուկային անդամ, իսկ նրա առավելագույն կաղապարը կարող է ընդգրկել վեց կամ յոթ կառուցվածքային տարր, հմմտ.՝ *գետ-ակ, ան-տուն* և *վեր-արտա-դրող-ական-ություն*: Գործածելով մինչև այժմ կիրառած բառակազմական կաղապարների ցուցիչները՝ վերջին բառի համար կստանանք $((v+)v_1+)\mathcal{S}(+v_2(+a)+s))$, ընդ որում՝ կաղապարային v և v_1 բաղադրիչներն իրանում են ժամանակային և տարածական իմաստ արտահայտող ածանցներով, v_2 բաղադրիչը՝ առաջին կարգի վերջածանցները, ածանցական արժեքի անցել են բառահարաբերական ձևություններից, երկրորդ կարգի վերջա-

¹ ՆՀԲ -1836, հ. 1-2:

ծանցները ածականակերտ ածանցներ են, որոնք կարող են իրացվել ինչպես միջուկին, այնպես էլ առմիջուկային անդամներին հաջորդող դիրքերում, հինգերորդ կարգի ածանցները կենսունակ գոյականակերտ ածանցներ են, որոնք հանդես են գալիս միայն որպես առմիջուկային վերջին բաղադրիչ²:

Գրաբարյան և արդիիայերենյան ածանցման կաղապարային բանաձևերի մանրամասն քննությունը ներկայացրել են համապատասխանաբար Լ. Հովսեփյանը և Լ. Խաչատրյանը՝ բացահայտելով ածանցման հնարավոր հիմնականապարները և նրանց հատուկ մասնակաղապարները: Պետք է նշել, որ վերջիններս հետևել են լեզվական միավորների կաղապարավորման ջահուկյանական տեսությանը՝ առանձնացնելով նաև տարբեր կաղապարներում գործառական բեռնվածություն ունեցող ածանցները³: Մենք, նպատակ ունենալով վեր հանել ածանցման ընդհանուր օրինաչափություններ՝ կապված գրաբարյան վերջածանցների գործառական կենսունակության հետ, մեր հոդվածում քննության առարկա ենք դարձրել վերջածանցման այն կաղապարները, որոնցում միջուկային բաղադրիչը բայական նախատիպ է:

Վերջածանցման կաղապարները զգալի կշիռ ունեն գրաբարի ածանցման կաղապարներում: Անդրադառնալով այդ կաղապարներում իրացվող ածանցների գործառական բեռնվածությանը՝ նշենք, որ գործառապես կենսունակ են *-ուրիւն*, *-արար*, *-ական*, *-ումն*, *-անք*, նաև՝ *-եայ*, *-ած*, *-իչ* ածանցները, ընդ որում, *-ուրիւն* բաղադրող հիմքով կազմությունները վերջածանցավոր բաղադրությունների ընդհանուր թվի 28,95%-ն են կազմում, *-ական*-ով կազմությունները՝ 11.13%-ը, *-ումն*-ով կազմությունները՝ 8.11%-ը, *-արար*-ով կազմությունները՝ 7.41%-ը, *-եայ*-ով կազմությունները՝ 3.72%-ը, *-ած*-ով կազմությունները՝ 3.45%-ը, *-իչ*-ով կազմությունները՝ 4.47%-ը, *-անք*-ով կազմությունները՝ 3,01%-ը: Եվս մեկ անգամ նշենք, որ դիտարկել ենք վերջածանցավոր այն կազմությունները, որոնցում վերջածանցը բառակազմական վերջին քայլում կցվել է բայահիմքով արտահայտված՝ կազմությամբ առաջնային կամ երկրորդային հիմքի, ասել է թե՛ որոնց սերող հիմքը *բայական* նախատիպ է:

Համեմատաբար հաճախադեպ պիտի համարել *-ագոյն*, *-ապէս*, *-օրէն*, *-իք*, *-ային* ածանցների գործածությունը, ինչպես՝

- ագոյն*՝ ածողագոյն, արթնագոյն, բաւականագոյն, զգօնագոյն, անեղագոյն,
- ապէս*՝ կիզողապէս, հակադարձապէս, համագոյապէս, աներկիւղապէս,
- օրէն*՝ անասնօրէն, իշխանօրէն, խորհրդօրէն, բուսողօրէն, վկայօրէն,
- իք*՝ նստիք, հացուտիք, ջախջախիք, աւետիք,
- ային*՝ անասնային, բժշկային, սիրողային, կատարածային:

-ԱԳՈՅՆ ածանցն առավել կենսունակ է իբրև վերջին ածանց երկվերջածանցավոր կաղապարներում, ինչպես՝ *գթածագոյն*, *ծաղրականագոյն*, քան վերջածանցման պարզ կաղապարով բաղադրություններում, ինչպես՝ *աշխատագոյն*, *գիտագոյն*, *ծաղրագոյն*, *գիջագոյն*, *թախծագոյն*, *թաւալագոյն*, *իմացագոյն* և այլն:

² Տե՛ս Խաչատրյան Լ. -2011, էջեր 44-45: Չահուկյան Գ. -1989, էջեր 169-172:

³ Տե՛ս Խաչատրյան Լ. -2011: Հովսեփյան Լ. -1987:

Երկվերջածանցավոր կաղապարներում այս ածանցն ակտիվ զուգակցում է *-ող* (աժողագոյն, ծնողագոյն, դիպողագոյն, սպանողագոյն), *-աւոր* (ճգնաւորագոյն, հպաւորագոյն, գոչաւորագոյն, նուագաւորագոյն, գործաւորագոյն) և *-ական* (տոփականագոյն, բաւականագոյն, ծաղրականագոյն, խոհականագոյն, զգայականագոյն, մնացականագոյն) ածանցների հետ: Այլ ածանցների հետ զուգորդությունների օրինակներ են.

-ուն+-ագոյն. շարժնագոյն, թաքնագոյն, գիտնագոյն

-ան+-ագոյն. իշխանագոյն

-ոյշ+-ագոյն. զգուշագոյն

-օն+-ագոյն. զգօնագոյն

-ուրդ+-ագոյն. խորհրդագոյն

-ոյ+-ագոյն. հաճոյագոյն

-աստ+-ագոյն. իմաստագոյն, զգաստագոյն

-խստ+-ագոյն. հանգստագոյն

Ինչպես կարելի է նկատել, բերված օրինակներում սերող հիմքը պարունակում է միայն մեկ ածանց: Այժմ բերենք բաղադրությունների օրինակներ, որոնցում *-ագոյն* ածանցը՝ իբրև բաղադրող մաս, միանում է երկվերջածանցավոր սերող հիմքի: Նշենք, որ այդպիսիք բավական հաճախադեպ են. *գիտնականագոյն, երկիւղածագոյն, զգուշականագոյն, իմաստնագոյն, խորհրդականագոյն, ծննդականագոյն, իշխանականագոյն, ուսումնականագոյն, սկզբնականագոյն, սկզբնաւորագոյն, տեսանողականագոյն և այլն:*

Նկարագրեցինք վերջածանցման կաղապարների իրացումներ, երբ սերող հիմքը կա՛մ միաձևույթ էր, կա՛մ պարունակում էր մեկ հիմնական իմաստակիր ձևույթ և վերջածանց կամ վերջածանցներ: Այժմ բերենք օրինակներ բաղադրությունների, որոնցում սերող հիմքը նախածանցավոր է: Նշենք, որ երկրորդային հիմքը հիմնականում *ան-*, *տ-* և *ներ-* ածանցներն են և պարունակում, ինչպես՝

ան-...-ագոյն. *անզգամագոյն, անզգայագոյն, անեղագոյն, անխօսագոյն,*

տ-...-ագոյն. *տգիտագոյն,*

ներ-...-ագոյն. *ներգործագոյն:*

Համեմատաբար քիչ են հանդիպում վերջածանցավոր կազմություններ, որոնցում սերող հիմքը պարունակում է թե՛ նախածանց, թե՛ վերջածանց: Վկայված օրինակներ են. *անասնագոյն* (*ան-...-ուն+ագոյն*), *անիմաստագոյն* (*ան-...-աստ+ագոյն*), *անխօսնագոյն* (*ան-...-ուն+ագոյն*), *անկատարելագոյն* (*ան-...-եալ+ագոյն*), *անուսումնագոյն* (*ան-...-ումն+ագոյն*), *նախածանօթագոյն* (*նախ-...-օթ+ագոյն*) և այլն:

Սահմանափակ միավորներում սերող հիմքում առկա է երկու նախածանց, ինչպես՝ *աննախախնամագոյն* (*ան+նախ-...-ագոյն*), *գերազանցագոյն* (*գեր+զ-...-ագոյն*) և այլն:

Նշենք, որ այս ածանցը կենսունակ է նաև կազմությամբ բարդ (ինչպես՝ *որդեսիրագոյն, դժուարաշարժագոյն, դիրանցագոյն, երկայնակեցագոյն, հնագիտագոյն*) սերող հիմքերով վերջածանցման կաղապարներում: Մյուս կողմից, բարդածանցավոր սերող հիմքերով վերջածանցման կաղապարի իրացումները, ինչպես՝ *իմաստասիրագոյն, աստեղաբաշխականագոյն*, խիստ սակավադեպ են:

-ՕՐԷՆՆ ածանցը ևս առավել ակտիվ է երկվերջածանց բաղադրություններում: Նախածանցավոր սերող հիմքով կազմությունները (*անբաժանօրեն, գերազանցօրեն, ներգործօրեն, հմտօրեն, յանկարծօրեն* և այլն) քանակապես զգալիորեն զիջում են վերջածանցավոր սերող հիմքով կազմություններին:

Երկվերջածանցավոր կազմություններում զուգակցում է առավելապես հետևյալ ածանցների հետ.

- եալ+-օրեն. *առաքելօրեն,*
- ող+-օրեն. *բուսողօրեն,*
- ուող+-օրեն. *զինուողօրեն,*
- ան+-օրեն. *իշխանօրեն,*
- ուրղ+-օրեն. *խորհրղօրեն,*
- ուած+-օրեն. *պատուածօրեն:*

Բարդ և բարդածանցավոր սերող հիմքերով կաղապարներում, ինչպես՝ *հոգաբարձօրեն, արտաքսառաքօրեն*, այս ածանցը հազվադեպ է իրացվում:

-ԱՊԷՍ ածանցը ևս երկվերջածանցավոր բաղադրություններում զուգակցում է տարբեր ածանցների հետ.

- ող+-ապես՝ *ազդողապես, դարձողապես, էլողապես, իմացողապես, կիզողապես, սիրողապես, վիճողապես,*
- իչ+-ապես՝ *արարչապես, փրկչապես,*
- սկան+-ապես՝ *բաւականապես, եղականապես, իմացականապես, ցուցականապես, փրկականապես,*
- ոյշ+-ապես՝ *զգուշապես,*
- օն+-ապես՝ *զգօնապես,*
- ուն+-ապես՝ *զիտնապես, թաքնապես,*
- ոյթ+-ապես՝ *երեւութապես,*
- իւղ+-ապես՝ *երկիւղապես,*
- ան+-ապես՝ *իշխանապես,*
- օթ+-ապես՝ *ճանօթապես,*
- ունղ+-ապես՝ *սննղապես,*
- եալ+-ապես՝ *կատարելապես,*
- ուրղ+-ապես՝ *խորհրղապես,*
- եղեն+-ապես՝ *գոյեղինապես:*

Այս ածանցը՝ իբրև բաղադրող մաս, բավական հաճախ կցվում է երկվերջածանցավոր սերող հիմքով բաղադրությունների՝ ձևավորելով եռածանց բաղադրություն, ինչպես՝

- օն+-աւող+-ապես՝ *կրօնաւորապես,*
- ուրղ+-ական+-ապես՝ *խորհրղականապես,*
- ոյշ+-աւող+-ապես՝ *զգուշաւորապես,*
- աստ+-ուն+-ապես՝ *իմաստնապես* և այլն:

Ինչպես հայտնի է, հին հայերենում *-ային* ածանցի նշանակությամբ խիստ կենսունակ է եղել *-ական* ածանցը:⁴ Մեր ուսումնասիրությունը ևս մեկ անգամ հաստատում է այս իրողությունը: Առավել հստակ պատկերացում կազմելու համար նշենք, որ եթե *-ական* ածանցով բաղադրությունները կազմում են վերջածանցավոր բաղադրությունների ընդհանուր թվի 11.13%-ը, ապա *-ային* ածանցով բաղադրությունները՝ ընդամենը 0.15%-ը: Ընդ որում, այս ածանցը չի հատկանշվում այլ ածանցների հետ զուգադրվելու ակտիվությամբ: Վկայված օրինակները, ինչպես՝ *կատարածային*, *սիրողային*, հազվադեպ հանդիպող են: Այն առավել ակտիվ է առաջնային հիմքով բաղադրություններում. *բժշկային*, *գործային*, *մթերային* և այլն:

Բառակազմական ակտիվությամբ է հատկանշվում նաև *-իք* ածանցը: Ընդ որում, զգալի բեռնվածություն ունեն այն կազմությունները, որոնցում այս ածանցը բաղադրված է անորոշ դերբայի ձևին, ինչպես՝ *ճաշակելիք*, *հպելիք*, *նայելիք*, *քթթելիք* և այլն: Բերենք օրինակներ նաև *-իք*-ով կազմությունների, որոնցում սերող հիմքը բայահիմք է. *ջախջախիք*, *պատարագիք*, *նստիք*, *ուտիք*, *դրուստիք*: Նշենք, որ շատ դեպքերում *իք*-ով բաղադրություններին զուգահեռ գործածվում են սրանց հոմանշային՝ *-անք*-ով, *-ումն*-ով, *-ք*-ով ձևերը, ինչպես՝ *ճապաղումն* և *ճապաղիք*, *ջախջախանք* և *ջախջախիք*, *դրուստանք* և *դրուստիք*, *քթթումն* և *քթթելիք*, *տաժանիք* և *տաժանք* և այլն:

Ի հակադրություն վերը բերված ածանցների՝ վիճակագրորեն նվազ հաճախակաություն ունեն *-պան*, *-ստան*, *-պատիկ*, *-ացու*, *-եղէն*, *-անուտ* և այլ ածանցներ: Բերենք օրինակներ վկայված կազմությունների.

- պան՝ պահպան, պահապան, ջրադացապան,*
- պատիկ՝ անբաւապատիկ,*
- ստան՝ բուրաստան,*
- ացու՝ վնասացու, ապականացու,*
- եղէն՝ անասնեղէն, արարչեղէն,*
- անուտ՝ հոսանուտ, վիժանուտ,*
- եան՝ յորդահոսեան, տապեան:*

Մեկ-երկու բառի արտահայտության պլանում են հանդիպում *-անի*. *արշաւանի*, *անդարձանի*, *-ացի*. *մուրցացի*, *-կէն*. *շրջկէն*, *հիւսկէն* և այլ ածանցներ:

Այժմ ներկայացնենք վերջածանցման կաղապարներում առավել հաճախակի իրացվող ածանցների քննությունը:

-Բար/-արար. Այս ածանցով կազմությունների մեծ մասում (78.03%) սերող հիմքն ունի մեկ հիմնական ձևույթ. *տեսարար*, *հպարար*, *ագողարար*, *զգայարար*, *երկիւղածարար*, *անթաքնարար* և այլն, ընդ որում, սերող հիմքում կարող են լինել ինչպես մեկ. *Պատողարար*, *իշխանարար* և *անմոռացարար*, *տգիտարար* (հիմնակաղապարները համապատասխանաբար՝ Saja և aSja) այնպես էլ երկու և ավելի ածանցներ: Այս տեսակետից նշենք, որ գործառական բեռնվածության առումով առաջին տեղում են երկվերջածանց կազմությունները. *զգաստարար*, *իմացականարար*, *ծանօթարար*, *պատմողարար* (հիմնակաղապարը՝ Saja), որին նվազող հաճախականությամբ հաջորդում են

⁴ Տե՛ս Էդյան Ս. -1963, Ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1963թ., էջ116:

կազմությունները, որում սերող հիմքն ունի և՛ նախածանց, և՛ վերջածանց. *անասնաբար, անհմաստաբար, անզգաստաբար* (հիմնակաղապարը՝ aSaja), ապա՝ երկնախածանց. *անընդհատաբար, անհմտաբար, գերազանցաբար* (հիմնակաղապարը՝ ajaSja) և եռավերջածանց կազմությունները. *երկիրդաբար, իմաստնաբար, իշխանականաբար* (հիմնակաղապարը՝ Saaja):

Հատկանշական է, որ միարմատ մեկ ածանցով կազմությունները քանակապես զիջում են կազմություններին, որոնցում սերող հիմքն ունի երկու և/կամ ավելի ածանց: Այս տեսակետից նշենք, որ շատ անգամներ ի հակադրություն «բար»-ով բաղադրությունների, որոնցում սերող հիմքն ունի «ան» նախածանցը՝ չեն վկայվել դրանց հականշային՝ առանց «ան»-ի ձևերը, ինչպես՝ *անդարձաբար, անծանաբար, անկարաբար, անդիպաբար* և այլն: Մյուս կողմից, երբեմն չենք կարող միանշանակ ասել՝ բառակազմական վերջին քայլում կցվել է «ան» նախածանցը, թե՞ «բար» վերջածանցը: Այսպես, *անմոռաց* և *մոռացաբար* ձևերը վկայված են ՆՀԲ-ում, և *անմոռացաբար* ձևը կարող ենք ընկալել և՛ որպես նախածանցավոր ((aS⁶)ja կաղապարով. *անմոռացաբար*), և՛ որպես վերջածանցավոր (a(S⁶ja) կաղապարով. *անմոռացաբար*) կազմություն:

Ինչ վերաբերում է Saja կաղապարում *-աբար* ածանցի՝ այլ ածանցների հետ զուգորդումներին՝ նշենք, որ վերջինս ակտիվ զուգակցում է *-ող* (*ագրողաբար, դատողաբար, դիպողաբար, իմացողաբար, պատմողաբար, վիճողաբար, փրկողաբար, տոփողաբար, որոճողաբար, տիրողաբար, տենչողաբար*), *-աւոր* (*գրաւորաբար, դատաւորաբար, դարձաւորաբար, կամաւորաբար*), *-ական* (*խոհականաբար, զղջականաբար, իմացականաբար*) ածանցների հետ: Բերենք նաև այլ ածանցների հետ զուգորդությունների օրինակներ.

- իչ+աբար. արարչաբար
- աժ+աբար. գթաժաբար,
- աստ+աբար. զգաստաբար,
- օն+աբար. զգօնաբար,
- ուն+աբար. թաքնաբար,
- եմ+աբար. խոհեմաբար,
- ուրդ+աբար. խորհրդաբար,
- օթ+աբար. ծանօթաբար,
- ան+աբար. իշխանաբար,
- որդ+աբար. կցորդաբար,
- ութին+աբար. փրկութիւնաբար:

Մինչ այժմ դիտարկեցինք այն բաղադրությունների կաղապարները, որոնցում սերող հիմքն ունի մեկ հիմնական իմաստակիր ձևույթ: Մերող հիմքում, սակայն, այդպիսիք կարող են լինել մեկից ավելի: Բերենք օրինակներ. *գթասիրաբար, ողջակիզաբար, քաջալերաբար, կանխագրաբար, շրջագայաբար, ձկնորսաբար, ինքնաշարժաբար* և այլն:

Թեև գործառական բեռնվածություն չունեն, բայցնայնպես վկայվել են բաղադրություններ, որոնցում սերող հիմքում հիմնական ձևույթներն իրենց հերթին ածանցա-

վոր են. *ամենիմաստաբար, վիպասանաբար, ինքնիշխանաբար, խոհեմասիրաբար, իմաստասիրաբար* և այլն:

-Ական ածանցով ևս իրացվում են բառակազմական ամենատարբեր կաղապարներ: Այն գործառական բեռնվածություն ունի հատկապես Saa կաղապարում, երբ սերող հիմքը վերջածանցավոր է, ընդ որում, զուգակցում է մեծ թվով ածանցների հետ.

- ող+ական. ընթերցողական,
- աւոր+ական. գործաւորական,
- ունդ+ական. ծննդական,
- ումն+ական. ուսումնական,
- ատակ+ական. յիշատակական,
- խտ+ական. հանգստական,
- ութին+ական. յարութինական,
- որդ+ական. կցորդական,
- ոյ+ական. հաճոյական,
- ուստ+ական. կորստական,
- օն+ական. կատարօնական,
- օթ+ական. ծանօթական,
- ուն+ական. խօսնական,
- ուրդ+ական. Խորհրդական,
- եմ+ական. խոհեմական,
- աստ+ական. իմաստական,
- իչ+ական. արարչական,
- ած+ական. Արարածական:

Պետք է նշել, որ *-ական* ածանցը գործառական բեռնվածություն ունի նաև եռածանց բաղադրություններում, որոնցում սերող հիմքը կազմությամբ երկվերջածանցավոր է: Բառակազմական կաղապարն այս դեպքում ավարտվում է *-ական* ածանցի կցումով: Բերենք մի քանի օրինակ.

- ոյշ+-ող+-ական. զգուշողական,
- աստ+-ուն+-ական. իմաստնական,
- օն+-աւոր+-ական. կրօնաւորական,
- ուած+-ող+-ական. հերձուածողական,
- պան+-ող+-ական. Պահպանողական:

Մեր ընտրանքում նախածանցավոր սերող հիմքով կազմությունները քանակապես զգալիորեն զիջում են վերջածանցավոր սերող հիմքով բաղադրություններին: Դժվար չէ նկատել, որ երկրորդային սերող հիմքում հաճախադեպ է *-ան* նախածանցի գործածությունը, ինչպես՝ *անարգելական, անզգայական, անիմացական, անգոյական, անբուսական, անբաւական, անաճական, անդարձական, անզննական* և այլն:

Բերենք օրինակներ նաև սերող հիմքում ա՛յլ նախածանց պարունակող վերջածանցավոր կազմությունների. *բաղաձայնական, գերագոյական, հակաճառական, համիմացական, նախադրական, չմոռացական, ստորասուզական* և այլն:

Առավել քիչ են բաղադրությունները, որոնցում սերող հիմքում առկա է և՛ նախածանց, և՛ վերջածանց: Այս կազմությունների սերող հիմքը հանդես է գալիս հիմնականում *-ան* ժխտական նախածանցով. *անասնական, աներկիւղական, անճանաչական* և այլն: Սրանց էլ քանակապես զիջում են այն կազմությունները, որոնցում սերող հիմքը երկնախածանցավոր է, ինչպես՝ *անտրամադրական*:

Բերենք օրինակներ նաև կազմությամբ բարդ. *ամենիմացական, ամենակալական, արեւելյական, արեւմտական, բանաստեղծական, եկամտական, կանխագիտական, իրատուական* և բարդածանցավոր. *միայնակեցական, բամբաստողական, զովասանական, ինքնաշարժողական, աստուածահաճոյական* սերող հիմքերով վերջածանցավոր բաղադրությունների:

-Ումն և **-անք** ածանցները առավելաբար կենսունակ են Տա պարզ կաղապարում: Դրվելով բայահիմքերի վրա՝ նրանք կերտում են բայանուններ, ինչպես՝ *ագղումն, այպանումն, գոյումն, դատումն, դարձումն, էլումն, էկումն, դեզերանք, բուժանք, գրօսանք, աշխարանք, յոխորտանք, ջախջախանք* և այլն: Պետք է նկատել, որ մասնավորապես *-ումն* ածանցը հաճախ ձևավորում է հիմքակազմական զուգաձևություններ՝ դրվելով բայի խոնարհման ներկայի և անցյալի հիմքերի վրա. *աճումն* և *աճեցումն, արբումն* և *արբեցումն, եռումն* և *եռացումն, շողումն* և *շողացումն* և այլն:

Այս ածանցները, կարելի է ասել, չեն հատկանշվում այլ ածանցների հետ զուգադրվելու ակտիվությամբ: Վկայված օրինակները, ինչպես՝ *ավետարանումն (-արան+ումն), աջողումն (-ող+ումն)*, խիստ սահմանափակ են:

-Ութին ածանցը ամենաարտադրողական ածանցն է հայերենի զարգացման բոլոր փուլերում: Այսուհանդերձ, այն քիչ է իրացվում Տա կաղապարում: Հանդիպող օրինակներ են՝ *զննութին, ասացութին, իմացութին, կացութին, արարութին, մնայութին* և այլն: Սրան հակառակ՝ այն ակտիվ է բարդ սերող հիմքով վերջածանցման կաղապարներում, ինչպես՝ *այրասպանութին, առակախօսութին, անձրեւածնութին, դիցապաշտութին* և այլն:

Վերջածանցավոր սերող հիմքով երկվերջածանց կազմություններում այս ածանցը ակտիվ զուգակցում է ամենատարբեր ածանցների հետ: Բերենք մի քանի օրինակ. *իշխան+ութին, պահպան+ութին, արգել+աւոր+ութին, արար+իչ+ութին (արարչութին), երև+ոյթ+ութին (երևութութին), տեսան+ող+ութին*:

Այս ածանցի համար հատկանշական պիտի համարել այն, որ բառակազմական վերջին քայլում կցվելով երկածանցավոր և եռածանցավոր սերող հիմքերի՝ այն ձևավորում է հանապատասխանաբար եռածանց և քառածանց բաղադրություններ, ինչպես՝ *-ունդ+ական+ութին՝ ծննդականութին, -օն+աւոր+ութին՝ զգօնաւորութին, -պան+ող+ական+ութին՝ պահպանողականութին, -ան+ող+ական+ութին՝ բաժանողականութին* և այլն: Այլ ածանցով արտահայտված բաղադրող մասով եռածանց և հատկապես քառածանց կազմությունները, ինչպես՝ *երկիւղածաբար, ներգործողականաբար*, խիստ սակավադեպ են:

Եզրահանգում. Ընդհանրացնելով վերջածանցման կաղապարներում իրացվող ածանցների գործառական բեռնվածության քննությունը՝ արձանագրենք, որ գործառա-

պես կենսունակ են *-ութիւն, -արար, -ական, -ումն, -անք*, նաև՝ *-եալ, -ած, -իչ* ածանցները: Եվս մեկ անգամ նշենք, որ դիտարկել ենք վերջածանցավոր այն կազմությունները, որոնցում վերջածանցը բառակազմական վերջին քայլում կցվել է բայահիմքով արտահայտված՝ կազմությամբ առաջնային կամ երկրորդային հիմքի, ասել է թե՛ որոնց սերող հիմքը *բայական* նախատիպ է:

СУФФИКСАЛЬНО-СЛОЖНЫЕ ОБРАЗОВАНИЯ С ВЕРБАЛЬНОЙ СОСТАВЛЯЮЩЕЙ В ГРАБАРЕ

Варданян А. А., Айрапетян С. А.

Ключевые слова: *грабар, глагольная основа, суффикс, суффиксально-сложное образование, модель, сочетаемость, функциональная нагрузка.*

В настоящей статье рассмотрено словообразовательное значение глагольных основ в суффиксально-сложных образованиях древнеармянского языка. Исследование основано на лексике произведений литературы пятого века, взятой нами из Нового словаря Айказян. Настоящее исследование подтверждает, что в суффиксально-сложных образованиях с вербальной составляющей заметно чаще встречаются следующие: *-ութիւն, -արար, -ական, -ումն, -անք*, также: *-եալ, -ած, -իչ*. В данной статье нами ещё были проанализированы функциональная нагрузка и сочетаемость суффиксов.

SUFFIX STRUCTURES WITH A VERBAL COMPONENT IN CLASSICAL ARMENIAN

Vardanyan A. A., Hayrapetyan S. A.

Key words: *Classical Armenian, verbal stem, suffix, suffix structure, pattern, compatibility, functionally loading.*

In the current paper we have examined the word-building value of the verbal stems in suffix structures in Classical Armenian. The studies based on the vocabulary, come down to us from our manuscripts. The words were taken from New Haigazian dictionary. The study once more shows that in suffix structures with a verbal component are noticeably frequent: *-ութիւն, -արար, -ական, -ումն, -անք, -եալ, -ած, -իչ*, etc. Also we have reverted to functionally loading and compatibility of the suffixes in suffix structures in Classical Armenian.

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. **Աղայան Է.-1984**, Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան, ԵՀ հրատարակչություն, 1984, 370 էջ:
2. **Էլոյան Ս.-1963**, Ածանցները ժամանակակից հայերենում: Երևան, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 242 էջ:
3. **Խաչատրյան Լ.-2011**, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում: Երևան, 272 էջ:
4. **Հովսեփյան Լ.-1987**, Գրաբարի բառակազմությունը: Երևան, Հայկ.ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 375 էջ:
5. **ՆՀԲ -1979, -1981**, Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, հ. 1, Երևան, հ. 2, Երևան:
6. **Ջահուկյան Գ.-1989**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն: Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 319 էջ:

*Ընդունվել է՝ 20. 03. 2022
Գրախոսվել է՝ 02. 04. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022*

Տեղեկություններ հեղինակների մասին

Աննա ՎԱՐՎԱՆՅԱՆ՝ Ծիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան, էլ. հասցե՝ anneta.anna.vardanyan@mail.ru

Մերգո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ բանասիրական գիտություններ դոկտոր, ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական կենտրոնի առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ serhayr@mail.ru, scient.works@shirakcenter.sci.am

ՀՏԴ՝ 81՝3

DOI: 10.52971/18294316-2022.25.1-143

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ԲԱՅԵՐԻ
ԵՆԹԱԿԱԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Հայա Գրքիկյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ արժույթ, անձնանիշ առարկաներ, իրանիշ առարկաներ, կենդանանիշ առարկաներ, ենթակաառու, բազմադաս, անանցողական բայեր, անցողական բայեր, կապակցելիություն:

Հոդվածում քննվում են ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերը՝ ըստ արժույթի արտահայտություններից մեկի՝ ենթակաառության: Կատարվում է խնդրո առարկա բայերի դասակարգում՝ ըստ ենթակաների տարբեր դասային խմբերի հետ կապակցելիության: Կատարվում է նաև վիճակագրական հաշվարկ:

Նախաբան. Ենթակայի և ստորոգյալի քերականական հարաբերության վերաբերյալ գոյություն ունի երկու կարծիք. մի խումբ լեզվաբաններ դրանք համարում են նախադասության համագոր անդամներ, մյուսները, այդ թվում՝ նաև բայի արժույթի ուսումնասիրությամբ զբաղվողները ենթական ստորադասում են ստորոգյալին:

Լինելով բայակենտրոն ուսմունքի¹ հետևորդ՝ Մ.Աբեղյանը հայ լեզվաբաններից առաջինն է ենթական համարում բայի լրացում: Նա գտնում է, որ ենթակա ասվում են այն լրացումները, որոնք բացահայտում են բայի դեմքը՝ որոշ կերպով ցույց տալով անող կամ եղող առարկան, որին վերագրվում է բայիմաստը կամ մի հատկանիշ²:

Ընդունելով, որ նախադասության գլխավոր անդամները հավասարապես անհրաժեշտ են, Է. Աթայանը նշում է, որ հատկապես կրավորական նախադասություններում ենթակայի՝ ուղիղ խնդրի փոխվելը ստիպում է մտածել, թե այն ուղիղ խնդրի պես

¹ Теньер Л. -1959, с.с. 117-123.

² Աբեղյան Մ. -1965, էջեր 370-371, 397-398:

ստորադաս է բային: Շարունակելով այս դրույթը՝ լեզվաբանը ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը դիտում է իբրև ստորադասական հարաբերության մի տեսակ³:

Գ. Ջահուկյանը ևս ենթական և ստորոգյալը նախադասության երկու հավասարազոր գլխավոր անդամներ չի դիտում: Ենթական բուն խոսքում կարող է նաև արտահայտված չլինել, մինչդեռ ստորոգյալը լեզվաբանորեն միշտ արտահայտվում է, քանի որ նախադասության միջուկային անդամն է⁴: Լեզվաբանը հայերենի բայերը բաժանում է անդիմասահմանափակ և դիմասահմանափակ խմբերի՝ գտնելով, որ անդիմասահմանափակ բոլոր բայերը՝ ա) ենթակաառու են և բ) տեսականորեն կարող են գործածվել բոլոր դեմքերով⁵:

Ըստ Մ.Ասատրյանի՝ «եթե բայի արժույթ հասկացությունից բացառենք բայի ենթակա առնելը կամ ունենալը, որովհետև հայերենում համարյա բոլոր բայերն էլ կարող են ենթակա առնել կամ ունենալ, ապա բայական արժույթ հասկացությունը կնույնանա ավանդական քերականության բայական խնդրառություն կամ կառավարում հասկացության հետ, այսինքն՝ բայի՝ խնդիրներ ու պարագաներ ընդունելու կամ առնելու հատկանիշի հետ»⁶:

Մ. Գյուլբուդադյանն անընդունելի է համարում ենթական (իրը, առարկան, երևույթը՝ մատերիան) բայի, ստորոգյալի (հատկանիշի, շարժման) լրացում դիտելը⁷: Նա ենթակայի և ստորոգյալի կապակցությունը համարում է ստորոգումային հարաբերություն՝ հավելելով. «...խոսքային կառուցում (իմաստի տեսակետից), ենթակայի հատկանիշը ցույց տալով, ստորոգյալը լրացնում է նրան, նրա իմաստի լրացումն է, մակերեսային կառուցում (կապակցության տեսակետից) ենթական բայի դեմքի լրացումն է»⁸:

Բայերի ենթակաառությանն անդրադարձել է նաև Գ.Խաչատրյանը: Նա նշում է, որ ենթակաառությամբ օժտված են գրեթե բոլոր դիմավոր բայերը, բացառություն են միայն մի քանի միադիմի բայաձևեր: Նա միաժամանակ նկատում է, որ ենթակա ստացող բայերը ենթակաառությամբ արժույթագուրկ կարող են դառնալ միայն խոսքում՝ տվյալ կիրառության մեջ, երբ հանդես են գալիս անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների գլխավոր անդամի շարահյուսական պաշտոնում⁹:

Ենթակաառությունը բայի արժույթի արտահայտություններից է, որը հատուկ է նրա խոնարհված ձևերին և դրսևորվում է վերջիններիս՝ ենթակայի հետ դեմքի ու թվի քերականական կարգերի համաձայնության եղանակով կապակցմամբ:

Ենթակաառությունը բնորոշ է ժամանակակից հայերենի թե՛ անցողական (ներգործական և պատճառական), թե՛ անանցողական (կրավորական և չեզոք) սեռի բայերին, որոնցից են՝ *բռնել, ջարդել, սիրել, խաղացնել, խմեցնել, հագցնել, բռնվել, ջարդվել, սիրվել, թմրել, հեռանալ, ննջել* և այլն:

³ Атаян Э. -1964, с. 64.

⁴ Ջահուկյան Գ. -2003, էջ 27:

⁵ Ջահուկյան Գ. -1974, էջ 468:

⁶ Ասատրյան Մ. -1987, էջ 90:

⁷ Գյուլբուդադյան Մ. -1967, էջ 28:

⁸ Գյուլբուդադյան Մ. -1988, էջ 13:

⁹ Խաչատրյան Գ. -2000, էջ 18:

Սույն հոդվածում մեր նպատակն է ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի ենթակատարական արժույթի ուսումնասիրությունը, որը կատարելիս առաջնորդվել ենք նկարագրական, վերլուծական, համադրական, երբեմն էլ՝ վիճակագրական մեթոդներով:

Ուսումնասիրության նյութ են ծառայել ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերը, որոնց թիվը հասնում է մոտավորապես 5500-ի¹⁰: Ըստ մեր հաշվարկների՝ սրանցից մոտ 3500-ը է խոնարհման են պատկանում, իսկ ավելի քան 2000-ը՝ ա խոնարհման: Հատկանշական է նաև, որ վերջիններիս կազմում գերակշռում են *ան* սուկաձանցավոր կազմությունները (շուրջ 1500 բայ):

Ժամանակակից հայերենում չեզոք սեռի բայերը ենթակատարության տեսանկյունից բաժանվում են երկու խմբի՝

Ա. ենթակատար բայեր,

Բ. ենթակա չստացող բայեր:

Ենթակատար չեզոք սեռի բայերը առանձնանում են անհամեմատ մեծ թվով: Դրանց հիմնական մասի ցույց տված գործողությունը հավասարապես կարող են կատարել և՛ եզակի, և՛ հոգնակի, բազմակի կամ հավաքական ենթականեր: Հմմտ. *նստմենակ չէր ընթրում* (ՍԶԵԺՑ - 616) և *որոնք* սփռոցի չորս բոլոր նստած լուռ *ընթրում էին*.... (ԱԲԵ - 213) և այլն:

Այս շարքի բայերից տարբերվում են՝

ա) միայն հոգնակի, հավաքական կամ բազմակի ենթականեր պահանջող չեզոք սեռի բայերը, ինչպես՝ *խոնվել, կանգնտել, համագոյակցել, համազարկել, համաթնել, համաձել, հարքտել, միաձայնել, նստոտել, պառկոտել, վիստալ* և այլն: Հմմտ. *Նստոտել են* անկանոն *կանայք* Աբդուլի (ԳՄ*) // *մի քանիսը* արդեն ներս *էին* եկել և ողջունելուց հետո պատի տակ *նստոտել* (ԱԲ*) // տախտակների վրա *նստոտել էին* Ջաքո բարեկամ մի քանի *գյուղացի, տերտերն ու Արաբաջին* (ԱԲԵ2 - 125) կամ՝ *Պառկոտել են լեռներն* ահա (ՊՄ*)//....մեկ այլ *քարավան*, Մեկ այլ վայրի հրամանով, Մեկ այլ տեղում *Պառկոտել է* իրար կողքի (ՊՄ*) // *Անտիպը և Ստրեմյաննիկովը* հաճույքով իջան ձիերից, կապեցին ձիերի երեք ոտները, թողին արածելու: *Պառկոտեցին* (ՄՇ*):

բ) Միայն մեկ առարկայի կողմից կատարվող գործողություն ցույց տվող չեզոք սեռի բայերը, ինչպես՝ *մենախոսել, մենականալ, մենանալ, մենասահել, միայնանալ, մեներգել* և այլն: Օրինակ՝ Կարծես *մենախոսում է Հակոբը*.... (ՍՍ*): Ինքը՝ ծովն էլ մթնեց, կարծես, ինչպես հովվի սիրտը նոր, Ա՛խ, ծովն ինքն էլ *մենակացավ*՝ ցնդեց ցնորքըն հեռավոր (ՀՇ): Երգչախմբին *մեներգում է* Մելանյան (ՄԿ): Քաշվել էր նա մեծ վրանից, *միայնացել* կարոտից, Միայն հույսն էր սիրտը շոյում, թե՛ կազատվես այս բանտից (ՀՇ): Ինքս ինձ հետ *մենացել*, Որք կարոտներս *ես* հաշվում (Վ):

Նշենք, որ բերված երկու ենթախմբերի բայերը աչքի են ընկնում սահմանափակ թվով:

¹⁰ Սա մեր հաշվարկման արդյունքն է (-Լ.Գ.):

Ա. Ենթակաառու չեզոք սեռի բայերը կարող են կապակցվել տարբեր դասային խմբերի ենթակաների¹¹, համաձայն որի՝ ժամանակակից հայերենում առանձնանում են չեզոք սեռի բայերի հետևյալ խմբերը¹²:

1. Միայն անձանիչ ենթականերին կապակցվող չեզոք սեռի բայեր, որոնք ցույց են տալիս անձ(եր)ի՝

1.1. ամենօրյա և/կամ հաճախակի կատարվող գործողություն, ինչպես՝ *բարնել, զանգահարել, ընթրել, թեյել, ժպտալ, նախաճաշել, սիրահարվել, սրճել* և այլն, որոնք ժամանակակից հայերենի ակտիվ բառապաշարն են ներկայացնում:

1.2. Ասացական գործողություն, ինչպես՝ *բարոյախոսել, դատարկաբանել, զվարճաբանել, ընդդիմախոսել, հրապարակախոսել, մենախոսել, շողակրատել, շատախոսել, չարախոսել, վայրահաչել, ցնդաբանել, քծնաբանել* և այլն: Մրանք սովորաբար բարդ ածանցավոր են և հիմնականում վերջանում են *բան* («խոսք» իմաստով)+ել կամ *խոսել* բաղադրիչներով, իսկ առաջին բաղադրիչը սովորաբար ցույց է տալիս տվյալ գործողության ձևը:

1.3. Մտածական գործողություն՝ *երկբայել, երկմտել, մտակենտրոնանալ, մտասուզվել, մտմտալ, մտորել* և այլն:

1.4. Հավաքական, համատեղ գործունեություն կամ գործողություն, որի կատարումը պահանջում է ակտիվ կամ պասիվ մասնակից, ինչպես՝ *աշխատակցել, աջակցել, արյունակցել, խորհրդակցել, համաձայնել, մրցակցել, պարապել, սրտացավել, վշտակցել, ցավակցել* և այլն, որոնք կազմությամբ հիմնականում բաղադրյալ են, և վերջին բաղադրիչը հնչյունափոխված *կից (կց)* արմատն է:

1.5. Նյութական, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, սոցիալական կամ այլ փոփոխություն. ինչպես՝ *աղքատանալ, թշվառանալ, հաշմանդամանալ, հարստանալ, հիվանդանալ, մահանալ, մեռնել, մուրացկանանալ, սնանկանալ, փողակալել* և այլն:

1.6. Դիրքի, վիճակի, կարգավիճակի (և այլն) փոփոխություն, ինչպես՝ *աթոռակալել, աղայանալ, թագավորանալ, իշխանանալ, պաշտոնանկվել, պատանդվել, պարոնանալ, ստրկանալ* և այլն, որոնք կազմվում են տիտղոս, զբաղմունք, պաշտոն, աստիճան ցույց տվող գոյականներից:

1.7. Տարիքին բնորոշ գործողություն, ինչպես՝ *երեխայանալ, երիտասարդանալ, զառամել, մանկանալ, պատանհանալ, ջահելանալ* և այլն, որոնց կազմությանը մասնակցում են անձի կյանքի որևէ ժամանակահատված ցույց տվող բառեր:

1.8. Ընտանեկան, սոցիալական վիճակով, միջանձնային հարաբերությամբ (ազգակցական կապ և այլն) պայմանավորված գործողություն, ինչպես՝ *ամուսնանալ, այրիանալ, եղբայրանալ, ընկերանալ, ընտանիքավորվել, խնամիանալ, հայրանալ, հարսնանալ, մայրանալ, որդիանալ, փեսայանալ, քույրանալ* և այլն, որոնց մի մասը միաժամանակ օժտված է նաև անձի հասուն տարիքը, այլն սեռը տարբերակող հատկանիշով:

¹¹ Դասակարգման մեջ նկատի ունենք 3 դաս՝ անձանիչ, կենդանանիչ և իրանիչ՝ անկախ վերջինիս մեջ ընդգրկված առարկաների թանձրացական թե վերացական լինելուց:

¹² Դասակարգման ժամանակ նկատի ենք ունեցել բայերի հիմնական իմաստները՝ զանց առնելով փոխաբերականները:

Այսպես՝ *հղիանալ, հարսնանալ, օրհորդանալ* բայերն, օրինակ, ենթադրում են իգական սեռի և չափահաս տարիքի ենթականեր, մինչդեռ *տղամարդանալ, փեսայանալ* և այլ բայեր՝ արական սեռի և չափահաս տարիքի ենթականեր:

1.9. Զբաղմունքին, հետաքրքրությանը, նախասիրությանը, մասնագիտությանը, հակումին բնորոշ գործողություն, ինչպես՝ *բանվորանալ, բյուրոկրատանալ, գողականանալ, դատափազել, երկրագործել, խոհարարել, կավագործել, հանցագործանալ, մասնագիտանալ, նվագավարել, ուսուցչագործել, ֆերմերանալ* և այլն, որոնք կազմվում են մասնագիտություն, աշխատանք, զբաղմունք, կենսակերպ, սոցիալական խավ, խումբ, դասակարգ ցույց տվող գոյականներից կամ ածականներից:

1.10. Մարզական ոլորտին վերաբերող գործողություն, այսպես՝ *բռնցքամարտել, գոտեմարտել, դահուկավարել, ըմբշամարտել, հեռացատկել, մենամարտել, մրցամարտել, չմշկել, սուսերամարտել* և այլն, որոնց կազմությանը գերազանցապես մասնակցում են տարբեր մարզաձևեր և մարզական գործիքներ, պարագաներ ցույց տվող գոյականներ՝ *դահուկ, ըմբիշ, չմուշկ, սուսեր* և այլն:

2. Միայն կենդանանիշ ենթականերին կապակցվող չեզոք սեռի բայերը ցույց են տալիս.

2.1. կենդանանիշ գոյականների կամ դրանց առանձին դասերի կենսաձևին բնորոշ գործողություն, ինչպես՝ *բնավորվել, բոժոժավորվել, երամանալ, թխսել, թնաբախել, թնածել, թնել, խրտնել, ճախրել, մակաղել, որջանալ, որջավորվել, չվել, պարսավորվել, սատկել, վարգել, փետրակալել* և այլն:

2.2. Կենդանիների արձակած զանազան ձայներ, այդ թվում՝

2.2.1. չորքոտանիների բնորոշ ձայներ, ինչպես՝ *բառաչել, գոռալ, խրխնջալ, կաղկանձել, կենտահաչել, կլանչել, հաչել, մայել, մլավել, ոռնալ, վնգստալ, վրնջալ* և այլն,

2.2.2. թռչուններին բնորոշ ձայներ՝ *բվալ, դայլայլել, ծլվլալ, ծուղրուղուել, կաղկղալ, կրնչալ, ճովողել* և այլն,

2.2.3. միջատներին բնորոշ ձայներ՝ *բզբզալ, բզզալ, բռռալ, բվվալ, բվվացնել, ծղծղալ* և այլն:

Կենդանիների արձակած զանազան ձայներ նշանակող մի շարք բայեր միաժամանակ տեղեկատվություն ունեն տվյալ կենդանու սեռի (հմմտ. *ծուղրուղուել* և *կչկչալ*), տարիքի (հմմտ. *բայել* և *մայել*), չափի, տեսակի (հմմտ. *ծլվլալ* և *կրնչալ*) մասին և այլն:

3. Միայն իրանիշ ենթակա պահանջող չեզոք սեռի բայերը կապակցվում են՝ ա) թանձրացական իրանիշ գոյականներով արտահայտված ենթականերին (*կարկաչել, համեղանալ, ոստակալել* և այլն), բ) վերացական իրանիշ գոյականներով արտահայտված ենթականերին (*անձրևոտել, գոյականանալ, ռնգայնանալ* և այլն):

Ժամանակակից հայերենի շուրջ 5500 չեզոք սեռի բայերից միայն իրանիշ ենթականերին կապակցվողների թիվը անցնում է հազարից: Դրանց ճնշող մեծամասնությունը կապակցվում է թանձրացական իրանիշ գոյականներին, և միայն որոշ բայեր, որոնց թիվը մի քանի տասնյակի է հասնում, հնարավորություն ունեն կապակցվելու վերացական իրանիշ գոյականներով արտահայտված ենթականերին:

Ինչպես անձնանիշ և կենդանանիշ, այնպես էլ իրանիշ ենթականերին կապակցվող չեզոք սեռի բայերը իմաստային տեսանկյունից միատարր չեն: Մի շարք բայեր ցույց են տալիս.

3.1. լեզվական իրողությունների փոփոխություն, ինչպես՝ *ածականանալ, աշխարհաբարանալ, գոյականանալ, գրականանալ, ենթակայանալ, հոգնակիանալ, մակբայանալ* և այլն, որոնք հիմնականում կապակցվում են վերացական իրանիշ գոյականներով (*բառ, լեզու, խոսք, հնչույթ* և այլն) արտահայտված ենթականերին:

3.2. Մի վիճակից, ձևից, որակից մեկ ուրիշ վիճակի, ձևի, որակի անցում: Այս բայերը, ըստ կազմության, դասակարգվում են երկու ենթախմբով.

3.2.1. Թանձրացական գոյական+ *ան+ ալ* կաղապարով կերտվող բայեր, ինչպես՝ *սպակիանալ, ասուպանալ, արձանանալ, երկայթանալ, մագաղաթանալ, ոսկրանալ, պողպատանալ, քարանալ, ֆոսֆորանալ* և այլն:

3.2.2. Ածական+ *ան+ ալ* կաղապարով կերտվող բայեր, ինչպես՝ *անհոտանալ, անվերջանալ, լայնանալ, կլորանալ, հաստանալ, նեղանալ, տափականալ, քառակուսիանալ* և այլն:

3.3. Ուտելիքի և ըմպելիքի համի, հոտի, վիճակի փոփոխություն, ինչպես՝ *ալկոհոլանալ, աղիանալ, անալիանալ, եռալ, թթվել, համեղանալ, հոտել, շաքարակալել, շաքարանալ, պահածոյանալ, քաղցրանալ, քացախանալ* և այլն:

3.4. Որևէ ազգին կամ տարածքին, երկրին, քաղաքին, միջավայրին բնորոշ փոփոխություն, ինչպես՝ *անգլիականանալ, արևելականանալ, եվրոպականանալ, երևանվել, լատինականանալ, հայաստանանալ, հայկականանալ, ռուսականանալ* և այլն, որոնք հիմնականում կազմվում են տեղանուն, աշխարհագրական միջավայր, տեղանք ցույց տվող հատուկ գոյականներից (*Անգլիա, Եվրոպա, Հայաստան* և այլն) և ածականներից (*լատինական, հայկական* և այլն):

3.5. Գունային փոփոխություն, որոնք կազմվում են գույն, երանգ ցույց տվող ածականներից (*ալ, բոսոր, դեղին, կանաչ սպիտակ, սև* և այլն) և որոշ գոյականներից (*ծիրան, մոխիր*), ինչպես՝ *ալանալ, աշխեստանալ, բոսորանալ, դեղնել, ծիրանանալ, կանաչել, կապտել, կարմրել, ճերմակել, մոխրագունել, սպիտականալ, սպիտակել, սևանալ* և այլն:

3.6. Թանձրացական առարկաների արձակած ձայներ, այսպես՝ *դղրդալ, դրըխկալ, դրմփալ, զնգալ, զրնգալ, թխկալ, թշթշալ, թրխկալ, թրմփալ, խոխոջալ, կարկաչել, դողանջել, ճարճատել, ճոնչալ, շառաչել, որոտալ, վզզալ, վշշալ, քջքջալ* և այլն, որոնք բնաձայնական բայեր են, ցույց են տալիս հարվածից, շփումից, հպումից արձակած ձայն և կապակցվում են պինդ կամ հեղուկ մարմին նշող գոյականներին:

3.7. Բուսական աշխարհի որևէ դասին, ազգին, տեսակին վերաբերող կամ նրան բնորոշ գործողություն, ինչպես՝ *արմատակալել, բողբոջել, ընձյուղել, թառամել, թփակալել, ծաղկել, կոկոնակալել, ճյուղարձակել, մոլախոտել, շուշանվել, ոստակալել, սոսափել, վարդանալ, ցողունավորվել* և այլն, որոնց կազմության մեջ, որպես կանոն, գերազանցապես հանդես են գալիս բուսանուններ (*շուշան, վարդ* և այլն) և բուսաբանական այլ տերմիններ (*արմատ, ճյուղ, ոստ, ցողուն* և այլն):

4. Բազմադաս ենթականերին կապակցվող բայեր, որոնք ուսումնասիրելուց առաջ նշենք, որ բազմադասությունը լինում է երկու տեսակ՝ անսահմանափակ և սահմանափակ:

4.1. Անսահմանափակ բազմադասության դեպքում բայերը կարող են կապակցվել բոլոր դասային խմբերի ենթականերին: Այդ բայերից են՝ *ակտիվանալ, աճել, անհետանալ, ավելանալ, բազմանալ, բարձրանալ, ընկնել, թերաճել, իջնել, կորչել, մեծանալ, մնալ, նվազել, շատանալ, պակասել, սվավալ, վիթխարանալ// վիթխարիանալ, փոքրանալ, փոքրիկանալ, քչանալ* և այլն:

4.2. Մահմանափակ բազմադասության դեպքում բայերը կարող են կապակցվել ոչ բոլոր դասային խմբերի ենթականերին (միայն անձնանիշ ու կենդանանիշ, միայն կենդանանիշ ու իրանիշ և այլն): Դրանցից են՝

4.2.1. Բայեր, որոնք ցույց են տալիս անձնանիշ և կենդանանիշ առարկաներին վերաբերող գործողություն, ինչպես՝ *աշխուժանալ, արթնանալ, գալ, գնալ, գոռալ, դաժանանալ, զարթնել, թռչել, լողանալ, կաղալ, կատաղել, հոգնել, ծարավել, ծերանալ, կանգնել, հաղթել, մազակալել, մսակալել, մտնել, նիրհել, ննջել, նստել, շշմել, չարանալ, պառավել, պառկել, պզգել, սողալ, սովածանալ, վազել, տնքալ, տնքտնքալ, ցատկել, փախչել, քայլել, քնել, քոստանալ, քրտնել, օգնել* և այլն:

4.2.2. Բայեր, որոնք ցույց են տալիս երկու դասային խմբի առարկաների արձակած ձայներ, այդ թվում՝

4.2.2.1. անձնանիշ և կենդանանիշ առարկաներին բնորոշ ձայներ, այսպես՝ *խոխոսալ, ծկլթալ, ծղրտալ, մոմոսալ, մոնչալ, վայել, տզզալ, տզվզալ, տզտզալ* և այլն:

4.2.2.2. Անձնանիշ և թանձրացական իրանիշ առարկաներին բնորոշ ձայներ, ինչպես՝ *գվզվալ* (1. Սուր ճիչ արձակել, 2. շաչել, շչել), *ճտպտալ* (1. ճտճտալ, 2. (երեխաների) թոթովել, նոր լեզու ելնել, 3. Խայտալ, հրճվել, ուրախանալ), *ճտվտալ* (ճտպտալ) և այլն:

4.2.2.3. Թանձրացական իրանիշ և կենդանանիշ առարկաներին բնորոշ ձայներ, այսպես՝ *գվզվալ* [1. դունդունալ, ձայն հանել, երգել (աղավնու, կաքավի)], 2. Դղրղալ, թնդալ), *թշշալ, ճկալ* [1. ճկոց դուրս գալ, լսվել, 2. Ընդհատ-ընդհատ ձայն հանել (թոշուներ)] և այլն:

Բ. Ի տարբերություն ենթակատար բայերի՝ ժամանակակից հայերենում, պայմանավորված բառիմաստով, առանձին խումբ են կազմում չեզոք սեռի մի քանի բայեր, որոնք՝ ա) արտահայտության պլանում ունեն դիմաթվային սահմանափակություն և բ) չեն կարող ենթակա ստանալ, այսինքն՝ ենթակատարության տեսանկյունից արժույթագուրկ են, ինչպես՝ *Մթնեց: Լուսացալ: Անձրևում է: Չյունել է* և այլն: Գ. Ջահուկյանը այս կարգի կառույցները դասում է «վիճակա-եղանակային» անդամ նախադասությունների շարքը՝ նշելով, որ դրանցում «արձանագրվում կամ գնահատվում է որևէ անմիջական իրավիճակ ... որպես իրական ենթակա (*Ցրտում է, Ցուրտ է ...*)¹³: Նա այդ բայերն անվանում է *միադիմի, միադեմ* կամ *գրո արժույթի* տերմիններով և իրավացիորեն նշում. «Հայերենում բուն միադեմ բայերը մեծ թիվ չեն կազմում՝ *ամպել, անձրևել, երեկոյանալ,*

¹³ Ջահուկյան Գ. -1974, էջ 396:

լուսանայ, ձյունել (ձնել), մթնել, ցրտել»¹⁴: Նշվածներից բացի՝ ժամանակակից հայերենի՝ ենթակաառության արժույթագուրկ համադրական բայերից են նաև՝ *ամատնանայ, աշունանայ, աշունվել, առավոտանայ, արևել, գարունանայ, գիշերանայ, իրիկնանայ, կայծակել, կարկտել, ձմեռնանայ, ցերեկանայ*:

Եզրահանգում. Ուսումնասիրելով ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի ենթակաառական արժույթը՝ գալիս ենք այն եզրակացության, որ գրեթե բոլոր չեզոք սեռի բայերը ենթակաառու են: Նրանց մի մասը կարողանում է կապակցվել միայն որևէ դաս ներկայացնող ենթականերին, մյուսները բնութագրվում են տարբեր դասային խմբերի ենթականերին կապակցվելու հնարավորությամբ: Կապակցելիության տեսանկյունից մեծաթիվ են անձնանիշ, ապա իրանիշ ենթականեր պահանջող բայերը, իսկ կենդանանիշ և բազմադաս ենթականեր ստացող բայերն ունեն համեմատաբար սահմանափակ թիվ: Ան սուկածանցով կազմությունները, որոնք ենթակաառու չեզոք սեռի բայերի ճնշող մեծամասնությունն են՝ ավելի քան 70 տոկոսը, գերազանցապես կապակցվում են անձնանիշ ենթականերին (մոտավորապես 1500 բայ), մինչդեռ սահմանափակություն են դրսևորում իրանիշ, կենդանանիշ կամ բազմադաս ենթականերին կապակցվելու առումով: Կարծում ենք՝ ասվածը պայմանավորված է անձերի գործունեության ոլորտների բազմազանությամբ: Որոշ բայերի ցույց տված գործողությունը միաժամանակ տեղեկատվություն է պարունակում տվյալ անձնանիշ կամ կենդանանիշ առարկայի սեռի, կյանքի որևէ ժամանակահատվածի մասին: Չեզոք սեռի բայերի ճնշող մեծամասնությունը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որի կատարման համար կարող է ենթադրվել թե՛ մեկ և թե՛ մեկից ավելի կատարող, և միայն սակայթիվ բայեր են, որոնց ցույց տված գործողությունը կարելի է վերագրել միայն մեկ կատարողի կամ միայն մեկից ավելի կատարողների:

СУБЪЕКТНАЯ ВАЛЕНТНОСТЬ НЕПЕРЕХОДНЫХ ГЛАГОЛОВ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Гркиян Л. О.

Ключевые слова: *валентность, существительные, обозначающие лицо, существительные, обозначающие предметы, субъектная валентность, мультифункциональные существительные, переходные глаголы, переходные глаголы, сочетаемость.*

Исследуя субъектную валентность (способность сочетаться с подлежащим) переходных глаголов в современном армянском языке, мы приходим к выводу, что почти все эти глаголы принимают подлежащее. Некоторые из них могут сочетаться только с подлежащими, представляющими один класс, другие же, характеризуются способностью сочетаться с подлежащими, обозначающими разные классы. С точки зрения сочетаемости, большинство составляют глаголы, которые сочетаются с существительными, обозначающими лицо, за ними следуют глаголы, требующие после себя существительное, обозначающие предмет, глаголы, которые сочетаются с существительными обозначающими животных и мульти-

¹⁴ Նույն տեղում, էջ 468:

функциональными существительными, имеют относительно ограниченное количество. Глаголы, образованные с помощью суффикса «ան», составляющие подавляющее большинство непереходных глаголов, более 70%, в большинстве своем относятся к тем, которые принимают подлежащие, выраженные существительными, обозначающими лицо и предмет (более 1500 глаголов), проявляя при этом ограничения по отношению к подлежащим, выраженным существительным обозначающим животных и мультифункциональным. По нашему мнению, вышесказанное обусловлено разнообразием сфер деятельности людей. Действие, показанное некоторыми глаголами, также содержит информацию о поле и возрасте существительного, обозначающего лицо или животное. Подавляющее большинство непереходных глаголов указывают на действие, которое может быть выполнено только одним или несколькими исполнителями; есть лишь несколько глаголов, действие которых можно отнести только к одному или более чем одному исполнителю.

SUBJECT VALENCY OF INTRANSITIVE VERBS IN MODERN ARMENIAN

Grkikyan L. H.

Key words: *valency, nouns denoting person, nouns denoting objects, nouns denoting animals, subject valency, multi-class nouns, intransitive verbs, transitive verbs, compatibility.*

Examining the subject valency (the ability to combine with the subject) of intransitive verbs in modern Armenian, we come to the conclusion that almost all of these verbs take a subject. Some of them can only be combined with subjects representing one class, while others are characterized by the ability to combine with subjects denoting different classes. In terms of compatibility, the majority are verbs that combine with nouns denoting a person, followed by verbs that require a noun, denoting an object after them, verbs that combine with nouns denoting animals and multi-class nouns have a relatively limited number. Verbs formed with the suffix "ան", which make up the vast majority of intransitive verbs, more than 70%, mostly refer to those that take subjects expressed by nouns denoting a person and a thing (more than 1500 verbs), while showing restrictions in relation to subjects, expressed by nouns denoting animals and multi-class ones. In our opinion, the abovementioned is due to the diversity of human activities. The action expressed by some verbs also contains information about the gender and age of the noun denoting a person or animal. The vast majority of intransitive verbs indicate an action that can only be performed by one or a few performers; there are only a few verbs whose action can only be attributed to one or more than one performer.

Համառոտագրություններ

ԱԲ - Ակսել Բակունց

ԳՍ - Գեղամ Սարյան

ՀՇ - Հովհաննես Շիրազ

ՄՇ - Միխայիլ Շոլոխով

ՊՍ - Պարույր Սևակ

ՄԿ - Միլվա Կապուտիկյան

ՄՄ - Մոս Սարգսյան

Վ - Վարանդ

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աբեղյան Մ. -1965**, Հայոց լեզվի տեսություն, «Միտք», Երևան:
2. **Ասատրյան Մ. -1987**, Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, ԵՎ հրատարակչություն, Երևան:
3. **Գյուլբուրդյան Ս. -1967**, Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, ԵՎ հրատարակչություն, Երևան:
4. **Գյուլբուրդյան Ս. -1988**, Ժամանակակից հայերենի շարահյուսություն, պարզ նախադասություն, ԵՎ հրատարակչություն, Երևան:
5. **Խաչատրյան Գ. -2000**, Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, «Վան Արյան», Երևան:
6. **Ջահուկյան Գ. -1974**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան:
7. **Ջահուկյան Գ. -2003**, Շարահյուսական ուսումնասիրություններ, «Աստղիկ» հրատարակչություն, Երևան:
8. **Атаян Э. - 1968**, Предмет и основные понятия структурального синтаксиса."Митк". Ереван.
9. **Теньер Л. -1959**, Основы структурного синтаксиса. "Прогресс". Москва.

Աղբյուրների ցանկ

1. Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու 12 հատորով, հատոր 8, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1983, 703 էջ - ՍՁԵԺ8:
2. Ակսել Բակունց, Երկեր (ՀԴԳ), Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1986, 672 էջ – ԱԲԵ:
3. Ակսել Բակունց, Երկեր չորս հատորով, հատոր 2, Երևան, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979, 715 էջ - ԱԲԵ2:

Ընդունվել է՝ 25. 02. 2022
Գրախոսվել է՝ 27. 03. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Լալա ԳՐՔԻԿՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հայցորդ, էլ. փոստ՝ Grkikyan999@gmail.com

ՀՏԴ՝ 81՝ 23

DOI: 10.52971/18294316-2022.25.1-153

**ԲԱՆԱԶԵՎԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԶԻ
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Կարինե Սահակյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *արքետիպ, ազգային մտածողություն, արժեքանություն, ես-կոնցեպցիա, ասույթաբանություն, ստրես, ֆրուստրացիա, նշան և սիմվոլ:*

Հողվածում անդրադարձ է կատարվել էքստրեմալ իրավիճակներում բանավոր բանաձևային դարձվածքներին, որոնք մեծ ժամանակի ծիրում բյուրեղացել են և յուրացվել ժողովրդի կողմից, միտված են դյուրին դարձնելու, զորացնելու անձի ես-համադրությունը, հոգեկան հատկությունների համակարգը, հոգեկերտվածքի հուզականային արտահայտությունները, ի վերջո ինքնապաշտպանական մեխանիզմները՝ համակերպումը, հարմարումը, էթնոսի մշակութային ընկալումը այլ էթնոսի կողմից՝ հզորացնելով անձի ես-ը:

Նյութը քննության է առնված՝ նկատի ունենալով Հայաստանը ստրեսների (աղետ և Արցախյան 44-օրյա պատերազմ) կիզակետում:

Նախաբան. Ավանդական բանավոր մշակույթում կայուն բանաձևային նմուշները ազդում են էթնոկիրների վարքի վրա, քանի որ տվյալ հանրությունում ընդունված են որպես ավանդական վարքակարգեր: Խոսքային ասույթները հարստացնում են մեր ներքին ու արտաքին փորձը: Բանաձևային բանավոր նմուշները, պատմությունները, անհատի կամ խմբի պատկերացումները կարող են լինել ինչպես գիտակցված, այնպես էլ ենթագիտակցական և ազգային արժեքանության բաղադրիչներ: Արժեքանության ամենամեծ արժեքը արքետիպերն են՝ համամարդկային ժառանգական մտապատկերները, որոնք հատուկ են բոլոր մարդկանց՝ անկախ ռասայից և էթնիկական պատկանելություն-

նից¹: Վ. Տոպոբովի «Տարածությունը և տեքստը» հոդվածում զարգացվում է տեքստը որպես կազմակերպված իմաստային տարածություն ներկայացնելու գաղափարը: Բախտինից մինչև օրս խոսվել է տեքստի սկիզբն ու վերջը կազմակերպող լեզվական միջոցների մասին: Կան տեքստերի տեսակներ, որոնց մեջ սկիզբն ու վերջն այնքան կայուն են, որ կոչվում են խոսքային բանաձևեր (օր.՝ հեքիաթում՝ լինում է, չի լինում, կար-չկար, եղել է-չի եղել, ժուկով-ժամանակով)²:

Գերմանացի ուսումնասիրողները շրջանառության մեջ դրեցին *տեքստի տեսակ* եզրույթը, որը Չերնյավսկայան թարգմանում է *տեքստի տիպ*: Մրա տակ հասկացվում է կառույցի և նմանատիպ տեքստերի ընկալման կադապար, նմուշ կամ կառուցվածքային նախատիպ, որի օրինակով կարող են կառուցվել այլ տեքստեր՝ տարբեր բովանդակային հագեցվածությամբ: Այլ կերպ ասած՝ տեքստի տիպը համապատասխանում է անփոփոխակ կադապարին: Կայուն բանաձևերը օգտագործելով որպես ինքնապաշտպանական մեխանիզմի հզորացման ձևեր՝ էքստրեմալ իրավիճակներում ֆրուստրացիա ապրող անհատը ձգտում է պաշտպանել իր *էս*-ի ամբողջությունն ու դրական ինքնագնահատականը: Իսկ էթնոսը կիրառում է այն, ինչ դրականորեն համապատասխանում է իր *մենք*- կոնցեպցիային: Ասույթը կոգնիտիվ (իմացական) ինքնապաշտպանության ձևերից մեկն է: Խոսքային ասույթն անհատը վերագրում է իրեն, տեսնում է իր մեջ: Մա յուրահատուկ ներքին պրոյեկցիա է: Այս ամենն ունի նաև ժառանգորդական պայմանավորվածություն, որով կապ է հաստատվում ազգային լեզվի և էթնոսի մտածելակերպի հարաբերակցության միջև: Կայուն դարձվածքները հոգեկան կերտվածքի մեջ կարող են փոփոխություններ մտցնել՝ պաշտպանական ռազմավարություն մշակելով: Ասույթն ազդում է անձի բազային հատկությունների վրա:

Մտածողության նախեղակ ձևերն իրենց բնույթով իրական են, փորձով հաստատված և միստիկական են: Կայուն դարձվածքները պատմականորեն ուղեկցել են մարդուն, դարերի ընթացքում հաստատվել նրա փորձառությամբ: Այդ դարձվածքներն ունեն արքետիպային բնույթ, ուստի պաշտպանում են մեզ: Բանաձևային կայուն արտահայտությունները մեզ գերկողմնորոշիչ հղումներ են տալիս և ունեն անցյալ-ներկա-ապագա ուղղվածությամբ փոխհարաբերություններ: Խոսքային ասույթի ձևավորումը դիտում ենք իբրև վաղնջական մտքի փորձը նկալման յուրահատուկ արդյունք կամ բանավոր ավանդության այնպիսի տեսակ, որ ծագել է արքետիպային մտածողության հիման վրա: Խոսքային ասույթները շատ կարևոր են տվյալ էթնոսի պահպանության համար և իբրև մտքի հստակեցման մարմնավորումներ՝ արտացոլվում են ազգի կամ ժողովրդի կյանքում վճռական պահերին, հատկապես հոգեբանական մեծ լարվածության դեպքում (բնական աղետ, ջրհեղեղ, արհավիրք, պատերազմ և այլն): Ակնհայտ է հարաբերակցությունը խոսքային ասույթի և դրա հիմքի վրա ձևավորված ծիսակարգի, հավատալիքների ու տոների միջև:

Կայուն դարձվածքները մեր մեջ արթնացնում են առավել ուժգին ձայն, քան մեր սեփականն է: Ժողովրդական բանավոր մտածողությամբ խոսողը հազար ձայնով է խո-

¹ Նալչաջյան Ա. -2000, էջ 503:

² http://language.sci.am/sites/default/files/tigranowhi_tsolaki_nersesyan.pdf

սում, գերում է ու խոնարհեցնում, նկարագրվածը բարձրացնում է եզակիությունից և ժամանակավորից դեպի հավերժ գոյի ոլորտը: Եվ այս ճանապարհով մեր մեջ ազատագրվում են բոլոր այն ուժերը, որոնք հավերժորեն օգնում են մարդկությանը ազատվելու ամեն վտանգից³: Այսպիսով՝ խոսքային ասույթը ձևով ու բովանդակությամբ առնչվում է մեր կյանքի ընթացքին:

Կայուն բանաձևերը նպաստում են անձի հոգեկան հավասարակշռության և հոգեկան ամբողջականության վերականգնմանը, անհատական թերությունների փոխհատուցմանը, հնարավոր վտանգներից զգուշացմանը: Ըստ էության, ժողովրդի բանավոր ավանդության փորձը տեղեկատվական մոդել է, որն օգնում է մեզ կատարելագործվելու և ասիմիլյացվելու նոր փորձառությունների մեջ՝ արդեն գոյություն ունեցող իմացական համակարգի կառույցներում: Մեր և ուրիշների փորձից էլնելով՝ այս ասույթները դարերի փորձառություն են ներառում՝ աջակցելով ապագայի իմացությանը: Ընդլայնում են մեր ճանաչողական կարողություններն ու նպաստում ինքնադիմանկարի կերտմանը: Խոսքային ասույթն ունի էթնիկական իրականություն և բարեբար ազդեցություն է գործում անձի վրա: Այն ճանաչողական նշան է՝ սերնդեսերունդ բանավոր փոխանցված, անձի ներաշխարհով պայմանավորված: Անձի՝ խոսքային ասույթի ընտրությամբ պայմանավորված՝ կարելի է հասնել նրա ախտորոշման՝ պարզաբանելով խոսքի անդրադարձների աղբյուրը: Այդ ամենը նաև մշակութային հաղորդակցման եղանակ է, ներքին տպավորությունների ենթագիտակցական արտացոլում: Մենք անհատին դիտում ենք իբրև նրա հոգեբանության ու հանրույթի ավանդույթների կրողի, այն է՝ մշակութային դրսևորման մեջ, ծեսերի, սովորույթների, ավանդակարգերի համակառույցում՝ խոսքը համարելով մշակույթ՝ էքստրեմալ վիճակների ընդգրկումով: Ամեն դեպքում հոգեկանի բոլոր արդյունքները՝ պատկերի կամ վարքի ձևի պոտենցիալը, անձի մեջ գոյություն ունեն մինչև արտահայտվելը: Խոսքային ասույթ դառնալուց հետո ներառում է մարդկային կերպարներ ու փորձ:

Ակնհայտ է, որ ասույթների կենսագործունեությունը մարդու մեջ բացվում է էքստրեմալ ճգնաժամերի պահին, անհատականացման գործընթացում և սերտորեն առնչվում է անձի ճակատագրին՝ հարստացնելով նրա անձնական փորձը: Խոսքային ասույթը հիշելու նպատակը բնավ ինչ-որ հակասության լուծման համար տրամաբանական մոդելի առաջադրում չէ: Նրա զարգացման ներքին միտումներն ընթանում են պարույրաձև, մինչև ինտելեկտուալ իմպուլսի սպառումը: Նշանակում է՝ ասույթի իմաստային աճն անընդմեջ է՝ ի տարբերություն նրա կառուցվածքի, որ մնում է ընդհատված⁴:

Բանաձևային ասույթաբանության լեզուն հատկանշվում է ժողովրդական մտածողության բնույթով: Ինչպես է տեքստը կամ բանաձևային ասույթը ծածկագրվում լեզվի միջոցով, իսկ ունկնդրի հոգեկանում՝ ապաճածկագրվում, ըմբռնվում իմաստային կողմով: Ըստ Յունգի⁵՝ երազների լեզուն նույնքան բարդ է, որքան գիտակցական աշխար-

³ Юнг К. -1991. с. 46.

⁴ Леви Стросс К. -1983. с. 121.

⁵ Юнг К. -1991. с. 45.

հում հնչող լեզուն, այն բաղադրված է առասպելական կերպարներից և առավել բարդ է ու պատկերավոր, քան համապատասխան տպավորությունները սովորական կյանքում:

Մեզ հետաքրքրում է լեզվի միջոցով անձի հոգեկան առանձնահատկությունների ու հոգեկան բովանդակությունների (մտքեր, զգացմունքներ, հուզական վիճակներ) արտահայտման խնդիրը: Թեպետև բառային նշաններն ունեն տվյալ ազգամշակույթում համընդհանուր կողմից ընդունված նշանակություններ, այնուամենայնիվ յուրաքանչյուր բառ, խոսքային գործունեության դրսևորման յուրաքանչյուր միջոց ունի անձնային իմաստ ու շեշտվածություն:

Էքստրեմալ վիճակում կիրարկում ենք խոսքային ասույթի այն ձևերն ու բովանդակությունը, որի կարիքն ունի մեր հոգեկան աշխարհը, և որոնք համապատասխանում են մեր կյանքի բովանդակությանը:

Խոսքային ասույթը հարուստ է ժողովրդի լեզվամտածողությանը բնորոշ կայուն բանաձևերով, որոնք խոսքի հյուսվածքի մեջ լեզուն դարձնում են սեղմ, դիպուկ ու պատկերավոր: Հոգեբանական բարդ իրավիճակներ վերարտադրելիս, կախված սեռատարիքային առանձնահատկություններից, պատմամշակութային զարգացման մակարդակից ու կենսափորձից, անձը հաճախ նախընտրում է լեզվական ասույթների գործածումը, ինչպես 88-ի աղետից հետո գրառված երազների օրինակներում. «...արյունով ձեռքերը կլվար, խաչը աչքիս թեքվել էր, աչքիս լուսը բուռս էր թափվել, // արևս չկալավ, սևն էնքան շատ էր, որ արևս բռնել էր, սև առավոտ ելանք և այլն»: Այս արտահայտությունները, լինելով մտքի արտահայտման ազգային ձևեր, թանձրացնում են ժողովրդական կենսափորձի հոգևոր ընթացքը՝ միաժամանակ հնարավորություն տալով խուսափելու լեզվի միապաղաղությունից ու կրկնաբանությունից: Լեզվին հատուկ է խոսքային-տրամաբանական կամ սիմվոլիկ հիշողությունը:

Տեքստի մտապահման, պահպանման ու վերարտադրման գործընթացներն արտահայտվում են լեզվական խորհրդանիշների և խոսքի օգնությամբ: Միմվոլիկ հիշողությունն առավել արդյունավետ է դարձնում խոսքը: Հայտնի հոգեբան Ջ. Միլլերը պնդում է, որ լեզվի ծածկագրման գործընթաց իրականանում է այն ժամանակ, երբ մենք մեր ապրումներն արտահայտում ենք բառերով և ավելի շատ մտապահում ենք այդ բառերը, քան ապրումները: Խոսքային-տրամաբանական հիշողությունը ձև է տալիս մեր ընկալումներին: Քանի որ ժողովրդական լեզվամտածողության կենդանի բաբախը պայմանավորված է բառապաշարի մեջ դարձվածքային միավորների թափանցմամբ, ապա յուրացմամբ:

Մարդու հոգեկանի անբաժանելի բաղադրատարրեր են հույզերն ու զգացումները, որոնք գերլարված (ստրեսային) իրավիճակներում վերաճում են հուզական բարդությունների: Հուզականությունը, հատուկ լինելով նաև իմացական գործընթացներին, հետաքրքրական դրսևորում է ստանում նաև բանաձևային ասույթներում. խոսքային ասույթի կիրարկմամբ պատմողը հասնում է հոգեբանական նյութի բնեռացման: Մտքի կենսական տարածության սահմաններն ընդլայնվում են կենսագրական նյութի ներթա-

փանցումով, որ վերաճում է ազգային ճակատագրի հոգեբանական պատկերի: Վկայաբերենք հետերկրաշարժյան երազների տեքստերից գրառումներ⁶.

«Ձանի վրա սաղ տեղ չէին թողել, սրբերը ծեծեցին, մարտիրոսեցին բալիս, դռը դեմ տվեց, սաղ ազգի տեղ գնաց, մեղեց-մեղտրեց» արտահայտչաձևերը երազային տեքստի հյուսվածքի մեջ դառնում են հուզական վիճակի բեռնվածության կենտրոն: Մասնահատուկ իմաստավորում են պահանջում ժողովրդական լեզվամտածողության բանաձևային ասույթների (անեծք, օրինանք, առած, ասացվածք, ողբերգ) փոխանցումը երազային մտածողությանը: Այսպես օրինակ.

սև ջուր վազել – սևջրվիս (անեծք)

արտ քաղել, վարած արտի մեջ պատկել - Աստծու կանաչ արտը ե՞ս էի քաղել
(լացերգ)

տունը քանդվել - ավերակ մնաս (անեծք)

խաչը թեքված տեսնել – խաչը գլխիդ խռով կենա (անեծք)

երազիս քաղաքը ամայի էր դարձել ու դատարկվել - դատարգուն էղնիս
(անեծք):

Մովորաբար սահմանային իրավիճակներում մարդու ինքնապաշտպանական մեխանիզմները հզորանում են համընդհանուր փորձի շնորհիվ: Ազգային սիմվոլներ ամփոփող վերբալ արտահայտություններում հաղթահարված է անձի մտածողության առօրեականությունը, կամ կենցաղային մանրամասներին հաղորդվում է հոգեբանական խոր իմաստ: Այսօրինակ երազներում որոշակիորեն ամբողջանում են ոչ միայն երազատես անձի, այլև ժողովրդի մի ստվար հատվածի ազգահոգեբանական իդեալը՝ աշխարհագրական կամ հոգևոր հայրենիքի միասնության վերականգնման ձգտումը:

Առանձին երազների բառային մակարդակում անձի իմացահուզական վիճակը լրիվ չի դրսևորվում՝ մղվելով ենթագիտակցության ոլորտ, իսկ հույզը գիտակցության աստիճանում մնում է չպատճառաբանված: Երազատեսը հաճախ հորինում է այնպիսի պատկերներ, որոնք իրականում նրա հոգեկանում չեն եղել, այլ ծնվել են հաղորդման գործընթացում՝ անձի ներքին դրդապատճառների ազդեցության տակ⁷: Այսօրինակ երևույթ են երազների մասին խոսքային վերապատումները: Իրենց մտապատկերները վերարտադրելիս մարդիկ հաճախ են անդրադառնում այն ամենին, ինչ համապատասխանում է իրենց հոգեկան վիճակին, դիրքորոշումներին՝ գիտակցության ոլորտից արտամղելով անցանկալին:

Կարևոր է նաև խոսքային ասույթի հնչյունային իրականացումը: Ըստ Լեոնտի⁸՝ այն հնչյունային արտաբերական և ձևությամբ իրականացման գործընթաց է, որն ասույթի ընտրված շարահյուսության կիրարկումն է խոսքում: Խոսքի հնչյունական նշանակությունը, ռիթմը, հնչյունների և բառակապակցության միջոցով ստեղծվող ձայնի որակը, տողի հնչողությունն ուղղված են խոսքի հուզական երանգների ապահովմանը: Կարևորվում են խոսքի արագությունը, հուզական երանգը, ձայնի ուժը, շեշտավոր-

⁶ Սահակյան Կ. -2010, էջ 108: Հետայսու օրինակները մեջբերվում են սույն գրքից:

⁷ Նալչաջյան Ա. -1982, էջ 25:

⁸ Леонтьев А. -1974. с. 63.

րումը, հնչեբանագր՝ անձի հոգեբանական վիճակների ցուցիչ, որով կարող ենք հարուստ տեղեկություն ստանալ մարդու ապրումների ուղղվածության մասին: Երագների լեզվին բնորոշ է խոսքային ասույթի սիմվոլիկան, որտեղ բառի նախնական նշանակությունը փոխարինվում է այլաբերական իմաստով. «Արևից արյուն էր թափվում», «Արյան մեջ պիտի լողանք», «Երկնքից կարմիր անձրև էր գալիս», «Երկնքից թոզ ու դուման կիջներ», «Գիրքը չորս կողմից լույս կուտար» և այլն:

Լեզվամտածողության այս կողմն օգնում է վերարտադրվող երազային պատկերը դարձնելու ավելի առարկայական ու տպավորիչ՝ զուգորդական մտածողության յուրահատուկ դրսևորմամբ: Վերջինս բխում է ասացողների հուզահոգեբանական երևակայությունից, որի բնորոշ գծերից են բնության և կյանքի ամենահեռավոր երևույթների միջև նմանություն տեսնելը, մեկի հատկանիշների փոխադրումը մյուսի վրա, բառերի ու հասկացությունների վերածումը առարկայացած պատկերների, յուրօրինակ խորհրդանիշների:

Օր. երազին սպիտակ կտորը ենթատեքստային մեկնության մեջ իբրև պատանք է, փորած փոսը՝ գերեզման, կտորած գերանը (սյունը)՝ մահ, հարազատի կորուստ (սունս սղոցիր, բալա՛ ջան) (լացերգ), դուռը կտորած, փակած, այրած – տնից մարդ կմեռնի (տուն ու դուռդ սև քարով շարվի), եկեղեցի – հույս, պահապան, Մայր Աստվածածին – օգնական, պահապան, պատից քար ընկած – հարազատի կորուստ, առանց անիվների սայլ – դագաղ: Նմանօրինակ սիմվոլներով երագները խորհրդանշային մեկնությամբ մոտենում են հայ ժողովրդական բանահյուսության մեկ այլ՝ հանելուկի ժանրին: Այսպես՝ անանիվ սայլը ն՛ էրագում, ն՛ հանելուկի մեջ դագաղի, մահվան ընդհանրական սիմվոլ է. «Ելա երդիկ՝ Էլ տեսա, // Առանց սոնի սել տեսա, // Մեջն անոթի գել տեսա» (հանելուկ, իմ հավաքածուից, -Կ.Ս.): Կամ՝ «Երագիս դուռը դուման էր, կարկուտ գուքար: Հեովից սել քշելով մե կնիկ՛մ երևաց՝ սևեր հագած»: Ըստ ժողովրդական մեկնության՝ սայլը դագաղ է, սայլ քշելը՝ աշխարհի կործանում:

Խոսքային ասույթի սիմվոլիկայից բացի՝ պատկերային հյուսվածքի համակարգում մեծ դեր են կատարում երևույթների և առարկաների նմանության հիմքի վրա ստեղծված համեմատությունները, ինչպես նաև պատկերների իմաստային աստիճանավորմանը ծառայող չափազանցությունը: Այսպես. տաք մագուր՝ գետի պես քաղաքի վրա /համեմատություն/, արևը ոնց որ հուր՝ կարմրած կրակ-արյուն լիներ /համեմատություն/, կովի ջանդակի մեծությամբ մի սև ու մի սպիտակ դառողառ /չափազանցություն/:

Ուսումնասիրվող տեքստերում բանաձևային կայուն արտահայտությունները ըստ էության հզորացնում են անձի *էս*-համադրությամբ՝ նպաստելով ինքնապաշտպանական մեխանիզմների ամրակայմանը:

Ազգային գոյի հավերժական նշանների կողքին խոսքային ասույթներում հաճախ հանդիպում են սիմվոլիկ տրամաբանության այնպիսի ձևեր, որոնք պայմանավորված են թվերով: Ուշագրավ է խորհրդապաշտական թվերի (3, 7, 40) ենթատեքստային իմաստավորումը: Թվի մետաֆորիկ կիրարկումը խոսքային ասույթ է ներմուծում հեքիաթային տարր՝ մտքի բացահայտ ձևերը ծածկելով թվի առասպելաբանությամբ: Կայուն

դարձվածքների մեջ բովանդակային գենի դեր կատարող անորոշ թիվ-նշանագիրը երբեմն վերածվում է ազգային բախտի ու ճակատագրի սիմվոլիկ գոյության: Աղետի խոսքային դրսևորումներն առավելապես արտահայտվում են առանցքային, հենարանային բառերով կամ կայուն դարձվածքներով:

Եզրահանգում. Այսպիսով, հանգում ենք այն հետևության, որ բանաձևային կայուն արտահայտություններն աչքի են ընկնում ազգային լեզվամտածողությամբ և ժողովրդի կենսակերպի խտացված բանաձևներն են, որոնք առավել կենսունակ են դառնում էքստրեմալ իրավիճակներում որպես անձի ինքնապաշտպանական մեխանիզմների հզորացման գործոն:

ВЛИЯНИЕ УСТОЙЧИВЫХ ФОРМУЛЬНЫХ ФРАЗ В ПРОЦЕССЕ УКРЕПЛЕНИЯ МЕХАНИЗМОВ САМОЗАЩИТЫ ЛИЧНОСТИ

Տաակյան Կ. Ա.

Ключевые слова: *архетип, национальное мышление, концепция-я, риторика, стресс, фрустрация, знак и символ.*

Устные формульные образцы, выкристаллизованные на протяжении веков и усвоенные народом, призваны облегчить и укрепить я-концепцию личности, систему психических свойств, эмоциональные проявления психической структуры и, наконец, механизмы самозащиты: приспособление, примирение, культурное восприятие этноса другим этносом, делая “я” эгосинтоническим.

THE EFFECT OF FORMULAIC STABLE PHRASES IN THE PROCESS OF STRENGTHENING A PERSON'S SELF-DEFENSE MECHANISMS

Sahakyan K. A.

Key words: *archetype, national way of thinking, axiology, I-conceprion, paremiology, stress, frustration, sign and symbol.*

Oral formulas, crystallized and assimilated by the people over the centuries, are intended to facilitate, strengthen the concept of personality, the system of mental properties, emotional expressions of the mental structure, and finally the self-defense mechanisms: consent, adaptation, cultural perception of ethnos by another ethnos making the “I” as ego-syntonic.

Գրականություն

1. **ԳԲ՝ -1985**, Դիցարանական բառարան, «Լույս» հրատ., Երևան:
2. **Ղանալանյան Ա. -1960**, Առաձանի, ԳԱ հրատ., Երևան:
3. **Նալչաջյան Ա. -1982**, Անձն իր երազներում, «Հայաստան», Երևան:
4. **Նալչաջյան Ա. -2000**, Էթնիկական հոգեբանություն, «Հայաստան», Երևան:
5. **Մխիթարյանց Ա. -1887**, Փշրանքներ Շիրակա ամբարներից, ձեռագիր ժողովածու:

6. **Հարությունյան Ս. -1975**, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանասիրության մեջ, ԳԱ հրատ., Երևան:
7. **Հարությունյան Ս. -1989**, Մի դրվագ հայ առասպելաբանությունից, Պատմաբանասիրական հանդես, Երևան:
8. **Սահակյան Կ. -2010**, Հազար երազի հուշարձան, «Գիտություն» հրատ., Երևան:
9. **Ֆրեդեր Ջ.-1989**, Ոսկե նյութը, «Հայաստան» հրատ., Երևան:
10. **Леви Стросс К. -1983**. Структурная антропология. М..
11. **Леонтьев А.-1974**. Психология общения. Тарту.
12. **Юнг К.-1991**. Архетип и символ. М..
13. http://language.sci.am/sites/default/files/tigranowhi_tsolaki_nersesyan.pdf

Ընդունվել է՝ 02. 04. 2022
Գրախոսվել է՝ 14. 04. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող: ԵՊՀ-ի հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ, դոցենտ:
Էլ. հասցե՝ sahakyanani@mail.ru

Գ Ր Ա Կ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ
L I T E R A R Y S T U D I E S

ՀՏԴ՝ 801,7

DOI: 10.52971/18294316-2022.25.1-161

ՋԱՆՆԻ ՌՈՂԱՐԻԻ ՀԵՔԻԱԹԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռոզա Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ հեքիաթ, զրույց, ժանրային ներթափանցումներ, դիպաշար, հրաշապատում, իրապատում, ազատություն, երազանք:

Մեր ուսումնասիրության տիրույթում իտալացի մանկագիր Ջաննի Ռոզարիի հեղինակային հեքիաթների առանձնահատկությունների բացահայտումն է, ի մասնավորի՝ Ջ. Ռոզարիի հեքիաթի սնուցիչ ակունքները, նրա հեքիաթագրության իրապատում ու հրաշապատում մոտիվների հարակցումները, Ռոզարիի հեքիաթների սոցիալ-բարոյական ու քաղաքական բաղադրիչը, ժանրային ներթափանցումները, հեքիաթների գործառույթը, պատկերավորման համակարգը, հեքիաթի զգայախոհական եզրակացությունը:

Գաղափարական առումով Ռոզարիի հեքիաթագրի հերոսները բնորոշվում են ազատության երազանքով ու բռնակալների դեմ ըմբոստացմամբ:

Նախաբան. Հեքիաթի շնորհիվ մեր մտքի տարածությունը դառնում է ընդգրկուն, հնարավորություն ենք ունենում մեզ բացահայտելու որպես ուրիշ, քանի որ զարմանալի, մեր ձեռքը բռնած, տանում է տարաշխարհ, անսովոր ու աննախադեպ աշխարհ, բայց ավելի հոգեհարազատ ու սրտամոտ, որտեղ դառնում ենք գրված ու չգրված օրենքների հանձնառուն՝ երբեմն էլ խախտելով հաստատված-ամրակայված օրենքները: Ուսումնասիրության ծիրում անդրադարձել ենք Ջ. Ռոզարիի այն հեքիաթներին, որոնք

իտալերենից թարգմանել է Գ.Մելքոնյանը¹, իսկ միջնորդավորված լեզվից՝ ռուսերենից՝ Ա. Աղասյանը²:

Չ. Ռոդարիի հեքիաթի սնուցիչ ակունքները

Ռոդարիի հեղինակային հեքիաթների պյուժեներն ինքնահինար լինելով սնվում են աշխարհի հեքիաթների թափառիկ պյուժեներից, նաև իտալական բանահյուսական հեքիաթի երակներից:

Այսպես, օրինակ՝ «Ջակոմո-Ապակիկը» /էջ 65/ հեքիաթի թափանցիկ տղայի կերպարն ընդհանրություններ ունի դանիացի հեքիաթագիր Հանս Քրիստիան Անդերսենի «Թագավորի նոր զգեստը» հեքիաթի փոքրիկ տղայի հետ: Երկուսի համար էլ ճշմարտությունն ամենից ուժեղն է աշխարհի երեսին: Սյուժեի զարգացման ընթացքում Ջակոմո-Ապակիկն ըմբոստանում է բռնակալ արքայի դեմ, որը նրան բանտ է նետում իր ճշմարիտ մտքերի համար:

«Ձկնորսը Չեֆալուից» /էջ 39/ հեքիաթի պյուժեն գուգահեռներ ունի Ոսկե ձկնիկի մասին ամենահայտնի ստեղծագործություններից մեկի՝ Ա. Պուշկինի «Հեքիաթ ձկնորսի և ձկնիկի մասին» երկի հետ: Ըստ տարածված կարծիքի՝ Պուշկինը պյուժեն փոխ է առել Գրիմ եղբայրների «Ձկնորսի և նրա կնոջ մասին» հեքիաթից: Ոսկե ձկնիկը (կամ կախարդական հատկություններով օժտված այլ ձուկ) հանդիպում է մի շարք ժողովուրդների բանահյուսության մեջ: Հեքիաթներում սովորաբար կատարում է հրաշագործ օգնականի դեր՝ որոշակի ծառայություններ անելով՝ որպես երախտագիտություն այն բանի, որ իրեն ազատեն: Դրա հետ մեկտեղ՝ բարերարի նկատմամբ ագահությունը, որպես կանոն, խիստ պատժվում է: Այդպես և «Ձկնորսը Չեֆալուից» հեքիաթում է, ըստ որի՝ մի անգամ ձկնորսն ափ է հանում մարդկային լեզվով խոսող մի մատնաչափ ձկնիկ, որը խնդրում է իրեն ջուրը չնետել՝ խոստանալով հաջողություն բերել ձկնորսին: Բայց ձկնորսը հարստանալով սկսում է շահագործել իր նավաստիներին: Մատնաչափիկ-փոքրիկ տղան տեսնում է այս բոլորը և զգուշացնում է նրան՝ զգուշ կաց, որ չմնաս դատարկ տաշտակի առաջ: Ի պատասխան՝ երախտամոռ ձկնորսը տղային դնում է փոքրիկ խեցու մեջ և զգում է ծովը: «Դատարկ տաշտակի առաջ մնալ» դարձվածային արտահայտությունն անգամ հուշում է վերոնշյալ հեքիաթների թե՛ պյուժետային զծի, թե՛ բարոյախոսության և թե՛ լեզվական ընդհանրության մասին:

Հատկանշական է, որ գրող Ստեֆանո Պանզարասան իր «Ջաննի Ռոդարիի կանաչ ականջները» գրքում նշում է. «Գրաքննադատները ողջունել են Ռոդարիի ունակությունը՝ ներկայացնելու բարոյական աշխարհը ոչ թե բարոյախոսությամբ, այլ եռանդուն երևակայությամբ: Այս որակը գերիշխում է թե՛ նրա բանաստեղծություններում, որոնք լի են ֆուտուրիզմի և սյուրռեալիզմի փորձառությամբ, թե՛ նրա վիպակներում, պատմվածքներում, առակներում ու հեքիաթներում, որոնք լի են իրականության պատկերումներով»³:

¹ «Եղեգան փող»- 2021, 11:

² Չ. Ռոդարի -1973, Այսուհետ այս գրքից մեջբերումները փակագծով նշվում են տեքստում:

³ hy.wikipedia.org/wiki/%D5%8B%D5%A1%D5%B6%D5%B6%D5%AB_%D5%8C%D5%B8%D5%A4%D5%A1%D6%80%D5%AB%D5%B6_%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A5%D5%B6

Ռոդարիի «Հսկայի մագերը» հեքիաթում ապերախտության ու պարզամտության հատկանիշներով հակադրված են եղբայրները. երեք եղբայրները խաբում և աշխատեցնում են մեկին, որի ուժը ձեռքերում է, իսկ խելքը՝ մագերի մեջ: Դրա համար նրանք արմատից կտրում էին հսկայի մագերը: Բայց բանող հսկան գլխի է ընկնում և պատժում է նրանց: Մագերի հմայական զորության մոտիվն առկա է ոչ միայն հեքիաթներում և արքետիպային հիմքով առնչվում է կյանքի շարունակականությանը, այլև Սամսոնի ու Դալիլայի մասին պատմող աստվածաշնչյան դրվագներից մեկում (ի դեպ, Հայ առաքելական եկեղեցու ձեռնադրության խորհրդում դպիր ձեռնադրելիս եպիսկոպոսը խաչաձև կտրում է ձեռնադրվողի մագերը՝ որպես աշխարհից մասամբ հրաժարվելու նշան):

Ռոդարիի «Շների երկիրը» հեքիաթում մարդկանց խլանալու հատկանիշը բնորոշ է նաև իտալական «Ռոտո թագավորը» հեքիաթի կերպարներին, որոնք խլանում են թագավորի որոտընդոտ ձայնից (առհասարակ իտալացիներին բնորոշ է բարձրաձայն խոսելը): Խլությունը՝ իբրև ֆիզիկական հատկանիշ, բացարձակացվելով՝ դառնում է միմյանց չհասկանալու, իրարից հոգեբանորեն օտարվելու պատճառ, որ հատուկ է ժամանակակից աշխարհում հայտնված մարդկանց:

Ջ.Ռոդարիի հեքիաթներում հմտորեն ագուցված են իրապատում ու հրաշապատում մոտիվները. այս միահյուսումը իտալացիների նուրբ հնարամտության ու խաղացկուն երևակայության արգասիք է: Երևակայությունն ասես մտքի հեռադիտակ է, որով հեղինակը կամ նրա հերոսները դիտում են աշխարհը, որում հայտնվում են: «Փոքրիկ տիեզերագնացը» գերժամանակակից հեքիաթում տիեզերագնաց ճուտիկը դուրս է գալիս շոկոլադե ձվից, որը և նրա տիեզերանավն էր: Այս հրաշապատում մոտիվին զուգահեռ՝ նա ներկայացնում է արդիական խնդիրներ երեխաների դաստիարակության ու կրթության մասին: Եթե Ռոդարիի իրապատում հեքիաթների տիրույթում հայտնվում է ինչ-որ մոգական կամ հրաշագործ կերպար, դարձյալ վերջինս գործում է առօրյա կյանքի տրամաբանության ծիրում:

Հեքիաթների ծագման մեջ կարևոր դեր են կատարում գործողության տեղի ու ժամանակի ապատապելականացումը, անցումը գործողության կայուն տեղայնությունից (այնտեղ, ուր այն կատարվում է) հեքիաթային անորոշ ժամանակին ու տեղին⁴: Ըստ ամենայնի հրաշապատում հեքիաթներում չկա տեղի ու ժամանակի առարկայացում, մինչդեռ Ռոդարիի համապատասխան հեքիաթներում որոշակիացվում է տեղը: Այսպես՝ «Մև քթերի կղզին» հեքիաթում հերոսը հրաժարվում է քիթը սև ներկելուց, ինչպես ընդունված էր *Neronia* կղզում: Իսկ «Յոթ և մեկ» հեքիաթի երեխան, որը միաժամանակ յոթ երեխա էր, ապրում էր Հռոմում, Փարիզում, Բեռլինում, Մոսկվայում և էլի երեք հայտնի քաղաքներում:

Հրաշագործ հատկանիշներով օժտված իրերն ու առարկաները (սփռոց, գլխարկ, գորգ, դուղուկ, մատանի, քսակ, փայտիկներ և այլն) հրաշապատում հեքիաթների գլխավոր հերոսին իր նպատակին հասնելու համար տրվում են հեքիաթի տարբեր գործող անձանց կողմից տարբեր եղանակներով: Որպես այդպիսի նվիրատուներ՝ երբեմն

⁴ Հարությունյան Ս. -2010, էջ 163:

հանդես են գալիս ծերունիները⁵: Ռոդարիի «Ձեռնափայտը» հեքիաթը /էջ 31/ կախարհական ձեռնափայտի մասին է, որ մի ծեր սինյոր նվիրում է դարպասի մոտ խաղացող փոքրիկ տղային՝ ասելով՝ դու կարող ես նրանով թռչել, լողալ, սլանալ: Հրաշագործ առարկայի շնորհիվ միանգամայն փոխվում է փոքրիկի կյանքը: Կերպարակերտման հեղինակային գնահատականն ամփոփվում է հետևյալ խոսքով. «...աշխարհիս երեսին չկա ավելի երջանիկ մեկը, քան այն ծերունին, որ կարող է մի բան նվիրել երեխային»:

Առհասարակ Ռոդարիի հեքիաթներում գործուն է սոցիալ-բարոյական ու քաղաքական բաղադրիչը: Նրա հերոսները («Սև քթերի կղզի», «Երիտասարդ խեցգետինը» և այլն) ըմբոստանում են ընդունված սովորության կարգի դեմ. երիտասարդ խեցգետինը չի ուզում յուրայինների պես հետ-հետ գնալ, այլ ուզում է գորտերի պես առաջ քայլել. այսպես է ծնվում հեղափոխությունը: Նկատենք, որ այսօրինակ «օրինազանցությունները» նոր շունչ ու արթնացում են հաղորդում թմբիրով ապրող հասարակությամբ: Այս հեքիաթները կյանքը նորովի իմաստավորելու, կարծրացած սովորության մասին պատկերացումները փոխելու, նոր չափորոշիչներ հաստատելու և դրանցով ապրելու ուղերձ ունեն:

Հրաշապատում հեքիաթի անսովոր իմաստային տիրություն իրերն ու կենդանիները կարող են ապրել մարդակերպության հնարավորությամբ, և հակառակը՝ մարդիկ էլ փոխարկվում են կենդանիների⁶: Ուշագրավ է, որ այս կամ այն կենդանու վարքի, տվյալ մշակություն նրա մասին ունեցած պատկերացումները մեծավ մասամբ դառնում են հեքիաթի դիպաշարի առանցք: Չ. Ռոդարիի «Շների երկիրը» հեքիաթում մարդկանց՝ շների փոխակերպվելն ու նրանց նման հաչելը գոյաբանության առեղծվածներից կամ աբսուրդներից են, կերպարներից մեկի խոսքով՝ համաճարակ է: Այս հեքիաթում սիմվոլիկ այլաբանությամբ արտահայտված է տվյալ միջավայրում ընդունված սոցիալ-բարոյական կարգի խախտումը:

Իսկ «Արքան, որ պետք է մեռներ» հեքիաթի արքայի կերպարում առկա է սոցիալ-բարոյական կարծրատիպը, որից նա չի կարող հրաժարվել: Հզոր արքան մտածում է՝ ավելի լավ է արժանապատվորեն մեռնել, քան կյանք մուրալ մուրացիկից: Այստեղ կա նաև հրաշապատում հեքիաթին բնորոշ պայման՝ ծեր կախարդի առաջարկն արքային. «Շո՛ւտ հանիր զգեստներդ, փոխի՛ր ցնցոտիապատ մուրացիկի զգեստների հետ, հանձնի՛ր նրան մի օրով քո թագն ու պաշտոնը, և դու փրկված կլինես» /էջ 38/: Բայց հզոր ու անդրդվելի արքան անպատվաբեր է համարում թեկուզ մի օրով աղքատի տեսք ընդունել և նույն երեկոյան էլ մեռնում է:

Գաղափարական առումով ազատության երազանքն ու բռնակալների դեմ ընդվզումը խիստ բնորոշ են Ռոդարիի հեքիաթագրի հերոսներին:

Այսպես՝ «Պուլչինելլայի փախուստը» /էջ 62/ հեքիաթում տիկնիկային թատրոնի խամաճիկ Պուլչինելլան մի օր գիշերով կտրատում է թեկերը, որ կապված էին իր գլխից, ձեռքերից ու ոտքերից և որոշում է փախչել: «Ի՛նչ լավ է ոտքը դնել այնտեղ, ուր դու ես ուզում, ոչ թե անտեղ, ուր հրամայում է տերդ»: Բայց փայտե միայնակ տիկնիկի համար

⁵ Խեմյան Մ.-2021, էջ 39:

⁶ Հարությունյան Մ., 2000, էջ 213:

աշխարհին ահարկու էր: Համենայն դեպս, նա թաքնվում է մի պարտեզում, որտեղ սնվում էր ծաղիկներով: Պուլչինելլան ասես հուշում է՝ ազատության մեջ մահ չկա, ազատությունը կյանք է: Սա այն գաղափարն է, որ շարունակում է կենսականորեն արթուն պահել բոլորին՝ փոքրերին թե մեծերին: Մրանով հանդերձ՝ պատումից պատում հարստանում են ռոդարիական հեքիաթների բովանդակային դաշտն ու գաղափարական կոնցեպտը:

«Մուրաբա եփող վարպետուհին» /էջ 33/ հեքիաթը ստեղծարար ժողովրդի և բռնակալ արքայի հակադրման ազդեցիկ պատում է: Ամեն ինչից, նույնիսկ քաղած շագանակի փշերից ու եղինջից մուրաբա պատրաստող վարպետուհու մուրաբան փորձում է թագավորը, բայց երբ ճանձ է ընկնում դրա մեջ, հրամայում է՝ կտրել նրա ձեռքերը մինչև արմունկները: Ժողովուրդն ապստամբում է՝ ասելով՝ եթե համարձակվեն վարպետուհու ձեռքերը կտրել, կթոցնի թագավորի թագը, գլուխն էլ՝ հետը: Ըստ էության, ժողովրդի արարումն է թագավորին թագավոր դարձնողը:

Ժանրային ներթափանցումները ռոդարիական հեքիաթում. Ռոդարին մերօրյա հեքիաթն է հյուսում՝ ժամանակի լուծում պահանջող խնդիրներն ու հարցադրումներն այլաբանորեն դարձնելով պատումի հենք: Հենց այլաբանության հիմքով էլ նրա հեքիաթներից մի քանիսը ժանրային առումով մոտենում են կարճ արձակի ձևերից մեկին՝ առակին՝ երբեմն տեքստի վերջում ունենալով եզրակացություն-խոհական բաղադրիչ. «Գիշերները, եթե լսեք, որ շատ շներ միասին հաչում են հեռվում, կարող է պատահել, որ իսկապես շներ լինեն, բայց կարող է պատահել նաև, որ լինեն այդ տարօրինակ, փոքրիկ երկրի բնակիչները»⁷ («Շների երկիրը»):

«Բարի Ջիլբերտոն» /էջ 49/ հեքիաթ-գրույց է, որի համանուն հերոսը «ականջներով ջուր է կրում» մոր համար, որովհետև մի անգամ լսել էր, որ մի կին ասում էր մյուսին. «Դուք մի տեսե՛ք, թե որքան է Ֆիլոմենը սիրում իր մորը. նա պատրաստ է ականջներով ջուր կրել նրա համար»: Ինչ խոսք, այս պատումում դարձվածքի ուղիղ իմաստի ընկալում կա, որը հատուկ է երեխաներին:

«Համար 75 տրոլեյբուսը» /էջ 71/ հեքիաթը նույնպես դուրս է ժանրի ավանդական ընկալումից և ավելի շատ նովել է հիշեցնում. այստեղ ձիուն փոխարինում է մեր օրերի անհնազանդ տրոլեյբուսը, որը, չենթարկվելով վարորդին, դուրս է գալիս սահմանագծված երթուղուց: Ուղևորները ևս ինքնաբերաբար դուրս են գալիս առօրյա կյանքի մեխանիկական կրկնությունից և ակամայից հայտնվում գողտրիկ բնության մեջ, ազատ մտքի տարածքում, որտեղ ամեն ոք գտնում է իր փոքրիկ հրճվանքն ու հոգու խաղաղությունը: Ռոդարին հոգեբանական անցում է կատարում. ուղևորներն սկզբում բարկացած էին, բայց արի ու տես՝ հետո նեղսրտում են, երբ տրոլեյբուսը «որոշում է» շարունակել ճամփան: Հրաշալին գործում է այնպես, որ ժամանակը կանգ է առնում մի կետում, որում տեղի է ունենում հեքիաթայինը՝ անժամանակը: Եվ չի ուշանում ռոդարիական՝ պատումը ճարտասանական հարցով ավարտելու հնարը. «Չէ՞ որ գարնան առաջին օրն ամեն ինչ հնարավոր է»:

⁷ «Եղեգան փող» պարբերաթերթ, նույնը:

Այսպիսով՝ Ռոդարիական հեքիաթը ժանրային առումով, այսպես ասած, հիբրիդային է, ընդհանրություններ ունի թե՛ առակի ժանրի, թե՛ գրույցի և թե՛ նովելի հետ՝ վերջինիս հատուկ սրբնթաց ավարտով:

Ռոդարիի հեքիաթների գործառույթն ու պատկերավորման համակարգը

Ռոդարիի հեքիաթներն ամոքում են, երազել տալիս, օգնում մտովի ճամփորդելու հնարավոր ու անհնարին բոլոր վայրերով: Ըստ էության, հեքիաթաթերապիա են և ելք կյանքի միապաղաղությունից ու գորշությունից դեպի անսովոր աշխարհ, որտեղ քիթը կարող է փախչել իրեն քչփորող տիրոջից («Փախստական քիթը»), ինչ-որ մեկը թռչող հովանոցով կարող է կախվել օդում և գիրք կարդալ լողափից 2 կամ 3 մ բարձրության վրա («Օստիա լողափին») կամ զանգերից հալել ու ձուլել մի հսկայական թնդանոթ, որի մի կրակոցով կարելի լինի պատերազմ շահել («Զանգերի պատերազմը»): Իսկ շոկոլադե ճանապարհն ու թխվածքից շինված սայլակը, որ կերան երեք եղբայրները, պարզապես բախտի շոայություն են:

Մրանով հանդերձ՝ ռոդարիական հեքիաթագրության առանձնահատկությունը երևակայության ուսպնյակով իրականության այլափոխության՝ ցանկալին հաստատելու մեջ է: Որպես պատկերավորման-արտահայտչական հնարներ՝ առաջին պլան են գալիս համեմատությունն ու փոխաբերությունը, չափազանցությունը, հեզանքն ու պարադոքսը (հարասությունը), այլաբանությունը՝ կյանքը խորքից ճանաչելու, բարեփոխելու կամ հերոսի վարքագծի դրոպապատճառները բացահայտելու առումով: Այս հայեցակետից ուշագրավ են նաև հեքիաթներից շատերի վերնագրերը՝ «Ճանապարհ դեպի ոչ մի տեղ», «Փախստական քիթը», «Շփոթ-պապիկը», «Ալիս-Գլորիսը», «Թարս հարցեր», իսկ «Մուկը, որ կատուններ է ուտում» հեքիաթի վերնագիրը՝ որպես տեքստի նշան, դարձել է ասույթային սարկաստիկ արտահայտություն:

Ռոդարի հեքիաթագիրը արտաքո կարգի միջավայր ստեղծում է ոչ միայն երևակայության շարժով, այլև լեզվի հնարավորությունների հմուտ կիրարկմամբ: Բառախաղերի, հարանունների ու շրջասույթների օգտագործումը ևս վկայում են բառը շնչավորելու, ասելիքը կերպավորելու և արձակի կարճ ձևի մեջ հեքիաթային միջավայր ստեղծելու նրա բացառիկ ձիրքի մասին: Վկայաբերենք մի քանի օրինակներ. «Պուլ-չինեկային թվում էր, թե մեխակն ազատության սքանչելի համ ունի»: «Դե ինչ արած, եթե ես մեռնեմ էլ, կմեռնեմ ազատ: Ոչ ոք այլևս ինձ չի կարող կապել գլխից, ոչ ոք չի քաշի թելից և ստիպի ինձ գլխով համաձայնություն տալ, երբ ես բոլորովին էլ համաձայն չեմ» («Պուլչինեկայի փախուստը»): «Դա մի փոքրիկ մանուշակ էր՝ բարալիկ ցողունով: Նա դողում էր ցրտից, բայց շարունակում էր արիաբար բուրմունք արձակել» («Մանուշակը բնեռում»): «Տրոլեյբուսը, ինչպես գարնան արևից խելքը թոցրած նապաստակ, սլանում էր Հռոմը շրջափակող ծայրամասերով» («Համար 75 տրոլեյբուսը»): «Մինչև անգամ բանտում Ջակոմո-Ապակիկը բռնակալից ուժեղ էր, որովհետև ճշմարտությունն ամենից ուժեղն է աշխարհիս երեսին: Նա պայծառ օրից էլ վառ է, փոթորկից էլ անողոք» («Ջակոմո-Ապակիկը»):

Հերոսների ուղղակի խոսքից բացի, որ ծավալվում է դիպաշարում, կան նաև նրանց վերաբերող «խոսքային գոտիներ», որոնցում արտահայտվում է **հեղինակի զգա-**

յախոհական գնահատականը՝ հաճախ ճարտասանական հարցով և հիմնականում հեքիաթի վերջնամասում. «Տեսնես հեռու կգնա՞ (խեցգետնուկը- Ռ.Հ.): Կհասնի՞ Երջանկության: Կուղղի՞ այս աշխարհի բոլոր ծուռ բաները: Մենք դա չգիտենք... Միայն կարող ենք նրան ի սրտե հաջողություն մաղթել՝ ասելով՝ բարի՛ ճանապարհ»⁸:

Անտարկտուսելի է, որ չարի ու բարու խնդիրն Աստծո արարչագործության մեջ և մասնավորապես հեքիաթներում մարդկության միտքն զբաղեցնող հնագույն խնդիրներից է: Ընդգծենք, որ Ռոդարիի հեքիաթներին բնորոշ չեն կերպարային ու հատկանիշային ցայտուն հակադրություններն ու սուր հանգուցալուծումները: Ոչ դրական կերպարներն անգամ հաճախ պատկերված են փափուկ կամիթներով ու մեղմասությամբ, ինչպես, օրինակ՝ «Հսկայի մազերը» հեքիաթում բարի ու խաբված հսկան երշիկների նման կապկպեց խաբեբա եղբայրներին, բերեց կայարան, կապոցների պես շարեց վագոնում և հրաժեշտ տվեց՝ ասելով՝ գնացե՛ք, ուր ուզում եք, միայն թե հեռու այստեղից...»:

«Մուկը, որ կատուներ է ուտում» պատումի մեջ գրադարանային մուկը, մեծամտանալով յուրայինների մոտ, երևակայում է, թե կերել է կատու, շուն, ռնգեղջյուր... ևն, իսկ երբ հայտնվում է իսկական կատուն, սկսում է քծնել՝ ասելով, որ կերել է թղթային տարբերակով և միայն ու միայն ինքնազարգացման համար:

Ամեն դեպքում Ջ.Ռոդարիի հեքիաթագիրը կարողացել է առտնին փոքրիկ գրույցներից ու դեպքերից բարձրանալ ու հյուսել հեքիաթի հոգեզմայլ պատումներ՝ հեքիաթարարումն ու դրա երանության մեջ լինելը դարձնելով կեցության ձև, քանի որ այս ժանրը հնարավորություն է տալիս շարունակական վերադարձ կատարելու դեպի մանկություն՝ մի ոսկեափ, որտեղ մենք կատարյալ ենք մեր ձգտումներով ու երազանքներով, մինչև իսկ փոքրիկ ձախողումներով ու հիասթափություններով: Ռոդարիին հաջողվել է հեքիաթ անունով պայմանական տարածության մեջ հմտորեն հյուսել ու միավորել պատկերն ու խոսքը, և ինչպես ինքն է խոստովանել՝ փորձել է բառերից խաղալիքներ սարքել:

ОСОБЕННОСТИ НАПИСАНИЯ СКАЗОК ДЖАННИ РОДАРИ

Оганнисян Р. К.

Ключевые слова: *сказка, беседа, жанровое внедрение, сюжет, фантастический рассказ, реальный рассказ, свобода, мечта.*

В нашем исследовании выявлены особенности сказок итальянского детского сказочника Джанни Родари, в частности: первоисточники сказки Дж. Родари, сопряжение фантастических и реальных мотивов в написании его сказок, социально-моральный и политический компонент сказок Родари, жанровые внедрения, функциональный аспект сказок и система создания образов, эмоционально-обдуманый вывод сказки. В идеологическом аспекте герои сказочника Родари характеризуются мечтами о свободе и бунтованием против тиранов.

⁸ «Եղևզան փող» պարբերաթերթ, նույնը:

PECULIARITIES OF FAIRY TALE WRITING STYLE IN GIANNI RODARI'S WORKS

Hovhannisyana R. K

Key words: *fairy tale, converse, generic penetration, plot, wonder tale, fairy tales based on true stories.*

Our paper touches upon Italian children's writer- Gianni Rodari's fairy tale writing peculiarities. We aim to reveal the nutritious sources of the author's tales, the correlation between wonder tale and fairy tales based on true stories in the context of his fairy tale writing, the socio-moral and political component of Rodari's tales, generic penetrations, the function of fairy tales and the system of imagery, the sensual conclusion of the fairy tale.

Ideologically, the heroes of Rodari's tale are characterized by the dream of freedom and rebellion against dictators.

Գրականություն

1. «Եղեգան փող» -2021, պարբերական, 11 (182), նոյեմբեր, Գյումրի:
2. Խենցյան Մ.-2021, Նվիրատուն և խորհրդատուն հայ ժողովրդական հեքիաթներում, ՀԱԻ հրատ., Երևան, 348 էջ:
3. Հարությունյան Մ.-2010, Բանագիտական ակնարկներ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 262 էջ:
4. Հարությունյան Մ.-2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համագգային» տպարան, 527 էջ:
5. Ռոդարի Ջ.-1973, Հեքիաթներ հեռախոսով, թարգմանությունը՝ Ա. Աղասյանի, Երևան, «Հայաստան», 1973, 77 էջ:
6. https://hy.wikipedia.org/wiki/%D5%8B%D5%A1%D5%B6%D5%B6%D5%AB_%D5%8C%D5%B8%D5%A4%D5%A1%D6%80%D5%AB#%D5%8C%D5%B8%D5%A4%D5%A1%D6%80%D5%AB%D5%B6_%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A5%D5%B

Ընդունվել է՝ 12. 03. 2022

Գրախոսվել է՝ 02. 04. 2022

Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, բանաստեղծուհի,
tj.haughn`vard-rosa@mail.ru

Գ Ր Ա Կ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ
L I T E R A R Y S T U D I E S

ՀՏԴ՝ 82.09

DOI: 10.52971/18294316-2022.25.1-169

ՕՐԻԵՆՏԱԼԻՉՄԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ «ԱՐՆԵՎԵԼՔԻ» ԿԱՌՈՒՑԱՐԿՈՒՄԸ ՀՈՎՀ.
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Արթուր Միրզոյան

Երևանի պետական համալսարան

Բանալի բառեր՝ օրիենտալիզմ, Հովհաննես Թումանյան, քառյակներ, հրապարակախոսություն, Արևելք, հետզադության ուսումնասիրություններ, արդիականացում, արևմտականացում, սուբյեկտայնացում:

Հովհաննես Թումանյանն ապրել և ստեղծագործել է հասարակական մեծ փոխակերպումների ժամանակաշրջանում, որոնք վերաբերում էին ինչպես հայությանը, այնպես էլ աշխարհին առհասարակ: Այս փոփոխությունները, որ խորքային կերպով բխում են արդիականացման գործընթացներից, իրենց արտացոլումն են գտել Թումանյանի թե՛ գեղարվեստական, թե՛ հրապարակախոսական երկերում: Այս հոդվածում քննության ենք ենթարկելու օրիենտալիզմի՝ իբրև «Արևելքի» շուրջ արևմտյան գաղութատիրական խոսույթների ամբողջության արձագանքները Թումանյանի մոտ՝ միաժամանակ քննելով «Արևելքի» թումանյանական ըմբռնումը արդիականացման գործընթացների և ազգային սուբյեկտայնության հաստատման հրամատեքստերում:

Նախաբան. Է. Սայիդը իր «Օրիենտալիզմ» հիմնարար աշխատության մեջ վերհանում է «Արևելք» հասկացությունն իբրև Արևմուտքի կողմից մշտապես ձևակերպվող «Ուրիշի» մարմնավորում. «Գրողների մի լայն զանգված՝ բանաստեղծներ, վիպասաններ, փիլիսոփաներ, քաղաքական տեսաբաններ, տնտեսագետներ, կայսերական կառավարիչներ, ընդունել են Արևելքի եւ Արևմուտքի միջև այդ հիմնական տարբերակումը որպես մեկնարկային կետ Արևելքին, դրա բնակիչներին, սովորույթներին, «մտքին»,

ճակատագրին վերաբերող ճարտար տեսությունների, էպոսների, վեպերի, հասարակական նկարագրերի և քաղաքական գրությունների համար»¹: Նոր շրջանում, երբ սկսվում է եվրոպական տերությունների կողմից Արևելքի գաղութացումը, օրիենտալիզմը գալիս է առաջին պլան՝ որպես այդ Ուրիշի նկատմամբ գերիշխանության գործիք: Այս աշխատանքում մեր ուշադրության կենտրոնում ենք պահելու մասնավորապես ռուսական գաղութատիրության մեջ օրիենտալիզմի դերը, որն, ինչպես հետագոտող Հ. Բայադյանն է նշում, կարևոր էր ռուսների համար՝ իբրև սեփական արևմտականության հաստատում. «... ռուսների սեփական բարդ, խճճված և խնդրահարույց ինքնությունն է, հատկապես նրանց անլիարժեքության բարդությոը (դեպի Ասիա նայելով՝ նրանք ցանկանում են հաստատել իրենց արևմտյան բնույթը, մինչդեռ արևմտականացման ամեն մի նոր ջանք վերստին ի ցույց է դնում Եվրոպայի նկատմամբ նրանց ստորադասությունը): Այս իմաստով՝ ռուսական «սեփական Արևելքի» փորձառությունը սեփական արևմտյան ինքնությունը հստակեցնելու և սատարելու նպատակով, թվում է, կատարելապես համապատասխանում է Սաիդի օրիենտալիստական հարացույցին»²: Այս «սեփական Արևելքի» յուրացումը մտավոր ոլորտում իրականացվում էր նաև գրողների կողմից, որոնց կովկասյան թեմատիկայով երկերում բանաձևվում է գաղութատիրական հայացքը Կովկասին՝ լավագույնս ձևակերպված ռուս մեծ բանաստեղծ Ա. Պուշկինի հայտնի տողերում. «Ահա Կովկասն իմ ոտքի տակ/Ես մեն-մենակ վերևում»:

Արևմուտք-Արևելք այս հարաբերությունը ենթադրում է ոչ միայն արևելքցու, արևելյանի էկզոտիկացում, դրա՝ որպես միաձուլյ, ներքին տարբերություններից ու հակասություններից զուրկ մի մարմնի պատկերում ու հղացարկում, այլև, մյուս կողմից՝ այդ ընկալման յուրացում արևելքցու կողմից: Հայերի դեպքում, սակայն, պետք է նկատել, որ ռուսական գերիշխանությունը դիտվում էր որպես *միջոց*՝ սեփական՝ հանրությունը արդիականացնելու և (վերա)արևմտականացնելու: Հայ մի շարք հեղինակների մեծ հետաքրքրությունը իսլամական և արևելաստիական մշակույթների նկատմամբ թերևս բացատրելի է նաև արևմտականացման այս գործընթացով. արևմտյան մշակույթը յուրացրած հայ գրողն իր հայացքն է նետում մերձավոր և հեռավոր արևելքներին՝ որպես հաստատում սեփական արևմտականության: Հիշատակենք միայն Ավ. Բահայանի արևելյան թեմատիկայով կարճ արձակը, Վ. Տերյանի և Եղ. Չարենցի՝ պարսկա-արաբական, իսկ վերջինի դեպքում՝ նաև ճապոնական բանաստեղծական ձևերի կիրառումը: Է. Մայիդի պնդմամբ՝ որևէ արևմուտքցի չի կարող մտածել Արևելքի մասին՝ առանց հաշվի առնելու այն սահմանափակումները, որ բերում է օրիենտալիզմը³: Բնականաբար, սա չի կարող նշանակել, որ այս կամ մյուս գրողները արևելյան մշակույթներին դիմելիս շարժվում են բացառապես քաղաքակրթական դիրքերի ճշտման մտադրությամբ, սակայն այն քաղաքական-մշակութային համատեքստը, որում այս գործերը ստեղծվում են, ի սկզբանե տեղադրում են այդ երկերն այս հարացույցի մեջ: Այս առումով Թումանյանը, լիարժեքորեն յուրացնելով հանդերձ արևմտյան մշակույթն

¹ Said E.-1978, p. 3

² URL: <https://bit.ly/3ylBOgj>

³ Said E. -1978, p. 3

ու մտածողական գործիքակազմը, հայկական մշակույթն ու Հայաստանը համարում է հիմնավորապես արևելյան: Այն, որ Թումանյանն ի սկզբանե որդեգրում է Արևելք-Արևմուտք հակադրության օրինատալիստական հայեցակարգը, լավագույնս երևում է նրա «Արևելքի նոր դարագլուխը» հոդվածում. «Ասիան ու Եվրոպան կամ, ուրիշ խոսքով, Արևելքն ու Արևմուտքը լոկ աշխարհագրական տերմիններ չեն, այլ տարբեր քաղաքակրթություններ ու աշխարհայացքներ... Եվ մինչդեռ քրիստոնյա արևմուտքի ժողովուրդները ժամանակի ընթացքում վեր են կենում հեգեմոնիայի դեմ ու ձգտում են հավասարակշռության, մյուս կողմը՝ իսլամական արևելքը արաբական գերիշխանությունից հետո ընկնում է թուրքի գերիշխանության տակ»: Նույն հոդվածում Թումանյանը վկայակոչում է Ռուսաստանի առաքելությունը. «Մեծ է Ռուսաստանի էս ծառայությունը քաղաքակիրթ աշխարհքի առաջ, և երբեք նրա կառավարության հոռի կողմերը չպետք է արգելեն տեսնելու էս մեծ գործը, որի հաջող ավարտումը համաշխարհային տոն է քաղաքակրթության համար: Տոն է մանավանդ էն ազգերի համար, որոնք դարերով կրել են թուրքի անտանելի լուծը և դարերով լալիս են իրենց անվերջ կորուստները նրա ձեռքից»: Անշուշտ, կարևոր է նշել, որ այս տողերը գրվել են 1916 թվականին՝ Առաջին աշխարհամարտի և Ցեղասպանության օրերին, մինչդեռ այլուր Թումանյանը լրիվ այլ մոտեցում է ցուցաբերում՝ մինչև անգամ հայերի անունից ներողություն խնդրելով թուրքերից ու քրդերից՝ նրանց բարբարոսներ անվանելու համար⁴: Բացի այդ՝ նշանակալի է անգամ այս համատեքստում Ռուսաստանի կառավարության հոռի կողմերը հիշատակելը:

Բանաստեղծի մոտեցումն առավել հստակ պատկերացնելու բանալի է տալիս Լերմոնտովի նշանավոր «Մծիրիի» թումանյանական թարգմանությունը, որը, կարծում ենք, կարող է մանրամասն քննության: Այստեղ, սակայն, կանդրադառնանք միայն մեկ՝ խիստ կարևոր խնդրի: Թումանյանի հարգանքը ռուս բանաստեղծի և նրա ստեղծագործության նկատմամբ, իհարկե, վիճարկելի չէ. այդ մասին նա ինքն է խոսում իր «Կովկասի մեծ որդեգիրը» հոդվածում: Սակայն «Մծիրիի» նախերգանքի թարգմանությունը կարդալիս կարելի է հանդիպել մի հետաքրքիր իրողության, որը մեկնաբանության կարիք ունի: Նախերգանքի վերջին հնգատողը թումանյանական թարգմանության մեջ ամբողջովին բաց է թողնված: Բնօրինակում կարդում ենք.

И божья благодать сошла
На Грузию! Она цвела
С тех пор в тени своих садов,
Не опасая врагов,
За гранью дружеских штыков.

Այս եզրափակիչ տունը ակնհայտորեն ուղղված է Վրաստանում ռուսական տիրապետությունը որպես աստվածային պարզ ներկայացնելուն՝ նախերգանքը լավատեսական տրամադրությամբ փակելով: Թումանյանի տարբերակում նախերգանքն ավարտվում է անկումային, տխուր տրամադրությամբ, որով գունավորվում է «Իր ժողովուրդը հանձնեց ռուսին» տողը: Այս զարմանալի թարգմանչական միջամտությունը

⁴ Թումանյան Հ. -1995, էջեր 147-148:

կարելի է դիտարկել իբրև դիմադրություն գաղութատիրական պատումին հենց գաղութարարի հայացքը վերարտադրող տեքստի սահմաններում: Մրանով Թումանյանի թարգմանությունը մոտենում է ժամանակակից հետգաղութային թարգմանական տեսական ըմբռնումներին ու պրակտիկաներին, թեև ավելի քան կես դարով նախորդում է դրանց:

Բերվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Թումանյանի վերաբերմունքը արևմտականացման հանդեպ առնվազն միանշանակ չէ: Ժամանակակիցներից Վ. Ահարոնյանն իր հուշերում անգամ հետևյալ կարծիքն է հայտնում. «Յովհ. Թումանյանը Եւրոպան և առհասարակ Արևմուտքը չէր սիրում... Գնահատում էր Արևմուտքի մշակույթը, բայց ասում էր եւրոպացիների անսրտությունը և ընչաքաղցութիւնը»⁵: Իր ավելի վաղ հիշատակված «Ապաշավանք»-ում բանաստեղծը հիասթափություն է հայտնում անգամ լուսավորականության և տեխնոլոգիական առաջընթացի նկատմամբ. «Էլ չեն խաբիլ մեզ նրանց մեքենաներն ու ճարտար արվեստները: Ճիշտ է ասել ժողովուրդը, թե դրանք բոլորը «սատանի հնարքներ» են, չոր ուղեղի ծնունդներ, և նրա լուսավորության մեջ ոչ աստվածային շունչն է տիրում, ոչ մարդկային խղճմտանքն է թագավորում»⁶: Այսպիսի մոտեցումը, որ մի կողմից յուրացնում է արևմտյան մտածողական կաղապարները, մյուս կողմից՝ մերժում Արևմուտքի քաղաքականությունն ու հատկապես կապիտալիզմի բերած օտարումն ու անհատապաշտությունը, արտաքինից կարող է հիշեցնել ռուսական սլավոնաֆիլ մտավորականների հայացքները, սակայն Թումանյանի մոտեցումը էականորեն տարբերվում է սրանցից՝ ինչպես բուն առաջադիմական գաղափարներին իր հավատարմությամբ, այնպես էլ իր քաղաքակրթական ուղղվածությամբ:

Արևմուտք-Արևելք հարցի և ռուսական գաղութատիրության առնչությամբ իր թերևս ամենացնցող արտահայտություններից մեկը Թումանյանն արել է 1919 թ.-ի վերջերին՝ գրույցներից մեկի ժամանակ. «Ես առաջ Պուշկինի, Լերմոնտովի ազդեցության տակ էի, հիմա Արևելքին եմ գալիս, գալիս եմ դեպի մերը — ազատագրվում ենք»⁷: Ազատագրում է համարվում ռուս դասական բանաստեղծների ազդեցությունից անցումը դեպի Արևելքի գեղագիտությունը: Այս յուրատեսակ հռչակումը, կարծում ենք, կարող է բանալի լինել Արևելքի թումանյանական ըմբռնումը բացելու համար:

Ինչպես ավելի վաղ նշել էինք, ռուս մի շարք գրողներ՝ սկսած Ա. Պուշկինից և Մ. Լերմոնտովից, գրում են Կովկասի մասին՝ բանեցնելով օրինենտալիստական հայացքը, ներկայացնելով Կովկասը՝ իբրև նախնական կարգերի ու վայրենության տարածաշրջան: Այս հայացքը, ինչպես ցույց տվեցինք, սերտորեն կապված է ինչպես ռուսական գաղութատիրության, այնպես էլ լուսավորական գաղափարների և Ռուսաստանի արևմտականացման գործընթացների հետ: Ռուսաստանի կողմից գաղութացված երկրի բանաստեղծ Թումանյանը բնականորեն ստեղծագործում էր ռուսական և, վերջինիս միջնորդությամբ, արևմտյան մշակույթի գերիշխող ազդեցության մթնոլորտում: Նույն 1919 թ.-ի նոյեմբերի 21-ին թվագրված իր հայտնի քառյակում Թումանյանը գրում է.

⁵ Ահարոնյան Վ. -1936, էջեր 106-107:

⁶ Թումանյան Վ. -1995, էջեր 148-150:

⁷ Թումանյան Ն. -1987, էջ 216

Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն,
Հեքիաթական պալատներում ըսպասում են իմ հոգուն.
Ի՛նչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի...
Ա՛խ, թե նորից գըռնեն ճամփան, դեպի էնտե՛ղ, դեպի տո՛ւն...⁸

Այստեղ առաջ է բերվում այն միտքը, որ Արևելքը տուն է, հարազատն է. այնտեղ վերադառնում են: Սրան հակադրվում են ցեխերն ու աղմուկը, որոնց մեջ այժմ գտնվում է քնարական հերոսը: Կարիք չկա նշելու, որ այստեղ Արևելքը սուկ ֆիզիկական տարածք չէ, այլ որոշակի քաղաքակրթական վիճակ, թեև, կարծում ենք, հարկ է նշել, որ քառյակի նախնական տարբերակներից մեկում վերջին տողն այս տեսքն ունի. «Դեպի էնտեղ, էն բարձրերը, իմ բարձրերը զվարթուն»⁹: Այս տարբերակը հուշում է, որ եթե անգամ հեղինակն ի մտի է ունեցել ինչ-որ աշխարհագրական վայր, ապա դա հաստատ առաջին հայացքից բնական թվացող Մերձավոր Արևելքը չէ: Առավել հավանական են թվում հեղինակի հայրենիքի լեռները, հնարավոր կլինի համարել նաև աղոտ ակնարկը Հիմալայներին՝ հատկապես հաշվի առնելով Թումանյանի հետաքրքրությունը չինական քաղաքակրթության հանդեպ: Այսպես թե այնպես, այս Արևելքը ենթակա է վերանվաճման. գործընթաց, որը հեղինակի համար առնվազն դժվար է, և որի համար պետք է գտնել ճանապարհ:

Արևելք բառը հիշատակվում է Թումանյանի մեկ այլ քառյակի մեջ ևս՝ թվագրված 1921 թ. մայիսի 1-ով.

Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու,
Արևմուտքի ըստրուկները մեքենայի և ոսկու՝
Իրենց հոգու անապատից խուսափում են խուտներամ
Դեպ Արևելքն աստվածային — հայրենիքը իմ հոգու...

Այս քառյակի վերաբերյալ եղել են տարատեսակ վերլուծություններ: Վ. Ահարոնյանն այն մեկնաբանում է Արևելքի երկրներն իր առաջնորդության շուրջ միավորելու՝ խորհրդային պետության նպատակների լույսի ներքո՝ փաստորեն Արևելքը կապելով Ռուսաստանի հետ, որին հակադրվում է իմպերիալիստական Արևմուտքը: Նմանատիպ կարծիք է հայտնել նաև Ա. Տերտերյանը՝ համարելով, որ Արևելքի ժողովուրդների եղբայրությանը հակադրվում են կապիտալիստական երկրները, «որոնց նպատակն է գաղութացնել մեր երկիրը և մեզ դարձնել կապիտալիզմի ստրուկներ», և համարում է, որ քառյակը գրված է մայիսի մեկի առիթով: Է. Ջրբաշյանը հակադարձում է՝ նշելով, որ այս մոտեցումը չի տեղավորվում Թումանյանի ստեղծագործության ընդհանուր տրամաբանության մեջ: Է. Ջրբաշյանի կարծիքով. «Քաղաքական բացահայտ նպատակադրումը, օրվա որևէ հրատապ խնդրի ուղղակի արձարծումը Թումանյանի գեղարվեստական երկերին բնորոշ չէ ընդհանրապես»¹⁰: Կարծում ենք՝ վերջին պնդումն այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Կարելի է հիշել, օրինակ, Թումանյանի քառյակները ժամանակի քաղաքական-հասարակական հարցերի վերաբերյալ. «հոգնել եմ

⁸ Թումանյան Հ. -1990, էջ 36:

⁹ Նույն տեղում, էջ 336:

¹⁰ URL: <https://bit.ly/3qASugR>

հին ընկերի ու հին ցարի արանքում», «առատ կըլնի կինը արդ/կընկնի էգի գինը արդ» և այլն: Այդուհանդերձ, պետք է համաձայնել, որ Վ. Ահարոնյանի և Ա. Տերտերյանի մոտեցումները խիստ պարզունակացնող են և համոզիչ չեն Թումանյանի ստեղծագործության ընդհանուր ծիրի տեսանկյունից: Հետաքրքրական է, որ Տերտերյանը ռուսական առաջնորդությունը տեսնում է որպես Արևելքի՝ գաղութացումից փրկություն. այստեղ բնականորեն ենթադրվում է, որ ռուսական տիրապետությունն ինքնին գաղութացում չէ և որ Արևելքը կարող է Արևմուտքի կողմից գաղութացվելուց զերծ մնալ միայն Ռուսաստանի շուրջ համախմբվելով:

Քառյակի մեջ Արևելքի ըմբռնումը բացահայտելու համար կարիք կա, կարծում ենք, դիտարկելու այն ձևերը, որոնցով Արևելքն այստեղ կառուցարկվում է: Նախևառաջ, Արևմուտքի հետ կապվում են աղետը, աղմուկը, մեքենայի ու ոսկու ստրկությունը, հոգու անապատը: Սրանցից առաջին երկուսը քառսի նշաններ են. տարբեր ընթերցումներ կարող են սրանք կապել պատերազմների ու ցեղասպանությունների, ուրբանիզացիայի և տեխնոլոգիաների զարգացման բերած առօրեական և գաղափարական աղմուկի հետ: Մեքենայի ու ոսկու ստրուկներ են բնութագրվում արևմուտքցիները. այստեղ կարծես գլխիվայր է շրջվում ազատությունների հայրենիք Արևմուտքի պատկերը, որ հանդիպում ենք ավելի վաղ շրջանի Թումանյանի հրապարակախոսության մեջ, փոխարենն Արևմուտքն ի հայտ է գալիս որպես սահմանափակումների, կախվածության, ստրկության քաղաքակրթություն, որի երկու հիմնական նշաններն են մեքենան՝ տեխնոլոգիականացումը, որի նկատմամբ Թումանյանի բացասական վերաբերմունքը տեսնում ենք նաև այլուր, և ոսկին, որ կարող է մեկնաբանվել թե՛ իբրև առհասարակ ընչաքաղցության, թե՛ մասնավորապես կապիտալիզմի նշան: Վերջին որակումը՝ հոգու անապատը, հոգևոր սովի, դատարկության, ունայնության նշան է. այս հոգևոր դրությունից արևմուտքցիները խուռներամ խուսափում են՝ ձգտելով դեպի Արևելքը: Դժվար չէ տեսնել, որ Արևմուտքի այս ձևակերպումը, որ զբաղեցնում է քառյակի մեծ մասը, սահմանագծում է այն արժեքային շրջանակը, որին հակադրվում է մեկ՝ «աստվածային» ածականով բնորոշվող Արևելքը, և ունի բանաձևային արժեք: Արևմուտքից Արևելք անցումը, ուրեմն, անցում է քառսից դեպի կոսմոս, նյութեղենից դեպի հոգևորը, անկատարից դեպի կատարյալը: Այս մոտեցումը կարելի է հանդիպել օրիենտալիստական բնույթի մի շարք արևմտյան ստեղծագործություններում: Բավական է հիշել Բայրոնի կամ Պուշկինի պոեզիան՝ տեսնելու համար, թե ինչպես է Արևելքը ձևակերպվում իբրև հոգևոր արժեքների, ճշմարիտ ազատության երազելի տարածություն: Մակայն այս մոտեցումը լիարժեքորեն չի բացատրում Թումանյանի ըմբռնումը:

Ինչպես քննարկել ենք վերևում, Թումանյանի համար Արևելքը մի տարածություն է, որին ինքը վերադառնում է՝ անցում կատարելով Պուշկինի և Լերմոնտովի ազդեցությունից, և այդ անցումը գրողը համարում է ազատագրման գործընթաց: Աստվածային Արևելքը քնարական հերոսի հոգու հայրենիքն է. սա է, կարծում ենք, քառյակի առանցքային գաղափարը: Թումանյանի համար, ինչպես ցույց ենք տվել, հայկական մշակույթն իր բնույթով արևելյան է, գրողն ինքն իրեն դիտում է որպես արևելքցի. այս ստանձնումը էականորեն տարբերվում է արևմտականացման և արևմուտքցու դիրքե-

րից օրիենտալիստական պատումների վերարտադրության ռազմավարությունից, այն ի սկզբանե հեղինակին դնում է գաղութացմամբ տրված օրիենտալիստական հարացույցի մեջ՝ իբրև այն հակառակ կողմը, այն ուրիշը, որին ուղղված է գաղութացնող հարացքը: Սա, կարծում ենք, խորապես հեղավոխական մի մոտեցում է, որը թույլ է տալիս դուրս գալ օրիենտալիզմի վերարտադրության շղթայից: Ինչպես Ֆ. Կաֆկայի «Միբենների լռությունը» պատմվածքի մեջ սիրենները հանկարծ իրենք են իրենց հայացքը նետում Ուլիսին՝ այդպիսով դառնալով սուբյեկտ, այնպես էլ այստեղ Թումանյանն է լիարժեքորեն ընդունում արևելքցու դիրքը՝ հնարավոր դարձնելով մեկ այլ՝ արևելյան սուբյեկտայնություն: Քառյակում, ուրեմն, հեղինակը ոչ թե պարզապես վերարտադրում է քառասյին Արևմուտքից դեպի աստվածային Արևելք անցման արևմտյան օրիենտալիստական պատումը, այլ արևելքցու, իր հոգևոր հայրենիքի գավակի դիրքից նկարագրում է հենց օրիենտալիստական այն փախուստը, որ տեսանելի է արևմտյան մշակույթի մեջ: Ազատագրումը, որի մասին խոսում է Թումանյանը, ազատագրումն է ինչպես օտար, արևմտյան ազդեցությունից, այնպես էլ հայության հոգևոր ու քաղաքակրթական ազատագրումը օրիենտալիզմի ծուղակից և սուբյեկտայնացումը, որ հնարավոր է դառնում Ուրիշի դերը ստանձնելու պարագայում:

Եզրահանգում. Ուսումնասիրելով Հովհ. Թումանյանի ստեղծագործության մեջ Արևելքի և Արևմուտքի, ռուսական տիրապետության, տեխնոլոգիականացման և արդիականացման, հայ մշակույթի քաղաքակրթական դիրքի ընկալումները, հանգում ենք այն եզրակացությանը, որ Արևելք-Արևմուտք հարցը՝ որպես օրիենտալիստական կառույց, ի սկզբանե կարևոր, եթե ոչ կենտրոնական դեր ունի Թումանյանի աշխարհընկալման, նրա հրապարակախոսության մեջ: Իր գեղարվեստական և հրապարակախոսական երկերում Թումանյանը բազմակողմանի և ոչ միանշանակ վերաբերմունք է ցուցաբերում ռուսական գաղութատիրական իշխանությանը՝ ընդունելով ու կարևորելով դրա լուսավորական առաքելությունը, սակայն միաժամանակ դիմադրելով դրա առաջ բերած պատումներին, իր քառյակներում ներկայացնում է Արևմուտք-Արևելք հակադրությունը որպես քառսի և կոսմոսի հակադրություն, բանաձևում քառսից կոսմոս անցումը՝ իբրև արևմուտքցիների օրիենտալիստական հայացքի բյուրեղացում, և ստանձնում է արևելքցու դիրքն այս հակադրամիասնության մեջ՝ այդպիսով հնարավոր դարձնելով արևելքցու սուբյեկտայնությունը:

ПРОБЛЕМА ОРИЕНТАЛИЗМА И КОНСТРУИРОВАНИЕ "ВОСТОКА" В ТВОРЧЕСТВЕ И ПУБЛИЦИСТИКЕ ОВАНЕСА

ТУМАНЯНА

Мирзоян А.

Ключевые слова: *ориентализм, Ованес Туманян, четверостишия, публицистика, Арсельк, постколониальные исследования, модернизация, рационализация, субъективация.*

Рассматривая представления о Востоке-Западе, российском господстве, технологизации, модернизации, цивилизованном положении армянской культуры в творчестве Ованеса Туманяна, мы видим, что проблема Восток-Запад как ориенталистская структура изна-

чально имеет важную, если не центральную роль в мировоззрении Туманяна. В своих художественных и публицистических произведениях Туманян проявляет многогранное, неоднозначное отношение к российской колониальной власти, принимая и навязывая ее просветительскую миссию, но в то же время сопротивляясь приносимым ею нарративам. В своих четверостишиях он представляет противопоставление Запада и Востока как противостояние хаоса и космоса и формулирует переход из хаоса к космосу как кристаллизацию ориенталистского взгляда Запада, и принимает позицию человека Востока в этом антагонизме, таким образом делая субъектность Востока возможной.

THE PROBLEM OF ORIENTALISM AND THE DESIGN OF THE "EAST" IN THE WORKS AND PUBLICISM OF HOVHANNES TUMANYAN

Mirzoyan A.

Key words: *orientalism, Hovhannes Tumanyan, quatrains, journalism, Arselk, post-colonial studies, modernization, rationalization, subjectification.*

Considering the ideas around East-West relations, Russian dominance, technologization, modernization and the civilizational position of Armenian culture in the works of Hovhannes Tumanyan, we see that the East-West problem as an orientalist structure initially has an important, if not central, role in Tumanyan's worldview. In his artistic and journalistic works, Tumanyan shows a multifaceted, ambiguous attitude towards the Russian colonial power, accepting and stressing the importance of its enlightening mission, but at the same time resisting the narratives it brings, in his quatrains he presents the opposition of the West and the East as an opposition of chaos and cosmos, formulates the transition from chaos to cosmos as a crystallization of the Western orientalist gaze, and takes the position of the Easterner in this antagonism, thus making the subjectivity of the East possible.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Ահարոնեան Վ. -1936**, Յովհաննես Թումանյան. մարդը և բանաստեղծը, Բոստոն:
2. **Թումանյան Հ. -1990**, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 2, Երևան:
3. **Թումանյան Հ. -1995**, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 7, Երևան:
4. **Թումանյան Ն. -1987**, Հուշեր և գրույցներ, 2-րդ բարեփոխված հրատ., Երևան:
5. **Said E. -1978**. Orientalism, London.
6. URL: <https://bit.ly/3qASugR>

Ընդունվել է՝ 04. 03. 2022
Գրախոսվել է՝ 25. 03. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Արթուր ՄԻՐԶՈՅԱՆ՝ մագիստրանտ, Հայաստանի ամերիկյան համալսարանի հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, էլ. հասցե՝ mirzoianarthur@gmail.com

Ա Ր Վ Ե Ս Ս Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ИСКУССТВОВЕДЕНИЕ
ART STUDIES

ՀՏԴ՝ 7.072.2

DOI: 10.52971/18294316-2022.25.1-177

ՊՈՐՏԱՍԱՐԸ՝ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՆԱԼԻ

Արարս Մարգարյան

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ
Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Բանալի բառեր՝ Պորտասար, Գյոբեկլի թեփե, Անգղի համաստեղություն, Կլաուս Շմիդտ, մոնումենտալ ճարտարապետություն, Ուրֆա, կենդանակերպ պատկերներ:

Հոդվածում ներկայացվում է Պորտասարի (Գյոբեկլի թեփեի) հուշարձանը, որը համարվում է արդի քաղաքակրթության բնօրրանը: Վերջին տասնամյակում հուշարձանը դարձել է ամենահայտնի և ամենից շատ ուսումնասիրվող հնագիտական ու ճարտարապետական կառույցը: Իր բազմաշերտ մեզալիթյան ենթակառուցներով, անտրոպոմորֆ և պաշտամունքային պատկերներով հուշարձանը եզակի է և գտնվում է Արևմտյան Հայաստանի (այժմ՝ Անատոլիա) ու Լևանտայի մշակութային դաշտում և նույն աշխարհագրական տարածաշրջանում՝ դառնալով կարևոր հանգույց, որի համալիր վերածանումը կհանգեցնի մարդկության ծագման ու զարգացման իրական պատմության վերընթերցմանն ու վերարժևորմանը: Պորտասարում են ձևավորվել նախնադարի ինստիտուցիոնալ առաջին կառույցները, այստեղից է սկիզբ առել մոնումենտալ ճարտարապետությունը:

Նախաբան. Պորտասարը, հայտնի՝ GEBEKLI TEPE անվամբ (այսուհետ՝ G.T.), գտնվում է Թուրքիայի տարածքում՝ Ուրֆայից (այժմ՝ Շանլիուրֆա) 15 կմ դեպի հարավարևելք ընկած բլրի վրա, Սիրիային սահմանամերձ շրջանում: Պորտասարը զբաղեցնում է 20 հեկտար. այն բլրի վրա գտնվող բարդ համալիր է, որի շուրջ 100 կմ հեռավորության վրա տեղակայված են ևս 11 բլուրներ (վերջինները հայտնաբերվել են 2021թ.):



Պորտասարի պեղումները վերևից

Պորտասարի իրական ուսումնասիրությունն սկսվել է 1995 թ-ից, երբ հայտնաբերվում է 3-րդ շերտը, որն ուներ 10-30 մ տրամագիծ և թվագրվում է Ք.ա. 9600-8800թթ.: Հուշարձանի հանրահռչակման գործում բացառիկ վաստակ ունի գերմանացի գիտնական Կլաուս Շմիդտը¹, որը 1995 թվականից ղեկավարում է Գյոթեկլեթեփեի և Գյուրչթեփեի պեղումները: Նրա կողմից իրականացված սրբավայրի պեղումները դարձան մեծ իրադարձություն գիտական աշխարհում: Դրանք ամբողջությամբ հեղաշրջեցին մինչ այդ եղած գիտելիքները նախնադարյան հասարակության, մարդկային ցեղի ծագման ու զարգացման, սակրալ գիտելիքների ու կրոնական պատկերացումների մասին: Դրանք ավելի շատ հարցեր առաջացրին, որոնց պատասխանները շատ դեպքում մինչ օրս մնում են բաց:

«Սովորաբար ենթադրվում է, որ միայն հիերարխիկ բարդ կառուցվածքով հասարակարգերը կարող են կառուցել նման մոնումենտալ հուշարձաններ, որոնք ի հայտ են եկել հողագործության ձևավորման շրջանում», - գրում է Ստենֆորդի համալսարանի մարդաբանության պրոֆեսոր Յան Հոդդերը, որը 1993թ.-ից ղեկավարել է նեոլիթյան բնակավայր Չաթալ-Հույուկի պեղումները: «Գյոթեկլի շրջեց մեր բոլոր պատկերացումները: Այն ստեղծվել է մինչ հասարակության երկրագործության անցումը՝ սկիզբ դնելով կարևորագույն հնագիտական բացահայտումների»²:

Հուշարձանի առաջին նմուշները հայտնաբերվել են դեռևս 1963 թվականին, երբ գյուղացիները գարու դաշտերը մշակելիս անընդմեջ հանդիպում էին վիթխարի քարերի: Տաճարի վերին հատվածը ոչնչացվել է նախքան օրինաչափ ուսումնասիրությունը: Բլրի վրա գտնվող Ուրֆայի (Շանլիուրֆա) տարածքում հայտնաբերվել է վիթխարի շրջանաձև համալիր՝ բաղկացած փորագրված սյուներից: Մինչ օրս պեղվել է հուշարձանի մի մասը³, և պարզ է դառնում, որ այն բացառիկ նշանակություն ունի: Ըստ

¹ Կլաուս Շմիդտ (1953-2014) գերմանացի հնագետ է: Ուսումնասիրելով հնագիտությունն ու երկրագիտությունը Էրլանգենի ու Գեյդերբերգի համալսարաններում՝ 1983թ. նա պաշտպանում է դոկտորականը: Այնուհետև իրականացնում է մի շարք նախագծեր: 1995-2014թթ. ղեկավարում է Պորտասարի /G.T./ պեղումները, ինչը համարել է իր կյանքի գործը:

² Hodder I. -2011. https://www.persee.fr/doc/paleo_0153-9345_2011_num_37_1_5442 (13.02.2022)

³ Կլաուս Շմիդտը 2011 թ. տված հարցազրույցում հայտարարել է, որ պեղված է հուշարձանի ընդամենը 5 տոկոսը:

ռադիոածխածնային հետազոտման տվյալների՝ հուշարձանի որոշ հատվածներ թվագրվում են Ք. ա. 11-րդ հազարամյակով: Մինչ նրա բացահայտումը ամենահին հուշարձանը համարվում էր Չաթալ Հույուկը (այժմյան Թուրքիայի տարածքում, պեղվել է 1995 թվականից)՝ Ք. ա. 7500 թ.:

Պորտասար (G.T.) հուշարձանի գիտական ուսումնասիրությունն սկսվեց 1996 թվականից, երբ հայտնաբերվեցին T-անման սյուները: Ակնհայտ դարձավ, որ այն եղել է հնագույն պաշտամունքային կառույց: Կլաուս Շմիդտը⁴ գրում է, որ սրբավայրում մարդիկ լրջագույն հարցադրումներ են կատարել. «Ի՞նչ է տիեզերքը», «ի՞նչու ենք մենք այստեղ»: Սակայն գիտնականի կարծիքով՝ սրբավայրում չկան պտղաբերության ծեսի հետ կապված հետքեր, որոնք կարելի է գտնել նեոլիթյան մյուս սրբավայրերից: T-անման սյուները, հիշեցնելով մարդու ուրվագիծ, այնուամենայնիվ անսեռ են: Դրանք, Շմիդտի կարծիքով, աստվածների առաջին պատկերներն են: «Նրանք չունեն աչքեր, բերան, դեմքեր, սակայն ունեն ձեռքի ավեր: Նրանք Արարիչներ են: Շմիդտի կարծիքով, սրբավայրն ստեղծվել է այն շրջանում, երբ կիսաքոչվոր հասարակությունից անցում է կատարվում դեպի նստակյաց երկրագործական հասարակություն: Եվ հիմնավորում է. «Սրբավայրը պահպանվել է միմիայն այն բանի շնորհիվ, որ կորցրել է վաղեմի դերն ու նշանակությունը, վերածվել է հողաթմբի ու շուտով մոռացվել»⁵:

Պորտասար (G.T.) հուշարձանը նախևառաջ հիացնում է շինարարների մտավոր կարողություններով՝ տեղանքում կողմնորոշվելու հմտությամբ, բարձր տեխնիկայով, գործի իմացությամբ: Այսօրվա տեսանկյունից անհնար է պատկերացնել, թե ինչպես են պարզագույն գործիքներով /ինչն արդեն կասկածելի է/ շինարարներին հաջողվել վիթխարի քարե բեկորները տաշել, հղկել, ծակել: Այս գործընթացը հնարավոր չէր իրականացնել առանց վերին աստիճանի կազմակերպված հասարակության: Առավել ուշագրավ են համալիրի Գ և Դ հատվածները, որոնք և ամենահինն են: Պորտասարի համալիրի տաշված, հղկված մեզալիթյան T-անման հուշակոթողները գերազանցում են մարդու հասակը և կազմում են մոտավորապես 3,5 մ: Դ համալիրի 2 կենտրոնական սյուները ավելի բարձր են կողայիններից և հասնում են 5,5 մ՝ հայացքն ուղղորդելով դեպի կենտրոն, որտեղ հավանաբար տեղի է ունեցել կարևոր արարողություն/ծես: Առանձին սյուները իրար հետ կապված են պատի կոպիտ շարվածքով: Գոյություն ունի նաև վարկած, որ այդ բարձր սյուների վրա եղել է կառույցը պահող տանիք, ինչը ոչ միայն դեկորատիվ, այլև կոնստրուկտիվ տարր է: Գիտնականները դեռ վստահ չեն՝ ունեցել է տվյալ կառույցը ծածկ, թե՞ ոչ:

Մյուս կողմից՝ կրկնակի սյուների ուղղվածությունը հյուսիս-արևմուտք-հարավ-արևելք առանցքի շուրջ, կառույցը կապում է աստղագիտական հասկացությունների, մասնավորապես՝ արևի շրջապտույտի հետ: Այն բնութագրում է հնագույն մոնումենտալ մի շարք տաճարների դիրքը: Սրբավայրերի շրջանաձև կառուցվածքն (Ա-Դ) ու տասներկու սյուների դասավորությունն ստեղծում են որոշակի ավարտուն համակարգ: Մինչ օրս հայտնի չէ՝ երեք հիմնական կառույցները (Բ-Դ) ստեղծվել են միաժամանակ,

⁴ Schmidt K. -2010. file:///D:/Gedekle%20Tepe/Klaus_Schmidt_Gobekli_Tepe%20(1).pdf

⁵ Նույնը:

թե՞ առանձին-առանձին: Նրանց միաժամանակյա գոյությունը ավելի հավանական է թվում:



Պորտասարի սյուները

Մոնումենտալ կառույցը ունի ոչ մարդակենտրոն համաչափություն, և, այդուհանդերձ, T-անման սյուները մարդակերպ են: Դ շրջանի կրկնակի T-անման սյուների վրա կարելի է տեսնել զենքերով, գոտիներով, նշանագրերով, աղվեսի մորթով ոճավորված «հագուստներ»: Տարբեր կենդանիների պատկերումը կապված է անիմալիստական և տոտեմական հավատալիքների, դիցաբանական պատկերացումների ծագումնաբանության հետ: Հուշարձանի վրա պատկերված կենդանիները՝ վարազներ, աղվեսներ, առյուծներ, թռչուններ, օձեր, կարիճներ, առանձնահատուկ են դարձնում հուշարձանը: Դրանք ստեղծվել են Ք. ա. 9.5 հազ. տարի առաջ և 5.5 հազ. տարով ավելի հին են Միջագետքի քաղաքներից, 7 հազ. տարով՝ Ստոունհենջից: Դ կառույցի վրա տեսարանները պատկերված են նշանագրերի համադրությամբ: Անշուշտ, դրանք ունեն ծիսահմայական և աստղագիտական նշանակություն: Կենտրոնական երկվորյակ սյուների վրա աղվեսներ են: Սյունաշարը բաղկացած է 2 բարձր կենտրոնական և 12 ավելի ցածր կողային սյուներից: Նշանագրերի միջոցով կրկնվող պատկերների համադրությունը փորձ է՝ փոխանցելու կարևոր իրադարձությունները, պատմական դեպքերը, ինչը բնորոշ է նաև Չատալ Հույուկին: Ջ. Սուտտոնի⁶ կարծիքով, դա իրադարձությունների, դիցաբանության, իշխող գերդաստանների պատմությունն է՝ փորագրված մեգալիթյան հուշարձանների վրա, ինչը, սակայն, հակասում է Չատալ Հույուկի համայնքային հասարակության պատմությանը: Պորտասարի կառուցվածքը ամբողջացնում է համայնքային գիտակցությունն ու մշակութային հիշողությունը: Կարելի է խոսել հուշարձանի վիթխարի ծավալների ու նշանակության մասին, և թեև առայժմ պեղված է հուշարձանի մի մասը միայն՝ բաղկացած 4 առանձին մասերից, այն արդեն վկայում է, թե ինչպիսի դարակազմիկ նշանակություն ունեցող հուշարձանի հետ գործ ունենք: Ուշագրավ սյուներից է Դ կառույցի 43-րդ սյունը: Այն պատկերում է թռչուններ (անգղ, բադեր), գլխատված տղամարդու մարմին, կարիճ, պայուսակներ, կենդանիներ: Անգլուխ մարմնի ու անգղի

⁶ Sutton J. -2020. p.p. 209-229.

պատկերներին հանդիպում ենք նաև Չատալիույուկում: Հողերի կարծիքով, նմանատիպ հասարակություններում, ինչպիսին են՝ Չատալիույուկը, Պորտասարը, գերբնական երևույթները հանդիսանում էին հասարակական և քաղաքական կյանքի բաղադրիչ մաս:

Այն հարցին, թե ինչ դեր ու նշանակություն է ունեցել սրբավայրը, կան բազմաթիվ վարկածներ ու տեսակետներ: Ստորև բերում ենք մի քանիսը.

1. Հուշարձանը կապված է տիեզերական մարմինների, լուսատուների պաշտամունքի հետ: Պորտասարը ծառայել է իբրև հնագույն աստղադիտարան: Հետազոտությունները թույլ են տալիս հնագետ-աստղագետներին պատկերացում կազմել այն ժամանակվա երկնքի մասին: Մասնավորապես՝ ձմեռային արևադարձի ժամանակ մարդը կտեսներ հետևյալ երկնային պատկերը՝ հարավում Orion-ն՝ իր եռաստղ գոտիով, իսկ հյուսիսում՝ Cygnus-ը՝ պայծառ Դեներով: Երևում է նաև Lyra համաստեղության Vega աստղը: Ըստ Անդրյու Քոլինզի՝ Պորտասարը կառուցողները հետևել են հենց Cygnus-ի Deneb աստղին: Տիեզերագետները ևս գտնում են, որ 18000 տարի առաջ Deneb-ը հյուսիսային աստղն էր, իսկ Պորտասարի կառուցման ժամանակ բևեռային աստղ չի եղել: Քոլինզը կարծում է, թե Գյոբեկլի Թեփեի ժամանակ աստղագետները դիտում էին հին Դեները, քանի որ այն գտնվում էր Ծիր Կաթինի ճեղքում և խորհրդանշում էր «մուտքը» դեպի երկնային աշխարհ: Մեկ այլ տեսության համաձայն էլ՝ հուշարձանը հանդիսանում է Սիրիուս (Շնիկ) աստղի դիտման (պաշտամունքի) վայր, որն առաջին անգամ երկնքում է հայտնվել 11300 հազ. տարի առաջ և պայծառությամբ զիջում է Լուսնին, Վեներային ու Յուպիտերին, ինչը հավանաբար մեծ տպավորություն է թողել նեոլիթյան ժամանակաշրջանի մարդու համար: Մարդիկ դեռևս կացարաններ չէին կառուցում, չէին օգտվում կավե ամաններից, իրենց սնունդը հայթայթում էին որսորդությամբ ու հավաքչությամբ, սակայն արդեն աստվածների համար կառուցում էին մոնումենտալ սրբավայրեր և պաշտում իրենց կուռքերին:

2. Համաձայն Քոլինզի վարկածի /«Теория катастрофы»⁷/ հուշարձանը փաստում է գիսաստղի հետ բախման պատմությունը, որը տեղի է ունեցել Ք.ա. 11300 հազ. տարի առաջ: Քոլինզը կարծում է, որ Պորտասարի ժամանակահատվածում տեղի է ունեցել մեծ աղետ /կատակլիզմ/՝ առաջացնելով այդ ժամանակվա՝ այսօր արդեն փաստված կտրուկ կլիմայական փոփոխությունները: Իսկ Դեների համաստեղության առկայությունը երկնքում կապվում է դրան հաջորդած քաղաքակրթության վերածննդի հետ:

3. Կլաուս Շմիդտը կարծում է, թե Պորտասարի բնակիչները կառուցել են պաշտամունքային հուշարձանի շրջանը, հետո, երբ կորցրել է իր «մոզական նշանակությունը», ծածկել են հողով ու ստեղծել նորը⁸: Շմիդտը հուշարձանի մերձակայքում փնտրել էր մարդկային թաղումներ ու չէր գտել: Միայն խեցեղենի կտորներ, որոնց մեջ պահվել է հեղուկ: Հնարավոր է, որ Պորտասարի բնակիչներն իրականացրել են ինչ-որ ծես կամ տոն:

4. Թուրքական հնագիտական շրջանակների մոտ ավելի հաճախ հանդիպում ենք անիմալիստական պաշտամունքի սրբավայր լինելու վարկածին. T-անման ռելիեֆներ

⁷ Коллинз Э. - www.academia.edu/6603268/Göbekli_Tepe_Who_Built_It_When_and_Why

⁸ Шмидт К. -2011. с.320.

րով մենհիրների վրա կարելի է տեսնել թռչունների, առյուծների, ցլերի, կարիճի, օձի, աղվեսի, վարազի պատկերներ: Վայրի կենդանիներին պատկերող շինարարները եղել են որսորդներ, որոնց համար կենդանին պաշտամունքային նշանակություն է ունեցել: Նախնադարյան շինարարները նստակեցության անցնելուց առաջ ստեղծել են իրենց կենցաղը հավերժացնող հուշարձանը:

Եզրահանգում. Պորտասարի (G. T.) համալիրը այսօր համարվում է աշխարհի հնագույն սրբավայրը, մեգալիթյան ճարտարապետության փայլուն օրինակ: Այն գտնվել է նախկինում հայկական Եդեսիա (Ուրֆա), այժմ՝ Շանֆլիուրֆա բնակավայրից 15 կմ հեռավորության վրա, սահմանակից է Սիրիայի հետ: Գերմանացի գիտնական Կլաուս Շմիդտի կողմից 1995-2014 թթ. իրականացված պեղումները բացահայտեցին շրջանաձև կառույցները՝ բաղկացած մեգալիթյան վիթխարի ուղղահայաց քարերից և կոպիտ շարվածքով պատերից: Մեգալիթները զարդարված էին բարելիեֆի և գոռելիեֆի տեխնիկայով կատարված կենդանապատկերներով և պատկերանշաններով, որոնց իմաստը դեռ ենթակա է բացահայտման: Ու թեև կառույցի ծագման և խորհրդաբանության վերաբերյալ գոյություն ունեն բազում վարկածներ, դրանք չեն կարող վերջնական և ավարտուն համարվել, քանի դեռ վերծանողները չեն դիտարկել հուշարձան ստեղծող էթնոսի մշակույթի ու գիտելիքների համատեքստում:

ПОРТАСАР-КЛЮЧ К РАЗГАДКЕ ЦИВИЛИЗАЦИИ

Маргарян А. В.

Ключевые слова: *Портасар, Гебекли тепе, Созвездие Лебедя, Клаус Шмидт, монументальная архитектура, Урфа, зооморфные изображения.*

Комплекс Портасара (G. T.) сегодня можно считать самым древним святилищем в мире, памятником мегалитической архитектуры. Он был открыт в 15 км от бывшего армянского города Эдессы (Урфы), ныне Шанфлиурфа, на пограничной с Сирией территории. Немецкий ученый Клаус Шмидт проводил раскопки с 1995 по 2014 гг., во время которых были обнаружены круглые строения с большими мегалитическими вертикальными камнями и стены с грубой выкладкой. На мегалитах были зооморфные знаки и пиктографы, значение которых еще предстоит выяснить. И хотя существует много версий относительно возникновения и символики памятника, ни одна из них не может считаться окончательной и убедительной, поскольку памятник не рассматривался в контексте с культурой и знаниями создавшего его этноса.

PORTASAR IS A CIVILIZATIONAL KEY

Markaryan A. V.

Key words: *Portasar, Gebekle tepe, Eagle constellation, Klaus Schmidt, monumental architecture, Urfa, animal images.*

The Portasar (G. T.) complex is considered the oldest sanctuary in the world, a shining example of megalithic architecture. It was located in the formerly Armenian city of Edesia (Urfa),

now 15 km away from the settlement of Shanfliurfa, on the border with Syria. The excavations by the German scientist Klaus Schmidt 1995-2014 revealed circular structures consisting of huge vertical megalithic stones and rough-walled walls. The megaliths were decorated with bas-relief and go-relief animal images և symbols, the meaning of which is still to be discovered. And although there are many hypotheses about the origin and symbolism of the structure, they can not be considered complete and final until the interpreters consider it in the context of the culture and knowledge of the ethnos that created the monument.

Գրականություն

1. Վարպետյան Ա. -2016, «Պորտասարի առեղծվածը», Երևան, էջեր 60- 61:
2. Дешифровка гебекской тепе с археоастрономической точки зрения. Мартин Б. Свитман, Димитриос www.academia.edu/38946648/DECODING_GÖBEKLI_TEPE_WITH_ARCHAEOASTRONOMY. MartinB.Sweat man_Dimitrios_Tsikritsis? Clifford C. Richey, Gobekli Tepe: The Navel,The Center of the Earth, Academia.edu, February 2018.
3. Коллинз Э.-2011. Гёбекли Тепе: Кто это построил, когда и почему? [www.academia.edu/ 6603268/bekli_Tepe_Who_Built_It_When_and_Why](http://www.academia.edu/6603268/bekli_Tepe_Who_Built_It_When_and_Why)
4. Шмидт К. -2011. Они строили первые храмы. Таинственное святилище охотников каменного века. Археологические открытия в Гёбекли Тепе / К. Шмидт; пер. с нем. А. С. Пашенко; отв. ред., прим. и послесл. Т. В. Корниенко. - СПб. Алетейя.
5. Banning E.-2011, “So Fair a House: Göbekli Tepe and the Identification of Temples in the Pre- Pottery Neolithic of the Near East,” Current Anthropology 52.
6. Hodder I. -2011. The Role of Religion in the Neolithic of the Middle East and Anatolia with Particular Reference to Çatalhöyük, https://www.persee.fr/doc/paleo_0153-9345_2011_num_37_1_5442. (13.02.2022).
7. Sutton J.-2020. “Personal Memory, the Scaffolded mind, and Cognitive Change in the Neolithic” in Consciousness, Creativity, and Self at the Dawn of Settled Life, ed. Ian Hodder (Cambridge: Cambridge University Press).

Ընդունվել է՝ 24. 02. 2022
Գրախոսվել է՝ 20. 04. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ,
<ԳԴԱ Գյումրու մասնաճյուղի կերպարվեստի տեսության ամբիոնի վարիչ>,
Շիրակի Մ. Նսլիսյանի անվ. պետական համալսարանի դասախոս,
Էլ. հասցե՝ araxmargaryan@gmail.com

ՀՏԴ՝ 781.7

DOI: 10.52971/18294316-2022.25.1-184

ՈՂԲԵՐԳԻ ԺԱՆՐԱՅԻՆ

ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Հասմիկ Հարությունյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ

Բանալի բառեր՝ *բանահյուսություն, ծես, ողբերգ, ժանր, ոճ, արտահայտչա-
միջոցներ*

Հոդվածը նվիրված է բանահյուսական ողբերգի ժանրի ծիսական և հորինվածքային մի քանի կարևոր բաղադրիչների, դրանց գործառնության հերթի և արտահայտչական բնութագրին: Ժանրի հորինվածքային համատեքստում դիտարկվում են երաժշտական բաղադրիչի այն յուրահատկությունները, որոնք ակնհայտ են հայ միջնադարյան գրավոր աղբյուրներում հանդիպող հուղարկավորության ծեսի նկարագրություններում:

Նախաբան. Մշակութային հնագույն շերտերի ընդերքում բազմակերպ դրսևորումներ ապրած հայոց երգ-երաժշտությունը դարերի ընթացքում փոխակերպումների է ենթարկվել: Այդ շերտերը գոյացել են գորեղ ծիսահավատալիքային համակարգերի հիմքի վրա՝ պայմանավորելով արվեստի անտարրանջատ կամ միաձույլ կերպը: Դրանց մեջ երաժշտության, որպես օրգանական բաղադրատարրի գործառնության առանձնահատկությունների երևակումը հայ երաժշտական պատմագիտության առաջնային խնդիրների մեջ էական տեղ է զբաղեցրել: Պեղածո նվագարանների ժամանակագրական տվյալների և հայ ազգային մոնոդիայի տիպաբանության խնդիրների համատեքստում քննության առնված մի շարք կարևոր դրույթներ՝ մատենագրական տվյալների բաղդատությամբ, համեմատական լուրջ եզրեր են առաջ բերել:

Հայ պատմագրությունն այստեղ առաջադրում է կոնկրետ փաստեր՝ լուրջ հիմքեր նախապատրաստելով երաժշտապատմական դիտարկումների համար: Թեև գրառումները պատկանում են վաղ միջնադարին, սակայն ներկայացված փաստագրական

նյութը վերծանելի է տարբեր դիտակետերից և երբեմն հնարավորություն է տալիս նշմարելու դեռևս բնապաշտական ծիսապաշտամունքային ինչ-ինչ դրսևորումներ:

Երաժշտության ծիսական բնորոշիչները յուրովի են դրսևորվել հայոց հինավուրց *հուղարկավորության* կամ *ողբական* արարողության մեջ: Այդ բնորոշիչները ներկայացել են տարբեր ոլորտներում՝ պարերում, պարերգերում, երգերում: «Չնայած անտարբանջատ բնույթին, երաժշտությունը որպես յուրօրինակ հնչյունակերտ տարր ներկայացել է յուրովի: Արմատներավ խորանալով հայ մշակույթի հինավուրց շերտերի մեջ, իր խիստ ավանդականությամբ, ծիսական այս համակարգը պահպանել է ոչ միայն իր կենսունակությունը, այլև ժամանակի ընթացքում խթանել է նոր՝ վիպական դրամատիկական մշակույթի զարգացումը»¹:

Մեզ են հասել եզակի կարևոր արժեք ներկայացնող հիշատակություններ, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու ողբերգերի հորինման և կատարման առանձնահատուկ կողմերի մասին: Պատմական աղբյուրների վկայություններից ակնհայտ է դառնում ողբական արարողության մեջ կարևորագույն գործառույթներ կրող մասնակիցների և նրանց հույժ կանոնակարգված կատարումների մասին: Դրանք նախկինում եղել են *մեներգեր*, *խմբերգեր* և, այսպես կոչված, *կոծի պարեր*:

Ինչպես նշում է Մ.Աբեղյանը. «Ողբասաց կանայք կոչվում են ձայնարկու, անշուշտ մեռելների վրա ճչալու համար: Հնում նշանավոր մարդկանց, թագավորների ու գորավարների թաղումը կատարվում էր մեծ բազմությամբ, մեծ հանդեսով: Այդ ժամանակ առանձնապես սաստիկ էին ողբում մեռելին: Կանայք, տղամարդիկ հուղարկավորությանը մասնակցում էին լալով, երգելով ու նվագելով, ծափ տալով, դեմ ու դեմ պարելով ու կաքավելով»²:

Վկայություններից հնարավոր է ենթադրել, որ սգո ծեսը կազմակերպելուց բացի ձայնարկուները կատարել են նաև որոշակի երգամաս՝ հաճախ ուղղորդելով խմբերգի ընթացքը: Մենակատարի և երգչախմբի փոխնեփոխ կատարումները շատ ընդունված էին նաև միջնադարում: Եղերամայրերի և ձայնարկուների բարձրարվեստ ողբերգերի մասին պատմիչները հուզական պաթոսով են խոսել, երբեմն դրանք անվանելով *բարբառեին գեղգեալ խանդաղատութեամբ*,³ ինչը ցույց է տալիս այդ ողբերգերի բովանդակության, ինչպես նաև հորինվածքային հնարների և արտահայտչամիջոցների բազմազանությունը:

Ծիսական բաղադրիչների կայուն համակարգը, որը ուրվագծվում է միջնադարյան գրավոր աղբյուրներում, կրել է նաև թատերական տարրեր: Որոշ թատերագետներ (Գ.Գոյան, Գ.Լևոնյան, Վ.Խեչումյան) պնդել են, որ հեթանոսական թաղման արարողությունը միջնադարում վերաճել է թատրոնի: Իբրև վառ օրինակ դիտարկելի է Մովսես Կաղանկատվացու «Պատմության» մեջ սգո արարողություններին գուսանների հիշատակումը: Անդրադառնալով Վաչագան Բարեպաշտի (484 թ.– VI դ. առաջին կես) «Մահմանադրություն կանոնական»-ում հուղարկավորության ծեսին վերաբերող կա-

¹ Հարությունյան Հ. -2010, էջ 16-17:

² Աբեղյան Մ. -1944, էջ 185:

³ Փալատոս Բուզանդացի -1914, էջ 84:

նոնակարգին՝ պատմիչը մեջբերում է հետևյալ դրույթը. «Եւ այնք, որ կոծ դնեն, զտանուտէրն և զգուսանսն. կապեացեն և ի դուռն արքունի տարցին և պատուհաս ի վերայ դիցեն, և ընտանիքն զհետ արտասուել մի՝ իշխեսցեն»⁴:

Այսպիսով, *ձայնարկունների և գուսանների* արվեստը՝ որպես ինքնատիպ մի երևույթ, ձևավորվելով խոր անցյալում, զարգացման բարձր աստիճանի է հասել հատկապես ստրկատիրական հասարակարգում, երբ միապետների և բարձր դասի ներկայացուցիչների հուղարկավորության արարողության մաս կազմող ողբական ծեսը նրանց մեծարման կարևոր պահն է եղել: Ակներն է, որ հինավուրց ծեսը պահպանել է իր հիմնական առանձնահատկությունները նաև վաղ միջնադարում: Այսպես, Փավստոս Բուզանդը, անդրադառնալով Ներսես Մեծի մահից հետո կատարվող հուղարկավորության արարողություններին, նշել է. «Ներսեսի մահից հետո, երբ մեռելներին ողբում էին փողերով, փանդիռներով և վիներով կոծի պարեր էին բռնում. մորուքները կտրած, երեսները պատառոտած, կին և տղամարդ դեմառդեմ ճիվաղական պարեր խաղալով, ծափ զարկելով հուղարկավորում էին մեռելներին»⁵:

Նկատելի է հատկապես պարային տարրի ակտիվ վիճակը: Ուշագրավ է ճիվաղական պարերին ուղեկցող նվագարանային երաժշտության գործառույթը: Պատմական աղբյուրներում հիշատակված նվագարանների անվանումները հանդիպում են նաև գուսանական խմբերի տարբեր նկարագրություններում:⁶ Հիշատակություններում հանդիպում են ինչպես առանձին նվագարանների, այնպես էլ նվագախմբերի կիրառման: Անհրաժեշտ է նկատի առնել, որ անսամբլային երաժշտության որևէ զարգացած տեսակ կարող էր պատմիչի ուշադրության տեսադաշտում չլինել: Նշենք, որ միջնադարյան մատենագրության մեջ հանդիպող *փող* և *քնար* նվագարանների անվանումները ընդհանրական իմաստ են ունեցել. առաջինը՝ ընդհանրապես փողային նվագարան է նշանակել, երկրորդը՝ լարային: Ուստի՝ պատմագրությունը հնարավորություն չի ընձեռում բացահայտելու բուն նվագարանային երաժշտության առանձնահատկությունները, սակայն վերջինիս զարգացման աստիճանի մասին հավաստում են նկարագրությունների որոշակի մանրամասները:

Այսպիսով, հայ ժողովրդի բազմադարյա ծեսերում այլ բաղադրիչների կողքին ուրույն տեղ են զբաղեցրել երաժշտական արտահայտչաձևերը, որոնք հատուկ մտածողության և արտահայտման արգասիք են: Հետաքրքիր մի դիտարկման համաձայն՝ հինավուրց ծեսերում ինքնարտահայտման առաջին ձևերը զանազան շարժումներ էին և պարը, որոնց ավելի ուշ միացել է երաժշտությունը, ապա և խոսքը: «Հասարակության առաջընթացում որքան կատարելագործվեց խոսքը, այնքան սահմանափակվեց շարժումների ու պարի գործառույթը կենցաղում: Պարը ուղեկցել է հայկական բոլոր ավանդական ծեսերին: Այն իր անվիճելի տեղն ուներ նաև թաղման ծեսի արարողակարգում»⁷:

⁴ Մովսես Կաղանկատուացի -1983, էջ 92:

⁵ Փավստոս Բուզանդ -1968, էջ 268:

⁶ Տե՛ս Հարությունյան Հ. -2010, էջ 21-24:

⁷ Հարությունյան Ե. -2007, էջ 138:

Հայ պատմիչների հիշատակություններում ողբական արարողությունը *ճիսականացնում են* ձայնարկությունը և գուսանները: Մրանք հմուտ պրոֆեսիոնալ կատարողներ էին, և, հետևաբար, ծիսական յուրաքանչյուր բաղադրիչ կրում էր մասնագիտացված հղկվածություն: Հետևաբար, ծեսի շրջանակներում պետք է զարգանար նաև մասնագիտացված արվեստ: Այս առումով բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Փավստոս Բուզանդի հիշատակության մեջ նշված *ի ձայն ողբոցն* և *ձայնիք մրմնջոցն* արտահայտությունները: Մա այն հայտնի դրվագն է, որտեղ մանրամասն նկարագրված են իշխան Գնելի սպանությունը և հուղարկավորությունը, և որտեղ ասվում է, որ ձայնարկությունը տեղում հորինել և կատարել են ծավալուն մի ողբերգ՝ նվիրված այդ չարաբաստիկ սպանությանը⁸: Ուշագրավ է հատկապես *մայր ողբոցն* բառակապակցությունը, որն ամենայն հավանականությամբ վերաբերել է սգո արարողության գլխավոր մասնակցին և կազմակերպողին: Նրան են միացել ձայնարկությունները:

Առանձնահատուկ մոտեցում է պահանջում *ձայն* բառը, որի իմաստային նշանակությունն այստեղ հնարավոր է մեկնաբանել որպես *հնչյուն*, *հնչողություն* կամ *երգեցողություն*: Ըստ այդմ, հիշյալ արտահայտությունը կարելի է թարգմանել՝ *ողբերի և մրմունջների հնչյունների ներքո*: Երաժշտագիտության մեջ ընդունված է նաև մեկ այլ մեկնություն, որի համաձայն *ձայնը* իմաստավորվում է որպես *ձայնեղանակ*⁹:

Ողբերի և *մրմունջների ձայնեղանակները*, որոնք, փաստորեն, իմաստավորվել ու մշակվել են ձայնարկությունների կողմից, նրանց հնարավորություն է տվել հանպատրաստից հորինել ծավալուն ստեղծագործություններ: Բուզանդի հիշատակությունները վկայում են, որ վաղ միջնադարում հայ երաժշտության ձայնեղանակները արդեն որոշակիորեն ձևավորվել էին, ավելին, դրանք իմաստավորվել էին մասնագետ երաժիշտների կողմից ըստ առանձին ժանրերի:

Թեև պատմագրական հիշատակությունները հնարավորություն չեն ընձեռում բացահայտելու բուն նվագարանային երաժշտության առանձնահատկությունները, սակայն հստակ արտահայտված են դրանց ծիսական բնութագրերը, ինչը խոսում է բավական հարուստ պատկերներով հագեցած արարողակարգի մասին:

Եթե բանագիտության մեջ հինավուրց ծեսի ու ծիսական երգերի բովանդակության կամ խոսքային բանաձևերի ու գրական հիմքի մասին ինչ-ինչ պատկերացումներ կազմվել են, ապա դրանց երաժշտական բաղադրիչը մնում է անհայտ ու անմեկնելի: Ավելի ուշ ժամանակաշրջանների նմուշները ներկայանում են ժողովրդական բանահյուսական նմուշների մեջ և հիմնականում կրում են բանավոր ավանդույթի կարևոր բնորոշիչներ: Մ. Բրուսյանի դիպուկ բնութագրմամբ. «Ողբերն իրենց թեմատիկայով կարող են աղերսվել ժողովրդական երգաստեղծության տարբեր ժանրերի հետ: Օրինակ՝ ողբերգերը մոտ են դյուցազներգերին, երբ մեռնողը ժողովրդական հերոս է և արժանի է գովքի, իսկ օրորներին՝ այն դեպքում, երբ մեռնողը երեխա է, և արվում է երեխային համապատասխանող ողբ-գովեստ: Ողբերն իրենց բանաստեղծական որոշ պատկերներով կարող են աղերսվել նաև պանդխտության ու պատմական երգերին,

⁸ Փավստոս Բուզանդացի -1914, էջ 174:

⁹ Кушнарев X. -1958, с.с. 21, 60; Тагмизян Н. -1977, с.с. 27, 74.

նույնիսկ հարսանեկան երգի ժանրին, լալիքին: Ողբերը չունեն կոնկրետ կառուցվածք և չեն ենթարկվում որևէ կոմպոզիցիոն օրենքի:

Կառուցվածքային ազատությունը բխում է ողբերին բնորոշ անկանոն պատմողականությունից, քանի որ ողբացողը վշտից խելակորույս, արտահայտում է երբեմն մեկը մյուսի հետ կապ չունեցող մտքեր. դրանք բորբոքվում են հատկապես ցավակցելու համար եկողների երևալով, որոնցից յուրաքանչյուրը ողբացողի մեջ արթնացնում է մի նոր հիշողություն, որը և նա սկսում է անմիջապես պատմել»:¹⁰

Ակներն է ողբերգի ժանրային ներքին բազմազանությունը, այն է՝ ողբական արարողության կայուն բաղադրիչների մեջ այլ ժանրերի հետ աղերսները: Դրանցից առավել կայուն են *դյուցազներգերի, պատմական և պանդխտության երգերի*, ինչպես նաև *օրորների* հորինվածքային կամ արտահայտչական տարրերը:

«Ողբասացներն այցելուներին պատմում են պատահած դժբախտության, նրան մահից խլելու մերձավորների ջանքերի, նրա փոխարեն մեռնելու պատրաստակամության մասին, բացահայտում են իրենց ապրումները նրա մահվան կապակցությամբ, անիծում մահվան պատճառը, բնութագրում հանգուցյալի կիսատ թողած գործերը, անկատար երազները և գովում նրա արտաքին ու ներքին բարեմասնությունները: Իբրև կայուն բնորոշիչ ողբերգերի մեջ *վիպականության* դրսևորումներին՝ նրանք մխիթարողներին պատասխանում են իրենց վշտի անփարատելիության փաստարկներով, հորդորում վախճանվածին հանգիստ ու անքեն ուղևորել այն աշխարհը [...] և իր ետևից մարդ չտանել, իսկ եթե դա անխուսափելի է, տանել որևէ անհույս հիվանդի կամ ծերի: Մերթ կրկին հանդիպելու հույս են հայտնում, մերթ ընդմիջտ բաժանվելու հուսահատություն»:¹¹

Եզրահանգում. Այսպիսով, հայոց հինավուրց ողբական արարողությունը ժամանակի ընթացքում թեև փոփոխվել է, սակայն ծիսական կարևոր տարրեր փոխակերպվել ու յուրովի են արտահայտվել: Ժողովրդական սգո երգերը կամ ողբերգերը ակնհայտ է, որ կրում են արխաիկ շերտեր և արտահայտչաձևեր: Այստեղ հանդիպում են թե՛ վաղնջական մշակույթից հիշվող արտահայտչաձևեր /գովք և փառաբանում/, թե՛ ծիսական որոշակի տարրեր: Ողբերգերի արդի դրսևորումներին կանդրադառնանք մեր հետագա հրապարակումներում, այստեղ կարևորում ենք նշել այս ժանրի գործառույթներից բխող ուրույն մի համակարգի մասին, որի հորինվածքային մեխանիզմները ժամանակի հոլովությամբ զարմանալի կենսունակություն են հանդես բերել:

¹⁰ Բրուսյան Մ. -2014, էջ 136:

¹¹ Հարությունյան Ե. -2007, էջեր 168-169:

О НЕКОТОРЫХ ЖАНРОВЫХ ОСОБЕННОСТЯХ СКОРБНЫХ ПЕСЕН

Арутюнян А. Г.

Ключевые слова: *фольклор, обряд, песни скорби, жанр, стиль, средства выразительности.*

Статья посвящена характеристике некоторых обрядовых и композиционных особенностей, а так же функциональных и выразительных компонентов армянских скорбных песен. Рассмотрены стилистические различия и особенности скорбных песен в описаниях средневековых письменных источников, где очевидны жанровые компоненты профессионально сочиненных и традиционно исполненных обрядовых скорбных песен.

ABOUT SOME GENRE PECULIARITIES OF LAMENT SONGS

Harutyunyan H. H.

Key words: *folklore, ritual, lament song, genre, style, means of expression.*

The article is devoted to the expressive description of some of the ritual-compositional components of the folklore lament song genre, their functional role. Stylistic differences and features of mournful songs in the descriptions of medieval written sources are considered, where genre components of professionally composed and traditionally performed ritual mournful songs are obvious.

Գ ր ա կ ա ն ո լ յ ո ն

1. Արեղյան Մ. -1944, Հայոց հին գրականության պատմություն, հ.1, Երևան:
2. Բրուսյան Մ. -2014, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Երևան:
3. Հարությունյան Հ. -2010, Երաժշտությունը V- XV դ.դ. հայ մատենագրության մեջ, Երևան:
4. Հարությունյան Ե. -2007, Հայ ժողովրդական սգո երգեր // «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 24, Երևան:
5. Մովսես Կաղանկատուացի -1983, Պատմություն Աղուանից աշխարհի: Զննական բնագիրը և ներածությունը Վ.Առաքելյանի, Երևան:
6. Փավստոս Բուզանդ-1968, Պատմություն հայոց, թարգմանությունը՝ Ստ.Մալխասյանցի, Երևան:
7. Փաւստոս Բուզանդացի -1914, Պատմություն Հայոց, Վենետիկ:
8. Кушнарев Х. -1958, Вопросы истории и теории армянской монодической музыки. Л..
9. Тагмизян Н. -1977, Теория музыки в древней Армении. Ереван.

Ընդունվել է՝ 28. 02. 2022

Գրախոսվել է՝ 21. 04. 2022

Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի տնօրեն, էլ հասցե՝ hasmik.har@mail.ru

ՀՏՂ՝ 7.072.2

DOI: 10.52971/18294316-2022.25.1-190

«ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԸՆԹՐԻՔԸ» 17-19-րդ. դդ. ՀԱՅԿԱԿԱՆ
ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՄ

Թամարա Դադայան

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա

Բանալի բառեր՝ միջնադարյան, եկեղեցի, արվեստների սինթեզ, տաճար, աստվածային, ճշմարտություն, որմնանկար, բարձրաքանդակ, վիտրաժ, սրբապատկեր, Հայաստանի Ազգային պատկերասրահ, «Խորհրդավոր ընթրիք»:

17-19-րդ. դդ. հայկական հաստոցային կերպարվեստում ուրույն տեղ են զբաղեցնում սրբապատկերները: Հաճախ մեզ հասած գործերում անհայտ է ն՝ նկարիչը, ն՝ պատկերման վայրը, ն՝ պատվիրատուն: Թվացյալ այդ խառնաշփոթում, դրանք ունեն հստակ պատկերագրական, հորինվածքային, և գունային դրսևորումներ: Այդ սրբապատկերներից մի քանիսը ներկայացնում են եվրոպական պատկերագրական տիպը, իսկ մյուսները՝ հայկական կանոնը: Գրեթե բոլոր սրբապատկերներում առկա է մոնումենտալ մտածելակերպը: Խնդրո առարկա թեմայի շրջանակում կոդիտարկենք Հայաստանի պետական պատկերասրահում պահվող մի քանի օրինակներ:

Նախաբան. Ընդունելով մանրանկարչությունը որպես էլիտար արվեստ, որը հատու էր միայն բարձրաշխարհիկ մարդկանց, միջնադարյան հաստոցային կերպարվեստի միակ ձևն է դառնում սրբապատկերը: Մակայն, համարել այն հաստոցային բառի ներկայիս իմաստով, փոքր-ինչ թերի կլինի, քանի որ սրբապատկերները ստեղծվում էին կոնկրետ ճարտարապետական կառույցի համար: Նրանք ծառայում էին մի ընդհանուր նպատակի՝ կերտել միասնական ներդաշնակ գաղափարա-գեղարվեստական համալիր:

Սրբապատկերի նախօրինակը՝ տեխնիկայի և արտահայտչաձևերի իմաստով, կարելի է համարել Հին Հռոմի ինքնատիպ դիմանկարները, որոնք գտնվել են պեղումների ժամանակ Եգիպտոսի Ֆայումյան օազիսում, և տեղայնքի անունով կոչվել ֆայումյան դիմանկարներ: Դրանք արված էին փայտի սալիկների վրա տաք մոմաներկերով՝ էնկաուստիկ եղանակով: Դրանք պատկերում էին հանգուցյալի դեմքը և դրվում էին սարկոֆագի վրա գլխի հատվածում:

Առաջին սրբապատկերներն ի հայտ են եկել Առաջավոր Ասիայում մոտավորապես 6-րդ դ.: Դրանք սիրիական և դպտական արվեստի նմուշներ են, արված փայտի վրա տաք մոմաներկերով: Ջարգացած միջնադարում սրբապատկերները կարող էին նկարվել տեմպերայով, ավելի ուշ՝ յուղաներկով: Հանդիպում են նաև 16-17-րդ. դդ. սրբապատկերներ, նկարված կտավի վրա, իսկ ավելի հազվադեպ՝ մետաղի սալիկների վրա¹:

Սրբանկարչության պատկերագրական համակարգը կազմավորվել է Բյուզանդիայում Պատկերամարտի շրջանից /7-8-րդ. դդ./: Եթե այս շրջանի օրինակները պատկերում են միայն սրբերի պատկերներ, ապա սկսած 12-13-րդ. դդ. հանդիպում են այուժետային սրբապատկերներ, որտեղ ներկայացված են առանձին ավետարանական թեմաներ: Ի հայտ են գալիս բազմաթիվ տեսակներ, որոնք դառնում են կայուն պատկերագրական տիպ և կանոն, օրինակ՝ Գործվանք, Նինջ, Հրաշք, Օղիգիտրիա, Դեխուս . . .

Համաձայն բյուզանդական գեղագիտության, սրբապատկերը պետք է դառնար հոգևորի, վեհի մարմնավորումը տեսանելի կերպարի օգնությամբ²: Սակայն այն բացառում էր պորտրետային իրական նմանությունը, նյութական կոնկրետությունը, քանի որ պատկերման արժանի էր միայն գերերությունը: Ֆիզիկականի մեջ հոգու միակ արտացոլանքը՝ աչքերն են, այդ պատճառով էլ սկսեցին պատկերել մեծ լայն արտահայտիչ աչքեր՝ որպես հոգու հայելիներ: Ի հայտ եկավ պատկերման հատուկ եղանակ, այսպես կոչված՝ «փախչող հայացք», երբ դիտողը չէր կարող «որսալ» պատկերված սրբի հայացքը: Աչքերի մեջ կարող է նայել միայն հավասարը հավասարին: Մահկանացուն և սուրբը այդ հավասարությունը չունեին: Սրբապատկերի հայացքը անցնում է բոլորի վրայով, չսնեովելով կոնկրետ մարդու վրա³: Քանի որ երթադրվում էր, որ սրբապատկերը կերտելու էր հոգևոր, վեհ գերպատկեր, ապա բացառվում էին նաև արտաքին իրական աշխարհից եկող որևէ կոնկրետ տարրեր՝ միջավայր, բնանկար, ճարտարապետություն: Այս ամենը պատկերվում էր ոճավորված, սիմվոլիկ, կիրառվում էր չեզոք ոսկե ֆոն: Սկսած 14 դ, չխախտելով հիմնական գեղարվեստական և իմաստային սկզբունքները, հետզհետե ի հայտ են գալիս նորովի մոտեցումներ՝ ճարտարապետական լրացումներ, բնապատկեր, օրինակ Անդրեյ Ռուբլյովի «Երրորդություն» սրբապատկերում:

Հայաստանի Պետական պատկերասրահի ֆոնդերում է պահվում 17-րդ. դ. սրբապատկեր, որի նկարիչն ու ստեղծման վայրը անհայտ են: Այն արված է փայտի վրա

¹ Мельник А. -2011. с.с. 77-88.

² Лазарев В. -2000. с. 32; Бобров Ю. -1995. с. 59.

³ Бобров Ю. -1995. с. 61.

յուղաներկով /28x31 սմ/: Սրբապատկերը բավական վնասված է. ներկն ու լևկասը տեղ-տեղ թափված են (նկ. 1):

Ներկայացված է ավանդական հորիզոնական հորինվածք՝ դասավորած ուղղանկյուն սեղանի շուրջ: Ի տարբերություն հայկական մանրանկարչական օրինակներում հանդիպող պատկերագրության, Քրիստոսը պատկերված է հորինվածքի կենտրոնում: Առաքյալները տեղավորված են ազատ, շարժումներն անկաշկանդ են և համոզիչ: Առաքյալները պատկերված են տարբեր դիրքերով՝ շրջված, հենված, պատկերի խորքից դեպի սեղանը մոտեցող, հաղորդության հացը կիսող, անգամ գինու բաժակը ձեռքից գցող: Անփոփոխ է մնացել Հովհաննեսի հպումը Քրիստոսին: Շարժումներում կան որոշ արտիստիզմ, մաներայնություն: Նման ոճավորումները բնորոշ էին բյուզանդական Պալեոլոգյան շրջանի /13-15-րդ դդ/ որմնանկարներին:

Ներկայանալով գերիշխում են կարմիրն ու կանաչը: Որպես գունային շեշտ է ընկալվում սպիտակ սփռոցը, որը դինամիկ ռիթմ է հաղորդում պատկերին: Հետաքրքիր է լուծված Հուդայի կերպարը: Նա առանձնացված է առաքյալներից, տեղավորված է շեղանկյուն դիրքով հորինվածքի աջ անկյունում: Նման պատկերումը շատ բնորոշ էր եվրոպական պատկերագրությանը: Սակայն այստեղ կան որոշ նոր և անսպասելի լուծումներ: Հուդայի տիպաժը խիստ տարբերվում է «եվրոպատիպ» դիմագծեր ունեցող մյուս առաքյալներից: Նա շեշտված արևելյան, այն էլ ոչ հայկական դիմագծեր ունի: Մեկ այլ հետաքրքիր լուծում է Հուդայի հագուստի գույնը: Եթե հիմնվենք բյուզանդական, հետագայում տարածում գտած նաև ողջ քրիստոնեական պատկերագրական կանոնին, ապա ոսկեգույն պատկերվում էին միայն աստվածային էությունները: Այս պարագայում Հուդայի հագուստի գույնն ընկալվում է շատ արտառոց: Սակայն գեղանկարչական օրենքներից ելնելով, այն ստեղծում է գունային համաչափություն, ակտիվացնում է առաջին պլանը՝ առաջ բերելով Հուդային, դիտողի ուշադրությունը սևեռելով վերջինիս վրա: Այս սրբապատկերում տեսնում ենք մեկ այլ հազվադեպ պատկերագրական լուծում՝ Հուդայի ոտքերի մոտ պատկերված Սատանային: Սովորաբար, Սատանան պատկերվում է Հուդայի մեջքին կամ ուսերին հենված և խորհրդանշում է Հուդայի մատնությունը, այսինքն՝ կապվում է Հուդայի կերպարի հետ:

Հայաստանի ազգային պատկերասրահի ֆոնդերում պահվող մեկ այլ «Խորհրդավոր ընթրիք» պատկերող սրբապատկերը դարձյալ նկարված է 17-րդ դ.: Այն նկարված է կտավի վրա՝ յուղաներկով / 62x50 սմ/: Նկարիչն ու ստեղծման վայրը անհայտ են: Աշխատանքը բավականին վնասված է (նկ. 2):

Ներկայացված է արևմտյան պատկերագրական տարբերակ: Քրիստոսը պատկերված է հորինվածքի կենտրոնում, առաքյալները տեղավորված են ուղղանկյուն սեղանի բոլոր չորս կողմերում: Համեմատ նախորդ սրբապատկերի, այստեղ դիրքերը փոքր-ինչ կաշկանդված են, պայմանական: Սակայն դիմագծերի մշակման մեջ նկարիչն ավելի ազատ է՝ բոլորի դեմքերի արտահայտությունները տարբեր են, հույզերն անհատական, զգացունքները ընդգծված: Անմորուս է պատկերված միայն Հովհաննեսը: Հուդան պատկերված է կիսադեմ, դարձյալ աջ անկյունում, և ճանաչելի է դառնում իր ձեռքում սեղմած քսակով:

Երկրորդ պլանում պատկերված է ճարտարապետական ոճավորված միջավայր, որը հիշեցնում է ավանդաբար պատկերվող Վերնատունը: Բեմի հետ նմանությունը շեշտվում է բուսական ձևավորմամբ ներկայացված վարագույրով, որն իջնում է Քրիստոսի ֆիգուրի թիկունքում: Միջավայրը լուծված է հստակ, հեռանկարային խիստ կրճատումներով և պլանային դասավորվածությամբ: Մտածողությունը հնչել է և մոնումենտալ, չնայած աշխատանքի ոչ այնքան մեծ չափերին: Ակնհայտ է, որ նկարչի մտածողությունը մոնումենտալիստի է, և չի բացառվում, որ նա ունենար որմնանկարներ կատարելու փորձ: Գունային լուծումները նուրբ են, ներդաշնակ: Որոշ իմաստով դրանք հիշեցնում են Նաղաշ Հովնաթանի ձեռագիրը:

17- րդ դ. մեկ այլ օրինակ է ստվարաթղթի վրա յուղաներկով կատարված «Խորհրդավոր ընթրիք»-ը /56x62 սմ, ՀՊՊ, ֆոնդեր/ (նկ. 3): Նկարիչն ու ստեղծման վայրը անհայտ են: Նկարի վրա առկա է սպիտակ ներկով արձանագրություն՝ «Կարապետ Յովակիմեան» և «Էջմիածին: . 6», որն արված է հետագայում, և, հավանաբար, նշում է գտնվելու վայրը և տիրոջ անունը: Դասավորելով հորինվածքը ավանդական ուղղանկյուն սեղանի շուրջ, նկարչին հաջողվում է ստանալ չճանրաբեռնված պատկեր: Հորինվածքի առանձին է կազմում Քրիստոսի ֆիգուրը, որը կիսում է կոմպոզիցիան երկու հավասար մասերի: Առաջալները խմբված են աջ և ձախ մասերում: Հուղան պատկերված է ավանդական պատկերագրությամբ՝ աջից /Քրիստոսի ձախ կողմում/: Այս դասավորվածությունը հիշեցնում է Բալթիմորի Ուոլթերս թանգարանում /ԱՄՆ/ պահվող 17-րդ դ. դպտիական ավետարանի համապատասխան պատկերը, մի տարբերությամբ, որ այստեղ Հուղան պատկերված է ձախից (նկ. 4):

Հուղան առանձնացված է առաջալների խմբից. միակն է, որ նկարված է ֆրոնտալ, շրջված դեպի դիտողը: Կանոնիկ պատկերագրության շրջանակում է պատկերված միայն Հովհաննեսի դիրքը և նրա երիտասարդ, առանց մորուքի դեմքը: Բոլորը շրջված են դեպի Քրիստոսը և համարյա բոլորը նայում են Նրան: Սրբապատկերի շրջանակից դուրս են նայում երկուսը՝ Քրիստոսը, Ով ասես դիտողի վրայով նայում է դեպի անվերջություն /փախչող հայացք/ և Հուղան, ով նայում է շրջանակից դուրս, ասես, դեպի Դժոխք: Այս մոտեցումը շատ մեծ տարածում ուներ 12-13 դդ. եվրոպական բարձրաքանդակում, որի կանոնիկ և իր ինքնատիպության մեջ աստիպիկ դրսևորում ենք տեսնում ֆրանսիական մի օրինակում՝ Իսսիարի Սան Օստրեմուան եկեղեցու մույթի խոյակի պատկերում, որտեղ տեսարանը տրոհված է 4 մասի և ծգվում է ողջ եզրագծով մեկ: Նույնը տեսնում ենք նաև Իսպանիայի Սան Խուան դե լա Պեկա և Իսպանիայի Սանտա Մարիա դե Էստանի եկեղեցիների մույթերի խոյակների Խորհրդավոր ընթրիք պատկերող ռելիեֆներում:

Ուսումնասիրվող սրբապատկերում առաջին պլանը թողնված է «դատարկ», այն շնչում է և հնարավորություն տալիս ուշադրությունը չշեղել հիմնական իրադարձությունից: Աշխատանքում կա 4 հորինվածքային կապող շեշտ՝ առաջին պլանում պատկերված սափորը, լայն, տեղ-տեղ հակառակ հեռանկարի օգտագործմամբ պատկերված սեղանը, Քրիստոսի ֆիգուրը և վերևում վառվող ջահը: Պատկերագրական և ոճական

առումով այս օրինակը էկլեկտիկ խառը տարբերակ է, բայց, անկասկած, շատ հետաքրքիր:

Արևմտյան, մասնավորապես 16-17-րդ դդ. իսպանական նկարչության պատկերազգրությունից է փոխառված Քրիստոսի շողարձակող լուսապսակը: Առաքյալների մոտ լուսապսակներ չկան: Վերևում պատկերված ջահը նման հորինվածքներում հաճախ փոխարինում է Վերնատան ճարտարապետական լուծումը և հանդիպում է արդեն 11-րդ դ.: Օգտագործված է միջնադարին բնորոշ միաժամանակյա մի քանի դիտակետի կիրառում. առաքյալները՝ կողքից, սեղանը՝ վերնից: Սկսած 12-13-րդ դդ. սեղանին ավանդական պատկերվող ձուկը փոխարինվում է Հաղորդությունը խորհրդանշող հացերով: Այստեղ բացի սովորական ատրիբուտներից, տեսնում ենք հայ արվեստին ոչ բնորոշ տարրեր՝ պատառաքաղներ, որոնք շատ հազվապես են պատկերվում անգամ եվրոպական արվեստում: Առանձին դեպքերում տեսնում ենք ազգայինին բնորոշ տարրեր՝ դեմքերի արտահայտություն, հագուստ, սպասք, անգամ սփռոցն երիզող ծոփքեր: Կարող ենք զուգահեռներ անցկացնել Նորավանքի որմնաքանդակների հետ, ուր պատկերող գահին նստած Տիրամոր ոտքերի տակ ծոփքերով գորգ է պատկերված:

Բազմապիսի տարատեսակ տարրերի միասնությունը բնավ չի խանգարում պատկերի ընդհանրականությանը: Այս սրբապատկերը՝ իր պատկերազգրական էլեմենտների հարստությամբ, ամենաինքնատիպ օրինակներից մեկն է 16-18-րդ դդ. հայ կերպարվեստում:

Հայ հասոցային արվեստում բազմաֆիգուր հորինվածք ստեղծող առաջին նկարիչներից էր Հովնաթան Հովնաթանյանը, որի «Խորհրդավոր ընթրիք»-ը մի շարք այլ պատկերների հետ, արված էին Էջմիածնի Մայր տաճարի համար (նկ. 5): Համեմատելով նույն շրջանում ստեղծված Նոր Ջուղայի Սբ. Ստեփանոսում պահվող նույնանուն նկարի հետ, կարելի է տեսնել հորինվածքը կառուցելու մեջ զգալի տարբերություն⁴: Հովնաթանյանը չի պատկերում կերպարներին իրար վրա, ֆիգուրները չեն խանգարում և չեն ծածկում իրար: Հակառակը, նրանք մտածված և հստակ դասավորված են:

Պատկերազգրական առումով, այստեղ ներկայացված կերպարների դասավորվածությունն ուղղանկյուն սեղանի շուրջը, հորիզոնական է, իսկ շեշտադրումն արված է ուղղահայացների կիրառմամբ: Հեռանկարային միտումնավոր խախտումները, միաժամանակյա տարբեր դիտակետերի օգտագործումը, ստեղծում են կրճատումներ և բազմապլանային խորացումներ: Միջավայրը պատկերված է շատ հանդիսավոր՝ շքեղ սփռոցը, վարագույրի հարուստ ոճավորված ծալքերը հաղորդում են տոնական տրամադրություն: Կերպարները և դիմագծային մշակումները ավանդական են: Առաքյալների դիրքերը, դեմքերի հուզականությունը որոշակիորեն հիշեցնում են մանրանկարչական օրինակներ, մասնավորապես Հակոբ Ջուղայեցու 1610 թ. նույնանուն պատկերը /Մատ. ձեռ. N 7639, էջ 28բ⁵:

Հովնաթան Հովնաթանյանի համար հաճախ օրինակ էր ծառայում եվրոպական արվեստը, նա օգտվում էր եվրոպական փորագրությունների «բնանկարչական ֆոնից,

⁴ Ղազարյան Մ. -1974, էջ 190:

⁵ Драмбян И. – 2008. с. 25.

ճարտարապետական պատկերումներից»⁶: Ահավասիկ, հետևի պլանում պատկերված բացված կամարածև պատուհաններից երևացող բնապատկերը, որ իր ճարտարապետական «հորինված» հուշարձաններով, սարերի, ծառերի, ամպամած երկնքի մշակումներով հիշեցնում է Հյուսիսային Վերածննդի գեղանկարչությունը:

Այսպիսով, 17-19-րդ դդ. հայկական սրբանկարչության մեջ տեսնում ենք նոր մոտեցումներ: Պահելով դարավոր ավանդույթները, նկարիչները առաջարկում են նորովի լուծումներ, հաճախ անսպասելի և ինքնատիպ: Մոնումենտալ գեղանկարչության մեջ ավանդույթը պահպանվում է ավելի անեղծ, իսկ նոր լուծումները առաջարկվում են միայն առանձին տարրերի մշակման ժամանակ:

Հայաստանի պետական պատկերասրահի հիմնական ցուցադրության մեջ է ներկայացված կտավի վրա յուղաներկով նկարված 19-րդ դ. «Խորհրդավոր ընթրիք» սրբապատկերը /102 x 58 սմ/ (նկ. 6): Այն բավականին վնասված է, քայքայված են առանձին հատվածներ:

Երբ խոսքը գնում է ուշ միջնադարի մասին, բնական է, որ հիմնական դոգմատիկ կանոնիկ պատկերագրական կորիզը արդեն ենթարկված է փոփոխության՝ հիմնականում չկան պարտադիր բնորոշող տարրերն ու ձևերը: Դրանում համոզվեցինք նախորդ օրինակներից, երբ հորինվածքները կրում էին հավաքական պատկերագրության էլեմենտներ: Սակայն արդեն 19-րդ դ. սրբապատկերում նկատվում է միտում հարագատ մնալու ավանդական պատկերագրությանը:

Առաքյալները խմբված են շրջանածև, պատկերի ողջ հարթությամբ: Մա բյուզանդական պատկերագրական տիպն է, որը առավել տարածված էր մանրանկարչության և որմնանկարչության մեջ: Արխայիկ մոտեցումը երևում է և գունային մշակման մեջ, որտեղ օգտագործված են ավանդական կապույտ և կարմիր գույների համադրությունները: Բյուզանդական արվեստին բնորոշ գեղարվեստական մեկ այլ մշակում է մուգ երանգները թափանցիկ ոսկեգույնով կամ սպիտակներով շեշտադրելը, ինչը, ստեղծելով լուսաստվերային խաղեր, դինամիկ և արտահայտիչ է դարձնում պատկերը: Առաքյալների գլուխները զարդարում են լուսապսակները:

Սեղանն ունի կրկնասփռոց՝ կապույտի վրա՝ սպիտակ, ինչը բազմիցս հանդիպում ենք մանրանկարչության մեջ: Յուրաքանչյուր առաքյալի դիմաց դրված է սեփական ափսե: Վաղ միջնադարյան օրինակներում անհատական ափսեներ չեն հանդիպում, քանի որ իրական կյանքում չկար նման մշակույթ⁷: Ինտերիերն ու միջավայրը լցված չեն, գերիշխում է պայմանական մուգ դարչնաոսկեգույն ֆոնը:

19-րդ դ. ստեղծված «Խորհրդավոր ընթրիք» սրբապատկերի մեկ այլ օրինակ ենք գտնում Հայաստանի պետական պատկերասրահի հիմնական ցուցադրությունում /կտավ, յուղաներկ, 97x132 սմ/ (նկ. 7): Այն պատկերված է գուսպ, մինիմալ գեղանկարչական արտահայտչամիջոցներով: Ընդհանուր մուգ ֆոնի վրա մոայլ տոներով մշակ-

⁶ Ղազարյան Մ. -1974, էջ 189:

⁷ Гуревич А. -1989, с. 118: Այս պարագայում շատ հետաքրքիր օրինակ կարող է հանդիսանալ Սերբիայի Ստուդենիցա քաղաքի Աստվածածնի եկեղեցու ներքին զավթի «Խորհրդավոր ընթրիք» պատկերող 13-րդ դ. որմնանկարը:

ված են առաքյալների հագուստները, ինտերիերը: Հորինվածքային առումով այն հիշեցնում է 17-րդ դ. մեր քննարկված օրինակները՝ դասավորվածությունը սիմետրիկ է, հավասարակշռված: Դիմագծերը տիպիկ ազգային են, դեմքերը հիմնականում մշակված են մանրակրկիտ, սակայն Քրիստոսի և Հովհաննեսի դեմքերը լուծված են ընդհանրացված, պայմանական, ասես էտյուդային: Դեմքերը լուսավորված են. ընդհանուր մուգ ֆոնի վրա այս լուսային դրվագումները ստեղծում են մտածված ռիթմ: Լույսով են ողողված նաև շրջանակում նկարված գործիքները, Գողգոթայի խաչը, սփռոցը:

Ողջ հորինվածը պատկերված է խորացումով, ասես խորշի մեջ տեղավորված: Այս պատրանքը ստեղծվում է աջ և ձախ կողմում լայն երիզով պատկերված շրջանակի շնորհիվ: Շրջանակում եռամաս հորիզոնական բաժանումով պատկերված են դրվագներ Քրիստոսի Չարչարանաց շարքից՝ կտտանքները, տանջանքի գործիքները: Միջնադարում ընդունված էր շրջանակ նկարելը. դա ամփոփում էր պատկերը, առանձնացնում այլ պատկերներից: Օգտագործելով միջնադարյան մտածողությունից ստացված գիտելիքները՝ նկարիչը ստանում է արդի «մոդեռնիստական» լուծում: Որքան էլ հորինվածքը պատկերված է համայնապատկերային, միևնույն է, մտածողությունն այստեղ հաստոցային է, ի տարբերություն նախորդ օրինակների, որտեղ հանդիպում ենք մոնումենտալ մտածողության:

Ընդհանրապես, 17-19-րդ դդ. հայկական սրբանկարչությունը շատ յուրօրինակ է, հաճախ չկա ընդհանուր նմանություն, և յուրաքանչյուր նկարիչ ունի իր սեփական ընդգծված ձեռագիրը: Անգամ միևնույն նկարչի մոտ՝ օրինակ, 18-րդ դ. եգիպտահայ Յուհաննա էլ Արմանի էլ-Կուսցիի, կարող ենք հանդիպել թե՛ մանրանկարչական մտածողությամբ կատարված սրբապատկերներ, թե՛ որմնանկարին բնորոշ մասշտաբայնություն ունեցող օրինակներ:

Եզրահանգում. Այսպիսով, 17-19-րդ դդ. հայկական սրբապատկերներում չկա ընդհանուր ոճական նմանություն: Կախված նրանից, թե որտե՞ղ են դրանք նկարվել և ո՞վ է եղել պատվիրատուն, ստացվել են տարբեր պատկերագրական լուծումներ: Հաճախ հիմքում թողնելով ավանդական, միջնադարից եկող պատկերագրական կանոնները, նկարիչները ստեղծում են սեփական նորովի մտացված և ներկայացված օրինակներ:

Թեև աշխատանքների չափսերը մեծ չեն, գրեթե բոլոր սրբապատկերներում առկա է մոնումենտալ մտածելակերպը: Աշխատանքներն ընդհանրացնում է միջնադարից եկող միաժամանակյա դիտակետի կիրառությունը: Սրբապատկերներին բնորոշ են մուգ, թավշյա գույները: Ավանդական են կերպարների բնութագրերը՝ Հովհաննեսը պատկերվում է անմորուս: Առաքյալների դասավորվածությունը՝ կախված պատվիրատուի պահանջներից և կատարման տեղանքից, ներկայացված է կամ մոնումենտալ արվեստին բնորոշ պատկերագրությամբ, երբ Քրիստոսը պատկերվում էր անկյունում, կամ մանրանկարչությանը բնորոշ՝ կենտրոնական դասավորվածությամբ: Այսպիսով, 17-19-րդ դդ. «Խորհրդավոր ընթրիք» պատկերող հայկական սրբապատկերները, ժամանակային առումով, քանի որ դուրս են մնում միջնադարյան խիստ կանոնիկ պատկերագրությունից, հաճախ ներկայացվում են փոփոխված, էկլեկտիկ պատկերագրությամբ:

«ТАЙНАЯ ВЕЧЕРЯ» В АРМЯНСКИХ ИКОНАХ 17-19 ВВ.

Дадаян Т.

Ключевые слова: *средневековое, искусство, архитектура, храм, собор идей, божественная истина, монументальный, вид, станковый, иконопись, иконы, Национальная галерея Армении.*

Средневековое искусство было тесно связано с архитектурой – храм воспринимался как собор идей, где любой вид искусства служил идее раскрытия божественной истины. Естественно, получали развитие лишь монументальные виды искусства. Из станковых видов была распространена лишь иконопись. В статье исследуются четыре иконы 17-18вв. из собрания Национальной галереи Армении.

"THE LAST SUPPER" IN ARMENIAN ICONS OF THE 17TH-19TH CENTURIES

Dadayan T.

Key words: *Medieval, art, architecture, Temple, a Cathedral of Ideas, Divine Truth, monumental, types of art, icon, 17-18 centuries, collection, National Gallery of Armenia.*

Medieval art was closely related to architecture - the Temple was perceived as a Cathedral of Ideas, where any kind of art served the idea of revealing Divine Truth. Naturally, only monumental types of art were developed. Only the icon was distributed. The article explores four icons 17-18 centuries from the collection of the National Gallery of Armenia.

Փ ր ա կ ա ն ն ի թ յ ն ի ն

1. **Ղազարյան Մ. -1974**, Հայ կերպարվեստը XVII-XVIII դդ., Երևան, ՀՍՍՀ ՓՍ հրատարակչություն, սև-սպիտակ պատկերներ, 284 էջ:
2. **Бобров Ю. -1995**. Основы иконографии древнерусской живописи. СПб.
3. **Гуревич А -1989**. Культура и общество средневековой Европы глазами современников, М., "Искусство".
4. **Дрампян И. -2008**. Акоп Джугаеци. Ереван. "Гитутюн" НАН РА.
5. **Лазарев В. -2000**. Русская иконопись от истоков до начала 16 в. М. "Искусство".
6. **Мельник А. -2011**. Пядничные иконы 16-начала 17вв. русских святых//Древняя Русь, вопросы медиевистики, № 2.




Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7

Վերատպությունների ցանկ

1. «Խորհրդավոր ընթրիք», Սրբապատկեր, 17-րդ դ., Լևկաս, յուղաներկ, 28x31 սմ, Հայաստանի ազգային պատկերասրահի /ՀԱՊ/ ֆոնդեր:
2. «Խորհրդավոր ընթրիք», Սրբապատկեր, 17-րդ դ., կտավ, յուղաներկ, 62x50 սմ, ՀԱՊ ֆոնդեր:
3. «Խորհրդավոր ընթրիք», Սրբապատկեր, 17-րդ դ., ստվարաթուղթ, յուղաներկ, 56x62 սմ, ՀԱՊ, ֆոնդեր:
4. Խորհրդավոր ընթրիք, Ղպտիական ավետարան, 17-րդ դ., Բալթիմոր, Ուոլթերս թանգարան:
5. Հովնաթան Հովնաթանյան, «Խորհրդավոր ընթրիք», Սրբապատկեր, 18-րդ դ, ՀԱՊ, մշտական ցուցադրություն:
6. «Խորհրդավոր ընթրիք», Սրբապատկեր, 19-րդ դ., կտավ, յուղաներկ, 102x58 սմ, ՀԱՊ, մշտական ցուցադրություն:
7. «Խորհրդավոր ընթրիք», Սրբապատկեր, 19-րդ դ., կտավ, յուղաներկ, 97x132 սմ, ՀԱՊ, մշտական ցուցադրություն:

*Ընդունվել է՝ 02. 03. 2022
Գրախոսվել է՝ 03. 04. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022*

Տեղեկություններ հեղինակի մասին

Թամարա ՂԱՂՅԱՆ՝ Հայաստանի գեղարվեստի պետական
ակադեմիայի հայցորդ, էլ. հասցե՝ tdadayan@list.ru

ՀՏԴ՝ 781,7

DOI: 10.52971/18294316-2022.25.1-200

ՄՈՒՂԱՄԸ Ն. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Կարապետ Շարոյան

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ

Բանալի բառեր՝ Ն. Տիգրանյան, մուղամ, ավանդական երաժշտություն, գործիքային երաժշտություն, մոնոդիա, բազմաձայնություն:

Հոդվածը նվիրված է հայ մոնոդիկ երաժշտության ինքնատիպ ժանրերից մեկի՝ գործիքային մուղամի բացառիկ նմուշների մերօրյա արժևորմանը: 19-րդ դարի 2-րդ կեսի Ալեքսանդրապոլի երաժշտամշակութային մթնոլորտում ձևավորվեցին կոմպոզիտոր Ն. Տիգրանյանի երաժշտագեղագիտական հայացքներն ու ապագա մտահղացումների կայուն հիմքերը: Նա հայ նոր մասնագիտացված երաժշտության հիմնադիրներից մեկն էր և առաջինը, որը եվրոպական նոտագրությամբ գրի է առել և հմտորեն մշակել քաղաքային երաժշտական կյանքում հնչող բազմապիսի արժեքները՝ դաշնամուրի, ջութակի, կամերային անսամբլների, սիմֆոնիկ և ժողովրդական նվագարանների նվագախմբերի համար:

Նախաբան. Նիկողայոս Տիգրանյանը հայ դասական երաժշտության հիմնադիրներից մեկն է, ում ստեղծագործությունները վաղուց արժևորվել են որպես կարևորագույն ձեռքբերում 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի երաժշտապատմական գործընթացում: Սա այն նշանակալից շրջանն էր, երբ ձևավորվում էին ազգային երաժշտության նոր հիմքերը, որոնց վրա հետագայում վեր խոյացան բարձրակետ մնայուն արժեքներ:

Կոմպոզիտորի կյանքն ու գործունեությունը ծավալուն լուսաբանվել են հայ երաժշտագիտության մեջ դեռևս նրա կենդանության օրոք և հետագայում կարևոր տեղ են զբաղեցրել երաժշտագիտական մի շարք հետազոտություններում և աշխատություններում: Մի կողմից հետազոտվել և գնահատվել են Ն. Տիգրանյանի փորձարարական, նորարարական ձեռքբերումները, մյուս կողմից յուրահատուկ կերպով բացահայտվել

են նրա ստեղծագործական մտահղացումների հեռահար ուղիներն ու միտումները: Անշուշտ, խոսքը ժողովրդական և բանավոր արվեստի նմուշների բազմաձայն մշակումների մասին է, որով հիմք դրվեց եվրոպական տիպի հայ բազմաձայն երաժշտամտածողությանը: Սա այն բնահուն ճանապարհն էր, որով անցել էին նաև այլ ժողովուրդներ:

Արևելքի ժողովուրդների երաժշտության խոր գիտակ, կոմպոզիտոր, դաշնակահար Ն. Տիգրանյանն իր ստեղծագործական որոնումները սևեռեց հատկապես քաղաքային ժողովրդական և աշուղական երաժշտական նմուշների ուսումնասիրման, գրառման և բազմաձայն վերակերտման վրա: Հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի պատմաքաղաքական իրադրությունը և եվրոպական արժեքների նկատմամբ ազգային չափանիշների ընդհանուր մակարդակը՝ կոմպոզիտորի ստեղծագործությունը կարող ենք դիտարկել որպես առաջադեմ և վառ հեռանկարային:

Ալեքսանդրապոլը 19-րդ դարի 2-րդ կեսին կովկասյան տարածաշրջանի առևտրական, արհեստավորական և մշակութային կենտրոններից մեկն էր: Որպես քաղաքային մշակույթի տիպական հատկանիշների կրող՝ այն ներկայանում է երաժշտական հարուստ բնութագրով: Բազմազանության մեջ առանձնանում են քաղաքային ժողովրդական երգարվեստը, սազանդարական և այլ նվագարանային անսամբլները, մյուս կողմից՝ աշուղական մասնագիտացված երգարվեստի բուռն զարգացումը և եվրոպական՝ հատկապես նվագարանային երաժշտության յուրահատուկ դրսևորումները¹:

Քաղաքային ժողովրդական երգի բնութագրի մեջ կարևորվում է այնպիսի երևույթ, ինչպիսին Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքային մշակույթներից բերված և Ալեքսանդրապոլում համատեղված երգային ժողովրդական երաժշտությունն էր: Ժողովրդական երգին սերտաճած էր Ալեքսանդրապոլի սազանդարական արվեստը: Երաժշտական մշակույթի այս կարևոր ոլորտը լավագույնս զարգանում էր նվագարանային երաժշտության ավանդական ժանրերում: Քաղաքային կյանքում սազանդարների մասնակցությունը եղել է ակտիվ և շատ սպասելի:

Դրանք ելույթներն էին սրահներում, արհեստավորական համաքարություններում, ընտանեկան խնջույքներում, հարսանիքներում և ժամանցի այլ դրսևորումներում: Սազանդարական արվեստը աշուղական երաժշտության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում: Ինչպես նշում է Արաքս Սարյանը. «Հարևան ժողովուրդների երաժշտական արվեստների առանձնահատկությունների փոխներթափանցման հիմնական գործոններից մեկը աշուղների և սազանդարների գործունեությունն էր, որ շրջելով բնակավայրից բնակավայր, տարածում էին ազգայինը և, միաժամանակ ընտրում և յուրացնում այլ ազգերի երաժշտական արվեստի մի շարք կողմերը»²:

Ահա այս ընդհանուր արժեքների մեջ բուռն զարգացում է ապրել և այսօր էլ գեղարվեստական արժեքներ է զարգացնում Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների լայն շրջանում տարածված և գնահատված մուղամի արվեստը: Յուրաքանչյուր ժողովուրդ իր մշակութային արժեքների և գեղագիտական ընկալումների ու ճաշակին համապատասխան ստեղծել է մուղամներ՝ ընդհանուր մի շարք սկզբունքների առկայու-

¹ Հարությունյան Հ. -2008, էջ 40:

² Մարյան Ա. -1973, էջ 106:

թյան պայմաններում: Լ. Երնջակյանն այս մասին գրում է. «Երաժշտական մշակույթների փոխազդեցության առումով մոնոդիկ արվեստի պրոֆեսիոնալ ժանրերից հետաքրքրական է հատկապես մուղամը, ... որ յուրաքանչյուր ժողովրդի մոտ ստացել է իր ուրույն մեկնաբանումը: Պրոֆեսիոնալ այլ ժանրերի թվում այն ծնվել և դարերով հղկվել է ժողովրդական ստեղծագործության ընդերքում»³:

Ընդհանուրի և ազգային մտածողության վրա հիմնված ավանդականությամբ է բնորոշվում հայ երաժշտագիտության մեջ Ալեքսանդրապոլի աշուղական-սազանդարական դպրոցում զարգացող մուղամի արվեստը: Այդ դպրոցը վերջնահաստատվեց աշուղ Ջիվանու գործունեության շրջանում և մի նոր հիմքի վրա դրեց նաև մուղամի կատարման ազգային առանձնահատկությունները:

19-րդ դարի 2-րդ կեսի Ալեքսանդրապոլի երաժշտամշակութային մթնոլորտում ձևավորվեցին կոմպոզիտոր Ն. Տիգրանյանի երաժշտագեղագիտական հայացքներն ու ապագա մտահղացումների կայուն հիմքերը: Նա հայ նոր մասնագիտացված երաժշտության հիմնադիրներից մեկն էր և առաջինը, որը եվրոպական նոտագրությամբ գրի է առել և հմտորեն մշակել քաղաքային երաժշտական կյանքում հնչող բազմապիսի նմուշները՝ դաշնամուրի, ձայնի, ջութակի, կամերային անսամբլների, սիմֆոնիկ և ժողովրդական նվագարանների նվագախմբերի համար: «Պատահական չէ, որ հենց Ալեքսանդրապոլի հետ է կապված Ն. Տիգրանյանի կյանքն ու գործը, - գրում է Լ. Երնջակյանը, - կոմպոզիտոր, որն առաջին անգամ ձայնագրել և մշակել է արևելքի դասական երաժշտության գործիքային նմուշները՝ պարսկական մուղամներն ու դասսոգահները»⁴:

Հայ երաժշտագիտության մեջ բարձր է գնահատվել հատկապես մուղամների հավաքման, ուսումնասիրման և մշակման աշխատանքները, որ կատարել է կոմպոզիտորը: Ռ. Աթայանի բնորոշմամբ, այդ աշխատանքի լուսաբանումը առանձին հետազոտության նյութ կարող է լինել: Նշվում է նաև այն վիթխարի ջանքերի մասին, որը կոմպոզիտորն ուղղել էր հիշյալ ստեղծագործությունների հասարակական լայն ճանաչմանը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում⁵:

Մուղամը՝ որպես բանավոր ավանդույթի մասնագիտացված արվեստի կենսունակ մի ժանր, լայնորեն տարածված է եղել հայերի կենցաղում, որոնք քիչ դեր չեն կատարել այդ ժանրի զարգացման գործում: Լ. Երնջակյանի հավաստմամբ, հայ երաժիշտները հնուց ի վեր իրենց ներդրումն ունեն արևելյան մոնոդիկ երաժշտության այս ճյուղի զարգացման մեջ: Նրանք մուղամաթի արվեստ են ներմուծել իրենց ազգային մշակույթի տարրերը, որը դրսևորվում է կերպարային մտածողության, կատարողական մեկնաբանման առանձնահատկություններում, ինչպես նաև իմպրովիզացիոն ձևի զարգացման կառուցվածքային օրինաչափություններում⁶:

³ Երնջակյան Լ, -1982, էջ 44:

⁴ Նույն տեղում, էջ 50:

⁵ Атаян Р. -1978, с. 22.

⁶ Երնջակյան Լ, -1982, էջ 52:

Մուղամների ձևերը շատ բարդ են ու լի հնչյունային ամենատարբեր տարբերով: Հետևաբար, հնչող նյութի գրառման ճշգրտությունը շատ բարդ է: Վերջինս Ն. Տիգրանյանը լավագույնս հաղթահարել է:

Ավելին, մուղամները Տիգրանյանի կողմից գրի են առնվել այս ժանրի լավագույն իմպրովիզատորներից և կատարողներից մեկի՝ Ադամալ Մելիք-Ադամալյանի ելույթներից, որին կոմպոզիտորը համարում էր իր ուսուցիչը արևելյան երաժշտության ոլորտում: Բացի այդ, Տիգրանյանը մուղամը համարեց ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության հենց այն կատարյալ ձևը, որ ինքնին լինելով դասական, չէր պահանջում կոմպոզիտորական լրացումներ⁷:

Նշանավոր թառահար Ադամալ Մելիք-Ադամալյանի հետ սերտ համագործակցությունը մեծապես նպաստեց կոմպոզիտորի մուղամաթագիտական գործունեությանը: Նա համարվում էր իր ժամանակի դասական մուղամների և դասգահների փայլուն գիտակ և անգուգական կատարող: Տիգրանյանի բնորոշմամբ, նրա նվագն ուժեղ ու խորը, տևականորեն չմոռացվող զնայանքի տպավորություն էր գործում լսողների վրա. «Նվագն Ադամալի համար վեհ, նվիրական գործ էր, որին նա միշտ մոտենում էր լրջությամբ, կարծես սրբազան արարողություն կատարելու պատասխանատվության գիտակցությամբ լցված»⁸:

Հարկ է խոսել նաև մուղամների կառուցվածքի մասին: Սովորաբար, մուղամի ամբողջ բազմաբաժան կազմը հիմնված է մեկ ձայնակարգի վրա, որի անունով էլ կոչվում է հենց մուղամը (օրինակ՝ չարգյահ, շահնագ, շյուշթեր և այլն), այնուամենայնիվ մուղամի տարբեր մասերում հիմնական մասը կարող է փոխարինվել այլ ձայնակարգերով: Մուղամները բաղկացած են 3-4 մասերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր անունը: Գումրեցու աշխատությունը մանրամասն պատմում է Տիգրանյանի կողմից մշակված մի շարք մուղամների բովանդակության մասին⁹: Այսպիսով *Չարգյահը* բնութագրվում է որպես «պատերազմի բանաստեղծություն», խորապես ողբերգական բովանդակությամբ էպոս: Յուրաքանչյուր մուղամի անուն նշում է պատերազմի իրադարձություններից առանձին դրվագներ: *Բայաթի Շիրագ* կոչվող իրանական Շիրազի Էլեգիա մուղամը տոգորված է քնարական-ռոմանտիկ բովանդակությամբ: Լեզգեդների ամենատարբեր սյուժեներն ու թեմաներն ուղեկցվում են բայաթիի կատարմամբ: *Հեղարիում* ամբողջ երգի թեման մնում է տոնի հանդիսավոր տրամադրությունը: *Շահնագ* մուղամում զգացվում է տխրություն երկրային փխրունության մասին: Հետո պատմության ընթացքում երգիչը ոգեշնչվում է, ոգևորությունը հասնում է իր գագաթնակետին և հանգչում է հանգիստ *Պուրեիթում*: *Նուրուզ-Արաբին* պատկերում է մի առավոտ Արաբիայում: Անդրկովկասում այն հայտնի է նաև որպես Սահարի: Այստեղ պատկերված են բնության, առօրյա կյանքի պատկերներ, որոնք ավարտվում են բնության օրհնությամբ և կյանքի ուրախության գովաբանությամբ¹⁰: Անկասկած, բովանդակության այդպիսի

⁷ Худабашян К. -1978, с. 111.

⁸ Տիգրանյան Ն. -1981, էջ 26:

⁹ Худабашян К. -1978, էջ 112:

¹⁰ Նույնը:

բազմազանության հետ մեկտեղ այդ դրվագները փոխկապակցված են նաև հորինվածքային կառույցի միասնականությամբ¹¹:

Կար ևս մեկ հանգամանք, որը խթանում էր կոմպոզիտորի պրպտուն միտքը վերոնշյալ ոլորտում: Հարցն այն էր, որ արտասահմանում և հատկապես Ռուսաստանում աճում էր հետաքրքրությունը արևելյան երաժշտության հանդեպ, և անհրաժեշտ էր մասնագիտական լուրջ վերաբերմունք հանդես բերել այդ երաժշտության գիտական մեկնաբանման և կատարողական արվեստը ճիշտ ներկայացնելու համար: Այդ իսկ պատճառով կոմպոզիտորը հանդես է եկել մուղամի ժանրին նվիրված գիտական հրապարակումներով: Դրանք ինքնօրինակ դիտարկումներ են՝ արևելյան երաժշտության պատշաճ ուսումնասիրության, վերջինիս հանդեպ լուրջ գիտական միտք սևեռելու, անհրաժեշտ նյութեր հավաքելու, ուսումնասիրելու, այնուհետև մշակելու և հրապարակելու վերաբերյալ: Մեջբերենք կոմպոզիտորի սկզբունքային դիրքորոշումն արտահայտող կարևոր մտքերից մեկը, որի գիտական արժեքը այսօրվա դիտակետից ևս բարձր է: Նա գրում է. «Առհասարակ պետք է ընդունել, որ արևելյան երաժշտության հիմունքները դեռևս չեն որոշված: Այդ հիմունքների մշակման համար նախ և առաջ անհրաժեշտ է գրի առնել ու դասակարգել մուղամների հնարավորին չափ մեծ քանակ: Ներկայումս դեռևս շատ քիչ բան է արված նման աշխատանքի նույնիսկ առաջին կեսի համար, այսինքն՝ շատ քիչ գրառումներ կան»¹²:

Այսպիսով, նա կարևորում և ապա ձեռնամուխ է լինում գրառելու բանավոր ավանդույթով կենցաղավարող նյութը, սակայն հարկ է նշել, որ ամեն հնչող նյութ չէր, որ գրի էր առնում կոմպոզիտորը: Այդ մասին նա արժեքավոր մի միտք է հայտնել նույն հոդվածում. «Միևնույն պիեսը երգիչը կատարում է մի ձևով, թառի վրա կատարվում է այլ կերպ, չոնգուրի վրա՝ այլ, ըստ գործիքի առանձնահատկությունների: Համենայն դեպս, բազմազանություններով հանդերձ, անշուշտ կայուն են մնում լադը, մեղեդու հենքը և ռիթմի ընդհանուր բնույթը իր շեշտադրությամբ»¹³: Այս դրույթը կոմպոզիտորի հայացքները մոտեցնում է Կոմիտասի բանահավաքչական աշխատանքի մեջ դրսևորված համանման դիրքորոշմանը:

Այս առումով բացառիկ կարևոր արժեք ունի Աղամալ Մելիք-Աղամալյանից գրառած նրա մուղամները, որոնք, ըստ ականատեսների վկայության, նա կատարել է թառահարի հետ միաժամանակ՝ դաշնամուրով¹⁴: Ա. Մելիք-Աղամալյանի նվագարանային կատարողական արվեստի արժեքավորման մեջ հատկապես կարևորվում է կոմպոզիտորի կողմից սազանդարական նվագարանային կատարողական արվեստի խորքային անգուգական իմացությունը: Այսպես, նա գրում է. «Ձախ ձեռքի մատների և աջ ձեռքի թաթի մեծապես զարգացած ու անվրեպ տեխնիկայի տեր լինելով՝ Աղամալը նվագելիս առաջ չէր քաշում տեխնիկայի դերը, այլ ենթարկվում էր այդ նվագվող կտորի իմաստին, տեխնիկական համարելով նվագի իմաստն արտահայտելու մի միջոց միայն և ոչ թե

¹¹ Худабашян К. -1978, էջ 113:

¹² Նույն տեղում, էջ 17:

¹³ Նույն տեղում, էջեր 22-23:

¹⁴ Гумреци -1927, с.19.

ինքնարժեք տարր: Նրա աջ ձեռքի թաթի զարկը ծանր էր, լուրջ, ձայնիչ ու ներշնչող ամեն մի «տոնը» հնչում էր ճշգրիտ ու հղկված: Միզրաբը նա խփում էր թաք-թաք, մերժելով մանդոլինանման նվագելու այն կերպը, որը բավականին տարածված էր Ղարաբաղի և Բաքվի թառ նվագողների և, առհասարակ, սովորական սազանդարների մոտ»¹⁵: Կարևոր էր կոմպոզիտորի սազանդարական նվագարանների հմուտ գիտակ լինելը, քանզի կատարողական առանձնահատկությունների փայլուն իմացությունը հետագայում վճռական դեր էր կատարելու հավաքածո նյութի բազմաձայն մշակումների ստեղծման ընթացքում:

Իր գործունեության հաջորդ քայլը կոմպոզիտորը տեսնում էր արդեն գրառած ավանդական ժանրերի ինքնօրինակ «թարգմանությունը» եվրոպացի ունկնդրի համար: Հիշենք, որ նա գերազանց տիրապետում էր դաշնամուրային կատարողական արվեստին և հանդես էր եկել բազմաթիվ մենահամերգներով ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Սկզբունքային էին Ն. Տիգրանյանի կայուն մեթոդաբանության շուրջ մոտեցումները՝ հավաքած նյութի բազմաձայն վերադաշնակման գործում: Նա հույժ կարևորում էր բնօրինակ նմուշի անխաթար պահպանումը ցանկացած մշակման մեջ, ինչը, ըստ կոմպոզիտորի դիրքորոշման, գերծ կպահեր ազգային ավանդական նմուշները կամային աղավաղումներից: Նա գրում է. «Քանի որ արևելյան մեղեդիների ճշգրիտ հաղորդումը դաշնամուրի միջոցով, իր տեմպերացված կարգով, մշտապես հանդիպել է բազմաթիվ զուտ տեխնիկական դժվարությունների, ապա ես, երաժշտական բովանդակության ավելի կատարյալ հաղորդման համար ստիպված եմ եղել դիմել այնպիսի հարմոնիզացիայի և նվագակցության, որոնք համապատասխանեին մեղեդու յուրօրինակ բնույթին: Ընդ որում ես պետք է հաշվի առնեի այն փաստը, որ տեղացի երաժիշտներին և ժողովրդին միանգամայն խորթ է բազմաձայն երաժշտությունը»¹⁶:

Գեղարվեստական արժանիքներով և երաժշտապատմական գնահատականի առումով, անտարակույս, Ն. Տիգրանյանի մուղամները կարևոր ներդրում են տվյալ ժամանակաշրջանի հայ պրոֆեսիոնալ երաժշտության կայացման գործում: Հայտնի է, որ խորհրդային տարիների սկզբներին, և ինչ-որ առումով նաև հետագայում էլ առկա էր երաժշտագեղագիտական մի հայացք, որի համաձայն մուղամը խորթ և անհարիր էր հայ ազգային երաժշտությանը: Ճիշտ է, սրա կողքին հնչել և արձածվել են այդ հայացքը լիովին հերքող գիտական հստակ բնորոշումներ, և տրվել են այդ ժանրի ու երաժշտամտածողության ազգային չափանիշների գնահատականները: Հավանական են թվում զուտ ժամանակային կտրվածքով մուղամների գեղագիտական ընկալումների ոչ միանշանակ գնահատականները: Մանրամասն ծանոթանալով Ն. Տիգրանյանի մշակած մուղամների ձևակառուցողական և լեզվառճական առանձնահատկություններին՝ կարող ենք նշել դրանց մեջ ամփոփված գեղարվեստական բարձր արժանիքների ու ստեղծագործական ինքնատիպ լուծումների մասին: Այսօրվա չափանիշներով միգուցե դրանք կարող են ընկալվել զուտ իրենց ստեղծման ժամանակին հարիր գնահատականներով, և այս հարցում կարևոր դեր ունեն երաժիշտ կատարողները, որոնց կողմից տր-

¹⁵ Տիգրանյան Ն. -1981, էջ 26:

¹⁶ Նույն տեղում, էջ 21:

ված արժևորումը էական նշանակություն կունենա այս ստեղծագործությունների մերօրյա համերգային կատարումների համար: Մեր խորին համոզմամբ մուղամները կրում են պատմական հետաքրքրություն և որպես այդպիսին աննախադեպ են այդ ժամանակաշրջանի երաժշտապատմական սահմաններում: Մենք համոզված ենք, որ դրանք այսօր էլ ներկայացնում են որոշակի հետաքրքրություն ժամանակակից մուղամի երաժշտության ասպարեզում: Համոզված ենք նաև, որ այս ստեղծագործությունները կարող են նորովի արժևորվել հետզհետե զարգացող հայ իրանական մշակութային կապերի տեսանկյունից, նպաստել երկու մշակույթների դարավոր փոխազդեցությունների սահմաններում ստեղծված ընդհանուր արժեքների մերօրյա գնահատականին:

Եզրահանգում. Այսպիսով, եթե զուգահեռներ տանենք կոմպոզիտորի գրի առած և մշակած մուղամների շուրջ երաժշտագետների և կատարողների արտահայտած տեսակետների միջև, կզանք այն եզրահանգմանը, որ Ն. Տիգրանյանի ստեղծագործությունները միևնույն ժամանակ և՛ պարզ են, և՛ բարդ: Կոմպոզիտորը փորձել է մուղամների իմպրովիզացիոն անորոշ ձևի մեջ մտցնել որոշ պարզություն և ավարտվածություն, որով ցանկացել է մուղամը դարձնել ավելի հստակ, զուսպ և հասկանալի: Այս կերպով մուղամն ըմբռնելի է դառնում նաև եվրոպացի ունկնդրի համար:

Նիկողայոս Տիգրանյանի մուղամներն ունեն բացառիկ գեղարվեստական արժեք և մինչ օրս էլ շարունակում են պահպանել իրենց դերն ու հսկայական ավանդը հայ երաժշտության մեջ՝ ընդգրկվելով երաժիշտ կատարողների նվագացանկում:

МУГАМ В ТВОРЧЕСТВЕ Н. ТИГРАНЯНА

Шабоян К.

Ключевые слова: *Н.Тигранян, мугам, традиционная музыка, инструментальная музыка, монодия, многоголосие.*

Статья посвящена современной оценке уникальных образцов армянской монодической музыки – инструментальному мугаму. Во второй половине 19 века в музыкально-культурной атмосфере Александрополя сформировались музыкально-эстетические взгляды и прочные основы будущих идей композитора Н. Тиграняна. Он был одним из основоположников новой армянской профессиональной музыки, первым начал писать в европейской нотации, искусно обрабатывая различные жанры городской музыкальной культуры для фортепиано, звука, скрипки, камерных ансамблей и оркестров.

MUGHAM IN N. TIGRANYAN'S CREATION

Shaboyan K.

Key words: *N.Tigranyan, mugham, traditional music, instrumental music, monody, polyphony.*

The article is devoted to the modern assessment of the unique examples of Armenian monodic music - instrumental mugham. In the second half of the 19th century, in the musical and cultural atmosphere of Alexandrapol, the musical and aesthetic views and solid foundations for the future ideas of the composer N. Tigranyan were formed. He was one of the founders of new

Armenian professional music, he was the first to write in European notation, skillfully processing various genres of urban musical culture for piano, sound, violin, chamber ensembles and orchestras.

Գրականություն

1. **Երնջակյան Լ.-1982.** Հայ մուղամաթիստները և նրանց դերը Արևելյան երաժշտական մշակույթի զարգացման մեջ, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 2:
2. **Հարությունյան Հ. -2008,** Երաժշտական կյանքը Ալեքսանդրապոլում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, Գյումրի:
3. **Սարյան Ա. -1973.** Հայ քաղաքային ժողովրդական երգարվեստը 19-20-րդ դարեր, Հայ ազգագրություն և բանահյուսություն, N 4, Երևան:
4. **Տիգրանյան Ն.-1981** Հոդվածներ, հուշեր, նամակներ, Երևան:
5. **Атаян Р.-1978,** Об изучении мугамов в Армении, в сб. Макомы, мугамы и современное композиторское творчество (межреспубликанская научно – теоретическая конференция). Ташкент.
6. **Гумреци -1927,** Николай Фадеевич Тигранов и музыка Востока, с предисловиями Н.Я. Марра и композитора А. А. Спендиарова. Л.
7. **Худабашян К.-19** Армянская музыка на пути от монодии к многоголосию. Ереван.

Ընդունվել է՝ 28. 02. 2022
Գրախոսվել է՝ 23. 03. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին.

Կարապետ ՇԱԲՈՅԱՆ՝ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դասախոս, էլ. հասցեն՝ kshaboyan@mail.ru

ՀՏԴ՝ 726

DOI: 10.52971/18294316-2022.25.1-208

ԵՂԵԳՆԱՄՈՐ (ՉԱՆԳԼԻ) ԵԿԵՂԵՑԻՆ IX-XI ԴԴ
ՏԱՅՔ-ԳՈՒԳԱՐՔԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ¹

*Դավիթ Նահատակյան, Արկաղի Ակոպով
Անի Գրիգորյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ եկեղեցի, խաչաձև կենտրոնագմբեթ, գմբեթային համա-
կարգ, Տայք-Գուգարքի և Անի-Շիրակի ճարտարապետական դպրոցներ:

Հոդվածում քննարկվում է Զարգացած միջնադարի հայկական ճարտարապետության մի հետաքրքիր կառույց, որը հենվելով վաղքրիստոնեական հայկական ճարտարապետության արդեն հայտնի ձևաբանությունների և իր դարի ոճական նորարարությունների վրա՝ առաջ է բերել մի հետաքրքիր սինթեզ, ինչը կարիք ունի առանձնահատուկ հետազոտման: Պաշտամունքային կառույցի հիմնական ճարտարապետական կերպարը բացահայտելու և իրատեսական վերլուծություններ կատարելու համար այն դիտարկվել է Տայք-Գուգարքի հայկական միջնադարյան ճարտարապետական դպրոցի համատեքստում:

Նախաբան. Տաճարը գտնվում է պատմական Այրարատ նահանգում՝ Կարսից ոչ հեռու: Նրա անվանումը մեզ հասել է մի քանի տարբերակով՝ Եղեգնամոր՝ ըստ Պ. Մուրադյանի, Լենախշորի՝ ըստ Թաղայշվիլու, Չանգլի՝ (Չանկլի՝ ըստ Ն. Մարգարյանի): Տաճարը թվագրվում է X-XI դ. առաջին կեսով: 1878 թ. տաճար այցելած Կյուրեղ վարդապետ Սրապյանը եկեղեցու խորանի սեղանի վրա կանգնեցված խաչքարի վրա ընթերցել է 969 թ.: Վրաց աշխարհագրագետ Վախուշտին վկայում է, որ 1030 թ. ձեռագրում

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Եղեգնամորը եղել է վանք, իսկ Է. Թաղայշվիլին այդ ձեռագիրը համարում է 1362 թ. գրված աշխատություն: Թյերի ամուսինների ուսումնասիրությունները (1966 թ.) ցույց են տալիս, որ տաճարը կառուցվել է X դ. և վերակառուցվել 1032 թ., երբ վերակառուցվել է նաև Իշխանի տաճարը: Ըստ Պ. Մուրադյանի՝ Եղեգնամորի տաճարը կառուցվել է X դ. երկրորդ կեսին, երբ Դավիթ Կյուրապաղատի զորքերը ազատագրում էին Մանազկերտի, Խլաթի և այլ հայկական շրջանները՝ 997-998 թթ.²: Տ. Մարությանն այն կարծիքին է, որ Եղեգնամորի տաճարն իր ճարտարապետական կերպարով հարիր է X դ. ինչպես Տայքի, այնպես էլ Անի-Շիրակի պաշտամունքային կառույցներին, և, ամենայն հավանականությամբ, այն կառուցելիս տեղացի վարպետների հետ գործակցել են նաև Դավիթ Կյուրապաղատի հետ եկած և նրա տարածքների բազմափորձ վարպետները³:

Ըստ Է. Թաղայշվիլու՝ Եղեգնամորի տաճարի գլխավոր մուտքի բարավորի վրացերեն արձանագրությունները ցույց են տալիս, որ այդ տարածքներում գոյություն են ունեցել ուղղափառ հայեր, որոնք աղոթել են վրացերեն լեզվով, և երբ տաճարն անցել է «վրաց թագավորի» հովանավորության տակ, հայտնվել են նաև վրացատառ արձանագրությունները⁴: Թաղայշվիլին «վրաց թագավոր» ասելով նկատի է ունեցել Տայքի Դավիթ Կյուրապաղատ Բագրատունուն (960-ականներ-1001թթ.)⁵:

Եղեգնամորի տաճարը խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ տիպին է պատկանում, որտեղ արևելյան խաչաթևը կիսաբոլորակ է՝ վերևում լուծված գմբեթաբոլով: Խորանն ունի նաև թույլ արտահայտված նախախորան՝ թաղակապ ծածկով: Հարավային և հյուսիսային խաչաթևերը որոշակիորեն միմյանց հավասար են՝ հատակագծում ուղղանկյուն և երկկենտրոն թաղերով ծածկված: Ավելի երկար է արևմտյան խաչաթևը, որի երկկենտրոն թաղերով ծածկն ուժեղացված է զույգ որմնասյուներով: Գլխա-

² Մուրադյան Պ. -1977, էջ 73

³ Մարության Տ. -2003, էջ 118:

⁴ Такайшвили Е. -1952. с. 87.

⁵ Պետք է նշել, որ Դավիթ Կյուրապաղատը բարձր գնահատականների է արժանացել հատկապես հայ պատմիչների կողմից: Մասնավորապես, Լաստիվերտցին նրան անվանում է հզոր, աշխարհաշեն, առատաձեռն ու աղքատասեր մարդ, իսկապես խաղաղություն սահմանող /տե՛ս Լաստիվերտցի - 1912/, Ուռհայեցին՝ Աստծո սուրբ մարդ և աստվածասեր /տե՛ս Ուռհայեցի/, վրացի տարեգիրը՝ գթասեր, խաղաղասեր, անհիշաչար, վանականների հովանավոր, եկեղեցիներ հիմնող, մարդասեր: Հենց Դավիթ Կյուրապաղատն է, ըստ վրացի տարեգրի, եղել միասնական վրացական պետության ստեղծման ջատագովներից մեկը /տե՛ս /: Այսուհանդերձ, Դավիթ Կյուրապաղատի ազգային պատկանելության հարցն այնքան էլ միանշանակ չէ: Հայտնի է, որ միջնադարում որևէ անձի ազգային պատկանելությունն առաջին հերթին պայմանավորված էր նրա դավանանքային պատկանելությամբ: Այսպես, օրինակ Չաքարյան եղբայրներից Իվանեն համարվում էր վրացի, քանի որ մկրտված էր վրացական ծեսով, այնինչ Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ Չաքարեն հայ էր: XVII դարի հայ հեղինակ Հակոբ Կարնեցին Տայքի բնակչության մասին ասում է հետևյալը. «...Եւ էին բնակիչք երկրիս կէսն Հայք և կէսն կրօնիւք Վրացի, բայց Հայի լեզուս խօսէին...»/տե՛ս Կարնեցի-1903/: Այդպիսի «կրոնիւք վրացիներից» էր նաև Դավիթ Կյուրապաղատը: Նրա հայախոս լինելու մասին է վկայում ականավոր գիտնական Ներսես Ալիխյանի կողմից հայտնաբերված «Պղնձե քաղաքի» պատմության վերաբերյալ փաստաթուղթը, որով հավաստվեց Դավիթ Կյուրապաղատի, նրա պալատականների և ժողովրդի հայախոս հայեր լինելը և, այդպիսով, Տայքի իշխանապետության հայկական լինելը:/տե՛ս Ալիխյան Ն. -1958/ Վերոնշյալից կարելի է հետևություն անել, որ Է. Թաղայշվիլու ենթադրությունները, մեղմ ասած, վիճելի են:

վոր խորանի երկու կողմերում առկա են ավանդատները, որոնց արևելյան հատվածները ավարտվում են կիսաշրջան խորաններով: Խաչաթևերի հատման անկյուններում է կազմվում գմբեթատակ քառակուսին: Այդ անկյունները հաստեցված են հատակագծում երկուական կիսակլոր որմնամույթերով, որոնց վրա նստած են գմբեթատակ երկկենտրոն կամարները: Գմբեթատակ քառակուսուց անցումը կազմակերպված է տրումպների և առագաստների շնորհիվ: Գմբեթը յուրահատուկ լուծումով է իրականացված: Գլանաձև թմբուկը արտաքինից պատված է դեկորատիվ որմնասյուներով, իսկ 8-ական նեղ և ձգված պատուհանները և հիմքում եռանկյունի ու կիսակոն վերնամասով որմնախորշերը բաժանում են այն 16 մասերի: Գմբեթի հաստ՝ մոտ 2.7 մ, պատերը, թեթևացված են որմնախորշերով: Ավելի լայն խորշերում տեղադրված են պատուհանները, իսկ դրանց կողքին գտնվող համեմատաբար ավելի նեղ խորշերում՝ բոլորակ սյուները, որոնց խոյակների վրա հենվում են կամարները, իսկ կամարների վրա դրված է գմբեթի կիսագնդաձև ծածկը (Տե՛ս աղ.1, գծ. 1, 2):

Եղեգնամորի տաճարի հատկապես գմբեթային համակարգն է հայտնվել Տ. Մարությանի ուշադրության կենտրոնում: Ընդունելով որպես հիմք այս տաճարի գմբեթային համակարգը՝ Մարությանն առաջարկել է Բանակի տաճարի երրորդ հարկի վերակազմության իր տարբերակը, բացի դրանից, ըստ նրա, Գերմանիայի Քյոլնի Առաքելոց տաճարը կառուցող ճարտարապետն առնվազն պետք է որ ծանոթ եղած լիներ Եղեգնամորի և Բանակի տաճարի գմբեթային համակարգին⁶: Ընդհանրապես, Տ. Մարությանն առանձնահատուկ մանրակրկիտությամբ է ուսումնասիրել և վերլուծել Եղեգնամոր եկեղեցու գմբեթային կոնստրուկտիվ համակարգը⁷: Այն իրավամբ համարվում է Ջարգացած միջնադարի հետաքրքիր լուծումներից մեկը, իսկ մինչև հիմա նրա կանգուն վիճակում լինելը փաստում է նրա նաև հուսալիությունը:

Ընդհանուր առմամբ՝ Եղեգնամոր եկեղեցու ճարտարապետական վերլուծություն անելու համար այն կղիտարկենք Տայք-Գուգարքի հայկական ճարտարապետական դպրոցի համատեքստում, ինչպես նաև որոշ համեմատություններ կանենք նաև նրան մոտ գտնվող՝ Անի-Շիրակի ճարտարապետական դպրոցին պատկանող կառույցների հետ: Նպատակն է վերլուծել և հասկանալ, թե Եղեգնամոր եկեղեցին ո՞ր դպրոցին է պատկանում և ինչ առանձնահատկություններ ունի:

Եղեգնամոր տաճարի հատակագծային լուծումների համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ այն սերում է վաղ քրիստոնեական հայկական ճարտարապետությունից, ինչպիսիք են Կոշի, Մասունիկի, Հնեվանքի փոքր և այլ խաչաձև կենտրոնագմբեթ կառույցներից, որոնք արևելյան հատվածում ունեն ավանդատներ: Տաճարը իր հատակագծային լուծումներով հարում է ինչպես IX-Xդդ. Տայքի և Գուգարքի ճարտարապետական դպրոցի նմանատիպ կառույցներին՝ Խախ, Օպիգա, Միջնաձոր, Նորաշեն, Խոժոռնի և այլն, այնպես էլ որոշակիորեն նմանություն ունի նաև Անի-Շիրակի IX-XI դդ. դպրոցին՝ Կարմիր վանք, Օղուզլուի եկեղեցի և այլն:

⁶ Մարության Տ. -2003, էջեր 203-206:

⁷ Մարության Տ. -1978, էջեր 74-78:

Մասնավորապես խաչաթևերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե Եղեգնամոր տաճարում արևմտյան խաչաթևը կրկնակի երկար է մյուսների համեմատ՝ 1:2, ապա Տայքի և Գուգարքի կառույցներում այն անհամեմատ ավելի երկար է: Իշխանում՝ 1:2.5, Խախում և Նորաշենում՝ 1:2, Օպիզայում՝ 1:4.1, Դոլիսխանայում՝ 1:2.8 և այլն: Անի-Շիրակի կառույցներում արևմտյան երկար խաչաթևով դրսևորումներ չենք նկատում:

Եղեգնամոր եկեղեցում արևելքից հետագայում ավելացվել են մեկհարկանի ավանդատներ: Դժվար է առանց շերտագրական լուրջ հետազոտություններ իրականացնելու ասել, թե երբ են կատարվել միջամտությունները, սակայն ըստ մեր դիտարկումների՝ հավանաբար կատարվել են Ջաքարյանների շրջանում: Հատակագծային վերջնական հորինվածքով և ընդհանուր համաչափական լուծումներով Եղեգնամոր եկեղեցին ամենաշատը նման է Կղարջք գավառի Նորաշեն եկեղեցուն, վերջինս մի փոքր ավելի ձգված համաչափություններով հատակագծային լուծումներ ունի (Տե՛ս աղ.1, գծ 1, 2):

Եղեգնամոր եկեղեցու հատակագծային հորինվածքների համեմատական վերլուծությունը նույն դարերի հարակից եկեղեցիների հետ ցույց է տալիս որոշակի պատկեր: Մասնավորապես, հորինվածքով ամենամոտն են Օդուզլուի եկեղեցին և Կարմրավանքը: Կարմրավանքի եկեղեցին խաչաձև կենտրոնագմբեթ հորինվածք է, որտեղ չորս անկյուններում առկա ավանդատները արտաքինից հատակագիծը վերածել են ուղղանկյունու: Խաչաձև եռախորան տիպին է պատկանում Օդուզլուի եկեղեցին, որտեղ արևելքից առկա են գույգ ավանդատներ, իսկ արևմտյան ավանդատները ինտեգրված են սրահի հետ: Համեմատական վերլուծությունը Եղեգնամոր եկեղեցու հետ ցույց է տալիս, որ հատակագծային որոշ նմանություններ են դրսևորվում, և Օդուզլուի ու Կարմրավանքի եկեղեցուց Եղեգնամոր եկեղեցին ժառանգել է համեմատաբար ավելի կարճ արևմտյան խաչաթև՝ ի տարբերություն Տայք-Գուգարքյան օրինակների:

Եղեգնամոր տաճարի ծավալատարածական հորինվածքի վերլուծությունները ցույց են տալիս, որ իր արտաքին համաչափությամբ, ընդհանուր առմամբ, այն համընկնում է հատկապես Տայք-Գուգարքի եկեղեցիներին, սակայն որոշ աղերսներ ունի նաև Անի-Շիրակի դպրոցի համանման կառույցների հետ:

Մասնավորապես ծավալատարածական հորինվածքների համաչափական վերլուծությունների արդյունքում գմբեթային հատվածի և ընդհանուր ծավալի հետ հարաբերություններում Եղեգնամոր եկեղեցու դեպքում ունենք՝ 1:1,-1:1,25, այն համընկնում է Օշկի, Կարսի Առաքելոցի, Խախի, Անիի Աբուղամրենց և այլ պաշտամունքային կառույցների հետ: Նույն պատկերն ենք տեսնում նաև երկթեք տանիքների թեքությունների վերլուծություններում: Եթե Եղեգնամոր տաճարում այն կազմում է գրեթե 45°, ապա Նորաշենում, Դոլիսխանայում, Խանձթավանքի գլխավոր եկեղեցում, Խախում, Իշխանում՝ 37-40°: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ հիշատակված շինությունները կառուցվել են X դ., մինչդեռ Եղեգնամորը՝ հավանաբար XI դ. առաջին քառորդում: Ընդհանուր վերալացությունը բավականին շեշտված է Տայք-Գուգարքի եկեղեցիների համեմատ, քանի որ համեմատաբար ավելի կարճ է կառուցված:

Եղեգնամորի տաճարի կոնստրուկտիվ կամարները և թաղերը երկկենտրոն են, ինչպես որ Տայքի և Գուգարքի IX-XI դդ. գրեթե բոլոր տաճարները: Նմանատիպ օրինակներ կան նաև Անի-Շիրակի դպրոցում, սակայն ոչ համատարած են կիրառվել՝ ինչպես Տայք-Գուգարքի դպրոցի համանման կառույցներում:

Կոնստրուկտիվ տեսանկյունից՝ Եղեգնամոր տաճարում գմբեթային փոխանցումը իրականացված է տրոմպաառագաստային համակցված մեթոդով, որը Տայք-Գուգարք ճարտարապետական դպրոցի առանձնահատկություններից է և նրանից դուրս շատ քիչ է կիրառվել: Նմանատիպ մեթոդով են իրականացված Իշխան, Կուսմուրդո, Տբեթ, Օպիզա, Դոլիսխանա, Նորաշեն և այլ նշանավոր կառույցներ⁸:

Եթե ծավալատարածական համեմատություն իրականացնենք Եղեգնամոր եկեղեցու մոտ գտնվող և նույն դարերում կառուցված Օդուզլուի ու Կարմրավանքի եկեղեցիների հետ, ապա ընդհանուր որոշ դրսևորումներ կտեսնենք, սակայն հիմնականում իր հորինվածքով հարիր է Տայք-Գուգարքի հայկական ճարտարապետական դպրոցին: Մասնավորապես շարվածքի տեսակով, երբ արտաքին և ներքին քարերը համեմատաբար ավելի բարակ են տեղադրվել, ինչպես իրականացվել է Տայքում և Գուգարքում: Վերասլաց համաչափությամբ անհամեմատ գերազանցում է երկու նշված կառույցներին, մինչդեռ համընկնում է Տայք-Գուգարքյան համանման կառույցներին:

Դեկորատիվ հարդարանքային տեսանկյունից Ս. Մարությանը Եղեգնամոր տաճարի արտաքին հարդարանքները համարում է որոշակիորեն անզուսպ, իսկ անբովանդակ պճնագարդումը՝ ոչ հարիր հայկական դասական ճարտարապետությանը, սակայն, նման հատկապես Տայքի ճարտարապետությանը⁹: Մինչդեռ մեր հետազոտությունների արդյունքում մենք մասամբ ենք կիսում այսպիսի տեսակետը: Տաճարի ամենահագեցած զարդամոտիվներով հատվածը գմբեթային համակարգն է: Մեր կարծիքով, դա պատահական չի արվել, քանի որ կոնստրուկտիվ տեսանկյունից տաճարի ամենահետաքրքիր և յուրահատուկ լուծված հատվածը գմբեթային համակարգն է, և ամենայն հավանականությամբ տաճարի շինարարները փորձ են կատարել արտաքինից էլ շեշտել գմբեթային համակարգը: Թմբուկի հիմնական դիմագիծը դեկորատիվ կամարաշարն է, որը հայտնի է եղել դեռևս վաղ քրիստոնեական հայկական ճարտարապետությունից և լայնորեն կիրառվել է նաև Զարգացած միջնադարում: Թմբուկի վրա կիրառված եռանկյունի հատակագծով խորշերը հանդիպում ենք Կղարջքի Նորաշենի եկեղեցում, որը նույնպես սերում է հայկական վաղ քրիստոնեության ճարտարապետությունից¹⁰: Եղեգնամոր եկեղեցու թմբուկի մյուս աչքի ընկնող հարդարանքային մոտիվը հորիզոնական ճոխ գոտիների առկայությունն է, իսկ զարդամոտիվները շատ նման են հատկապես Իշխանի տաճարի թմբուկին: Ընդհանրապես իր համաչափությամբ, կատարման տեխնիկայով և զարդամոտիվներում Իշխանի և Եղեգնամոր եկեղեցիների գմբեթները բավականին նման են (Տե՛ս աղ.1, նկ. 1,2):

⁸ Наатакян Д. - 2013, Т. III. с.с. 46-51.

⁹ Մարության Ս. -1978, էջ 118:

¹⁰ Наатакян Д. -2021, с.с. 293-306.

Եղեգնամոր տաճարի արևելյան ճակատը համեմատաբար հարդարված է: Աչքի է ընկնում պրոֆիլավոր սյունափնջերով դեկորատիվ կամարաշարը, որի ներսում ուղղանկյուն հատակագծով հարթ խորշեր են: Հատկապես վերջին մոտիվը նույնպես Տայք-Գուգարքի ճարտարապետական առանձնահատկություններից է և կիրառվել է գրեթե բոլոր նշանավոր պաշտամունքային կառույցներում (Օշկ, Իշխան, Խախ, Չորդվանք, Պարխար, Տբեթ և այլն), ի դեպ, նմանատիպ խորշաձև լուծում կիրառված է նաև Անիի Մայր տաճարում, Մարմաշենում և այլն, սակայն, առկա են որոշ տարբերություններ և Տայք-Գուգարքյան օրինակների համեմատ՝ ավելի ուշ են իրականացվել:


Եղեգնամոր եկեղեցու Արևմտյան մուտքը բավականին պարզ է իրականացված, ինչը խորթ է Անի-Շիրակի ճարտարապետական դպրոցին, ինչպես նաև վերը նշված Օդուզլուի և Կարմրավանքի եկեղեցիներին, որտեղ բավականին շեշտված են մուտքերը: Եղեգնամորի շքամուտքը հարթ է՝ վերևում պսակված կամարունքով: Անի-Շիրակի ճարտարապետական դպրոցին ոչ հարիր ոճով է իրականացված նաև արևմտյան նեղ, երկար պատուհանի և մուտքի ուղղահայաց ուղղությամբ իրար բավականին մոտ լինելը: Ի դեպ, պատուհանը ավելի մեծ է մուտքից: Վերոնշյալ «տարօրինակությունները» օրինաչափություններ են Տայք-Գուգարքի ճարտարապետության համար, և այնտեղի նշանավոր կառույցներում այդպիսի լուծումներ են կիրառված Օշկում, Իշխանի տաճարի և նրա հարավային սրահավոր փոքր եկեղեցում, Պարխարի և Չորդվանքի եկեղեցիներում, Նորաշենի եկեղեցում և այլ:

Եղեգնամոր տաճարում երկու տիպի պատուհաններ են կիրառվել: Բացի արևմտյան պատուհանից, մնացած ճակատներում առկա են նեղ, երկար և կամարունքով պսակված պատուհաններ, որոնց կիրառությունը կրկին հասնում է վաղ քրիստոնեության ժամանակաշրջան: Հետաքրքիր է արևմտյան պատուհանը, որն ուղղանկյուն է և ամբողջությամբ վերցված ուղղանկյուն շրջանակի մեջ, այսինքն՝ մեր կողմից պայմանականորեն կոչված «փակ» տիպի պատուհանների հարդարման տիպին է պատկանում, որոնց ծագումը հստակ կապված է Տայքի և Գուգարքի հայկական ճարտարապետական դպրոցի հետ¹¹: Այդպես են իրականացված պատուհանների հարդարումը Օշկվանքում, Նորաշենում, Իշխանում, Տբեթում, Կումբուրդոյում: Անի-Շիրակում այս հարդարման մեթոդը մի փոքր ավելի ուշ է սկսում կիրառվել՝ Անիի Մայր տաճար, Մարմաշեն և այլն:


Եղեգնամորի ընդհանուր զարդամոտիվները, որոնք կիրառված են քիվերին, շքամուտքին, պատուհաններին և լուսամուտին, թմբուկի գոտիներին և այլն, հիմնականում համընկնում են Տայքի նշանավոր Իշխանի տաճարի հետ, ինչպես նշել են Թյերի ամուսինները և Պ. Մուրադյանը, հավանաբար նույն վարպետներն են աշխատել երկու կառույցների վրա՝ XI դարում¹²:

¹¹ Наатакян Д. -2013, т. 3-4, с.с. 73-78.

¹² Նշենք նաև որ Իշխանի տաճարի հերթական վերակառուցումներից մեկն է եղել XI դ.-ում, քանի որ նրա կառուցումը կապված է Ներսես Տայեցի Շինարար կաթողիկոսի հետ՝ դեռևս VII դ:



ՊՃ. 1, 2. Եղեգնամոր եկեղեցու հատակագիծն ըստ Ա. Կալցինի և հատակագծային համեմատական աղյուսակը



Նկ. 1, 2. Եղեգնամոր եկեղեցին հարավ-արևելքից, եկեղեցու գմբեթի մանրամաս, ըստ՝
(https://en.wikipedia.org/wiki/Eghegnamor_Monastery), 06.03.2022

Շգրահանգում. Եղեգնամորի տաճարի ընդհանուր ճարտարապետությունը սերում է վաղքրիստոնեական հայկական ճարտարապետությունից և կարևոր օղակ է Ջարգացած միջնադարի հայկական ճարտարապետության կայացման համար:

Լինելով հայ-քաղկեդոնական համայնքի տաճար՝ կրել է մեծ ազդեցություն հատկապես Տայք-Գուգարքի հայկական ճարտարապետական դպրոցից, որը դրսևորվում է հատակագծային, ծավալատարածական, կոնստրուկտիվ և դեկորատիվ-հարդարանքային լուծումներում: Այդպիսով եկեղեցին անհրաժեշտ է դիտարկել այդ համատեքստում:

Մյուս կողմից՝ Եղեգնամորի տաճարը, գտնվելով Տայք-Գուգարքի և Անի-Շիրակի հայկական միջնադարյան ճարտարապետական դպրոցների խաչմերուկում, կրում է այդ դպրոցների նվաճումներն ու ռճական առանձնահատկությունները, նաև այդպես կարևորելով իր դերն ու նշանակությունը հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ:

ЦЕРКОВЬ ЕХЕГНАМОР (ЧАНГЛИ) В КОНТЕКСТЕ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРНОЙ ШКОЛЫ ТАЙК-ГУГАРКА IX-XI ВВ.

Наатакян Д. С., Акопов А. А., Григорян А. А.

Ключевые слова: *церковь, крестово-купольный, купольная система, архитектурные школы Тайк-Гугарк и Ани-Ширак.*

В статье обсуждается один из интересных построек армянской архитектуры развитого средневековья, которая, опираясь на уже известные достижения раннехристианской армянской архитектуры и стилистические новшества своего века, создала интересный синтез, который, по нашему мнению, нуждается в особом исследовании.

Для выявления основного архитектурного облика культового сооружения и проведения реалистичных анализов он рассматривался в контексте средневековой армянской архитектурной школы Тайк-Гугарка.

YEGHEGNAMOR CHURCH (CHANGLI) IN THE CONTEXT OF THE MIDDLEVEGAL ARMENIAN ARCHITECTURAL SCHOOL OF TAIK- GUGARK IX-XI CENTURIES.

Nahatakyan D. S., Akopov A. A., Grigoryan A. A.

Key words: *church, cross-domed, dome system, architectural schools Taik-Gugark and Ani-Shirak.*

The article discusses one of the interesting buildings of the Armenian architecture of the developed Middle Ages, which, based on the already well-known achievements of early Christian Armenian architecture and stylistic innovations of its century, created an interesting synthesis, which, in our opinion, needs special research.

In order to identify the main architectural appearance of the religious building and conduct realistic analyses, it was considered in the context of the medieval Armenian architectural school of Taik-Gugark.

Գրականություն

1. Ալինեան Ն. վ.-1958, Չրոյց Պղնձէ քաղաքի, «Հանդէս ամսօրեայ», 1-4:
2. Ակոպով Ա.-2013, Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի I երեսնամյակը, Երևան, ԳԱԱ պատմության ինստիտուտ:
3. Լաստիվերոցի -1912՝ Պատմություն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերոցույ, Թիֆլիս:
4. Մարոյան Տ.-2003, Հայ դասական ճարտարապետության ակունքներում.- Երևան-Մուղնի:
5. Մարոյան Տ.-1978, Հայ ճարտարապետության հուշարձաններ, Խորագույն Հայք.- Երևան, «Սովետական գրող» հրատ.:
6. Մուրադյան Պ.-1977, Հայաստանի վրացերեն արձանագրությունները (հայագիտական հետազոտություններ).- Երևան:
7. Յակովբ Կարնեցի-1903, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ:
8. Ուռնայեցի -1898՝ «Մատթօսի Ուռնայեցույ Ժամանակագրութիւն», Վաղարշապատ:
9. Летопись Картли -1982, перевод, введение и примечание Г. В. Цулая. Тбилиси: Мецниереба.
10. Наатакян Д. -2013. О некоторых конструктивных особенностях Тайкских и Гугаркских церковных построек в X-XI вв. // Сборник научных трудов ЕГУАС. Том III. Ереван.
11. Наатакян Д. -2013. О примерах в декоративном оформлении окон в храмах X века в Тайке и Гугарке //Известия Союза Строителей Армении. Ереван. Т. 3-4
12. Наатакян Д. -2021. Церковь Норашен в контексте Армянской Архитектурной Школы Тайка и Гугарка X-XI вв. // Научные труды Ширакского центра арменоведческих исследований НАН РА. Гюмри.
13. Такайшвили Е. -1952. Археологическая экспедиция 1917 года в южные провинции Грузии.- Тбилиси: Изд-во АН Грузинской ССР.

Ընդունվել է՝ 30. 03. 2022
Գրախոսվել է՝ 04. 05. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակների մասին

Դավիթ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ՝ Ճարտարապետության թեկնածու

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող,

ԾՇՀԱՀ՝ ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական

ժառանգության վերականգնման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի ասիստենտ,

էլ. հասցե՝ nahatakyan@gmail.com

Արկադի ԱԿՈՊՈՎ՝ պատմական գիտությունների. թեկնածու,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի

գիտքարտուղար, էլ. հասցե՝ arkadone1@gmail.com

Անի ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների

կենտրոն, էլ. հասցե՝ ahaykazun@gmail.com

Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
АРХИТЕКТУРА
ARCHITECTURE

ՀՏԴ՝ 725

DOI: 10.52971/18294316-2022.25.1-217

ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ
(«Ինտուրիստ» և «Սևան» հյուրանոցների օրինակով)

Անուշ Մադոյան

Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան

Բանալի բառեր՝ նոր ուղղության կայացման և ձևավորման ժամանակաշրջան, հյուրանոցային ճարտարապետություն, ծավալա-տարածական հորինվածք, հատակագծային լուծում, ճակատ, զարդարվեստ:

Հոդվածում ներկայացված է Երևան քաղաքի «Ինտուրիստ» և «Սևան» հյուրանոցների ճարտարապետությունը, որ միտված է մեթոդապես բացահայտելու և փաստագրելու Երևանի խորհրդային ժամանակաշրջանի հյուրանոցային ճարտարապետության ծավալա-տարածական և հատակագծային առանձնահատկությունները և դրանց կապը պատմական հյուրանոցների, ժամանակաշրջանի եկամտաբեր տների և հյուրանոցների ճարտարապետության հետ: Ինչպես նաև՝ նշվածների ազդեցությունը խորհրդային տարիների հյուրանոցային ճարտարապետության ձևատեղծման վրա: Ընդգրկված հուշարձանների հետազոտությունը կատարվել է գրականության ուսումնասիրման, արխիվային նյութերի և դաշտային լուսանկարահանման մեթոդներով:

Ներածություն. Հյուրանոցային շենքերը Հայաստանում մինչ հիմա մասնակիորեն են ուսումնասիրվել պատմական առումով: Խորհրդային ժամանակաշրջանի հյուրանոցների ճարտարապետության ուսումնասիրությունը դեռևս առջևում է: Խորհրդային ճարտարապետության նվիրված աշխատություններում, այդ թվում՝ Վ. Հարությունյանի, Մ. Հասարայանի և Ա. Մելիքյանի (1968թ.), Լ. Դուրխանյանի (1980թ. և 2015թ.), Ա. Գրիգորյանի և Մ. Թովմասյանի (1986թ.), Կ. Բալյանի (1987թ.), Դ.Քերթմենջյանի (2017թ.) և այլ ուսումնասիրություններում, անշուշտ, անդրադարձներ կան խորհրդային և հետխորհրդային հյուրանոցների հարցերին, սակայն այդ շենքերի ամբողջական ճարտարապետական վերլուծություններ չեն կատարվել: Ի տարբերություն նրանց՝ տվյալ հոդվածում ներկայացված շենքերը հետազոտվում են իրենց տիպաբանական, ծավալատարածական, շինարվեստի և այլ հարցերով ամբողջապես: Ներկայացվող հոդվածի նպատակն է ներկայացնել Նիկողայոս Բունիաթյանի հեղինակած «Ինտուրիստ» և «Սևան» հյուրանոցները ամբողջական ճարտարապետական մեկնաբանությամբ և իբրև գիտական խնդիր, իրականացնել նշված հյուրանոցների հատակագծա-տարածական ֆունկցիոնալ վերլուծությունը և դրանց բնութագրումը:

Որպեսզի հնարավոր լինի գիտական գնահատական տալ այդ հյուրանոցների ճարտարապետական ներդրմանը, նախ անհրաժեշտ ենք համարում հակիրճ անդրադառնալ Հայաստանում և մասնավորապես, Երևանում հյուրանոցային շենքերի պատմական ժառանգությանը, այնուհետև փաստագրավերլուծական կարգով ներկայացնել խնդրո առարկա հյուրանոցներն իրենց համալիր առանձնահատկություններով՝ գիտականորեն բնութագրելով դրանց տիպաբանական նորույթը, ծավալա-տարածական առանձնահատկությունները և շինարարական համակարգը:

1. **Հյուրանոցային շենքերի զարգացումը Հայաստանում**

Անդրադառնալով Հին Հայաստանում եղած հյուրանոցային շենքերին՝ պետք է նշել, որ դեռևս վաղ միջնադարում Հայաստանի վանական համալիրներում առկա էին հյուրատներ¹, որոնք ծառայում էին, որպես ճանապարհորդների հանգրվան: Այնուհետև, տեղեկությունների համաձայն, 10-11-րդ դարերում ձևավորվել են նաև քաղաքային տիպի քարավանատներ՝ խանապարաններ կամ փնդուկներ (պանդուկներ): Հյուրատները կամ քարավանատները կառուցվում էին միջազգային առևտրի տարանցիկ ճանապարհներին և սերտորեն կապված էին առևտրի զարգացման հետ: Մովորաբար ճանապարհների վրա ցերեկային մեկ օրվա հեռավորությամբ դասավորված այս հանգրվանները նախատեսված էին իբրև ճանապարհորդների կացարան, իսկ վաճառականների համար նաև շուկա ծառայելու նպատակով²:

¹ Халпахчян О. -1971. с.195.

² Հարությունյան Վ. -1960, էջ 11:

Խոսելով Երևանի հյուրանոցների և քարավանատների մասին՝ հարկ է նշել, որ քարավանատները կենտրոնացած էին Կանթարի (կամ Ղանթարի) շուկայի շրջակայքում, ինչպես նաև քաղաքից դուրս տանող՝ դեպի Նորքի բարձունքը, ճանապարհին: Պահպանված տեղեկությունները քարավանատների մասին հայտնում են, որ Կանթարի շուկայի մոտակայքում տեղակայված էին հին Օվշարի, Գյուրջի, Զատաբի քարավանատները և մի քանի նոր քարավանատներ, որոնք զբաղեցնում էին հսկայական տարածություններ և բաղկացած էին ներքին բակի պարագծային կառուցապատված բնակելի և հասարակական շինություններից՝ խանութներից, պահեստներից, ախոռներից և այլն: Փողոցի կողմից սրանք մեկ կամ երկհարկանի շենքեր էին, որոնք առաջին հարկի մակարդակում կազմակերպում էին անընդհատ ապակե ցուցափեղկերի առևտրական շարքեր: Շքեղ վերին հարկերը կապակցվում էին նույն ռիթմով կոնսոլային պատշգամբներով և միանման շքեղ հարդարված պատուհաններով³: Գրական տեղեկատվությամբ և պահպանված լուսանկարներով կարելի է եզրակացնել, որ Զատաբի քարավանատունը գտնվել է շուկայից վեր՝ Կապույտ մզկիթի հետնամասում⁴:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի երևանյան հյուրանոցների ճարտարապետությունը միավորում է գործառական կառուցվածքի ընդհանուր ձևագոյացման սկզբունքը: Այս տեսանկյունից՝ իր ծագումնաբանությամբ այն նման է խանութներով եկամտաբեր տներին. գոտևորում ըստ հարկերի՝ առևտրային առաջին և բնակելի երկրորդ հարկերի համադրմամբ, որը համապատասխանաբար իր արտացոլումն է ստանում ճակատում՝ ցուցափեղկեր և համարների պատուհաններ⁵: Անդրադառնալով ավելի վաղ օրինակների՝ կարող ենք կազմել հյուրանոցների ծագումնաբանության շղթա՝ եկամտաբեր տները իրենց հերթին նման են վանական համալիրներին կից կառուցվող հյուրատներին. մոտ 20 քմ մակերեսով համարներ, որոնք դասավորված էին մի գծով և դուրս էին գալիս փայտյա ընդհանուր պատշգամբ: Պարիսպներից ներս կառուցված երկհարկանի հյուրատներում, որոշ դեպքերում առաջին հարկը հատկացվում էր տնտեսական կարիքների համար. պահեստ կամ սեղանատուն⁶:

Հյուրանոցների և հյուրատների ու եկամտաբեր տների տարբերությունը միայն երկրորդ հարկի հատակագծային լուծման և առաջին հարկի հասարակական տարածքների գործառույթների ընդլայնման մեջ էր. բացի խանութներից, տնտեսական նշանակության տարածքներից՝ նաև նախատեսվում էին ռեստորաններ և սրճարաններ⁷, ինչը ակնհայտ ներկայացնում է հյուրատան սեղանատան գործառույթի փոխառնությունը:

³ Гаспарян М. -2008. с. 37.

⁴ Նույնը:

⁵ Гаспарян М. -2008. с.156-157.

⁶ Халпахчян О. -1971. с.с. 195,197.

⁷ Гаспарян М. -2008. с.с. 156-157.

Ավելացնենք նաև, որ Երևանի հյուրանոցները երկհարկանի շենքեր էին՝ հատակագծում երկարավուն ուղղանկյուն, որոշ դեպքերում կարող էին ունենալ նեղ, կարճ կողային ելուստներ դեպի բակ: Առաջին հարկում գտնվում էին հասարակական սպասարկման տարածքներ և խանութներ, իսկ բնակելի համարները գտնվում էին երկրորդ հարկում: Համարների հատակագծման հիմքում ընկած էր միջանցքային երկկողմանի համակարգը⁸, որի նախատիպը Անիում հայտնաբերված քաղաքատիպ հյուրանոցն է՝ երկու կից շենքերով, որոնցից յուրաքանչյուրը երկարավուն բաց (կամ փակ, ծածկը չի պահպանվել) սրահ է՝ սրբատաշ քարերով սալարկված: Այդ բաց սրահների երկարությամբ, երկու կողմերից առկա են լայն, մայթերի նման բարձրություններ, որոնց ուղղությամբ պատերի երկայնքով տեղավորված են 2.5 մ լայնությամբ և 5 մ խորությամբ 9-ակն բաժանումներ՝ 18-ը՝ մի սրահում, և 36-ը՝ երկրորդում⁹:

Հին հյուրանոցների շենքերի ճակատներն ունեին ձգված համաչափություն, որ մեղմվում էր ուղղահայաց մասնահատումներով: Գլխավոր դեր էին կատարում կախովի պատշգամբներով շեշտված հատվածները: Պատշգամբների ծավալա-տարածական կառուցվածքը և դեկորատիվ հարդարանքը պատի հարթ ֆոնին հաղորդում էին ճակատին դինամիկա և ընդհատում բացվածքների երկար կրկնվող ռիթմը: Բացվածքները առաջացնում էին ցուցափեղկերի և պատուհանների ռիթմիկ շարքեր¹⁰:

2. «Ինտուրիստ», հետագայում՝ «Երևան», այժմ՝ «Գրանդ հոթել Երևան» հյուրանոց

Կառուցվել էր Երևանի առաջին գլխավոր ճարտարապետի՝ Նիկողայոս Բունիաթյանի¹¹ նախագծով, 1926թ.:

«Ինտուրիստ» հյուրանոցը մեկ նկուղային և չորս վերգետնյա հարկերով է, գտնվում է Աբովյան փողոցին կից ոչ մեծ կիսակլոր հրապարակում (այժմ՝ Շառլ Ազնավուրի) և ստեղծում է քաղաքաշինական որոշակի միջավայր:

Հատակագծում հնգանկյան տեսք ունի, պարագծային կառուցապատման օրինակներից է: Շենքի՝ Աբովյան փողոցի և հրապարակի անկյունային հատվածից ներս կազմակերպված է ձվաձև սրահը, որի առանցքով, նրա հետնամասում տեղակայված է հանդիսավոր աստիճանավանդակը, ձախից՝ Աբովյան փողոցի երկայնքով տեղադրված են խանութները, իսկ աջից՝ դեպի հրապարակը՝ ռեստորանը: Առկա են ավտոկայանատեղիներ: Նկուղային և առաջին հարկերում են կենտրոնացված բոլոր սպասարկման տարածքները՝ խոհանոց և հրուշակեղենի արտադրամաս, գրասենյակներ և լվացքատուն, վարսավիճարանոց, տարադրամի փոխանակման կետ, լուսանկարչի սրահ, գրադարան: Մնացած երեք հարկերում տեղակայված էին 78 ընդարձակ և լավ կահավորված

⁸ Гаспарян М. -2008. с.с. 156-157.

⁹ Հարությունյան Վ. -1964, էջեր 76-78

¹⁰ Гаспарян М.-2008. с.с.156-157.

¹¹ Долуханян Л. -1980. с. 68.

համարներ, որոնցից 10-ը՝ լյուքս դասի և միայն մեկ 15 մահճակալներով հանրակացարանային համար:

Հատակագծային-հորինվածքային լուծումը, գլխավոր մուտքի կազմակերպումը ենթարկված են շենքի անկյունային դիրքին¹², որը լուծված է քառորդ շրջանագծով: Առաջին և երկրորդ հարկի մակարդակներում իրականացված է ռուստավոր սև բազալտից, ունի երկփեղկ, կամարակապ գլխավոր մուտք, որը առնված է կրկնակի՝ մեկը ծավալային, երկրորդը հարթային դորիական սյուներով կազմակերպված շքամուտքի մեջ: Շքամուտքի աջից և ձախից սիմետրիկ տեղադրված են մեկական կամարակապ պատուհաններ, իսկ երրորդ և չորրորդ հարկերում քառորդ շրջանագիծը, հետ ընկնելով, երրորդ հարկի մակարդակում առաջացնում է լոջա, որի անկյունային հատվածները ինչպես նաև պատուհանի եզրերը մշակված են բազալտե քարերով, իսկ վերին հարկի ծանր բազալտե քիվը կրում են երկու հարկի բարձրություն ունեցող չորսը գույգ հոնիական սյուներ:

Ճակատների անհավասար երկարությունից, ինչպես նաև տարբեր կողմերի ուղղվածությունից ելնելով՝ ճակատները սիմետրիկ չեն, բայց միաժամանակ հեղինակը փորձել է պահպանել անկյունային հատվածի երեք կամարակապ էլեմենտների գաղափարը: Աբովյան փողոցի ճակատի առաջին հարկի կամարակապ ցուցափեղկերի ռիթմը կոտրելու և կոմպոզիցիոն սիմետրիա ստեղծելու համար մեջտեղի երեք ցուցափեղկերի չափով շենքի հարթությունից չնչին ներս է տարել և կամարների թեման շարունակելով երրորդ և չորրորդ հարկերի մակարդակներում՝ ստացել ընդհանրական երեք կենտրոնական կամարներով հորինվածք: Երրորդ և չորրորդ հարկերի կամարներից յուրաքանչյուրն իր մեջ առել է գույգ տնտեսական պատշգամբներ: Ճակատի գծով մնացած աջակողմյան և ձախակողմյան գույգ կամարների վերին երկու հարկերը լուծված են երեք ռիթմիկ բացվածքներով, որոնցից մեջտեղինը կախովի պատշգամբների դուռ է: Դեպի հրապարակը ուղղված ճակատը առաջին և երկրորդ հարկի մակարդակներում լուծված է երեք կամարներով, առաջին և երկրորդ հարկերի մակարդակներում, ինչպես և Աբովյան փողոց ուղղված ճակատը մշակված են ռուստավոր բազալտե քարերով: Երրորդ և չորրորդ հարկերում ճակատը սվաղով է մշակված և լուծված ռիթմիկ բացվածքներով, յուրաքանչյուր հարկում հինգական բացվածքներ, որոնցից կամարների առանցքներով տեղադրվածները կոնսուլային պատշգամբների դռներ են: Ուղղաձիգ ռիթմը ընդհատվում է երկրորդ հարկի մակարդակում, շենքը ճակատներում ուրվագծող ոչ ծանր քիվով և երրորդ հարկի պատշգամբների ճաղերի մակարդակում՝ ավելի բարակ քիվով:



¹² Գոլուխանյան Լ. -2015, էջ 47:



1930-ական թթ. լուսանկար:
Фото 1930-х гг..



«Ինտուրիստ» («Գրանդ Հոթել») հյուրանոցը: Երևան: 1926 թ.:
Гостиница "Интурист" ("Гранд Отель"). Ереван. 1926 г..



Նկ. 1 «Ինտուրիստ» հյուրանոցի առաջին հարկի հատակագիծ

Խոսելով հարդարանքի մասին՝ հարկ է նշել, որ ոչ միայն ճակատների հարդարման նյութի տարբերությունը և սյունա-հեծանային համակարգն են ծառայել որպես գեղարվեստական արտահայտչականության միջոց, այլ նաև շենքի յուրաքանչյուր անկյունային հատվածի մշակումը սև բազալտով, նաև բոլոր պատշգամբների ցեմենտե բազրիքները, առաջին երկու հարկերի կամարների կենտրոնով տեղադրված սև բազալտից կեղծ բանալի-քարերը, նույն մեթոդով իրականացված երրորդ հարկի ուղղանկյուն պատուհանների վերնամասի դեկորատիվ բանալի-քարերը, ինչպես նաև չորրորդ հարկի պատուհանների մեկ ու մեջ սև բազալտե կամարներով և եռանկյունի ճակտոններով պսակները: Կոնստրուկտիվ համակարգը կրող պատերն են:

Հյուրանոցը մի քանի անգամ վերակառուցվել է, որոնցից առաջինի ժամանակ (համաձայն լուսանկարների՝ իրականացվել է 1930-ական թթ. առաջին կեսին)¹³ ավելացվել է ևս մեկ հարկ, որը զուրկ է դեկորատիվ հարդարանքից և պսակվում է թեթև քիվով, անկյունային հատվածում քիվը գծից ետ է դրված և առաջացնում է պատշգամբ: 1999 թ. «ՌԵՆԿՈ» ՄՊԸ իտալական և «Խորան» նախագծային կազմակերպությունների համագործակցությամբ իրականացվել են վերջին վերակառուցման և արդիականացման նախագիծը և վերակառուցման աշխատանքները¹⁴:

3. **«Մևան» հյուրանոցը**, հինգ վերգետնյա հարկերով տեղակայված է եղել Շահումյանի հրապարակի և ներկայիս Մ. Խորենացու փողոցի անկյունային հատվածում: Նախագծվել և իրականացվել էր Ն. Բունիաթյանի կողմից 1930-1939թթ.: Հարկ է նշել, որ այն կառուցվել էր երկու փուլով: Առաջին փուլով կառուցվել էր դեպի հրապարակ նայող թևը, իսկ երկրորդ փուլով՝ դեպի Մ. Խորենացու փողոցը նայող թևը: Շինարարության առաջին փուլում օգտագործվել էին նախագծման կոնստրուկտիվիստական ճարտարապետական-գեղարվեստական սկզբունքներ: Շենքի հատակագծի հետ տրամաբանորեն կապված տարածական-հորինվածքային լուծումը փոքր-ինչ բարդացված էր ասիմետրիկ կառուցվածքով: Այսուհանդերձ շենքը թողնում էր ամբողջական, հավասարակշռված տպավորություն: Հյուրանոցի երկրորդ փուլի իրականացումը 1932 թ.-ից հետո համընկել էր խորհրդային ճարտարապետության ուղղվածության պաշտոնական փոփոխման ժամանակաշրջանի հետ: «Դասական ճարտարապետության իրացման» կարգախոսը հանգեցրել էր նրան, որ շենքի ճարտարապետության մեջ դարձյալ սկսեցին օգտագործվել դասական ճարտարապետության տարրեր¹⁵:

Հատակագիծը ուներ հստակ լուծում՝ թևերի երկկողմանի սրահով կառուցապատում՝ տեղակայված յուրաքանչյուր հարկի անկյունային հատվածում¹⁶:

¹³ <http://hinyerevan.com/#!/photos/7349>, կայք /09.03.2022./

¹⁴ <https://mediamax.am/am/news/yerevan-XX-century/6049/>, կայք /09.03.2022./

¹⁵ Գողոխանյան Լ., 2015, էջ 48-50:

¹⁶ Арутюнян В., Асратян М., Меликян А., 1968, 179с.


Առաջին հարկը հատկացված էր հասարակական սպասարկման համար՝ անկյունային հատվածում իրականացված էր սրահը ընդունարանով, աջ՝ դեպի հրապարակ նայող թևում, տեղակայված էին խանութները, իսկ դեպի ձախ՝ Մ. Խորենացու փողոցին նայող հատվածում, ռեստորանն և սրճարանն էին՝ առանձին մուտքերով:

Ընդունարանն ուղղակի կապ ուներ ոչ միայն առաջին, այլ նաև երկրորդ, երրորդ հարկերի հետ: Մա նախատեսված էր մարդկանց հաղորդակցությունը, շփումը ընդլայնելու համար: 1970-ականների վերջին «Սևան» հյուրանոցում բացվեց առաջին սաունան: Փոքրիկ տեղ էր՝ կազմված երեք համարից: Մուտքը հյուրանոցի ետևում գտնվող բակի կողմից էր:

Հյուրանոցն ուներ սովորական և լյուքս համարներ: Սովորական համարների կոմունալ հարմարություններն ընդհանուր էին: Լյուքս սենյակները շատ չէին և տեղավորված էին 4-րդ հարկում¹⁷: Շենքի անկյունային հատվածը հորինվածքային ընդգծված է բարձր սյուներով և անկյունային մասի բացակայությամբ: Առաջին և երկրորդ հարկերի մակարդակում այս հատվածը լուծվել է ուղղանկյուն հատակագծում դասավորված յուրաքանչյուր կողմից չորսական պարզ, առանց հարդարանքի քառակուսի հատվածքով սյուներով, որոնցից չորրորդը կրկնվում է երկու ճակատների համար:

Ներս ընկած հատվածը կես վեցանկյուն պրիզմայի ծավալ ունի, որի մեջտեղից կազմակերպված է գլխավոր մուտքը դեպի սրահ: Շքամուտքը շեշտված է սրբատաշ տուֆե պարզ շրջանակով: Կողքի հարթություններում գլխավոր մուտքին սիմետրիկ տեղադրված են երկու հարկի բարձրություն ունեցող գույգ վիտրաժներ: Այս եղանակով լուծված մուտքի հանգույցը հնարավորություն է տալիս նախամուտքի հարթակի և շվաքարանի, ինչպես նաև երրորդ հարկի մակարդակում ստեղծել հանդիսավոր լոջա: Երրորդից հինգերորդ հարկերում անկյունային հատվածում բարձրանում է միայն կես վեցանկյուն պրիզմայի ծավալը, որի անկյունային հատվածները լուծված են հատվածքում քառակուսի սյուներով, ևս մեկական սյուներ են տեղադրված եզրային, թեք հարթությունների կենտրոններում՝ առաջին հարկի սյուների համեմատ ավելի հաստաբուն: Երրորդից հինգերորդ հարկեր ձգվող սյուները պսակվում են ծանր քիվով և նրանց միջանկյալ հատվածներում տեղադրված են վիտրաժներ, որոնք ընդհատվում են չորրորդ հարկում ֆրանսիական պատշգամբների քարակերտ ճաղերով:

¹⁷ <https://mediamax.am/am/news/yerevan-XX-century/4682> , /09.03.2022/



Նկ. 2 «Սևան» հյուրանոցի ճակատները և լուսասնկար մուտքի անկյունային հատվածի:

Ի հակադրություն կենտրոնական հատվածի սրբատաշ շարվածքին՝ հրապարակին և Մ. Խորենացու փողոցին նայող ճակատների հատվածները իրականացված են ճակատների գծերից մի փոքր առաջ եկած ուղղանկյուն գուգահեռանիստի պլաստիկա ունեցող կոպտատաշ մշակված քարերից միասնական կտորներով, որոնց միջնամասերում ընդհանրական վիտրաժ է, որն ընդհատվում է առաջին և երկրորդ հարկերի միջև ու երկրորդ և երրորդ հարկերի բաժանարար նուրբ քիվով, իսկ վերևում պսակվում է կենտրոնական հատվածի ծանր քիվով: Շենքի ճակատների մշակման ընթացքում օգտագործվել են բազալտի և տուֆի հարդարման կոնտրաստային մշակման եղանակներ՝ կոպտատաշ և սրբատաշ¹⁸: Երկար ճակատների միապաղաղ բացվածքների ուղղաձգությունը կտրելու և ճակատային հորինվածքը աշխուժացնելու նպատակով, ճարտարապետը դիմել է կոպտատաշ շարվածքը երրորդից հինգերորդ հարկերի կոնսոլային պատշգամբների հորիզոնական գծերի շեշտադրմանը սրբատաշ շարով, ինչպես նաև Շահումյան հրապարակի կողմից շենքի վերջնամասի ճակատի գծից հետ տանելու մեթոդին: Դրա արդյունքում հետ ընկած հատվածի անկյուններում հնարավոր է եղել իրականացնել քառորդ շրջանագծի ուրվագծով պատշգամբներ: Այս հետ ընկած հատվածը Շահումյանի արձանի գծով պսակված է աշտարակով, որի վրա տեղադրված է շրջանաձև ժամացույց: Պատշգամբների ճաղերը մետաղական են և գուրկ հարդարանքից: Բացակայում են նաև այլ դեկորատիվ էլեմենտներ¹⁹: Կոնստրուկտիվ համակարգը պատային է:

Եզրահանգում: Երևանի խորհրդային ժամանակաշրջանի հյուրանոցային ճարտարապետությունը սերում է վաղ միջնադարյան հայկական վանական հյուրատների և քաղաքային տիպի հյուրանոցների գուգակցումից, ինչպես նաև իր զարգացման ընթացքում գուգահեռներ ունի եկամտաբեր տների և 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հյուրանոցների հետ: Միևնույն ժամանակ շինարարական արվեստի զարգացմանը համընթաց և ժամանակի պահանջներից էլնելով՝ ծավալով ավելի մեծ և գործառնություններով ավելի հագեցած է:

Ծավալահատակագծային առումով տեսնում ենք, որ ուղղանկյուն, միագիծ լուծմանը հակառակ՝ «Ինտուրիստ» հյուրանոցում հնգանկյուն հատակագիծ է, իսկ «Սևան» հյուրանոցում Լ-աձև հատակագիծ, ըստ հարկայնության՝ ունենք ակնհայտ աճ. երկհարկանի կառույցների փոխարեն առաջ են եկել համապատասխանաբար չորս և հինգ հարկանի հյուրանոցներ:

Շենքերի շինարարական համակարգը մնում է նույնը՝ պատային: Շինարվեստի զարգացման համընթաց՝ ունենում ենք քարե միդիա շարվածք, որտեղ կապակցանյութը

¹⁸ Арутюнян В. и др. -1968. с. 179.

¹⁹ Նույնը:

ցեմենտն է, ի տարբերություն ավելի վաղ ժամանակաշրջանի, երբ օգտագործվել է կրաշաղախ:

Խոսելով ոճական առանձնահատկությունների մասին՝ հարկ է նշել, որ, չնայած երկու հյուրանոցների նախագծերը իրականացվել են միևնույն հեղինակի՝ Ն. Բունիաթյանի կողմից, բայց «Ինտուրիստ» հյուրանոցը լուծված է դասական ճարտարապետության ոճով²⁰, մինչդեռ «Սևան» հյուրանոցի առաջին փուլը իրականացվել է կոնստրուկտիվիստական գեղարվեստական միջոցներով, իսկ երկրորդ փուլի ժամանակ վերադարձ է կատարվել դեպի դասականությանը²¹:

ГОСТИНИЧНАЯ АРХИТЕКТУРА ЕРЕВАНА: РАЗВИТИЕ В ГОДЫ СТАНОВЛЕНИЯ И ФОРМИРОВАНИЯ НОВОЙ НАПРАВЛЕННОСТИ (на примерах гостиниц “Интурист” и “Севан”)

Мадоян А. В.

Ключевые слова: *период становления и формирования новой направленности, гостиничная архитектура, объемно-пространственные решения, принципы планировки, фасад, орнамент.*

В статье представлена архитектура гостиниц “Интурист” и “Севан” в городе Ереван, которая направлена на методическое раскрытие и документирование объемно-пространственных и планировочных особенностей гостиничной архитектуры города Ереван раннесоветского периода, а так же установления связи с исторической жилищной и гостиничной архитектурой и его влияние на гостиничную архитектуру дальнейших годов. Исследование включенных в работу памятников было осуществлено методом изучения литературы, архивных материалов и полевыми фотографиями.

²⁰ Գողիսանյան Լ.-2015, էջ 46

²¹ Նույն տեղում, էջեր 48-49:

HOTEL ARCHITECTURE IN YEREVAN: THE DEVELOPMENT IN ESTABLISHMENT AND TENDER OF NEW DIRECTION YEARS (on the “Intourist” and “Sevan” hotels examples)

Madoyan A. V.

Key words: *establishment and tender of new direction period, hotels architecture, volumetric solutions, planning principales, elevations, ornament.*

The article presents the architecture of “Intourist” and “Sevan” hotels in Yerevan which focused on methodological discovering and recording of volumetric and planning particular properties of hotels architecture of early Soviet period as well as to determine the relation between historical dwelling and hotel architecture and influence on later hotel architecture. The research of the monuments included in the work was carried out by methods of examination of literature, archive materials and on sight photographic recording.

Պ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Գոլոխանյան Լ.-2015**, Նիկողայոս Բունիաթյան. Երևանի առաջին գլխավոր ճարտարապետ, Անտարես, Երևան:
2. **Հարությունյան Վ.-1960**, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Հայպետհրատ, Երևան:
3. **Հարությունյան Վ. -1964**, Անի Քաղաքը: Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմությունից, «Հայպետհրատ», Երևան:
4. **Арутюнян В. и др. -1968**. Арутюнян В., Асратян М. и др., Ереван. Издательство литературы по строительству. Москва..
5. **Долуханян Л. -1980**. Архитектура Советской Армении 20-е годы, «Советакан грох». Ереван.
6. **Гаспарян М. -2008**. Архитектура Еревана XIX- начала XX века. «Ушардзан». Ереван.
7. **Халпахчян О. -1971**. Гражданское зодчество Армении, издательство литературы по строительству, Москва.
8. <http://hinyerevan.com/#!/photos/7349>, /09.03.2022/.
9. <https://mediamax.am/am/news/yerevan-XX-century/6049/>, /09.03.2022/.
10. <https://mediamax.am/am/news/yerevan-XX-century/4682/>, /09.03.2022/.
11. <https://www.grandhotelyerevan.com/ru/history-hotel/>, /09.03.2022/.

Ընդունվել է՝ 12. 04. 2022
Գրախոսվել է՝ 20. 04. 2022
Հանձնվել է տպ.՝ 25. 05. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Անուշ ՄԱԳՈՅԱՆ՝ ՀՃՇԱՀ-ի ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի ասիստենտ, էլ. փոստ՝ anush.madoyan@gmail.com

Բ ո վ ա ն ն ա կ ու թ յ ու ն

Ա Ձ Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Բազեյան Կ., Աղանյան Գ.

Շիրակի պանրագործական մշակույթը 5

Ղռեցյան Լ.

Անեծքը հայկական ժողովրդական երգերում (հայրեններ, անտունիներ, խաղիկներ)..... 16

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պետրոսյան Ս.

Մար Կո երկրանունը՝ դաշնային պետության անվանում..... 30

Գասպարյան Ա., Մովսեսյան Կ.

Կիրակոս Գանձակեցու աշխատությունը մոնղոլական արշավանքների ուսումնասիրման սկզբնաղբյուր..... 41

Ակոպով Ա., Նահատակյան Դ.

Ազորագլուխ գավառի պատմաճարտարապետական հուշարձանների տեղագրության ու արդի վիճակի շուրջ..... 52

Այվազյան Գ.

Ալեքսանդրապոլի դպրոցների պատմությունն աշակերտների հիշողություններում 61

Հայրապետյան Ա.

Դրվագներ Անդրկովկասյան երկաթուղու շինարարության պատմությունից..... 74

Բոյան Վ.

Շիրակը առևտրական ճանապարհների վրա (ըստ XVI-XVIII դարերի դրամների)..... 82

Ալեքսանյան Կ., Աբրեյան Հ.

Տեղական իշխանության մարմինների գործունեությունը Ալեքսանդրապոլի գավառում 1918 թ. մայիս-դեկտեմբերին..... 89

Ք Ա Ղ Ա Ք Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հովհաննիսյան Ա.

Պաղեստինյան հակամարտության կարգավորման փորձերը «երկու պետությունների» ստեղծման սկզբունքի հիման վրա..... 99

Բ Ա Ն Ա Հ Յ Ո Ւ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մատիկյան Հ.

Գ. Մրվանձոյանցի՝ մանկաշխարհին առնչվող գրառումները (բանահյուսական այլ նյութերի համադրությամբ)..... 107

Լ Ե Ջ Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Խաչատրյան Լ.

Հին հայերենի քերականական մասնիկների դիրքափոխությունը
(տարժամանակյա հայեցակետ).....112

Թորոսյան Հ.

Կենդանանուններով կազմված դարձվածային միավորների իմաստակառուցվածքային
առանձնահատկությունները արդի հայերենում և պարսկերենում.....122

Վարդանյան Ա., Հայրապետյան Ս.

Բայական հիմքով վերջածանցավոր բաղադրությունները գրաբարում.....133

Գրքիկյան Լ.

Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի ենթակառուցությունը.....143

Սահակյան Կ.

Բանաձևային կայուն դարձվածքների ազդեցությունը անձի
ինքնապաշտպանական մեխանիզմների հզորացման գործընթացում.....153

Գ Ր Ա Վ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հովհաննիսյան Ռ.

Ձաննի Ռոդարիի հեքիաթագրության առանձնահատկությունները.....161

Միրզոյան Ա.

Օրիենտալիզմի խնդիրը և «Արևելքի» կառուցարկումը Հովհ. Թումանյանի
ստեղծագործության և հրապարակախոսության մեջ.....169

Ա Ր Վ Ե Ս Տ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մարգարյան Ա.

Պորտասարը՝ քաղաքակրթական բանալի.....177

Հարությունյան Հ.

Ողբերգի ժանրային մի քանի առանձնահատկությունների շուրջ.....184

Ղադայան Թ.

«Խորհրդավոր ընթրիքը» 17-19-րդ. դդ. հայկական սրբապատկերներում.....190

Շաբոյան Կ.

Մուղամը Ն. Տիգրանյանի ստեղծագործության մեջ.....200

Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նահատակյան Ղ., Ակոպով Ա., Գրիգորյան Ա.

Եղեգնամոր (Չանգիի) եկեղեցին IX-XI դդ. Տայք-Գուգարքի միջնադարյան
հայկական ճարտարապետական դպրոցի համատեքստում.....208

Մարտյան Ա.

Երևանի հյուրանոցների ճարտարապետությունը. նոր ուղղության կայացման և ձևավորման
տարիների զարգացումները («Բնտուրիստ» և «Սևան» հյուրանոցների օրինակով).....217

Содержание

ЭТНОГРАФИЯ

- Базеян К., Аганян Г.*
Сырдельческая культура Ширака 5
- Креджян Л.*
Проклятия в армянских народных песнях (айрены, антуни, песенки).....16

ИСТОРИЯ

- Петросян С.*
Топоним Ugarṭu – название федеративного государства.....30
- Гаспарян А., Мовсесян К.*
Труд Киракоса Гандзакеци как первоисточник для изучения монгольских нашествий.....41
- Акопов А., Наатакян Д.*
О расположении и современном состоянии исторических и архитектурных памятников провинции Азордацпор.....52
- Айвазян Г.*
История школ Александрополя в воспоминаниях учеников.....61
- Айрапетян А.*
Эпизоды из истории строительства Закавказской железной дороги.....74
- Боян В.*
Ширак на торговых путях (по монетам XVI-XVIII вв.).....82
- Алексанян К., Абреян Э.*
Деятельность местных органов власти в Александропольском уезде от мая до декабря 1918 года.....89

ПОЛИТОЛОГИЯ

- Оганнисян А.*
Попытки урегулирования палестинского конфликта на «принципе создания двух государств».....99

ФОЛЬКЛОРИСТИКА

- Матикян А.*
Заметки Г. Срвандзтянца, относящиеся к миру ребенка
(на основании других фольклорных материалов).....107

ЛИНГВИСТИКА

- Хачатрян Л.*
Метатеза грамматических частиц древнеармянского языка /диахронический аспект/.....112
- Торосян Р.*
Семантико-структурные особенности фразеологических единиц
с компонентом-зоонимом в современных армянском и персидском языках.....122
- Вардамян А., Айрапетян С.*
Суффиксально-сложные образования с вербальной составляющей в грабаре.....133
- Гркиян Л.*
Субъектная валентность непереходных глаголов в современном армянском языке.....143

Содержание

Саакян К.

Влияние устойчивых формульных фраз в процессе
укрепления механизмов самозащиты личности.....153

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Оганнисян Р.

Особенности написания сказок Джанни Родари.....161

Мирзоян А.

Проблема ориентализма и конструирование
"Востока" в творчестве и публицистике Ованеса Туманяна.....169

ИСКУССТВОВЕДЕНИЕ

Маргарян А.

Портасар-ключ к разгадке цивилизации177

Арутюнян А.

О некоторых жанровых особенностях скорбных песен.....184

Дадаян Т.

«Тайная вечеря» в армянских иконах 17-19 вв.....190

Шабоян К.

Мугам в творчестве Н. Тиграняна.....200

АРХИТЕКТУРА

Наатакян Д., Акопов А., Григорян А.

Церковь Ехегнамор (Чангли) в контексте средневековой армянской
архитектурной школы Тайк-Гугарка IX-XI вв.....208

Мадоян А.

Гостиничная архитектура Еревана: развитие в годы становления и формирования
новой направленности (на примерах гостиниц "Интурист" и "Севан").....217

Contents

ETHNOGRAPHY

- Bazeyan K., Aghanyan G.*
The Cheese-Making Culture of Shirak Region.....5
- Ghrejyan L.*
Manifestations of Curses in Armenian Folk Songs (Hayrens, Antunis and Songs).....16

HISTORY

- Petrosyan S.*
Toponym Urartu – Denomination of the Federal State.....30
- Gasparyan A., Movsesyan K.*
Kirakos Gandzaketsi's Work as a Source of Study on Mongolian Invasions.....41
- Akopov A., Nahatkyan D.*
On the Location and Current Condition of the Historical and
Architectural Monuments of Azordatspor Province.....52
- Ayvazyan G.*
The History of Alexandropol Schools in the Memoirs of Students.....61
- Hayrapetyan A.*
Episodes From the History of Transcaucasian Railway Construction.....74
- Boyan V.*
Shirak on Trade Routes (According to Coins of XVI-XVIII Centuries).....82
- Aleksanyan K., Abreyan H.*
Activities of Local Authorities in the Province of Alexandropol in May-December 1918.....89

POLITOLOGY

- Hovhannisyan A.*
“The Two-State Concept” as a Principle for the Settlement of the Palestinian Conflict.....99

FOLKLORE

- Matikyan H.*
G. Srantsyants' Field Work on Nursery (With Special Reference to Other Folklore Materials).....107

LINGUISTICS

- Khachatryan L.*
Metathesis Grammatical Particles of Old Armenian (Diachronic Point).....112
- Thorosyan H.*
Structural-Semantic Peculiarities of Phraseological Units with Zoonym-Component
in Armenian and Persian Languages.....122
- Vardanyan A., Hayrapetyan S.*
Suffix Structures with a Verbal Component in Classical Armenian.....133
- Grkikyan L.*
Subject Valency of Intransitive Verbs in Modern Armenian.....143
- Sahakyan K.*
The Effect of Formulaic Stable Phrases in the
Process of Strengthening a Person's Self-Defense Mechanisms.....153

L I T E R A R Y S T U D I E S

Hovhannisyan R.

Peculiarities of Fairy Tale Writing Style in Gianni Rodari's Works.....161

Mirzoyan A.

The Problem of Orientalism and the Design of the
"East" in the Works and Publicism of Hovhannes Tumanyan.....169

A R T S T U D I E S

Markaryan A.

Portasar is a Civilizational Key.....177

Harutyunyan H.

About Some Genre Peculiarities of Lament Songs.....184

Dadayan T.

"The Last Supper" in Armenian Icons of the 17th-19th Centuries.....190

Shaboyan K.

Mugham in N. Tigranyan's Creation.....200

A R C H I T E C T U R E

Nahatakyan D., Akopov A., Grigoryan A.

Yeghegnamor Church (Changli) in the Context of the
Medieval Armenian Architectural School of Taik- Gugark IX-XI Centuries.....208

Madoyan A.

Hotel Architecture in Yerevan: the Development in Establishment and Tender
of New Direction Years (on the "Intourist" and "Sevan" Hotels Examples).....217

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 1 (25) 2022

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ. 1 (25) 2022

Shirak Centre for Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

SCIENTIFIC WORKS. 1 (25) 2022

Համակարգչային և գեղարվեստական ձևավորումը՝ **Լ. Կոստանյանի,**
Խմբագրումը և սրբագրումը՝ **Ռ. Հովհաննիսյանի, Հ. Մատիկյանի,**
Ա. Սառաջյանի

Ստորագրված է տպագրության՝ 25. 05. 2022թ.

Ծավալը՝ 236 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 120, գինը՝ պայմանագրային

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի-5^ա
<http://shirakcenter.sci.am/>. E-mail: scient.works@shirakcenter.sci.am